

ԵՐԵՎԱՆԻ Կ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶԿԱՅ ԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼ ՍԱՐԱՆ

ԳԱՅԱԼԵ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ԴԻՊԼԱՃԱԲԱՆՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԿԱՌՈՒ ՑՎԱՃՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՅ ԱՏԿՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԸ

(անգլ և եզոլ տպագիր և առցանց լրագրերի նյութի հիման վրա)

ԱՏԵՆԱԽՈՍՈՒ ԹՅՈՒՆ

Ժ.02.07 - «Գերմանական լեզուներ» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման համար

**Գիտական ղեկավար՝
Մարգարյան Ս. Ա., ք.գ.թ., դոցենտ**

ԵՐԵՎԱՆ - 2017

ԲՈՎԱՆԴ Ի ԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒ ԹՅՈՒՆ.....	3
ԳԼՈՒԽ 1 ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԻՊԿԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ.....	14
1.1 Նորաբանությունների և դիպլոմաբանությունների ուսումնասիրությունները և եզրվաբանական գրականության մեջ	14
1.2 Բառակազմական կենսունակությունները և այն խոչընդոտող գործոնները	38
ԳԼՈՒԽ 2 ԱԾԱՆՑԱՎՈՐ ԴԻՊԿԱԾԱՅԻՆ ԲԱՌԵՐԻ ԻՄԱՍՏԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	51
2.1. Նախածանցավոր դիպլոմային բառերը և դրանց զարգացումը	51
2.2. Վերջածանցավոր դիպլոմային բառերը և դրանց զարգացումը	68
2.3. Բառաստեղծման սահմանափակումներով կազմված դիպլոմային բառերը և դրանց զարգացումը	84
ԳԼՈՒԽ 3 ԲԱՐԴ ԴԻՊԿԱԾԱՅԻՆ ԲԱՌԵՐԻ ԻՄԱՍՏԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	95
3.1. Բարդ դիպլոմային բառերը և դրանց զարգացումը	95
3.2. Դիպլոմային բառախառնությունները և դրանց զարգացումը	148
3.3. Դիպլոմային հապավումները և դրանց զարգացումը	166
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	172
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	176
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ.....	188
ՀԱՎԵԼՎԱԾ 1.....	189
ՀԱՎԵԼՎԱԾ 2.....	215

ՆԵՐԱՃՈՒ ԹՅՈՒՆ

Սույն առենախոսությունը նվիրված է դիպլոմաբանությունների հիմաստակառուցվածքային յուրահատկությունների ուսումնասիրությանը՝ անգլալեզու տապափր և առցանց լրագրանյութերում: Ներկահետազոտության մեջ փորձ է արվում վերլուծել անգլերեն լրագրանյութերում գործածված նորահայտ բառային միավորները և հատկորոշել դրանց հետազոտարգանքումները՝ ժամանակակից անգլերենի չորս միալեզու բացատրական բառարանների (*Oxford Dictionaries Online (ODO)*, *Merriam-Webster Dictionary Online (MWOL)*, *Cambridge Dictionaries Online (CDO)*, *Longman Dictionary of Contemporary English (LDOCE)*), և երկու կորպուսների՝ *Corpus of Contemporary American English (COCA)*, *Corpus of Global Web-Based English (GloWbE)* սլոյալների հիման վրա: Վերջիններիս տրամադրած վիճակագրական սլոյալների շնորհիվ առավել հստակ պատկերացում ենք կազմում սլոյալ դիպլոմային բառերի արժևորման, գործածման արդիականության, կիրառական ներուժի և դիպլոմային կարգավիճակի մասին:

Նորահայտ և նորակազմ բառամթերքը լեզվակիր հանրության գիտելիքների կարգայնացման, լեզվակիրների գիտակցության մեջ աշխարհի լեզվական պատկերի կադապտման, այլ կերպասած՝ «լեզուն-ճանաչողություն» աղերսների արտացոլման հետևանք է: Անգլերենի բառամթերքում ի հայտ եկած նշանակալի փոփոխությունները հանգեցնում են բառարանների վերանայման, անգլերենի բառաֆոնդի նորոգի և համալիր ուսումնասիրության անհրաժեշտությանը:

Արևմտյան տեսաբաններից նորաբանությունների և դիպլոմաբանությունների քննությունը գրադվել են Յ. Շմիդը (Schmid 2008), Ջ. Ստոնհեմը, Ֆ. Կատամբան (Katamba & Stonham 2006), Մ. Դուլլի (Dooly 2006), Բ. Քվիփերը, Վ. Ալլանը (Kuiper & W. Scott Allan 2004), Ռ. Քարթերը (Carter 2004), Լ. Բաուերը (Bauer 2001), Յ. Գիգերիչը (Giegerich 2001), Դ. Քրիսթալը (Crystal 2000), Ռ. Քրոֆթը (Croft 2000), Ռ. Ֆիշերը (Fischer 1998), Վ. Ադամսը (Adams 1973) և այլք: Յայլեզվաբաններից նորաբանությունների և դիպլոմաբանությունների հետ կապված հիմնախնդիրներին անդրադարձել են Է. Ադայանը (Ադայան 2010), Գ.

Ջահուկյանը (Ջահուկյան 2007), Ֆ. Խլղաթյանը (Խլղաթյան 2007/2009), Ա. Մարտիրոսյանը (Մարտիրոսյան 2007), Լ. Եզեկյանը (Եզեկյան 2007), Ս. Էլոյանը (Էլոյան 2002), Ն. Յեքեքյանը (Յեքեքյան 2002), Թ. Ղարազուլյանը (Ղարազուլյան 1983), Ա. Բարլեզիզյանը (Բարլեզիզյան 1997), Ն. Մկրտչյանը (Մկրտչյան 2004) և այլք: Ռուս լեզվաբաններից նորաբանությունների և դիպլոմատանությունների քննությամբ զբաղվել են Մ. Մինևան (Minaeva 2007), Յու. Ասոյուֆեևան (Антюфеева 2004), Վ. Չաբոտկինան (Заботкина 1991), Մ. Ֆոմինան (Фомина 1990), Պ. Ցարյովը (Царев 1978), Ն. Շանսկին (Шанский 1975), Ա. Լիկովը (Лыков 1971) և այլք:

Ատենախոսության մեջ առանձնացված դիպլոմային բառերը քաղված են *The Guardian, The Daily Mail, The Mail on Sunday, The Telegraph, The Observer, The Sun, The Dallas Observer, The Mirror, The Independent, The Huffington Post, The USA Today, The New York Times/The International New York Times, The Sunday Express, The Trinidad Express, The Texas Observer, The Cambridge News (local online newspaper), The Florida Sun Sentinel, The Vancouver Sun, The New Statesman, The Hungry Londoner, The Week (online newspaper), The Herald, The Dragon Herald, The Globe and Mail, The Financial Times, BBC News (online newspaper), The Daily Dot (online newspaper), The Stuff (New Zealand newspaper), The Express and Star, The Hamilton Spectator, The Washington Times, The Emergency թերթերից և Grazia (UK fashion magazine), Smithsonian, AARP Bulletin (over-50's magazine), Nation Time, Forbes, Marie Claire (UK Fashion magazine), Computer Shopper (UK computer magazine), PC Pro (monthly computer magazine), ABC news (online magazine), Gulf News, New York, New Yorker, Psychology Today, Daily Arch, WORLD ARK, Good Housekeeping (UK women's magazine), Car & Driver, Glamour, Life & Style, CNET (online magazine), Gawker, Gizmag (online design magazine), Farmers Guardian, Entrepreneur, Time, Fortune, Business Insider, Civil Engineering* ամսագրերից:

Մասնագիտական գրականության մեջ գործառու մ են նորաստեղծ բառերի տարբեր անվանումներ՝ *նոր բառ, նորակազմություն, նորաբանություն, դիպլոմատանություն/դիպլոմատա/դիպլոմային բառ*¹, *հեղինակային նորաբանություն, ներգոր/պոտենցիալ բառ, իմաստային նորաբանություն*, հասկացությունները հայերենում, և

¹ Սույն աշխատանքում գործածում ենք *դիպլոմատանություն* և *դիպլոմային բառ* եզրույթները:

new word, coinage, neologism, hapax legomenon/nonce word/occasionalism, author's neologisms, potential word, semantic neologisms հասկացողությունները անգլերենում: Նորաբանությունն եզրույթը վերաբերում է բոլոր նոր բառերին. «նոր բառ և նորաբանություն», «նորակազմություն և ներգոր/պոտենցիալ բառ և դիպլածաբանություն» հասկացողությունները դիտարկվում են որպես միմյանց հոմանիշներ (Բսպր 2011): Ըստ Լ. Եզեկյանի՝ «նորակազմությունները բառային այն միավորներն են, նոր բառերը, որոնք լեզվի զարգացման տվյալ փուլում գիտակցվում են որպես նոր իրողություններ, դեռևս չեն մտել գործունե բառապաշարի մեջ, չունեն ընդհանուր տարածում, իսկ առանձին դեպքերում անգամ չեն արձանագրվել տվյալ լեզվի համապատասխան բառարաններում, այսինքն՝ նորաբանությունները տվյալ լեզվի բառապաշարին դեռևս չձուլված բառերն են» (Եզեկյան 2007:132):

Նորաբանությունը նորաբանագիտության հիմնական միավոր է, որն արտացոլում է լեզվակրի գիտակցության մեջ աշխարհի լեզվական պատկերի կադապարումը: Նորաբանությունները լեզվի բառային համակարգի այն նոր միավորներն են, որոնք առաջացել են նոր իրականությունն արտահայտելու հասարակական պահանջով և որոնք գործառույթում են որպես վերարտադրելի միավորներ: *Նորաբանությունը* «նոր բառ կամ նոր արտահայտություն է, կամ՝ նոր բառիմաստ» (OALD 2006:1021): *Դիպլածային բառը* «տվյալ առիթով ստեղծված նորակազմություն է» (Katamba & Stonham 2006:353): *Դիպլածային բառերը* «երևան են գալիս, երբ խոսողը կամ գրողը ցանկանում է խոսքին հաղորդել զանազան ոճական երանգներ և ազդել ընթերցողի կամ ունկնդրի վրա» (Minaeva 2007:37): *Ներգոր/պոտենցիալ բառերը* առավելապես ստեղծվում են բանավոր խոսքում, հազվադեպ՝ գրավոր խոսքում (Katamba & Stonham 2006): *Ներգոր/պոտենցիալ բառերը* «ստեղծվում են արդյունավետ բառակազմական կադապարներով, իսկ դիպլածայինները՝ նվազ արդյունավետ, անարդյունավետ, դիպլածային կադապարներով» (Մարտիրոսյան 2007:37): *Յեղիևակային նորաբանությունները* գրողի պատկերավոր, ստեղծագործ մտածողության արգասիք են: Դրանք երբեմն մնում են ստեղծագործության էջերում և դիտվում որպես

դիպված արանու թյուներ, երբեմն՝ վերաստեղծվում են, ձեռք բերում լայն գործածություն և վերածվում նորարանությունների: Յեղիևակային բառերի իմաստները «երբեմն դժվար է լինում բացատրել հեղինակների ինքնահատուկ պատկերավոր մտածողության պատճառով» (Էլոյան 2002:11): Իսկ «իմաստային նորարանությունների հասկացության հիմքում, անշուշտ, ընկած է իմաստափոխությունը (լայն առումով), ինչը, ի թիվս բազմաթիվ դրսևորումների (ընդլայնում, նեղացում, շրջում, գործառական անցում ևն), պայմանավորված է երկու հիմնական գործոններով՝ ա) երբ տվյալ լեզվի ներքին զարգացումներն են բերում իմաստափոխության, բ) երբ օտար լեզվական միավորի իմաստի ազդեցությամբ բառը ստանում է իմաստային ճյուղավորում, այլ կերպ՝ կատարվում է իմաստի պատճենում» (Մարտիրոսյան 2007:197-168):

Դիպվածային բառերը երևան են գալիս թե՛ բանավոր խոսքում, թե՛ գեղարվեստական գրականության մեջ, թե՛ լրագրային ժանրերում: Ներկա հետազոտության մեջ ուսումնասիրվում են միմիայն տպագիր և առցանց լրագրանյութերում (թերթերում և ամսագրերում) գործածված նորահայտ դիպվածային բառերը:

Լրագրողական ժանրին բնորոշ են մի շարք լեզվաոճական առանձնահատկություններ, որոնց շարքին են դասվում նաև մեր ինդրոնարկա դիպվածային բառերը: Գրավոր հրապարագրությունն աչքի է ընկնում պատկերավորման և արտահայտչական հնարների ու միջոցների բազմաբնույթ կիրարկություններով՝ դարձույթներով և բանադարձումներով.

հնչյուն արանական արտահայտչամիջոցներով՝ բաղաձայնությ, բնաձայնությ, *պատկերավորման և արտահայտչական բառային միջոցներով՝* մակդիր, համեմատություն, փոխաբերությ, փոխանունություն, համըմբռնում, չափազանցություն, նվազաբերություն, շրջասույթ, *շարահյուսական կառուցվածքի վրա հիմնված բանադարձումներով՝* գուգարություն, խաչածնում, զեղչում, ավելադրություն, աստիճանավորում (բարձրացող աստիճանավորում, իջնող աստիճանավորում), հարանունություն, բառախաղ, հակադրություն, ճարտասանական հարց, ճարտասանական բացականչություն, անշարկապություն, բազմաշարկապություն, շրջադասություն

(հակադասության, շարախախտում, հերթաշրջում), հեզնանք, պարադոքս, *բառակրկնության վրա հիմնված պատկերավորման արտահայտչական միջոցներով*՝ նույնասկիզբ, նույնալերջ, հանգույց, կցուրդ: Գրավոր հրապարակագրությանը բնորոշ է նաև *հնարանությունների, հեղինակային նորաբանությունների, բարբառաբանությունների, գռեհկաբանությունների և ժարգոնային արտահայտությունների* գործածությունը:

Լրագրողները լուրեր հաղորդելիս անշեղորեն հետևում են լուրերի ձևավորման վերը նշված լեզվական միջոցներին և հնարներին, միաժամանակ, տարբեր թերթեր և ամսագրեր միևնույն իրադարձությունը մեկնաբանում են տարբեր ձևերով: Իրադարձությունների մեկնաբանման տարբերությունները կապված են թե՛ քաղաքական տարբեր դիրքորոշումների, թե՛ լրագրողների լեզվակրթական մակարդակի հետ: Իսկ լավ հրապարակախոսից «պահանջվում է երեք կարևոր բան՝ նյութի խորիմացություն, խնդրի հրատապություն և կարևորություն <...> Լրագրողի համար շատ կարևոր են թեմային համապատասխան գրուցակցի ընտրությունը, հարցադրումը և լսարանի վրա ճիշտ ներգործելու կարողությունը և հմտությունը» (Ստեփանյան 2013:94): Կատարյալ լեզվիմացություն դրսևորող լրագրողը կարող է կերտել իր ուրույն ոճը՝ դրանով իսկ արտացոլելով արտալեզվական սոցիալական իրականությունը: Յարափոփոխ արտալեզվական աշխարհը նկարագրելիս՝ բազում լեզվաոճական հնարների կողքին լրագրողը հեղինակում է նոր բառեր, բառերի անհամատեղելի կապակցելիություններ, լրագրահոդվածների խորագրերի յուրօրինակ ձևակերպումներ՝ այդպիսով ծնունդ տալով դիպվածային բառերին:

Այսպիսով, լրագրող-հեղինակն իր լրագրանյութով հաղորդակցվում է ընթերցողի հետ. նման հաղորդակցման ընթացքում լրագրող-հեղինակը *հաղորդողն* է, իսկ ընթերցողը՝ *հաղորդումն ընդունողը*: Դիպվածային բառերի և ներգոր բառերի գործածումը խոսքաշարում հաղորդվող նյութի լրագրող-հեղինակին հնարավորություն է ընձեռում ամբողջացնել մտքի լեզվական ձևավորումը, ընդգծել անհատական ոճը և առանձնանալ

պատկերաստեղծ միջոցների լայն գործածությամբ, իսկ ընթերցողներին՝ հաղորդակցումն ընդունողներին, ամբողջական պատկերացում կազմել խոսողի միտման և լրագրանյութի խոսքային դիմանկարի մասին:

Այսպիսով, սույն ատենախոսության **օբյեկտը** ժամանակակից անգլերենի բառային համակարգն է, իսկ **առարկան** անգլերենի դիպվածային բառերն են:

Որպես ատենախոսության **լեզվանյութ** ծառայել են անգլալեզու տպագիր և առցանց թերթերից և ամսագրերից քաղված դիպվածային բառերը: Աշխատանքում առանձնացված օրինակները մեծամասամբ քաղված են լրագրերի ոչ տպագիր՝ առցանց տարբերակներից, քանի որ համակարգչային վիրտուալ խոսույթում գերտեքստ ներկայացնող թերթերի և ամսագրերի առցանց տարբերակները բովանդակում են ավելի շատ տեղեկույթ՝ տպագիր գրավոր հրապարակագրության համեմատ:

Ատենախոսության արդիականությունը: Հարափոփոխ աշխարհի լեզվական պատկերում խիստ արդիական է անգլերենի նորաստեղծ և նորահայտ բառամթերքի վերհանումը: Յուրաքանչյուր տարի ի հայտ են գալիս հարյուրավոր նոր բառեր և իմաստային նորաբանություններ, որոնց գերակշիռ մասը կարճ ժամանակամիջոցում գետնից ծնվում են անգլերեն բառարաններում: Իսկ լրագրերում մեկնաբանվում են հասարակական կյանքի բոլոր բնագավառներին վերաբերող խնդիրներ և ամենից հաճախ են գործածվում և/կամ վերաստեղծվում դիպվածային բառեր՝ ընթերցողների ու շարժողությունն այս կամ այն խնդրին սևեռելու համար: Հետևապես, աշխատանքի արդիականությունը պայմանավորված է լրագրանյութերում մշտապես կիրառվող նոր բառերի բազմաեռանկարային հետազոտությունների և ժամանակակից անգլերենի բառապաշարի հարստացման միջոցների վերհանման պահանջով:

Ատենախոսության գիտական նորույթը: Սույն ատենախոսության գիտական նորույթն այն է, որ աշխատանքն ուրույն փորձ է հնարավորինս համակողմանի քննության ենթարկել լրագրանյութերից քաղված ժամանակակից անգլերենի դիպվածային

բառերի իմաստակառուցվածքային առանձնահատկությունները (անհրաժեշտության դեպքում անդրադարձ կատարելով նաև դրանց գործաբանական, ճանաչողական և ոճական յուրահատկություններին): Նոր է նաև անգլերենի օրինաչափությունների խախտումով կազմված դիպլոմային բառերի վերհանումը լրագրանյութերից և առանձնացված դիպլոմային բառային միավորների՝ դիպլոմային կարգավիճակում մնալու, և/կամ՝ դրանց հանրայնացման և լեզվի համակարգում ամրապնդման հատկորոշումը՝ անգլերեն միալեզու բացատրական բառարանների և կորպուսային շտեմարանների լեզվանյութի հիման վրա:

Ատենախոսության նպատակը: Աշխատանքի նպատակն է վերլուծության ենթարկել անգլալեզու թերթերից և ամսագրերից դուրս բերված դիպլոմային բառերը՝ իմաստային և կառուցվածքային առանձնահատկությունների դիտանկյունից, վերլուծել իրականության կարգայնացման մեխանիզմները և լեզվական կադապարման միջոցները:

Այս նպատակին հասնելու համար ատենախոսության մեջ առաջադրվել են հետևյալ **խնդիրները**՝

- համակողմանի վերլուծության ենթարկել *«նորաբանություն»* և *«դիպլոմաբանություն»* եզրույթների ըմբռնումները լեզվաբանական գրականության մեջ,
- քննության առնել բառաստեղծման խնդիրները անգլերենում և համակարգել բառաստեղծումը խաթարող գործոնները,
- վերլուծել և հատկորոշել անվանողական միջոցների ընդհանուր պատկերը և դասակարգել դրանք,
- վեր հանել լրագրանյութերում անգլերենի օրինաչափությունների խախտումով կազմված դիպլոմային բառերը և հատկորոշել դրանց զարգացումը,
- բացահայտել դիպլոմային բառերի խոսքիմասային պատկանելությունը և դրանց կիրառությունների ծավալը,
- սահմանել դիպլոմային բառերի պատկանելությունը տարբեր բառիմաստային և/կամ թեմատիկ խմբերի,
- սահմանել դիպլոմային բառերի գործառնյութները,

- վերլուծել և մշակել դիպլոմատիկայի բառերի առավել ճշուղավորված բառակազմության դեպքերը,
- որոշել դիպլոմատիկայի բառերի հետագա դիպլոմատիկայի կարգավիճակը (բառը մնում է դիպլոմատիկայի կարգավիճակում, թե՞ հանրայնացվում է և ամրապնդվում է լեզվի համակարգում):

Լեզվաբանական վերլուծության **մեթոդների** մեր ընտրությունը բխում է ուսումնասիրվող նյութի բնույթից և նպատակից: Ներկա աշխատանքում կիրառվել են բաղադրիչային վերլուծության, նկարագրական, վիճակագրական, համաժամանակյա և տարաժամանակյա ուսումնասիրության մեթոդները (աճանցները վերլուծելիս անհրաժեշտություն է զգացվել դիմել տարաժամանակյա քննության՝ դրանց ծագման աղբյուրները պարզելու համար):

Ատենախոսության տեսական արժեքը: Աշխատանքի տեսական նշանակությունը պայմանավորված է նրանով, որ տվյալ հետազոտության արդյունքները կարող են նպաստել անգլերենի բառամթերքի նորաբանական շերտի իմաստակառուցվածքային հետազոտությունների իրականացմանը:

Ատենախոսության գործնական արժեքը: Ուսումնասիրության արժեքը արդյունքները կարող են ունենալ մի շարք գործնական կիրառություններ՝ օգտագործվելով բառագիտության, իմաստաբանության և տեքստի վերլուծության դասընթացներում, ինչպես նաև գործնական ձեռնարկներ և բառարաններ կազմելիս:

Աշխատանքի փորձարկումը: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է ներկայացվել ԵՊԼՀ անգլերենի բառագիտության և ոճաբանության ամբիոնի նիստում: Հետազոտության առանձին դրույթները և արդյունքները քննարկվել են ԵՊԼՀ անգլերենի բառագիտության և ոճաբանության ամբիոնի նիստերին, միջազգային գիտաժողովում և տպվել հոդվածների ժողովածուներում:

Աշխատանքի **կառուցվածքը** բխում է ատենախոսության մեջ արժարժվող խնդիրներից. այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից և 2 հավելվածից:

Ներածություն մեջ հիմնավորվում են աշխատանքի նպատակներն ու մեթոդները, թեմայի արդիականությունը, գիտական նորությունը, տեսական և գործնական արժեքը:

Առաջին գլուխը՝ «Նորաբանությունների և դիպլոմատականությունների տեսական հիմքերը և եզրաբանական գրականություն մեջ», բաղկացած է երկու ենթագլխից: Առաջին ենթագլխում (**«Նորաբանությունների և դիպլոմատականությունների ուսումնասիրությունը և եզրաբանական գրականություն մեջ»**) դիտարկվում են նորաբանությունների և դիպլոմատականությունների վերաբերյալ արևմտյան, խորհրդային և հայ տեսաբանների ուսումնասիրությունները: Այստեղ անդրադարձել ենք նոր բառերի ուսումնասիրության ինչպես ավանդական, այնպես էլ ժամանակակից մոտեցումներին: Ժամանակակից տեսաբանների առաջադրած տեսություններում նոր բառերն ուսումնասիրվում են ճանաչողական և գործաբանական դիտանկյունից: Յետևապես, անդրադարձել ենք նաև դիպլոմատային բառերի ստեղծման ճանաչողական և գործաբանական մոտեցումներին: Նշենք, սակայն, որ սույն աշխատանքում ամենայն խորությամբ չեն ուսումնասիրվում և րազրանյութերից քաղված դիպլոմատային բառերի գործաբանական և ճանաչողական արժեքը, քանի որ մեր խնդիրը չէ *գործաբանությունը* և *ճանաչողական և եզրաբանությունը* և գիտակարգերի տեսական հիմքերին անդրադառնալը:

Մեր խնդրո առարկա *դիպլոմատականությունը* և *եզրաբանությունը* և այնորեն կիրառվում է և *եզրաբանական գրականություն մեջ*, սակայն դիպլոմատային բառերի ընդհանրական սահմանում չկա: Սույն ատենախոսության մեջ մենք ընդունում ենք Պ. Տարյովի, Թ. Ղարազուլյանի և Դ. Քրիսթալի հայեցակարգերը. «Դիպլոմատականությունները ստեղծվում են տվյալ դեպքի, համատեքստի համար, մեծամասամբ վերաստեղծվում են և վերածվում նորաբանությունների: Երբեմն նախքան բառարաններում գետեղվելը դրանք ձեռք են բերում գործածման բարձր հաճախականություն, հետևապես, քիչ հավանական է պարզել՝ արդյո՞ք այս կամ այն բառը առաջին անգամ է կիրառվում» (Վաբե 1978:22), «Դիպլոմատականությունները տարբերվում են

Նորաբանություններին նրանով, որ դրանք խոսքի իրողություններ են և դիպվածաբանություններ են այնքան ժամանակ, քանի դեռ չեն գետեղվել բառարաններում և չեն ամրագրվել լեզվում» (Ղարազուլյան 1983:202): Ըստ Դ. Քրիսթալի՝ «Յուրաքանչյուր նորաստեղծ բառ (նորաբանություն) դիպվածային բառ է, քանզի բյուրավոր նորաստեղծ և յուրացված միավորներից սակավաթիվ նորաբանություններ են մուտք գործում լեզու: Դիպվածային բառը լեզվական ձև է, որը խոսողը որևէ առիթով ստեղծում է՝ գիտակցաբար կամ անգիտակցաբար <...> Դիպվածային կազմությունները երբեմն լայնորեն տարածում են գտնում լեզվակիր հանրության մեջ, այդպիսով՝ դիպվածաբանություններից առաջ են գալիս նորաբանություններ» (տե՛ս Ahmad 2000:711):

Յետևապես, սույն ատենախոսության մեջ առանձնացված դիպվածային բառերը պայմանականորեն ենք համարում դիպվածային, քանի որ բացառված չէ, որ անգլալեզու մամուլի էջերում կամ առցանց տարաբնույթ հրատարակումներում արձանագրված լինեն տվյալ բառերի ավելի վաղ գործածություններ:

Երկրորդ ենթագլխում («***Բառակազմական կենսունակությունը և այն խնդրնդոտող գործոնները***») փորձ է արվում համակողմանի վերլուծության ենթարկել բառակազմական կենսունակությունը խաթարող հնչույթաբանական, իմաստաբանական, ձևաբանական և գեղագիտական գործոնները: Բառաստեղծման սահմանափակումների համակարգում *հնչույթաբանական գործոնները* կապված են բաղադրող հիմքի և վերջավորության հնչույթաբանական հատկանիշների հետ, *ձևաբանական գործոնները*՝ բաղադրող հիմքի ծագման հետ (որոշ ածանցներ ավելանում են միմիայն բնիկ կամ միմիայն փոխառյալ բառերին), *իմաստաբանական գործոնները*՝ բաղադրող հիմքի և ածանցի իմաստային համատեղելիության, հոմանշային շարքերում նույնական իմակ արտահայտող բառերի հետ, *գեղագիտական գործոնները* վերաբերում են ածանցյալ բառերի՝ բարեհունչ և/կամ անբարեհունչ կազմությունն դիտվելուն, *գործաբանական գործոնները* սահմանում են շրջապատող միջավայրի որևէ երևույթ կամ առարկա անվանելու անհրաժեշտությունը՝ կախված խոսքային իրադրությունից:

Երկրորդ գլուխը՝ «Ածանցալոր դիպվածային բառերի իմաստակառու ցվածքային առանձնահատկությունները», բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին ենթագլխում (**«Նախածանցալոր դիպվածային բառերը և դրանց զարգացումը»**) ուսումնասիրվում են նախածանցման եղանակով կազմված դիպվածային բառերի իմաստակառու ցվածքային յուրահատկությունները և հատկորոշվում է դրանց հանրայնացման և/կամ ամրակայման դեպքերը և էզվի համակարգում: Երկրորդ ենթագլխում (**«Վերջածանցալոր դիպվածային բառերը և դրանց զարգացումը»**) ուսումնասիրվում են վերջածանցման եղանակով կազմված դիպվածային բառերի իմաստակառու ցվածքային առանձնահատկությունները և հատկորոշվում է դրանց հանրայնացման և/կամ ամրակայման դեպքերը և էզվի համակարգում: Ե՛վ առաջին, և՛ երկրորդ ենթագլուխներում նոր իրակությունների բառայնացման միջոցները խմբավորել ենք ըստ ածանցման կաղապարների, ապա ուսումնասիրությունն իրականացրել անգլալեզու և լրագրերից քաղված օրինակների հիման վրա: Երրորդ ենթագլխում (**«Բառաստեղծման սահմանախախտումներով կազմված դիպվածային բառերը և դրանց զարգացումը»**) քննության են առնվում անգլերենի օրինաչափությունների խախտումով կազմված դիպվածային բառերը: Այստեղ ուսումնասիրել ենք նաև վերջիններիս հանրայնացման և/կամ էզվի համակարգում ամրապնդման դեպքերը:

Երրորդ գլուխը՝ «Բարդ դիպվածային բառերի իմաստակառու ցվածքային առանձնահատկությունները», բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին ենթագլխում (**«Բարդ դիպվածային բառերը և դրանց զարգացումը»**) վերլուծում ենք անգլալեզու և լրագրանյութերից քաղված բարդ դիպվածային բառերը և ուսումնասիրում դրանց հանրայնացումը և էզվի համակարգում: Աշխատանքի այս գլխում ևս բարդ բառային միավորները խմբավորել ենք ըստ բաղադրման կաղապարների, ապա վերլուծել անգլալեզու և լրագրերից քաղված օրինակների հիման վրա: Այստեղ վերլուծվում են երկբաղադրիչ, եռաբաղադրիչ և ավել բաղադրիչ ունեցող համադրական, գծիկով գրվող և հարադիր բարդությունների

ի մաս տակառուցվածքային առանձնահատկությունները: Երկրորդ ենթագլխում («**Դիպլոմատիկ քառախառնությունները և դրանց զարգացումը**») քննության են առնվում անգլալեզու լրագրանյութերից քաղված քառախառնություններ և ուսումնասիրվում է դրանց հանրայնացումը լեզվի համակարգում: Երրորդ ենթագլխում («**Դիպլոմատիկ հապավումները և դրանց զարգացումը**») ներկայացրել ենք անգլալեզու լրագրանյութերից քաղված դիպլոմատիկ հապավումները, ապա հատկորոշել դրանց հետագա դիպլոմատիկ կարգավիճակը:

Եզրակացություն մեջ ամփոփվել են ատենախոսության հիմնական արդյունքները: **Գրականություն ցանկում** ներկայացված է ատենախոսության ընթացքում օգտագործված գրականությունը, բառարանները և համացանցային աղբյուրները: **Յավելվածներում** ներկայացված է լրագրանյութերից քաղված դիպլոմատիկ բառային միավորների լրացուցիչ ցանկ:

ԳԼՈՒԽ 1

ՆՈՐԱՔԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԻՊԿԱԾԱՔԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ Լ ԵԶՎԱՔԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

1.1 Նորաքանուկայ ու նների և դիպվածաքանուկայ ու նների ու սու մնաաիրուկայ ու նը և եզվաքանակաան գրականուկայ ան մեջ

Լեզվաքանակաան գրականուկայ ու նը առաջարկում է Նորաքանուկայ ու նների վերաբերյալ տարբեր հայեցակերպեր, Նորաքանուկայ ու ն և դիպվածաքանուկայ ու ն եզրույթների տարբեր ըմբռնումներ:

Նորաքանուկայ ու ն եզրույթը անգլերենում երևան է եկել 1803 թ.-ին՝ ֆրանսերեն *néologisme բառից*: Հատկանշական է, որ սկզբնական շրջանում այն ու ներ բացասական նշանակուկայ ու ն. այն վերաբերում էր *գռեհկաքանուկայ ու նների, անգլերենում ֆրանսերեն փոխառուկայ ու նների, ֆրանսերենում՝ անգլերեն փոխառուկայ ու նների և, նույնիսկ, հնաքանուկայ ու նների*: Հետագայում, 19-րդ դարի 2-րդ կեսին՝ «նորաքանուկայ ու ն» եզրույթը ձեռք է բերում դրական նշանակուկայ ու ն, այն է՝ «հավանուկայ ան արժանացած կամ և եզվի օրինաչափուկայ ու նների և կանոնների չհակասող բառերի ներմուծումը և եզվի համակարգ» (Usevics 2004:1-2): Մերօրյա անգլերենում նորաքանուկայ ու նը սահմանվում է հետևյալ կերպ՝ «նոր բառ, արտահայտուկայ ու ն կամ նոր բառիմաստ» (OALD 2006:1021):

Լեզվում երևան եկած նոր բառամթերքը որոնվում և գետեղվում է բառարաններում տեսաքանների և բառարանագիրների ջանքերով: Տարբեր են, սակայն, 19-21-րդ դարերում նոր բառերի որոնման և սերման աղբյուրները:

19-րդ դարի բառարանագիր Սեմյուել Ջոնսոնը նոր բառերը որոնել և վեր է հանել աստվածաշնչյան, ինչպես նաև նշանավոր դրամատուրգների գրվածքներից: 19-րդ դարավերջից բառարանագիրները բառարաններում գետեղում են նաև գիտական հայտնագործուկայ ու նների անվանումները: 20-րդ դարում զարգացում են ապրում շուկայական հարաբերուկայ ու նները և

գովազդային արդյունաբերությունը: Գովազդներում տեղ գտած նորաբանությունները ևս գրանցվում են բառարաններում (Ahmad 2000):

Ի տարբերություն նախորդ դարաշրջանների, 21-րդ դարում անգլերեն բառարաններում գետեղվում են բոլոր ոլորտներին վերաբերող նորաբանությունները: Անգլերեն նորաբանությունները որոնվում և գրանցվում են անգլերեն միալեզու բացառական բառարանների խմբագրակազմի շնորհիվ (*Oxford Dictionaries Online, Cambridge Dictionaries Online, Merriam-Webster Dictionary Online, Macmillan Dictionary Online, Collins English Dictionary Online*): Ժամանակակից անգլերենի նորաբանությունները որոնվում և մեկտեղվում են նաև *RDUES (Research and Development for English Studies)* գիտահետազոտական նախագծի շրջանակներում:

Ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը՝ ժամանակակից լեզվաբանության մեջ մինչ օրս տիրապետող են տարբեր ըմբռնումներ՝ նորաբանությունների և դիպլածաբանությունների լեզվաբանական կարգավիճակի մասին: Փորձենք ստորև քննության առնել նորաբանությունների և դիպլածաբանությունների մասին գոյություն ունեցող հայեցակետերը և հստակեցնել դրանց լեզվաբանական կարգավիճակը: Մեր դիտարկումները սկսենք **նորաբանությունների** վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ առկա հայեցակետերից:

Ըստ տեսաբաններ Լ. Բաուերի, Լ. Լիփկայի, Ս. Յանդլի և Վ. Ֆոլկների՝ «նորաբանությունները պարզապես «նոր բառեր» չեն <...> դրանք բառեր են, որոնք կորցրել են իրենց դիպլածային կարգավիճակը, կայունանում կամ արդեն կայունացել են լեզվի համակարգում» (Bauer 2001:39; Lipka, Handle & Falkner 2004:3): Բայց և այնպես, «դրանք դեռևս հասարակության լայն շրջանակների համար նոր միավորներ են համարվում» (Fischer 1998:3; Hohenhaus 2005:364):

Ըստ Ջ. Ալջիոյի՝ «նոր բառը բառաձև է կամ բառի գործածություն, որը չի ընդգրկվել համընդհանուր բառարաններում» (Algeo 1991:2):

Փ. Նյումարկը պնդում է, որ «նորաբանությունները նորահայտ բառեր են կամ նորիմաստբառային միավորներ» (Newmark 1988:140):

Տեղին է նշել, որ անգլերենի բառային համակարգի իմաստային փոփոխությունների համակողմանի քննությունն է կատարել տեսաբան Փ. Լադլոուն՝ իր «*Living Words: Meaning Underdetermination and the Dynamic Lexicon*» գրքում (Ludlow 2014): Յեղիևակը նորովի մոտեցմամբ է ուսումնասիրում լեզվի բառաֆոնդի զարգացումներն ու բառիմաստային փոփոխությունները: Փ. Լադլոուն գրում է. «Յանրահայտ է, որ բառիմաստները փոխվում են ժամանակի հոսքնթացում, բայց ես պնդում եմ, որ դրանք փոխվում են նաև յուրաքայ յուր օրվա ընթացքում՝ համատեքստից համատեքստ» (Ludlow 2014:3): Նշվածից կարելի է ենթադրել, որ խոսքաշարում ամեն անգամ բառը հանդես է գալիս նոր իմաստով: Դա է պատճառը, որ հեղինակը ներմուծում է «բառային պատերազմ» (*lexical warfare*) եզրույթը, քանի որ, մասնավորապես քաղաքական խոսույթում, մեծ ջանքեր են պահանջվում իրացվող բառիմաստը վերհանելու համար:

Իր հերթին, տեսաբան Վ. Քրոֆթը իր «*Explaining Language Change: An Evolutionary Approach*» գրքում, անդրադառնալով բառիմաստային փոփոխություններին՝ գրում է. «Բառարանային և համատեքստային նշանակությունները կարող են փոխվել և փոխարինել իրար՝ կախված լեզվական միավորի գործածությունից» (Croft 2000:106):

Ըստ Օ. Ախմանովայի՝ նորաբանությունը բառ է, որը նոր երևույթ կամ հասկացություն է անվանում (Ахманова 1969):

Ըստ Ա. Գորշկովի՝ «նորաբանությունները բառեր են, բառերի կամ բառակապակցությունների իմաստներ, որոնք որոշակի փուլում հայտնվել են որևէ լեզվում կամ մեկ անգամ գործածվել են (դիպլոմատային բառեր) որևէ տեքստում կամ խոսքաշարում» (Горшков 1979:131):

Ա. Կալինինն առաջադրել է նորաբանությունների մի սահմանում, որն ընդհանրապես չի հստակեցնում դրանց լեզվական կարգավիճակը՝ «նորաբանություններն ունեն «մոտ» կամ «հեռավոր բարեկամներ»: Նորաբանությունների «մոտբարեկամն» է համարվում գլխում ծագած գոյությունն չունեցող առաջին իսկ բառը, իսկ «հեռավորը»՝ բառակազմական այն ընդհանուր կաղապարը, համաձայն որի ստեղծվում են նմանատիպ բառերը» (Калинин 1966:119):

Ս. Ուզեիցն առավել մանրամասն է անդրադառնում այս խնդրին՝ նշելով որ «նորաբանությունը նորակազմ բառ է, եզրույթ կամ բառակապակցություն, որը հաճախ վերաբերում է նոր հասկացություններին, համակցում նախկինում գոյություն ունեցող հասկացությունները կամ էլ՝ արդիականացնում հին եզրույթաբանությունը»

(http://www.dukonference.lv/files/proceedings_of_conf/53konf/valodnieciba_literaturzinatne/Usevics.pdf 22.09.2015-ի դրությամբ):

Նորաբանությունների իմաստակառուցածքային առանձնահատկությունների տեսակետից՝ Ս. Ուզեիցը տարբերակում է նորաբանությունների երեք տեսակ. ա/ բառամիավոր, որը նոր է թե՛ ձևով, թե՛ նշանակությամբ, բ/ բառամիավոր, որի ձևը նոր է, բայց նշանակությունն արդեն արտահայտված է մեկ այլ բառի միջոցով, և գ/ բառամիավոր, որի նշանակությունը նոր է, բայց ձևը՝ ոչ:

Նորաբանությունների նույնատիպ սահմանումներ են առաջադրել Գ. Ջահուկյանը, Ֆ. Խլղաթյանը, Ա. Բարլեզիզյանը և Է. Աղայանը:

Ըստ Գ. Ջահուկյանի և Ֆ. Խլղաթյանի՝ «լեզվի մեջ նոր մուտք գործած բառերն ու արտահայտությունները կոչվում են նորաբանություններ» (Ջահուկյան, Խլղաթյան 2007:43):

Ա. Բարլեզիզյանի դիտանկյունից՝ «լայն առումով լեզվական յուրաքանչյուր նոր երևույթ կամ միավոր նորաբանություն է: Նեղ, բառագիտական առումով նորաբանություն է ամեն մի նոր բառ, կայուն բառակապակցություն, իմաստ» (Բարլեզիզյան 1997:73):

Է. Աղայանի կարծիքով՝ «հասարակության կյանքում առաջացած նոր երևույթները, առարկաները և այլն համապատասխանորեն առաջ են բերում նորանոր բառեր: Դեռևս ընդհանրացում չստացած նոր բառերի գործածումը կոչվում է նորաբանություն (նեոլոգիզմ)» (Աղայան 2010:153): Զետևաբար՝ նորաբանությունները արտալեզվական նոր իրողություններ են արտահայտում: Պետք է նշել, սակայն, որ նորաբանությունները լեզվում ի հայտ են գալիս թե՛ արտալեզվական, թե՛ ներլեզվական գործոններով պայմանավորված: Մի կողմից՝ նորաբանությունները ստեղծվում են նոր իրականություններ անվանելու համար, մյուս կողմից՝ ներլեզվական

գործընթացները հանգեցնում են արտաքին ու ներքին փոխառությունների, հոմանիշ բառերի երևան գալու, որոնք ոչ միշտ են ծառայում արտալեզվական հարթույթում նոր իրականություններ արտահայտելու: Յետևապես, նոր բառերը ներլեզվական և արտալեզվական գործոնների համադրման, մարդու աշխարհընկալման և աշխարհաճանաչողություն արդյունք են:

Է. Աթայանն իր «*Լեզուն և արտալեզվական իրականությունը*» աշխատության մեջ անդրադարձել է նշված խնդրին՝ լեզվափոխոսության հայեցակետից. հեղինակը արտալեզվական իրականությունը դիտարկում է իբրև լեզվամտածողության ակտիվացման անսպառ շտեմարան, լեզվական իրականությունը՝ իմաստաստեղծման ոլորտ, իսկ խոսքալեզվական իրողությունը ներկայանում է որպես կեցության ու կայացման՝ անհրաժեշտ նորմայի և ազատոճականի միասնություն (Атарян 1987):

Ըստ տեսաբան Ս. Էլոյանի՝ «յուրաքանչյուր նոր հրատարակված գիտատեխնիկական կամ հանրամատչելի ամսագիր, գեղարվեստական ստեղծագործություն (ազգային թե՛ թարգմանական), լրագրային հոդված աղբյուր է դառնում ինքնատիպ նոր բառագործածությունների, նոր փոխառյալ բառերի, միևնույն բառի փոխաբերական կամ այլ անուղղակի իմաստների առաջացման <...> Սակայն նորաբանություններ լեզվում առաջանում են ոչ միայն ժողովրդի կյանքում տեղի ունեցող պատմական վերափոխումների, հասարակական-քաղաքական տեղաշարժերի հետևանքով, այլև ստեղծագործական նպատակադրումով» (Էլոյան 2002:5):

Ն. Մկրտչյանն իր «*Բառերի կենսագրությունը*» գրքում արդարացիորեն գրում է. «Եվ այսպես ամեն դար, ամեն տարի, ամեն ամիս (թերևս նաև ամեն օր) իմաստափոխվում են բառերը, ամեն պահ բանաստեղծների, գրողների, գիտնականների, լրագրողների և ժողովրդի լայն զանգվածների խոսքում հանդես են գալիս նոր արտահայտություններ, նոր ոճեր, նոր դարձվածքներ, նոր իմաստներ՝ բառերի նոր երանգներ, այսինքն՝ ծնվում են ու մեռնում բառերը, և լեզուն փոփոխվում է աննկատ մեր աչքերի առջև» (Մկրտչյան 2004:289):

Լ. Աւետիսեանը վկայում է, որ «բառը չի ստեղծւում բառարմատների գուտ ֆիզիկական կցումով. բառաստեղծումը ենթադրում է արուեստագէտի հայեացք, իմաստասերի իմացականութիւն, գիտնականի վերլուծող և համադրող միտք» (Աւետիսեան 2015:91):

Ա. Մարտիրոսյանն առաջ է քաշել նորաբանութեան ըմբռնման գործընթացում կարևորվող երեք գործոն. «նորաբանութեան ընթռնման առաջին ճշգրտող գործոնը ժամանակայինն է: Երբ կատարվեց հեռուստատեսութեան գյուտը (անցյալ դարի 50-ական թթ.), նրա հետ կապված բոլոր բառերը նորաբանութեան էին նախորդ երեք-չորս տասնամյակ առաջ ստեղծվածների համեմատությամբ <...> Զառնող ճշգրտող գործոնը կիրարկելիութեան լեզվական տարածքն է, այսինքն՝ ո՛ր ժանրերում է այն գործառնում <...> ճշգրտող հաջորդ գործոնն է՝ պարզել, թե նորաբանութեան հասկացութեան ներքո ինչն է նորը» (Մարտիրոսյան 2007:32-33): Իսկ ըստ Ն. Ամոսովայի՝ «նորաբանութեան կոչվում այն բառը, որը նոր է լեզու մուտք գործել և խոսողների կողմից ընկալվում է որպէս նոր բառ՝ կապված հենց տվյալ ժողովրդի կյանքի ընթացիկ պահի հետ: Բառն այնքան ժամանակ է դիտվում նոր, քանի դեռ նրանում զգացվում է նորութիւնը» (տե՛ս Մարտիրոսյան 2007:30-31):

Գ. Սևակի տեսանկյունից՝ «լեզվի զարգացման յուրաքանչյուր նոր փուլում նրա բառապաշարի մեջ մտնող նոր բառերը կոչվում են նորաբանութեաններ» (Սևակ 1946:41):

Ն. Զովակիմյանի դիտանկյունից՝ «նորաբանութեաններում՝ որպէս այդպիսին, գոյութեան ունի և՛ նորը, և՛ հինը: Սակայն չի կարելի կարծել, թե նորը միայն հասկացութեանն է, իսկ հինը՝ դրա կաղապարը, նորը և՛ հասկացութեանն է, և՛ բառը, իսկ հինը՝ լեզվի այն նախընթաց աղբյուրները, որոնց հիման վրա ստեղծվել է այդ նոր բառը» (<http://kantegh.asj-oa.am/188/1/143-146.pdf> 28.02.2016-ի դրությամբ): Նշվածից կարելի է ենթադրել, որ նորաբանութեանները ստեղծվում են լեզվում արդեն իսկ առկամիջոցներից:

Ըստ Զ. Սարգսյանի՝ «նորաբանութեաններից պէտք է տարբերել դիպվածաբանութեանները, որոնք խոսքային հաղորդակցութեան կոնկրետ պայմաններում առաջացած բառեր են <...>

Դիպլոմատիան ու թյուններին մոտեն ներգործությունը, որոնք լեզվի բառապաշարում գոյություն ունենեցող լեզվական միավորներ են, բայց որոնք հեշտորեն կազմվում են լեզվում գոյություն ունեցող բառակազմական կադասթրուկտուրով» (<http://kantegh.asj-oa.am/942/1/54-61.pdf> 28.02.2016-ի դրությամբ):

Դիպլոմատիան ու թյուններին վերաբերող տարբեր հայեցակետերի մասին տեսաբանների դիտարկումները, մի կողմից, համընկնում են, մյուս կողմից՝ տարբերվում:

Ըստ Ֆ. Կատամբայի և Ջ. Ստոնհեմի՝ «դիպլոմատիան բառը տվյալ առիթով ստեղծված նորակազմությունն է» (Katamba & Stonham 2006:353):

Դ. Քրիսթալն իրավացիորեն առանձնացրել է լեզվագործածության հոսքնթացում ստեղծված նորակազմությունների մի քանի կարգ՝ 1. Definitely nonce (հաստատապես դիպլոմատիան ու թյուն), 2. Definitely neologism (հաստատապես նորաբանություն), 3. Uncertain between nonce and neologism (անորոշ կարգավիճակում՝ դիպլոմատիան և նորաբանության միջև), 4. Neither nonce nor neologism (i.e. an established item) (ո՛չ դիպլոմատիան ու թյուն, ո՛չ նորաբանություն) (Crystal 2000:221):

Դ. Քրիսթալը պնդում է, որ «նորաբանությունները ստեղծման հիմքում դիպլոմատիան բառեր են: Դիպլոմատիան բառը լեզվական ձև է, որը խոսողը որևէ առիթով ստեղծում է՝ գիտակցաբար կամ անգիտակցաբար <...> Դիպլոմատիան կազմությունները ժամանակի ընթացքում լայնորեն տարածում են գտնում լեզվակիր հանրության մեջ, այդպիսով՝ դիպլոմատիան ու թյուններից առաջ են գալիս նորաբանություններ» (տե՛ս Ahmad 2000:711):

Չատկանշական է այն, որ Դ. Քրիսթալը տարբերում է «hapax legomena» եզրույթը «nonce formations» եզրույթից և սահմանում դրանք հետևյալ կերպ՝ «Hapax legomena-ն այն միավորներն են, որոնք միմիայն մեկ օրինակով են ներկայացված տվյալ կորպուսում <...> Nonce formations-ն այն միավորներն են, որոնք խոսողը կամ գրողը ստեղծում է հանպատրաստից՝ տվյալ հաղորդակցական իրավիճակի պահանջից» (Crystal 2000:219):

Չեղինակը մեկ այլ հետաքրքիր դիտարկում է անում դիպլոմատիան ու թյունների մասին. «Երբ արձանագրում ենք, որ

դիպլածաբանությանը նախկինում ևս գործածվել է, այն կորցնում է իր դիպլածային կարգավիճակը: «Երկու անգամ կիրառված կազմությանները» (*twice-formations*) սկիզբն են այն երկար ուղու, որով բառը պետք է անցնի՝ նախքան որպես նորաբանություն ընդունվելը» (Crystal 2000:219-220): Իրականում, Դ. Քրիսթալը վկայում է դիպլածաբանության ներքին՝ դիպլածային կարգավիճակում չմնալու հավանականության մասին: Պետք է նշել նաև, որ Դ. Քրիսթալը գիտական ոճում գործածված դիպլածաբանություններն անվանում է *bonce formations*:

Ռ. Բաչիելլին իր «*Our worries about 'nonce': Something more than a terminological problem*» հոդվածում պնդում է, որ «դիպլածային բառը մեկանգամյա գործածության բառ դիտարկելը կապված է տվյալ բառի ծագման հետ <...> իրականում դրանք մեկանգամյա գործածության բառեր չեն <...> «դիպլածային» եզրույթը պետք է կիրառել ոչ միայն բառային միավորների, այլև դիպլածային բառակապակցությունների և բառիմաստային փոփոխությունների համար» (Bachielli 2010:83): Մենք համամիտ ենք Ռ. Բաչիելլիի հետ, որն առաջադրում է «դիպլածային բառեր» եզրույթը փոխարինել «*համատեքստային բառեր*» (*contextuals or contextual concretations*) եզրույթով, քանի որ դրանք ի հայտ են գալիս համատեքստի պահանջով (Bachielli 2010):

Ըստ Մ. Դուլլիի՝ «դիպլածային բառերը չպետք է շփոթել անիմաստ բառերի (*nonsense words*) հետ: Դիպլածային բառերը լեզվագործածության հոսքնթացում ստեղծված բառեր են» (Dooly 2006:57): Հարկ է փաստել, որ *nonsense word* եզրույթն անգլերենում նշանակում է՝ *a word having no conventionally accepted meaning* (<http://www.oxforddictionaries.com> 22.09.2016-ի դրությամբ): Իսկ տեսաբաններ Լ. Բաուերը, Ջ. Յոլմզը և Փ. Ուորենը «*անիմաստ բառերը*» համարում են նորաբանություններ՝ խոսակցական խնդիրներ ունեցող մարդկանց հաղորդակցման առանձնահատկությունների ուսումնասիրության շրջանակներում (Bauer, Holmes & Warren 2006):

Ն. Շանսկին դիպլածաբանությունները բառեր չի համարել՝ հիմք ընդունելով դրանց անվերադարձելի բնույթը. «Դրանք բառային ձևութամիացություններ են, որոնք գոյություն ունեն

այս կամ այն համատեքստում՝ որպես որոշակի նորմատիվ միավորներ և դրանով իսկ օժտված չեն վերարտադրելի ությամբ» (Шанский 1968:161):

Ուշադրություն են արժանի նաև Ն. Շանսկու՝ բառապաշարի ակտիվ և պասիվ շերտերի դիտարկումները, որտեղ ակնհայտորեն արտացոլված է նորաբանություն-դիպլածաբանություն երկփեղկումը: Պասիվ բառապաշարում նա ընդգրկում է, մի կողմից, հնացած բառերը, մյուս կողմից՝ նորաբանությունները, որոնք վերջնականապես չեն մտել համընդհանուր գրական կիրառության ոլորտ կամ նոր-նոր հայտնվել են այնտեղ: Ավելին, Ն. Շանսկին տարբերակել է բուն անվանողական և անվանողական-ոճական նորաբանությունները: Ընդհանուր առմամբ հեղինակը ժամանակակից բառային համակարգում բառերը բաժանել է 3 խմբի՝ արդիական բառային պաշար, հնացած բառեր և նորաբանություններ (Шанский 1975):

Մ. Մինևան փաստում է, որ «դիպլածային բառերը երևան են գալիս, երբ խոսողը կամ գրողը ցանկանում է խոսքին հաղորդել զանազան ոճական երանգներ և, այդպիսով, տպավորություն գործել լսողի կամ ընթերցողի վրա» (Minaeva 2007:37): Ավելին, ըստ Մ. Մինևայի՝ *դիպլածաբանությունները* լեզվում ստեղծվում են ձևաբանության «*Միավոր և գործընթաց*» կադապարի շրջանակներում: Բանն այն է, որ «*Միավոր և Յամաձայնեցում (Item and Arrangement/IA)*» և «*Միավոր և Գործընթաց (Item and Process/IP)*» կադապարները ձևաբանության համակարգի երկու հիմնարար կադապարներ են. *Item and Arrangement/IA* կադապարը վերաբերում է բառային միավորների հնչույթաբանական և ձևաշարահյուսական հատկանիշներին, մինչդեռ *Item and Process/IP* կադապարը վերաբերում է նոր բառային միավորներ կազմելու, բառաստեղծման, բառակազմական կենսունակության երևույթներին:

Յատկանշական է, որ Օ. Կուլիկովան տարբերակում է դիպլածային բառերը ներգոր բառերից. «Ներգոր բառերը գոյություն ունեն, «ապրում են» լեզվի պահեստարանում, դրանք լեզվի բառակազմական հնարավորություններում են, բայց, իրականում, կարող են երևան չգալ, եթե դրանց կարիքը չլինի» –

գրում է *Օ. Կուլիկովան (Куликова 2012:3):* Ըստ նրա դիտարկումների՝ *անհատական հեղինակային նորաբանությունները* բաժանվում են *ներգորքաբանի և դիպլածային բաների: Ներգորքաբանը* կազմվում են *լեզվի կենսունակ բառակազմական կաղապարներով: Իսկ դիպլածային բաների* առանձնահատկությունը իրենց անկանխատեսելիության մեջ է, և դրանք կազմվում են *լեզվի ոչ կենսունակ կաղապարներով՝ աչքի ընկնելով կառուցվածքային յուրահատկությամբ:*

Օ. Կուլիկովան վերհանել է նաև դիպլածային բաների մի շարք գործառնություններ, այն է՝ «ա/ գնահատողական գործառնություն. դիպլածային բաները լավագույնս արտահայտում են հեղինակի միտումն ու գնահատողականությունը, բ/ հուզական գործառնություն. դիպլածային բանն այս առումով գործիք է հեղինակի ձեռքին՝ ընթերցողի հույզերի վրա ներգործելու համար, գ/ լեզվական տնտեսման² գործառնություն. նորակազմությունը կարող է փոխարինել բառակապակցությանը կամ նույնիսկ նախադասությանը, դ/ հմաստային խտացման գործառնություն. սա թաքնված իմաստների ստեղծման գործառնություն է» (Куликова 2012:2-3):

Յու. Նեսվետայլոյի տեսանկյունից՝ «նորաբանությունը լեզվի նոր բան է, դա լեզվի իրողությունն ու փաստն է: Դիպլածային բաները տարբերվում են նորաբանություններից նրանով, որ դրանք խոսքի իրողություններ են» (Несветаило 2008:144-148):

Յու. Անտյուֆեևան մանրամասնորեն մեկնաբանում է դիպլածաբանությունն, ներգորքաբան և նորաբանությունն եզրույթները՝ տեսնելով դրանց առաջնային տարբերությունը «լեզու-խոսք» հակադրության մեջ: Յեղինակը վկայում է, որ «դիպլածաբանությունները և ներգորքաբաները խոսքի իրողություններ են, իսկ նորաբանությունները՝ լեզվի» (Антюфеева 2004:39):

² «Լեզվական տնտեսում» եզրույթը փոխառել ենք Ա. Մարտիրոսյանից: Ըստ նրա՝ «տերմինը պատկանում է անվանի լեզվաբան Օ. Եսաբրսենին, իսկ Ա. Մարտիրոսյան երևույթն անվանում է «լեզվական ջանքերի տնտեսման օրենք» (տե՛ս Մարտիրոսյան Ա., Արդի հայերենի նորաբանությունների բառակազմական կաղապարները, Էդիթ Պրինտ, Երևան, 2007, էջ 40):

Ուշագրավ է Յու. Անտյուստի մեկ այլ դիտարկում. «Ներգործությունը լեզվում իրացվում է երկու եղանակով՝ մի դեպքում դա հնարավոր է ստեղծել, մյուս դեպքում՝ այն կարող է ձեռք բերել դիպլոմատիկ կիրառություն: Իր հերթին, դիպլոմատիկ կազմությունը նույնպես իրացվում է երկու եղանակով: Եթե բառը լայն գործածությունն ձեռք չի բերում և մեկ անգամ է կիրառվել, ապա այն մնում է ներգործ-դիպլոմատիկ կարգավիճակում: Եթե դիպլոմատիկ բառը նորից է կիրառվում և գրանցվում բառարաններում, ապա այն ձեռք է բերում նորաբանության կարգավիճակ և վերածվում է լեզվի իրողության» (Антюфеева 2004:40): Կարելի է փաստել, որ Յու. Անտյուստի ներգործ և դիպլոմատիկ բառերը դիտարկում է մեկ հարթության մեջ և վկայում, որ դրանց զարգացումը հանգեցնում է նորաբանությունների երևան գալուն:

Վերը շարադրվածից հետևում է, որ նորաբանությունները պատկանում են լեզվին և լեզվի միավորներ են, իսկ դիպլոմատիկ բառերը՝ խոսքին և խոսքի միավորներ են: Տեղին է հիշել Ռ. Բարտի հետևյալ խոսքերը. «ոչինչ չի գետեղվում լեզվում առանց խոսքում «փորձվելու», և, ընդհակառակը, խոսքում չի կիրառվում այն, ինչը վերցված չէ լեզվի բառազանձից» (Barthes 1983 <https://rosswolfe.files.wordpress.com/2015/04/roland-barthes-elements-of-semiology1.pdf> 22.09.2015-ի դրությամբ):

Ըստ Ա. Լիկովի՝ դիպլոմատիկ բառերի սահմանումը, գրեթե ամբողջովին համընկնում է վերջինիս հանրահայտ սահմանման հետ, այն է՝ «բառն օգտագործվում է մեկ անգամ՝ համատեքստին հաղորդելով յուրահատկությունն ու որոշակիությունն, նորաստեղծ որոշակիությունն <...> Նոր կարող է լինել այն, ինչն ընդունակ է ժամանակի հետ հնանալ <...> Դիպլոմատիկությունները ենթակա չեն զարգացման և փոփոխման» (Лыков 1971:74-75):

Նկատենք, սակայն, որ Ա. Լիկովի այս տեսանկյունը չի արտացոլում այն, թե ինչպես են որոշ դիպլոմատիկ բառեր վերաստեղծվում լեզվագործածության հոսքնթացում և գետեղվում բառարաններում, կազմում նոր բառային միավորներ և կազմում բառակազմական փուլնջ:

Ա. Լիկովի հետ համընկնող տեսակետով է հանդես գալիս Ն. Բաղդասարյանը, որն իր «*Դիպլոմատիկ քառերը Յովհաննես Ծիրագի ստեղծագործություններում*» հոդվածում դիպլոմատիկ քառերը բնութագրում է հետևյալ կերպ. «Դիպլոմատիկ քառերը հաճախ շատ խոսուն են, գուցե ավելի, քան հիմնօրինակները, սակայն նրանք յուրատեսակ նոր քառեր են՝ նորաբանություններ: Ի տարբերություն նորաբանությունների՝ դիպլոմատիկ քառերը կարող են երբեք չդառնալ համագործածական, չմտնել բառապաշարի մեջ, չգրանցվել որևէ բառարանում, նրանք գուցե դատապարտված են մնալ ու միայն իրենց տեղում, գործածված լինել միայն մեկ անգամ, սակայն վկայել իրենց հեղինակի մտքի սլացքը, նրա երևակայության թափը և նրա ստեղծագործության՝ խոսքի սրտաբուխ լինելը» (Բաղդասարյան 2006:103): Ն. Բաղդասարյանի շարադրանքից կարելի է ենթադրել, որ դիպլոմատիկ քառերը, որպես անհատական բառաստեղծման լավագույն օրինակներ, մնում են ստեղծագործության էջերում և չեն ընդգրկվում լեզվի համագործածական բառապաշարում: Յեղիակը, թերևս, ի նկատի է ունեցել մասնավորապես գեղարվեստական գրականության մեջ ի հայտ եկած դիպլոմատիկ քառերը: Նկատենք, սակայն, որ յուրաքանչյուր նորաստեղծ բառ հայտնվում է լեզվում մեկանգամյա գործածությամբ, որից հետո կարող է կրկնվել խոսքաշարում և ձեռք բերել լայն գործածություն:

Իր հերթին, Թ. Ղարազուլյանը դիպլոմատիկ քառերը համարում է նորաբանություններ, բայց տարբերում է բուն կամ համագործածական նորաբանություններից՝ «պատկանելով լեզվի կիրարկությանը, այսինքն՝ միայն խոսքին, դիպլոմատիկ քառերը հանդես են գալիս որպես խոսքի, բայց ոչ լեզվի բառային միավորներ և պայմանավորված են խոսքային տվյալ իրադրությամբ <...> և դիպլոմատիկ քառեր են այնքան ժամանակ, քանի դեռ չեն զետեղվել բառարաններում և չեն ամրագրվել լեզվում»: Ըստ նրա՝ «նորաստեղծ քառերը, որոնց արժեքը պայմանավորված է միմիայն համատեքստով՝ լեզվաբանության մեջ անվանում են դիպլոմատիկ <...> Ամեն նորակազմություն նորաբանություն և է, եթե չի անվանում նոր երևույթ» (Ղարազուլյան 1983:202):

Ֆ. Խլ դաթյ անը *Նորաբանու թյ ու նների,*
դիպվածաբանու թյ ու նների և *հեղինակայ ին նորաբանու թյ ու նների*
մասին կատարել է հետևյալ դիտարկումը. «Նորաբանու թյ ու նները
լեզվի մեջ նոր ժամանակներում հանդես եկած բառեր են կամ
դարձվածքներ, որոնք կամ դեռ համընդհանուր գործածություն
չունեն, կամ գիտակցվում են իբրև նոր: Դիպվածաբանու թյ ու նները
գրողների, հրապարակախոսների, լրագրողների կողմից ստեղծված
բառեր են, որոնք գործածվում են միայն մեկ անգամ՝ խոսքին
արտահայտչություն և հաղորդելու նպատակով:
Նորաբանու թյ ու ններից սրանց տարբերությունն այն է, որ չեն
մտնում գրական լեզու, այլ մնում են հեղինակի
ստեղծագործության էջերում: Դրահամարել հաճախ կոչվում են նաև
հեղինակայ ին նորաբանու թյ ու ններ» (Խլ դաթյ ան 2009:207): Փաստորեն,
հեղինակի դիտարկումներում *դիպվածաբանու թյ ու նները*
նույնացվում են *հեղինակայ ին նորաբանու թյ ու նների* հետ:

Յեղինակայ ին նորաբանու թյ ու նները ստեղծագործ,
պատկերավոր մտածողության արգասիք են և երևան են գալիս թե՛
գեղարվեստական գրականության մեջ, թե՛ լրագրային
հոդվածներում, թե՛ լեզվագործածության հոսընթացում,
առհասարակ: Յեղինակայ ին նորաբանու թյ ու նները երբեմն մնում են
ստեղծագործության էջերում և դիտվում որպես
դիպվածաբանու թյ ու ններ, երբեմն վերաստեղծվում են, ձեռք
բերում լայն գործածություն և վերածվում նորաբանու թյ ու նների:

Ի. Գոլուբն արդարացիորեն նշում է, որ անհատական
նորաբանու թյ ու նները «յուրաքանչյուր անգամ ոչ թե
վերարտադրվում են, այլ վերստին ստեղծվում» (Գոլոբ 1997:167):
Յետևապես, կարելի է փաստել, որ քիչ հավանական է հեղինակայ ին
նորաբանու թյ ու նների աղբյուրը ճշգրտությամբ հատկորոշելը,
քանի որ դրանք կարող են կրկին վերաստեղծվել:

Ս. Էլոյանն իր «*Ժամանակակից հայերենի բառային
ոճագիտություն*» աշխատության մեջ անդրադառնում է
հեղինակայ ին նորաբանու թյ ու նների՝ հեղինակայ ին
պատկանելության խնդրին, քանի որ դյուրին է ճշգրտությամբ
որոշել որևէ գրողի հեղինակայ ին նորաբանու թյ ու նները:

Այս ափսոսով, Ս. Էլոյանի դիտանկյունից՝ «հեղինակային նորաբանությունների ստույգ որոշման խնդիրը հղի է թյուրիմացություններով ու սխալներով, քանի դեռ չունենք բոլոր գրողների ու բանաստեղծների բառարանները» (Էլոյան 1989:24): Իր «Արդի հայերենի նորաբանությունների բառարանում», հեղինակը հավաստում է, որ «հեղինակային բառերի իմաստները երբեմն դժվար է լինում բացատրել հեղինակների ինքնահատուկ պատկերավոր մտածողության պատճառով» (Էլոյան 2002:11):

Անհատական հեղինակային նորաբանություններն ունեն հեղինակային բնույթ և ծագումով պատկանում են միայն այդ հեղինակին: Ինչպես իրավամբ նշում է Ս. Ղազարյանը՝ դրանք «ստեղծվում են տվյալ լեզվում առկա բառակազմական միջոցներով, խոսքին պատկերավորություն, արտահայտչականություն են հաղորդում՝ իհարկե, նպաստելով նաև գրական լեզվի բառապաշարի հարստացմանը» (Ղազարյան 2015:183):

Ըստ Մ. Յովհաննիսյանի՝ «ի տարբերություն լեզվական նորաբանությունների՝ հեղինակային նորակազմությունները ոչ թե նոր երևան եկած առարկաների, երևույթների անվանումներ են, այլ հասկացություններ, երևույթը նոր ձևով արտահայտող լեզվամիջոցներ» (<http://kantegh.asj-oa.am/127/1/110-117.pdf> 08.03.2016-ի դրությամբ):

Անդրադառնալով մամուլում կիրառվող անհատական հեղինակային նորաբանություններին՝ Յ. Ղուկասյանը գրում է. «Անհատական հեղինակային դիպլածային բառերը, օտարաբանությունները, հասարակաբանությունները, ժարգոնային բառերը, հնաբանությունները և այլն, որոնք այնքան առատ են արդի մամուլի էջերում, ոճավորում են լրագրային խոսքը և տվյալ խոսքաշարում համարվում դիպուկ և անփոխարինելի» (Ղուկասյան 2006:85):

Դիպլածաբանությունները և հեղինակային նորաբանություններն աղերսներ ունեն ներգոր/արտենցիալ բառերի հետ: Ըստ Ֆ. Կատամբայի և Ջ. Ստոնհեմի՝ *ներգոր/արտենցիալ բառերը* հիմնականում ստեղծվում են բանավոր հաղորդակցման ընթացքում. «Մեծ հետաքրքրություն են ներկայացնում բանավոր

խոսքում (սակավադեպ գրավոր խոսքում) կիրառվող այն անթիվ նոր բառերը, որոնք ստեղծվում են տվյալ խոսքային իրադրության պահանջով» (Katamba & Stonham 2006:67-68):

Ըստ Լ. Սախարնիի՝ «նորաբանությունները նորակազմության երկու կարգերն են, ընդ որում դիպվածաբանությունները բառակազմական մակարդակում բաժանվում են ներգոր/պոտենցիալ և դիպվածային բառերի» (տե՛ս Մարտիրոսյան 2007:34):

Պ. Տարյովը համալիր բնութագրում է տալիս ներգոր բառերին: Ըստ նրա՝ «ներգոր բառի ստեղծումը պայմանավորված է «նախկինում բառակապակցությամբ նկարագրված արդեն հայտնի հասկացությունը մեկ բառով նշելու ձգտումով» (Լաբեբ 1978:22):

Մենք առաջնորդվել ենք Պ. Տարյովի այն հայեցակետով, որ «ներգոր բառերի և դիպվածաբանությունների միջև անանցանելի սահման գոյություն չունի: Ե՛վ դիպվածաբանությունների, և՛ ներգոր բառերի ստեղծման ժամանակ օգտագործվում են միևնույն բառակազմական կաղապարները <...> ներգոր բառի իմաստը հասկանալու համար, բացի նրա բաղադրիչների իմաստից անհրաժեշտ է նաև իմանալ համապատասխան բառակազմական կաղապարները, ինչպես նաև բառի բաղադրիչների միջև եղած իմաստակառուցվածքային փոխհարաբերությունները» (Լաբեբ 1978:22):

Ֆ. Խլղաթյանը ներգոր/պոտենցիալ բառերը դիտարկում է որպես դիպվածաբանությունների մի տարատեսակ և պնդում, որ «ներգոր/պոտենցիալ բառերը բառային կազմում դեռ չկան, եթե կազմում են էլ, ապա չեն մտնում նրամեջ» (Խլղաթյան 2009:210):

Ըստ Ա. Մարտիրոսյանի՝ «ներգոր/պոտենցիալ բառերը ստեղծվում են բառակազմական արդյունավետ կաղապարներով, իսկ դիպվածայինները՝ նվազ արդյունավետ, անարդյունավետ, դիպվածային կաղապարներով» (Մարտիրոսյան 2007:37):

Այժմ անդրադառնանք **նորաբանություն և դիպվածաբանություն** եզրույթների բառարանային սահմանումներին՝ փորձելով համարել ստացված տվյալները մասնագիտական գրականության մեջ առկա հայեցակետերի հետ: Նախևառաջ, տվյալների բնությունը սկսենք *նորաբանություն և* եզրույթի բառարանային

սահմանումներին, ապա անդրանդառնանք *դիպլոմատական լեզուն* եզրույթի քննությունը:

Այսպես, անգլերեն միալեզու բացատրական *Oxford Advanced Learner's Dictionary, Cambridge Dictionaries Online* և *Longman Dictionary of Contemporary English* բառարաններում **neologism** բառն ունի նմանատիպ սահմանումներ՝ a new word or expression or a new meaning of a word (OALD:1021); a new word or expression, or a new meaning for an existing word (<http://dictionary.cambridge.org> 22.09.2015-ի դրոյթում); a new word or expression, or a word used with a new meaning (<http://www.ldoceonline.com> 22.09.2015-ի դրոյթում). Ավելին, *Longman English Dictionary Online* բառարանում *neologism* բառի հոմանիշ է ներկայացվում **coinage** բառը (<http://www.ldoceonline.com> 22.09.2015-ի դրոյթում): *Հայոց լեզվի հոմանիշներ* բառարանում «**նորաբանություն**» և «**նորակազմություն**» բառերը նույնպես հոմանիշներ են (Սուքիասյան 2010:492):

Անգլերեն միալեզու բացատրական *Merriam-Webster Dictionary Online* բառարանը **neologism** բառը բացատրում է այսպես՝ 1. a new word, usage, or expression; 2. psychology: a new word that is coined especially by a person affected with schizophrenia and is meaningless except to the coiner (<http://www.merriam-webster.com> 22.09.2015-ի դրոյթում):

Անգլերեն միալեզու բացատրական *Collins English Dictionary Online* բառարանում **neologism** բառն ունի 3 սահմանում՝ 1. a newly coined word, or a phrase or familiar word used in a new sense; 2. the practice of using or introducing neologisms; 3. (rare) a tendency towards adopting new views, especially rationalist views, in matters of religion (<http://www.collinsdictionary.com> 22.09.2015-ի դրոյթում):

Անգլերեն միալեզու բացատրական *The Free Dictionary* բառարանը **neologism** բառը բացատրում է այսպես՝ 1. a new word, expression, or usage; 2. the creation or use of new words or senses; 3. a. the invention of new words regarded as a symptom of certain psychotic disorders, such as schizophrenia; b. a word so invented; 4. Theology, a new doctrine or a new interpretation of scripture (<http://www.thefreedictionary.com> 22.09.2015-ի դրոյթում):

Ըստ Օ. Ախմանովայի՝ «*Լեզվաբանական տերմիններ*» բառարանի՝ «նորաբանություն» նորաբանական շեղում կամ նոր հասկացություն

արտահայտելու համար ստեղծված բառ է կամ դարձվածք» (Ахманова 1969:261):

Յ. Պետրոսյանի, Ս. Գալստյանի և Թ. Ղարազուլյանի «*Լեզվաբանական բառարանում*» առկա են **Նորակազմ բառ, Նորամուտ բառ, Նորակազմություն և Նորաբանություն** եզրույթները: Ըստ նշված բառարանի՝ **Նորակազմ բառը** նորակերտ, նորահնար և նորաստեղծ բառ է, և՛ **Նորակազմություն**: Այն սահմանվում է որպես՝ «տվյալ ժամանակաշրջանում լեզվի բառակազմական միջոցներով ստեղծված նոր բառ» (Պետրոսյան, Գալստյան, Ղարազուլյան 1975:237): **Նորամուտ բառը** բացատրվում է հետևյալ կերպ՝ «լեզվի մեջ տվյալ ժամանակաշրջանում նոր մուտք գործած բառ», իսկ **Նորակազմությունը**՝ «նորակազմ բառ, ոճ, արտահայտություն» (Պետրոսյան, Գալստյան, Ղարազուլյան 1975:237): Նորաբանություն եզրույթը սահմանվում է նեղ և լայն առումով. «Նեղ առումով այս տերմինը գործածվում է լեզվի մեջ մտած և դեռևս ընդհանրացում չստացած նոր բառերը, դարձվածքները, ոճերը, քերականական յուրահատկությունները, ինչպես նաև նոր իմաստավորում ստացած բառերը նշելու համար: Լայն առումով՝ լեզվի զարգացման յուրաքանչյուր նոր փուլում այն բոլոր նոր բառերը, որոնք մուտք են գործում բառապաշարի մեջ <...> Նորաբանությունները լեզվի մեջ մտնում են բառակազմության, բառապատճենման և փոխառության ճանապարհով» (Պետրոսյան, Գալստյան, Ղարազուլյան 1975:236):

Է. Աղայանի «*Արդի հայերենի բացատրական բառարանում*» նորաբանություն բառն ունի 3 սահմանում՝ 1) *լեզվի մեջ նոր գործածվել սկսած՝ երևան եկած բառ՝ կամ բառակապակցություն կամ արտահայտություն*, 2) *գրավոր կամ բանավոր խոսքի մեջ գործածված այդպիսի բառ՝ բառակապակցություն՝ արտահայտություն*, 3) *այդ կարգի բառեր՝ բառակապակցություններ՝ արտահայտություններ գործածելը* (Աղայան 1976:1080):

Այժմ ներկայացնենք **դիպլոմաբանություն** եզրույթի բառարանային սահմանումները: Ընդ որում, հայերեն **դիպլոմաբանություն** եզրույթին անգլերենում համապատասխանում է 3 եզրույթ՝ **nonce word, hapax legomenon, occasionalism**:

Ուսուցման հարված անգլերեն միալեզու բացատրական գրեթե բոլոր բառարաններում (*Oxford Advanced Learner's Dictionary, Cambridge Dictionaries Online, Collins English Dictionary Online, The Free Dictionary*) **nonce word** բառն ունի նույնակերպ սահմանում՝ a nonce word or expression is one that is invented for one particular occasion (OALD 2006:1032); a word invented for a particular occasion or situation (<http://dictionary.cambridge.org> 22.09.2015-ի դրոյում); a word coined for one single occasion (<http://www.collinsdictionary.com> 5.03.2016-ի դրոյում); a word occurring, invented, or used just for a particular occasion (<http://www.thefreedictionary.com> 22.09.2015-ի դրոյում):

Անգլերեն միալեզու բացատրական *Oxford Dictionaries Online, Collins English Dictionary Online* և *The Free Dictionary* բառարաններում **occasionalism** բառը նույնպես ունի նույնատիպ սահմանում՝ the doctrine ascribing the connection between mental and bodily events to the continuing intervention of God (<http://www.oxforddictionaries.com> 22.09.2015-ի դրոյում); the post-Cartesian theory that the seeming interconnection of mind and matter is affected by God (<http://www.collinsdictionary.com> 22.09.2015-ի դրոյում); the doctrine that God is the sole casual actor and that all events are merely occasions on which God brings about what are normally thought of as their effects (<http://www.thefreedictionary.com> 22.09.2015-ի դրոյում):

Անգլերեն միալեզու բացատրական *Oxford Dictionaries Online* բառարանը **hapax legomenon** բառը բացատրում է այսպես՝ a term of which only one instance of use is recorded (<http://www.oxforddictionaries.com> 22.09.2015-ի դրոյում):

Անգլերեն միալեզու բացատրական *Merriam-Webster Dictionary Online* բառարանում **hapax legomenon** եզրույթը գրեթե նույն կերպ է սահմանվել՝ a word or form occurring only once in a document or corpus (<http://www.merriam-webster.com> 22.09.2015-ի դրոյում):

Անգլերեն միալեզու բացատրական *Collins English Dictionary Online* բառարանում **hapax legomenon** բառը ներկայացված է որպես **nonce word** բառի հոմանիշ (<http://www.collinsdictionary.com> 22.09.2015-ի դրոյում):

Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» բացակայում է **դիպլոմատ** բառը, փոխարենը առկա են **դիպլոմային, դիպլոմական, դիպլոմատություն** բառերը: **Դիպլոմային, դիպլոմական** բառերն ունեն հետևյալ սահմանումը՝ «դիպլոմով

եղած, պատահական», **դիպլածաբանություն**՝ 1) օրենքի ընդհանուր հոդվածների կիրառումը զանազան իրավական փաստերի նկատմամբ, 2) առանձին՝ մասնավոր դեպքերի նկատմամբ ընդհանուր դոգմաների կիրառումը՝ որպես միջնադարյան սխոլաստիկային հատուկ մեթոդ, 3) (արմրհ.): ճարտարամտություն, վարպետություն՝ կեղծ դրույթներ հաստատելու մեջ (կազուիստիկա) (Աղայան 1976:299):

Մ. Սուքիասյանի «*Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարանում*» **դիպլածաբանություն** բառի հոմանիշն է *կազուիստիկա* բառը (Սուքիասյան 1967:170):

Այսպիսով, բառարանային նյութի քննությունը ցույց է տալիս, որ նորաբանությունը լեզվի մեջ նոր երևան եկած բառ է, բառակապակցություն կամ արտահայտություն կամ նոր բառիմաստ: Դիպլածաբանությունները, մի կողմից, դիպլածային բառեր են կամ արտահայտություններ, որոնք ի հայտ են գալիս խոսքաշարում՝ հաղորդակցության որոշակի պայմաններում: Տվյալ պարագայում անգլերենում հիմնականում գործածվում են *nonce word* և *hapax legomenon* եզրույթները: Մյուս կողմից՝ դիպլածաբանությունը միջնադարյան սխոլաստիկան բնութագրող մեթոդ է՝ կեղծ դրույթներ հաստատելու հնարամտություն: Այս պարագայում անգլերենում առավել ասպես գործածվում է *occasionalism* եզրույթը:

Ժամանակակից տեսաբանների առաջադրած տեսությունները քննության են առնում նորաբանություններն ու դիպլածաբանությունները գործաբանական և ճանաչողական դիտանկյունից:

20-րդ դարի վերջում և 21-րդ դարի սկզբում ձևավորված գործաբանական հայեցակարգը հնարավոր է դարձնում նոր լեզվամիավորների ուսումնասիրությունն իրականացնել գործաբանական տեսանկյունից:

Գործաբանական տեսության մեջ կարևորվում են լեզվական գործունեությունը, ներգործող սուբյեկտները, հաղորդակցման նպատակները և արդյունքները, հաջողված լեզվական հաղորդակցումը, հաղորդակցման կանոնները և օրինաչափությունները, լեզվամիավորների ընտրությունը տվյալ հաղորդակցական իրավիճակում և հասարակական-մշակութային

համատեքստում: Ըստ որոշ տեսաբանների՝ խոսույթի հաղորդակցական-գործաբանական հայեցակարգը հնարավոր է դարձնում լեզվի համակարգի բոլոր բաղադրիչների խորաթափանց ուսումնասիրությունն ու բացահայտումը՝ ներառյալ բառային միավորները, հաղորդակցական իրավիճակը, խոսքային/ասացական ակտերի մասնակիցների մտադրությունը, հաղորդակցվողների սոցիալական և անձնական փոխարարությունները (Beebe 1993; Warring 2005; Van Dijk 1997): Միևնույն ժամանակ, հաղորդակցական-գործաբանական հարացույցը հնարավոր է դարձնում մանրամասնորեն քննության առնել լեզուն և լեզվագործածությունը հրապարակագրության շրջանակներում, և համապատասխանաբար, դիտարկել դրանք որպես խոսույթի իրավիճակային հատվածներ (Формановская 2002; Кудрякова 2008; Halliday & Hasan 2013):

Հաղորդակցական-գործաբանական դիտանկյունից՝ լեզվական նորակազմությունների երևան գալը պայմանավորված է ոչ միայն նոր բառերի միջոցով լեզվակիր հանրույթի մեջ որոշ հասարակական կարևորություն ունեցող իրականությունների անվանելու և ամրապնդելու անհրաժեշտությամբ, այլ և հաղորդակցական-գործաբանական գործոններով և պատճառներով, ինչպես նաև՝ նրանով, թե ինչ գնահատական է տրվում այս կամ այն երևույթին կամ իրադարձությանը, ինչ նպատակադրումով է առարկան կամ երևույթը նոր անվանումով ներկայացվում խոսույթում: Իսկ խոսքաշարում նոր լեզվամիավորների ընտրությունը և տեղին գործածումը պայմանավորված է զրուցակցի վրաներգործելու միտմամբ:

Դիպլոմատականությունները և/կամ նորաբանությունները, որոնք, թեպետ, ստեղծվում են լեզվում առկա բառակազմական կառավարների հիման վրա կամ լեզվի օրինաչափությունների խախտումով, հավակնում են առավել արտահայտիչ, պատկերավոր, երբեմն նաև՝ հուզական, գնահատողական ազդեցության, որն էլ, բնականաբար, ոճական արժեքն ապահովող գործոն է: Իսկ ոճական արժեքը, այն է՝ արտահայտչականություն, գնահատողականություն, հուզականություն, ապահովում են գործաբանական այն

ներգործությունը, որը միտված է ընթերցողին հետաքրքրելու և ուշադրությունը առավելագույնս գրավելու խնդրին:

Մեր խնդիրը չէ ամենայն խորությամբ ուսումնասիրել գործաբանությունը և ճանաչողական լեզվաբանությունը գիտակարգերի տեսական հիմքերը, պարզապես ցանկանում ենք անդրադարձ կատարել նորաբանությունների այն հատկանիշին, որն ապահովում է ընթերցողի վրատապաժորությունն թողնելու պայմանը:

Յ. Շմիդն իր «*New Words in the Mind: Concept Formation and Entrenchment of Neologisms*» հոդվածում քննում է լեզվի համակարգում նոր բառերի ամրապնդումը՝ ճանաչողական և գործաբանական տեսանկյունից (Schmid 2008): Մենք համամիտ ենք հեղինակի այն դիտարկման հետ, որ «լեզվի համակարգում նոր բառերի ամրապնդման գործընթացը սկսվում է բառի դիպվածային գործածությունից և ավարտվում դրա հանրայնացմամբ, այն է՝ դրանց ընդունումը անհատների և հասարակության կողմից» (Schmid 2008:2): Հեղինակը հավելում է նաև, որ «լեզվաբանության մեջ ընդունված է համարել, որ այս զարգացումն ուղեկցվում է բառայնացման բարձր ցուցանիշով, այն է՝ բարդ բառույթի որոշակի իմաստային, ուղղագրական, հնչույթաբանական կամ շարահյուսական հատկանիշները պայմանավորում են դրա գետեղումը լեզվի բառաֆոնդում» (Schmid 2008:2):

Նոր բառերի ստեղծման և լեզվի համակարգում ամրակայման առնչությամբ Ա. Մեթքաֆը գրում է. «Յուրաքանչյուր նոր բառունի իր պատմությունը, բայց հաջող կազմված³ նոր բառերը հանրայնացվում են, իսկ անհաջող կազմված նոր բառերը՝ չեն հանրայնացվում» (Metcalf 2002:xii): Խնդրի հետ կապված տեղին է նշել, որ Ռ. Բենցեսը մեջբերում է Լ. Բաուերի առաջադրած հետևյալ դասակարգումը՝ գոյություն ունեցող/առկա բառ (*existing word: from the moment a word is coined*), ծանոթ բառ-միավոր (*item-familiar word: a word may be familiar to individual speakers, without having become a part of the norm of the language*), ամրակայված բառ (*established word: once a word is item-familiar to a large enough*

³ «Հաջող կազմված» արտահայտությունը փոխառել ենք Վ. Սարգսյանից (<http://www.litopedia.org>):

sub-set of the speech community to make it worth listing in reference works) (Benczes 2006:9):

Իր հերթին, Յ. Շմիդը արդարացիորեն առանձնացնում է նոր բառերի զարգացման քննության երեք մոտեցում՝ «1. կառուցվածքային (բառի առանձնահատկությունների զարգացման մասին), 2. հանրագործաբանական (բառի հանրայնացման մասին), 3. ճանաչողական (հասարակության անդամների գիտակցության մեջ բառի հետ կապված հասկացության մասին գիտելիքների ձևավորման մասին)» (Schmid 2008:2-3): Հեղինակն իրավամբ գտնում է, որ նշված մոտեցումները համապատասխանաբար ներառվում են բառի զարգացման հետևյալ գործընթացներում՝ բառայնացում, բառի հանրայնացում և հասկացության սահմանում:

Հեղինակն առանձնացնում է նաև նոր բառերի քննության երեք մոտեցում.

1. կառուցվածքային մոտեցում՝ դիպլածաբանություններ, ամրագրում/կայունացում, բառայնացված բառույթ,
2. հանրագործաբանական մոտեցում՝ դիպլածաբանությունների ամրապնդում և լեզվի համակարգում, հանրայնացված բառույթ,
3. ճանաչողական մոտեցում՝ կեղծ/շինծու հասկացություն, առարկայական վերաբերության գործընթաց և առարկայական վերաբերություն ունեցող հասկացություն (Schmid 2008:3):

Իսկ առարկայական վերաբերությունը սահմանվում է այսպես՝ «բառի առարկայությունը ենթադրում է համապատասխան առարկայի/իրի առարկայությունը» (Schmid 2008:5): Յ. Շմիդը հավելում է, որ «առարկայական վերաբերությունը (hypostatization) բնորոշ է բոլոր բառերին՝ որոշ տարբերություններով: Այսպես, գոյականներն ունեն ավելի մեծ առարկայական վերաբերության ներուժ, քան մյուս խոսքի մասերը <...> Ավելին, նույնիսկ բոլոր գոյականները չէ, որ ունեն միևնույն առարկայական վերաբերությունը, քանի որ գոյականները լինում են թե՛ թանձրացական, թե՛ վերացական: Որպես կանոն, վերացական գոյականները չունեն առարկայական վերաբերության բարձր աստիճան» (Schmid 2008:5-6): Յ. Շմիդը հավելում է նաև, որ անգլերենի բառաֆոնդը համալրած նոր բառերում առարկայական վերաբերությունը վառարտահայտված չէ:

Իսկ ըստ որոշ տեսաբանների՝ նոր լեզվամիավորներում առավել ասես արտալեզվական առարկայական վերաբերություն ունեն բարդ բառերը (Downing 1977; Bauer 1979):

Յ. Շմիդի շարադրանքից կարելի է եզրակացնել, որ յուրաքանչյուր նորաստեղծ բառ դիպլոմատականություն է, որը կարող է ձեռք բերել լայն գործածություն, ընդունվել լեզվակիր հանրության կողմից, ամրապնդվել լեզվի համակարգում և համալրել լեզվի սերնդեսերունդ փոխանցվող բառաֆոնդը:

Նորակազմությունների ուսումնասիրության մեջ մյուս կարևորագույն խնդիրը դրանց ներակայած իմաստի վերհանումն է: Այս գործընթացն առավել դյուրին են դարձնում մի շարք գործոններ՝ «համատեքստային տեղեկությամբ, ձևաբանական կառուցվածքի թափանցիկությունը, բառակազմիչ ձևության մասին պատկերացում կազմելը և բաղադրիչների միջև իմաստային հարաբերությունների մասին պատկերացում կազմելը» (Schmid 2008:13): Յեղիևակը հավելում է նաև, որ «ճանաչողական տեսանկյունից՝ խոսքաշարում նոր բառերը կազմվում են կենսունակ բառակազմական կաղապարներով, քանի որ դրանք ամրագրված են լեզվում: Գործաբանական տեսանկյունից՝ նորակազմությունների իմաստային թափանցիկությունը պայմանավորված է համագործակցության սկզբունքով: Յացեագրողը փորձում է հստակ ձևակերպել հացեատիրոջն ուղղված հաղորդումը: Դա է պատճառը, որ նոր բառը կազմվում է լեզվում արդեն առկա բառակազմական կաղապարների հիման վրա: Ասելիքն առավել ասես հստակ ձևակերպելու արդյունքում հաղորդակցվողները նույնիսկ չեն նկատում, որ լեզվում ստեղծվել է նոր բառ» (Schmid 2008:15-16)

Ըստ տեսաբան Ջ. Էյթչիսոնի՝ «խոսքաշարում ստեղծվում են նոր լեզվամիավորներ, որոնք ունեն հնչույթաբանական, ձևաբանական և իմաստային թափանցիկություն» (Aitchison 2003:181f): Յ. Շմիդի տեսանկյունից՝ դիպլոմատականությունները կազմվում են բառակազմական կենսունակ կաղապարներով <...> անկենսունակ կաղապարներով ձևեր հազվադեպ են ստեղծվում (Schmid 2008:14-15): Ռ. Բայենը և Ա. Նեյջըթը ևս համընկնող հայեցակետով են հանդես

գալիս՝ «քիչ հավանական է, որ հաճախակի գործածվող, բայց իմաստային թափանցիկություն և չունեցող բառերը գրանցվեն մտավոր բառաֆոնդում (*mental lexicon*)» (Baayen & Neijt 1997:568):

Յու. Անտյունֆելան և Վ. Չաբոտկինան ևս վկայում են, որ նոր բառը օժտված է թե՛ գործաբանական, թե՛ ճանաչողական արժեքով:

Ըստ Յու. Անտյունֆելայի՝ «գործաբանական դիտանկյունից՝ նոր բառում կողավորվում է խոսողի յուրօրինակ մտադրությունը: Նոր բառում կողավորվում է եղանակավորում, անսպասելիություն և զարմանք, ինչպես նաև ինտենսիվություն, քանի որ նոր բառ ստեղծողի հուզազգայական վիճակը ևս կարող է ազդել նոր հասկացության անվանման գործընթացի վրա: Երբ բառը հանրայնացվում է և ամրապնդվում լեզվի համակարգում, վերաստեղծվելով լեզվում՝ այն ձեռք է բերում լրացուցիչ գործաբանական համատեքստային հատկանիշներ» (Антюфеева 2004:93-94):

Վ. Չաբոտկինայի դիտանկյունից՝ ճանաչողական և գործաբանական գործոնները տարբեր դերակատարում ունեն նոր բառի ստեղծման ինդրում: Մենք համամիտ ենք Վ. Չաբոտկինայի հետ, որ «նոր բառերի ստեղծման պատճառները հիմնականում գործաբանական բնույթի են: Որպես օրինակ վերցնենք դասական հռետորաբանության պոստուլատները՝ որպես նոր փոխաբերությունների ստեղծման կանխենթադրույթներ՝ անհրաժեշտություն անվանելու նոր առարկաները և երևույթները, բ/ առանձնակի արտահայտչականության հասնելու միտում, գ/ բարեհնչության հասնելու միտում»: Յեղիսակը հավելում է նաև, որ «ճանաչողական գործոններն այստեղ որոշակի դերակատարում ևս ունեն: Դեռևս չանվանված երևույթն անվանելու անհրաժեշտությունը ճանաչողական ազդակ է <...>» (Заботкина 1989:6-8): Իսկ ինչպես իրավամբ գրում է Ա. Աբրահամյանը՝ «անվանել առարկան նշանակում է կապ հաստատել լեզվի և արտալեզվական իրականության միջև: Այդ կապը երկու առում ունի, երկու ուղղությամբ է հաստատվում: Մեկը ընթացքն է արտալեզվական իրականությունից դեպի լեզուն՝ աշխարհի լեզվականացումը՝ այն, ինչ է. Աթայանն անվանում է նշանակություն և <...> Մյուս ընթացքն է լեզվից դեպի արտալեզվական իրականությունը՝ լեզվի

«գետեղու մը» աշխարհում՝ այն, ինչ է. Աթայանն անվանում է իմաստ» (Աբրահամյան 2011:20): Հեղինակը հավելում է նաև, որ «անվանել առարկան նշանակում է կապ հաստատել ներլեզվական և արտալեզվական բովանդակությունների միջև <...> առարկա-անուն, բովանդակություն-արտահայտություն անցումները բովանդակային անցումներ են, նրանց հանգուցակետը բովանդակության ոլորտում է գտնվում» (Աբրահամյան 2011:20-21):

Գործաբանական ուսումնասիրություններում կենտրոնական տեղ է զբաղեցնում համատեքստը (Колшанский 1980; Kasher 1998; Levinson 2003; Givón 2005; Adolphs 2008; Ariel 2010; Chapman 2011; Hart 2011; Zufferey 2015): Համատեքստը դիտվում է որպես «մի համընդհանուր երևույթ, որպես լեզվական և ոչ լեզվական նշանակությունների ամբողջություն, որոնք իրենց արտահայտում են ստանում լեզվական և ոչ լեզվական մակարդակներում» (Колшанский 1980:23):

Մենք համամիտ ենք Վ. Չաբոտկինայի հետ, որ «բառի ընտրությունը պայմանավորված է համատեքստով <...> Միևնույն ժամանակ տվյալ լեզվով հաղորդակցվողները պետք է ունենան որոշակի գիտելիքներ համատեքստի մասին: Խոսողի և լսողի հաջող հաղորդակցման համար պետք է լինի ընդհանուր գործաբանական և ճանաչողական «տարածություն/միջակայք» (Заботкина 1991:6): Ըստ Ջ. Մեյի՝ վերջինս ստեղծվում է աշխարհի համընդհանուր հասկացության չափերով: Հաղորդակցվողները պետք է ներգրավված լինեն աշխարհի «միասնական բառայնացման» մեջ՝ գործաբանական համատեքստին համապատասխան (Mey 1996): Իսկ ըստ Տ. Գիվոնի՝ գործաբանական համատեքստն ունի երեք մակարդակ՝ 1. աշխարհի համընդհանուր մշակութային չափերը, 2. ցուցչային/դեփկտիկ իրավիճակը չափերով համատեքստ, 3. խոսույթային համատեքստ/համընդհանուր նախորդող համատեքստ (Givón 2005): Անհերքելի է այն, որ աշխարհի մշակութային չափերը և հասկացության չափերը էական նշանակություն ունեն: Իսկ աշխարհի հասկացության չափերը մշտապես փոփոխվում է, հետևապես, առաջ է գալիս այն ուսումնասիրելու անհրաժեշտությունը:

Նոր բառերի՝ լեզվում ամրապնդման առնչությամբ տեղին է նշել, որ Ա. Բարլեգիզյանն առանձնացնում է նոր բառերի երեք շերտ. ա) դիպլոմատականության (օտար կամ վաղանցիկ բառեր և արտահայտություններ), բ) նորաբանություններ, որոնք դեռ չեն կայունացել, գ) նորաբանություններ, որոնք անցել են «հանրայնացման» փուլը և արձանագրվել բացատրական բառարաններում» (Բարլեգիզյան 1997:73-74):

Ա. Բարլեգիզյանի հետ համընկնող տեսակետով է հանդես գալիս Յ. Սարգսյանը: Վերջինս իրավամբ առանձնացնում է բառի ստեղծման հետևյալ փուլերը.

- նոր բառի ստեղծումը մարդու կողմից (originator),
- բառի հանրայնացում (բառի ընդունումը հասարակության կողմից),
- բառի բառայնացում (բառի ամրապնդումը լեզվի համակարգում),
- բառի տարածումը միջնորդների կողմից (purveyors)
(<http://kantegh.asj-oa.am/942/1/54-61.pdf> 28.02.2016 15.02.2016-ի դրությամբ):

Ամփոփելով ուսումնասիրության արդյունքները՝ փաստենք, որ *նորաբանություններ, դիպլոմատականություններ և ներգործ բառեր* եզրույթների մասին մինչ օրս տիրապետող են տարբեր ըմբռնումներ, և միասնական մոտեցում գոյություն չունի: Տեսաբանների հիմնական մոտեցումների վերլուծությունը ցույց է տալիս, որ նոր բառերն առավել ապես կազմվում են բառակազմական կենսունակ կադապարներով և ունեն իմաստային հստակություն: Դասայմանավորված է ճանաչողական և գործաբանական գործոններով. լեզվական նորակազմությունները ստեղծվում են լեզվում արդեն իսկ ամրագրված կենսունակ բառակազմական կադապարներով՝ ասելիքն առավել ապես հստակ ձևակերպելու նպատակադրումով:

1.2. Բառակազմական կենսունակությունը և այն խոչընդոտող գործոնները

Բառակազմական կենսունակությունը և նոր բառերի ստեղծման սահմանափակումները միմյանց հակադրվող լեզվական երևույթներ

են: Առաջինը նպաստում է բառատեղծմանը, երկրորդը՝ խոչընդոտում
այն: Նախ, քննության առնենք բառակազմական կենսունակությունը,
այնուհետև փորձենք բացահայտել այդ գործընթացը խոչընդոտող
գործոնները:

Կենսունակությունը սահմանվում է որպես «աճանցի կամ
ձևաբանական գործընթացի յուրահատկություն՝ ստեղծելու նոր
բաղադրյալ բառեր, որոնք չեն հակասում լեզվի ընդհանուր
համակարգին» (Adams 1973:197; Bauer 1983:18; Spencer 1991:49; Plag
2003:44/2004:4): Ըստ Ֆ. Կատամբայի և Ջ. Ստոնհեմի՝
«կենսունակությունը երբեմն նույնացվում է
ստեղծագործականություն եզրույթի հետ և վերաբերում է
մարդկային բոլոր լեզուների հնարավորությանը՝ սահմանափակ
միջոցներով ստեղծելու անսահմանափակ թվով բառեր և ասույթներ»
(Katamba & Stonham 2006:74):

Ինչպես վերը նշվեց՝ կենսունակությունն եզրույթն աղերսներ
ունի ստեղծագործականությունն եզրույթի հետ: Ըստ Յոնեսի և
Ռենոֆի՝ բառակազմական կենսունակությունը և
ստեղծագործականությունը միևնույն երևույթներն են, ըստ Յեյի՝
բառակազմական կենսունակությունը աղերսներ ունի
ստեղծագործականության հետ, բայց չի նույնանում վերջինիս հետ
(տե՛ս Munat 2007:101):

Ստեղծագործականությունն ընդգրկում է նորարարություն և
նորույթ: Թեև այն ուսումնասիրվել է տարբեր գիտակարգային
(հոգեբանական, ճանաչողական, գործաբանական, կենսաբանական և
այլն) մոտեցումներով, այդուհանդերձ դյուրին չէ սահմանել
ստեղծագործականությունը: Ստեղծագործականությունը բնորոշ է
լեզվագործածությանն առհասարակ՝ «ամենօրյա գովազդային
լեզվից, լոզունգներից մինչև գրական տեքստերը» (Carter 2004:18):
Ինչպես իրավամբ նշում է Ռ. Քարթերը իր «*Language and Creativity: the Art of
Common Talk*» գրքում՝ «ամենօրյա հաղորդակցումն ուղեկցվում է
բառախաղով և հումորով: Բուլվարային թերթերին բնորոշ է
երկիմաստ/երկդիմի բայերի գործածումը <...> Այս ամենը
ստեղծագործականության դրսևորում է» (Carter 2004:19):

Տեսաբան Ռ. Քարթերը քննության է առել նաև «ձևաբանական ստեղծագործականություն» երևույթը՝ հավաստելով, որ «լեզվագործական հոսքնթացում ի հայտ են գալիս նոր բառեր՝ լեզվում առկա բառերից» (Carter 2004:97): Մեր ուսումնասիրած լեզվանյութը հավաստում է այս դրույթը, ուստի կարելի է փաստել, որ ձևաբանական ստեղծագործականությունը լայն ընդգրկում ունի խոսքաշարում: Իսկ Ռ. Քարթերը լուսաբանում է նշված երևույթը՝ որպես օրինակ բերելով *heart drawer* և *crawly* բառերը: Առաջինը՝ *heart drawer*, նշանակում է՝ *կանացի վարտիք* և կազմվել է *knickers* բառի բառախաղային համաբանությամբ, երկրորդը՝ *crawly*, *նշանակում է՝ անտեղի քծնող* և ստեղծվել է *crawl* բառի հիման վրա:

Մասնագիտական գրականության մեջ առանձնացվում է ստեղծագործականության երկու տարատեսակ՝ բառակազմական կանոններով ղեկավարվող ստեղծագործականություն և բառակազմական կանոններից շեղվող ստեղծագործականություն: Բանն այն է, որ բառակազմական գործընթացը մեծամասամբ կանոնակարգված է. այս գործընթացներից կամ ածանցներից մի քանիսն առավել հաճախակի են կիրառվում նոր բառեր կազմելու համար, քան մյուսները: Միևնույն ժամանակ, ստեղծվում են բառեր, որոնք հիմնված չեն բառակազմության մեջ առկա կանոնների/օրինաչափությանների վրա (Katamba & Stonham 2006):

Համաձայն մեկ այլ մոտեցման՝ կենսունակությունը լեզվում հատկորոշվում է առկա և հնարավոր բառերի հարաբերակցությամբ: Առկա բառերը բառարաններում գետեղված/արձանագրված բառերն են, իսկ հնարավոր բառերը՝ բոլոր այն բառերը, որոնք կարող են երևան գալ բառակազմական օրինաչափությունների համապատասխան (Bolinger & Aronoff 1976):

Ի. Փլագի տեսանկյունից կենսունակությունը և՛ քանակական, և՛ որակական հասկացություն է: Ի. Փլագը պնդում է, որ «մի կողմից՝ կենսունակությունը որակական հասկացություն է. գործընթացը և/կամ ածանցը կամ օժտված է այս հատկանիշով կամ օժտված չէ: Մյուս կողմից՝ դա քանակական հասկացություն է. ձևաբանական կենսունակությունը մի աստիճանական երևույթ է, այն է՝ որոշ

ծևաբանական գործընթացներ հիմնականում կարող են առավել կենսունակ լինել մյուսներից» (Plag 2004:3):

Այժմ անդրադառնանք բառակազմական կենսունակության հակադիր երևույթին, որը մասնագիտական գրականության մեջ ստացել է *Blocking* անվանումը (Katamba & Stonham 2006): Վերջինս բառաստեղծման համակարգում կենսունակությունը խաթարող, խոչընդոտող գործոնների համառոտակի բնութագրումն է, դրանց համալիր ամբողջությունը:

Անգլերենում բառաստեղծումը խոչընդոտող գործոնների ուսումնասիրությամբ զբաղվել են Յ. Շմիդը (Schmid 2008), Ֆ. Կատամբան և Ջ. Ստոնհեմը (Katamba & Stonham 2006), Վ. Ջովանովիչը (Jovanović 2003), Լ. Բաուերը (Bauer 2001), Յ. Գիգերիչը (Giegerich 2001), Ս. Մանովան (Manova 2015), Ռ. Լիբերը (2004/2014), Մ. Արոնոֆը (Aronoff 1976/1978) և այլք: Հայ լեզվաբաններից նշված երևույթին անդրադարձել է Ն. Հեքեքյանը՝ իր «*Հայերենի օրինաչափությունների խախտումով կազմված տերմինիկական տերմինների մասին*» հոդվածում (Հեքեքյան 2002:59-67): Տեսաբանն անդրադառնում է բառակազմական և շարահյուսական օրինաչափությունների, բառերի կապակցելիության սահմանների, իմաստի խախտումով կազմված, բառ-բաղադրիչների սխալ գործածությամբ և համակարգայնության սկզբունքի խախտումով կազմված եզրույթներին: Հեղինակը մասնավորապես անդրում է, որ «տերմինային յուրաքանչյուր միավոր լեզվում ամրագրվում ու գոյատևում է, եթե առավել ճշգրիտ է արտահայտում հասկացությունը, կազմված է լեզվի բառակազմական և քերականական օրինաչափություններով, համակարգայնության սկզբունքով, նրանում խախտված չեն բառերի կապակցելիության սահմանները և այլն» (Հեքեքյան 2002:59):

Լեզվում նոր բառերը սովորաբար ի հայտ են գալիս բառակազմական կանոններին և ներքին օրինաչափություններին համապատասխան, սակայն, ինչպես իրավամբ նշում է Յ. Շմիդը՝ «լրագրային, գովազդային և հումորային տեքստերում կամ հանպատրաստից խոսքում հաճախակի ենք հանդիպում լեզվի բառակազմական օրինաչափությունների խախտումով կազմված

բառեր՝ նորաբանությունների ու շարժումները գրավելու գործառնությունների իրացման նպատակադրումով» (Schmid 2008:16):

Ք. Քվիփերը և Վ. Ալլանը անգլերենի օրինաչափությունների խախտումով կազմված բառերին անդրադառնալիս կիրառում են «*possible words*» և «*impossible words*» արտահայտությունները (Kuiper & Allan 2004), այն է՝ ընդունելի և մերժելի բառեր:

Ըստ էության յուրաքանչյուր վերլուծությունից ստացված տվյալների՝ առանձնացրել ենք բառաստեղծումը խաթարող հնչույթաբանական, ձևաբանական, իմաստաբանական, գեղագիտական և գործաբանական գործոնները:

▪ **Հնչույթաբանական գործոններ**

Բառաստեղծման սահմանափակումների համակարգում հնչույթաբանական գործոնները կապված են բաղադրող հիմքի և վերջավորության հնչույթաբանական հատկանիշների, ինչպես նաև՝ հնչյունների անհամատեղելի հաջորդականության հետ (Katamba & Stonham 2006; Plag 1999/2001): Արձանագրում ենք *-en*, *-ly*, *-al*, վերջածանցներով բառերի բաղադրման սահմանափակումներ: Ստացված տվյալները ներկայացնենք ստորև:

-en վերջածանց. «*-en* վերջածանցով բառերի կազմումը սահմանափակված է սկսնական իմաստ արտահայտող որոշ բայերի պարագայում (*verbs with inchoative meaning*): Սկսնական իմաստ արտահայտող բայերը, սովորաբար, բաղադրվում են միավանկ շփական և/կամ պայթական բաղաձայնով վերջացող ածականի հիմքին *-en* վերջածանցի ավելացմամբ: Ածական հիմքին, ըստ ընտրության, կարող է նախորդել ձայնորդ: Այլ պարագայում քիչ հավանական է կազմել սկսնական բայեր: Սրանից հետևում է, որ *blacken, whiten, fasten* բառերի կազմությունը հնարավոր է, մինչդեռ *dryen, greenen, bluen, dimmen* բառերի կերտումը սահմանափակված է» (Katamba & Stonham 2006:76):

-ly վերջածանց. ածականի հիմքից *-ly* վերջածանցով մակբայերի կազմումը խնդրահարույց է և տեսականորեն քիչ հավանական՝ բաղադրող հիմքի *-ly* վերջածանցի պարագայում: Ֆ.Կատամբան արդարացիորեն նշում է. «*-ly* վերջածանցի հավելումը կհանգեցնեք բաղադրվող մակբայում ոչ նախընտրելի *-lily* հերթագայությանը:

Սրանից հետևում է, որ հիմքի հատույթային հնչույթաբանությունը կանխորոշում է *-ly* վերջածանցով բառաբաղադրման հավանականությունը» (Katamba & Stonham 2006:77): Յետևաբար, ըստ տեսաբանների Ֆ. Կատամբայի և Ջ. Ստոնհեմի՝ *friendlily, sisterlily, miserlily, lovelily, lonelily*, ևն մակբայերի կերտումը սահմանափակված է:

-al գոյականակերտվերջածանց. Նշված վերջածանցը ավելանում է միմիայն բառավերջի վանկում շեշտկրող բայերին (*arrival, denial, approval*), հետևապես՝ *tamperal, boycottal* գոյականների կազմումը *-al* վերջածանցի միջոցով անգլերենի հնչույթաբանական օրինաչափությունների խախտում է, քանի որ նշված բառերում շեշտն առաջին վանկի վրա է ընկնում (Plag 2003:6):

Նկատենք, սակայն, որ վերը նշվածը համընդհանուր հնչույթաբանական բնույթ չի կրում, քանի որ համանուն *-al* ածականակերտվերջածանցը տվյալ սահմանափակումը չունի (e.g. *occasional, professional, architectural*):

Իրենց հերթին, տեսաբաններ Ք. Քվիփերը և Ս. Ալլանը փաստում են, որ *fmukg* բառի ստեղծումը անգլերենի օրինաչափությունների խախտում է, քանի որ հնչյունների նման հաջորդականությունը բնորոշ չէ անգլերենին (Kuiper & Allan 2004):

▪ **ձևաբանական գործոններ**

Բառաստեղծմանը խոչընդոտող ձևաբանական գործոնները կապված են, մի կողմից, բառի ծագման, մյուս կողմից՝ բառակազմիչ վերջածանցի ձևաբանական հատկանիշների հետ: Ըստ երևույթին ածանցման հիմնականապարում որոշ ածանցներ ավելանում են ***միմիայն բնիկ*** կամ ***միմիայն փոխառյալ*** բաղադրող հիմքին⁴: Որոշ ածանցներ չեն ավելանում *լատիներեն, հունարեն, ֆրանսերեն* ծագում ունեցող բառերին: Նշյալը, մասնավորապես, վերաբերում է *գոյականակերտ -hood, գոյականակերտ -ant, ածականակերտ -al*,

⁴ Չայագիտական աշխատություններում կիրառվում է ***native word*** անգլերեն եզրույթի հայերեն համարժեք ***բնիկ բառ*** եզրույթը (տես Սուքիասյան Ա. Ժամանակակից հայոց լեզու. Ե., ԵՊՀ հրատարակչություն, 2008, էջ 183):

գոյականակերտ *-ity* վերջածանցներին, և *in-/im-/il-/ir-* նախածանցներին (Katamba & Stonaham 2006):

Ստորև ներկայացնենք ստացված տվյալները:

-hood վերջածանց. ավելանում է բնիկ արմատներին (հիմնական ձևույթ) + *-hood* (երկրորդական ձևույթ) (Katamba & Stonaham 2006):

Այսպես օրինակ, *boyhood, brotherhood, manhood* բառերի կերտումը չի հակասում անգլերենի ձևաբանական օրինաչափություններին, մինչդեռ՝ *judgehood, governorhood, colonelhood, ministerhood* բառերի կազմումը անգլերենի օրինաչափությունների խախտում է, քանի որ *judge, governor, colonel, minister* բառերը փոխառություններ են անգլերենում. *judge* բառը նախլատիներենից (*judex, judic*) փոխառվել է հին ֆրանսերեն (*juge*), ապա՝ անգլերեն (<http://www.oxforddictionaries.com> 22.09.2016-ի դրությամբ), *governor* բառը ևս լատիներենից (*gubernator*) փոխառվել է հին ֆրանսերեն (*gouverneur*), հետագայում, միջին անգլերենի ժամանակաշրջանում՝ փոխառվել անգլերեն (<http://www.oxforddictionaries.com> 22.09.2016-ի դրությամբ), *colonel* բառը փոխառվել է ֆրանսերենից (*coronel*) 16-րդ դարի կեսերին (<http://www.oxforddictionaries.com> 22.09.2016-ի դրությամբ), *minister* բառը նախ փոխառվել է լատիներենից ֆրանսերեն, ապա՝ հին ֆրանսերենից (*ministre*) միջին անգլերենի ժամանակաշրջանում փոխառվել է անգլերեն (<http://www.oxforddictionaries.com> 22.09.2016-ի դրությամբ): Այսպիսով, ստացվում է, որ վերոնշյալ բառարմատները անգլերենում ֆրանսերեն փոխառություններ են, այլ ոչ թե բնիկ բառեր: Յետևաբար, *-hood* վերջածանցը չի կարող ավելանալ նշված փոխառյալ արմատներին:

-ant գոյականակերտ վերջածանց, և **-in-/im-/il-/ir** նախածանցներ. ավելանում են ***միմիայ ն լ առինական ծագման*** բառերին:

Այսպես օրինակ, *defendant, protectant, applicant, informant* բառերի կազմումը *-ant* վերջածանցով չի հակասում անգլերենի օրինաչափություններին, այնինչ *writant, workant* բառերի բաղադրումն անգլերենի օրինաչափությունների անտեսում է, քանի որ *write* և *work* բառերը ոչ թե լատիական, այլ բնիկ՝ գերմանական ծագման բառեր են: Նույն կերպ, *incomprehensible, illegal, impossible, inactive, irrefutable, irrelevant* բառերի բաղադրումը *im-, in-, ir-, il-* նախածանցներով չի հակասում

անգլերենի օրինաչափություններին, այնինչ, *inunderstandable, inpowerful, illawful, inthinkable* բառերի կազմումը քիչ հավանական է: Վերջիններին կազմումը քիչ հավանական է, քանի որ բաղադրող հիմքերը լատինական ծագում չունեն. *understand, law* և *think* բառարմատները բնիկ ծագում ունեն, *power* բառը թվագրվում է միջին անգլերենի ժամանակաշրջանին, երևան է եկել անգլո-նորմանդական ֆրանսերենից (<http://www.oxforddictionaries.com> 22.09.2015-ի դրությամբ):

-al վերջածանց. չի ավելանում *-ment* վերջածանցով կազմված բաղադրություններին:

Այսպես օրինակ, «*ornamental, regimental, fragmental* բառերի կազմությունը չի հակասում անգլերենի օրինաչափություններին, քանի որ նշված բառերում *-ment* վերջավորությունը վերջածանց չէ, բայց *employmental, discernmental, statemental* բառերի կազմությունը քիչ հավանական է անգլերենում» (Aronoff 1976:56f):

-ity վերջածանց. չի ավելանում *-ous* վերջածանցով բաղադրություններին:

Այսպես օրինակ, *gloriosity, furiosity, acrimoniosity* բառերը անգլերենի օրինաչափություններին խախտումով կազմված բառեր են, քանի որ դրանք չեն կարող կազմվել *glorious, furious, acrimonious* բառերից՝ վերջինիս *-ous* վերջածանցով վերջանալու պատճառով (http://grammar.ucsd.edu/courses/lign120/04-intro_rev.pdf 22.09.2015-ի դրությամբ): Փոխարենը, *-ness* վերջածանցով բաղադրվում են *gloriousness, furiousness, acrimoniousness* բառերը:

▪ **Իմաստբանական գործոններ**

Բառաստեղծմանը խոչընդոտող սահմանափակումների համակարգում արձանագրում ենք հետևյալ իմաստբանական գործոնները. *-ed* վերջածանցով և *un-* նախածանցով բառերի բաղադրման որոշ սահմանափակումներ, միևնույն իմակով *հոմանիշ բառերի* կազմության սահմանափակումներ (*Synonymy blocking*) (Katamba & Stonham 2006):

Ստացված տվյալները ներկայացնենք ստորև:

-ed վերջածանց. «ածական + գոյական/բայ + *-ed*» մասնակաղապարում *-ed* վերջածանցով բառաբաղադրումը չի

հակասում անգլերենի օրինաչափություններին, եթե համատեքստում *-ed* վերջածանցով բաղադրված ածական-որոշիչը բովանդակության պլանում որոշյալի անբաժան մասն է կազմում, հակառակ պարագայում տվյալ կաղապարով բառատեղծումը քիչ հավանական է (Katamba & Stonham 2006):

Այսպես օրինակ, ըստ Ֆ. Կատամբայի և Ջ. Ստոնհեմի՝ *short-sleeved (shirt), short-sighted (man), blue-eyed (girl)* բառերի կազմությունը հնարավոր է, քանի որ *վերնաշապիկն ունի թևքեր, մարդը՝ տեսողություն, աղջիկը՝ աչք, միևնույնը two-carred (family), big-Alsatian (woman)* բաղադրություններին կազմությունը սահմանափակված է, քանի որ ընտանիքի կամ կնոջ համար պարտադիր պայման չէ *մեքենակամ շուն* նունենալ:

un- նախածանց. չի ավելանում բացասական իմուլյթներակայող բառերին: Ջ. Ստոնհեմը և Ֆ. Կատամբան արդարացիորեն նշում են. «Եթե գոյություն ունեն երկու հակադիր նշանակությամբ ածականներ, որոնցից մեկն ավելի դրական իմուլյթ է արտահայտում քան մյուսը, սովորաբար ժխտական *-un* նախածանցն ավելանում է դրական իմակ արտահայտող ածականին <...> Եթե երկու բառեր ներկայացնում են միևնույն իմաստային չափման երկու բևեռները, դրական իմակ արտահայտող բառամիավորը ընդունված է համարել չնշույթավորված: Վերջինից բաղադրվում է նշույթավորված միավորը՝ հիմքին ժխտական նախածանցի ավելացմամբ» (Katamba & Stonham 2006:75):

Այսպես օրինակ, *unwell, unloved, unhappy, unwise, unclean, unoptimistic* բաղադրություններին կազմությունը ընդունելի է, միևնույնը *unill, unhated, unsad, undirty/unfilthy, unpessimistic* բառային միավորների կազմությունը սահմանափակված է, քանի որ *ill, hated, sad, dirty, filthy, pessimistic* բառերը բացասական իմուլյթ են ներակայում:

Իմաստաբանական սահմանափակման մեկ այլ գործոն է միևնույն իմակով մի քանի բառերի առկայության սահմանափակումը և եզրվում:

Այսպես օրինակ, *ungood–bad, stealer–thief, seeable–visible, wellness–health/wellbeing, arrival–arrivement* հոմանշային զույգերում *ungood, stealer, seeable, wellness* բառերի կազմությունը անգլերենի

օրինաչ ափու թյ ու ն ների անտեսում է՝ *bad, thief, visible, health/wellbeing, arrival* բառերի առկայ ու թյ ան պատճառով (Katamba & Stonham 2006):

Պետք է նշել, որ *synonymy blocking* (հոմանշային սահմանափակում) երևույթն, իր հերթին, աղերսներ ունի *type blocking* երևույթի հետ, ավելի ճշգրիտ՝ *type blocking* հասկացությունը *synonymy blocking* հասկացության մասնավոր դրսևորումներից է: Եթե *synonymy blocking* հասկացությունը վերաբերում է միևնույն իմպլով հոմանիշ բառերի կազմության սահմանափակմանը, ապա *type blocking* (տեսակային սահմանափակում⁵) հասկացությունը վերաբերում է ածանցման եղանակով բառաստեղծման սահմանափակումների: Այլ կերպ ասած, «մեկ ածանցը կարող է սահմանափակել հոմանիշ-մրցակից այլ ածանցի կամ ածանցների կիրառումը» (Aronoff 1976:21): Այսպես օրինակ, *-ness, -ity, -cy* վերջաձևերը հոմանիշ վերջաձևեր են, բայց յուրաքանչյուրն ունի սահմանափակ կիրառություն. *-ness* վերջաձևը գործածման ավելի բարձր հաճախականություն ունի, քան *-ity* և *-cy* վերջաձևերը, որոնք ավելի մասնավոր կիրառություն ունեն, և գործածվում են առավել սակավ՝ *-ness* վերջաձևի համեմատ: Բայց և այնպես, «երբ ավելի մասնավոր կիրառություն ունեցող ածանցը կանխում է առավել համընդհանուր կիրառություն ունեցող ածանցի գործածումը, արձանագրում ենք «տեսակային սահմանափակում» կոչվող երևույթը» (Aronoff 1976:21-22): Այսպես օրինակ, գոյականակերտ *-ness* վերջաձևը, որն առավել համընդհանուր կիրառություն ունի իր հոմանիշ վերջաձևերի համեմատ՝ չի ավելանում *-ate, -ant, -ent* վերջաձևերով կազմված ածականներին. *decentness* բառի կազմումը քիչ հավանական է, այնինչ *decency* բառի կազմումը *-cy* վերջաձևով ընդունելի է:

▪ **Գեղագիտական գործոններ**

Յուրաքանչյուր լեզու բարեհունչ է յուրովի և ունի գեղագիտական գործառնություն: Յետևապես, բառաստեղծման սահմանափակումների համակարգում գեղագիտական գործոնները վերաբերում են ածանցյալ բառերի հաջող և/կամ անհաջող,

⁵ Թարգմ. մերն է – Գ.Բ.

բարեհունչ և/կամ անբարեհունչ հատկորոշմանը, որի պատճառով կամ հանրայնացվում են, կամ չեն ամրագրվում և եզրակացվում:

Անգլերենի բառաստեղծման համակարգում՝ գեղագիտական տեսակետից գոյություն ունեցող հստակ գծագրված օրինաչափություններ: Բայց և այնպես, մասնագիտական գրականության մեջ առանձնացվում են *հաջող* և *անհաջող* կազմված բառեր, բարեհունչ և անբարեհունչ բառեր:

Լեզվանյութի վերլուծությունից ստացված տվյալները վկայում են, որ «-athon վերջածանցով և *marathon* բառի նմանությամբ կազմված *talkathon*, *swimathon*, *knitathon* և նմանատիպ այլ բառեր դիտվում են որպես բառային տգեղ միավորներ» (Katamba & Stonham 2006:81): Ֆ. Կատամբան և Ջ. Ստոնհեմը վկայում են, որ հունական ծագման -athon ևեզվամիավորը հունարենում վերջածանց չէր, մինչդեռ ևեզվակիրներն անգլերենում անտեղյակորեն այն վերածել են գոյականակերտվերջածանցի:

Մեկ այլ անբարեհունչ կազմություն է դիտվում անգլերենի *stagflation* բառը: Այն կազմվել է 1970-ական թթ.-ին՝ արտահայտելու տնտեսական և ճացումը (*stagnation*) և բարձր գնաճը (*inflation*), որը մեծապես ազդում էր աշխարհի տնտեսության վրա: Ըստ Ֆ. Կատամբայի և Ջ. Ստոնհեմի, *stagflation* բառախառնուրդը դեռևս չի արմատավորվել ևեզվում և դեռևս համարվում է տգեղ/անբարեհունչ կազմություն (Stonham & Katamba 2006):

Հարկ է փաստել, սակայն, որ վերոնշյալ *stagflation*, *talkathon*, *swimathon* բառերը, չնայած անբարեհունչ բնույթին՝ գետեղվել են Օքսֆորդի բառարանում (www.oxforddictionaries.com 30.07.2016-ի դրությամբ): Իսկ նմանատիպ *telethon* բառը և այն գործածություն ունի անգլերենում:

Խնդրի հետ կապված տեղին է նշել նաև, որ ևեզվաբան Մ. Նիքոլը իր «*100 Beautiful and Ugly Words*» հոդվածում առանձնացնում է անգլերենի հարյուր բառային միավոր: Դրանց գերակշիռ մասը (75) «գեղեցիկ/բարեհունչ» բառեր են դիտվում հեղինակի կողմից, իսկ մյուս մասը (25)՝ «տգեղ/անբարեհունչ»: Այսպես, ըստ Մ. Նիքոլի՝ *amorphous*, *beguile*, *caprice*, *cascade*, *cashmere*, *chrysalis*, *cinnamon*, *coalesce*, *crepuscular*, *crystalline*, *desultory*, *diaphanous*, *dulcet*, *ebullient*, *effervescent*, *elision*,

enchanted, encompass, enrapture, ephemeral, epiphany, epitome, ethereal, etiquette, evanescent, evocative, exuberant, felicity, filament, halcyon, idyllic, incorporeal, incandescent, ineffable, inexorable, insouciance, iridescent, languid, lassitude, lilt, lithe, lullaby, luminescence, mellifluous, mist, murmur, myriad, nebulous, opulent, penumbra, plethora, quiescent, radiant, redolent, resonant, resplendent, rhapsodic, sapphire, scintilla, serendipitous, serene, somnolent, sonorous, spherical, sublime, succulent, suffuse, susurrations, symphony, talisman, tessellated, tranquility, vestige, zenith բառերը «գեղեցիկ/բարեհունչ» բառեր են, իսկ *cacophony, cataclysm, chafe, coarse, cynical, decrepit, disgust, grimace, grotesque, harangue, hirsute, hoarse, leech, maladroit, mediocre, obstreperous, rancid, repugnant, repulsive, shriek, shrill, shun, slaughter, unctuous, visceral* բառերը «տգեղ/անբարեհունչ» բառեր են (<http://www.dailywritingtips.com> 05.03.2016-ի դրո՞ւթյամբ): Յեղիսակի դասակարգումը հիմնվում է այն փաստի վրա, որ դրական իմպրեսիոնային բառերը դրականորեն են ընկալվում հանրության շրջանում, հաճելի են և շոյում են մարդու լսողությանը, իսկ բացասական իմպրեսիոնային բառերը, ընդհակառակը, բացասաբար են ընկալվում և եզրակիր հանրության կողմից:

Ամփոփելով, կարելի է եզրակացնել, որ գեղեցկությունն ու գրավչությունը՝ որպես խոսքարվեստի մասնահատկություն, արտահայտվում է նաև և՛ եզրվի բառային միավորների բնութագրումներում: Գեղագիտական տեսանկյունից՝ և՛ եզրվի բառաֆոնդում առկա բառերը կարող են դիտարկվել որպես բարեհունչ և/կամ անբարեհունչ:

▪ **Գործաբանական գործոններ**

Բառատեղծման սահմանափակումների համակարգում գործաբանական գործոնները ներկայացնում են շրջապատող միջավայրի որևէ երևույթ կամ առարկա անվանելու անհրաժեշտությունը և գործաբանական հայեցակետից՝ դրա ընդունելի կամ մերժելի լինելը:

Ըստ Ի. Փլագի՝ «համատեքստային միջավայրը կանխորոշում է որևէ բառի կամ արտահայտության գործածման հնարավորությունը» (Plag 1999:25): Տեսաբան Ի. Փլագը հավաստում է նաև, որ գործաբանական սահմանափակումները վերաբերում են

արտալ եզվական գործոններին, աշխարհի մասին գիտելիքի և լեզվի միջև փոխներգործությունը: Բանն այն է, որ *որոշ իրավիճակներ և միավորներ հնարավոր չէ անվանել*, և տվյալ պարագայում խաթարվում է լեզվի անվանողական գործառույթը (Plag 2004):

Այսպես օրինակ՝ *redrink the beer, rekill someone, soul holder, moon container, rotten fish in a blue guitar case* անբնական, արտասովոր իրավիճակներ են, հետևապես դրանք անվանելու անհրաժեշտությունն չկա. հնարավոր չէ «*արդեն իսկ խմած գարեջուրը նորից խմել*», գոյությունն չունեն/անհեթեթություններ են «*հոգին բռնող հարմարանք/սարք*», «*լուսնի տարա, ժամացույցի թի*», «*կապույտ կիթառի պատյանում նեխած ձուկ*» արտահայտությունները: Դրանք անբնական են և արտասովոր, ուստի և անարտահայտելի են լեզվում:

Մեջբերենք նաև տեսաբան Ջ. Ռոուզի կողմից բերված մեկ այլ օրինակ.

“*Grasp Noun in the left hand and shake vigorously while standing on the right foot in a 25 gallon galvanized pail of corn-meal-mush*” (հայ.՝ *Բռնի՛ր Գոյականը ձախ ձեռքում և ուժեղ թափահարի՛ր՝ աջ ոտքի վրա կանգնած հացահատիկի շիլ ափլ ավի՛ 25 գալ ոն տարողությամբ ցինկապատ դոլլի մեջ*) (Rose 1973:516).

Անշուշտ, նշվածը հնարավոր չէ արտահայտել որևէ լեզվով, քանի որ այն արտահայտում է անհեթեթ մի իրավիճակ:

Ամփոփելով կատարված ուսումնասիրությունը՝ կարելի է փաստել, որ, բառաստեղծման համակարգում առկա են որոշ հնչույթաբանական, ձևաբանական, իմաստաբանական, գեղագիտական, գործաբանական գործոններ, որոնք նվազեցնում են բառակազմական կենսունակությունը: Բաղադրող հիմքի բնիկ կամ փոխառյալ լինելը, բացասական իմակ ներակայելը, հնչույթաբանական հատկանիշները, բառային շեշտը, հոմանիշ բառի կամ ածանցի առկայությունը լեզվում, բառի գեղեցիկ կամ տգեղ հատկորոշումը կարող են սահմանափակել բառաստեղծման հնարավորություններն անգլերենում:

Այդուհանդերձ, բառարաններում հաճախ զետեղվում և լեզվի համագործածական բառապաշար են մուտք գործում այնպիսի բառեր, որոնք բառաստեղծման սահմանափակումների համակարգում

անընդունելի բառեր են և կազմվել են լեզվի օրինաչափությունների խախտումով: Նշվածը քննության կառնենք աշխատանքի երկրորդ գլխում:

ԳԼՈՒԽ 2

ԱՃԱՆՑԱԿՈՐ ԴԻՊԼԱՃԱՅԻՆ ԲԱՌԵՐԻ

ԻՄԱՍՏԱԿԱՌՈՒ ՑՎԱՃՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՅ ԱՏԿՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Նախածանցավոր դիպլածային բառերը և դրանց զարգացումը

Նախածանցավոր բաղադրությունները կազմվում են բաղադրիչների՝ երկրորդական (նախածանց) և հիմնական (արմատ) բառակազմական ձևերի անմիջական միացումով: Այստեղ քննության կառնենք *anti-, de-, i-, out-, over-, pre-, un-, under-, cryo-, gastro-, micro-, multi-, nano-, neuro-, omni-, self-, super-, uber-, xeno-* նախածանցներով կազմված դիպլածային բառերը: Ստորև ներկայացնենք սույն աշխատանքում առանձնացված նախածանցավոր դիպլածային բառերի կազմության կաղապարները.

1. Պարզ հիմքով կաղապարներ (նախածանց + արմատ)

ա/ նախածանց + գոյական - *iDanger, iFinger, microhydro, nanoblock, underbrag.*

2. Բաղադրյալ հիմքով կաղապարներ (նախածանց + ածանցավոր/բարդ ածանցավոր բառ)

ա/ նախածանց + ածանցավոր բառ – *anti-vaccine, anti-vaccination, cryotherapy, de-shopping, gastrosexual, gastro-genocide/gastrogenocide, nanomembrane, neurobionics, neuromorphic, omnishambles, oversharer, predistribution, self-tracking, uber-wealthy, unenrolled, xenointoxication.*

բ/ նախածանց + հատված հիմք – *multigen, superbowl*

գ/ նախածանց + բարդ բառ – *multi-lawsuit, outfootball*

Ստորև քննության առնենք յուրաքանչյուրն առանձին-առանձին:

anti- նախածանց. անգլերեն բառարաններում ունի հետևյալ սահմանումները՝ 1. *opposed to; against; 1.1 preventing; 1.2 relieving; 1.3. the opposite of; 1.4 acting as a rival; 1.5 unlike the conventional form; 2. the antiparticle of a specified particle.* Նշված նախածանցը ծագում է հունարեն *anti* (*against*)

բառից (<http://www.oxforddictionaries.com> 22.09.2015-ի դրույթով): Այն կազմում է դիպլոմատիկ ածականներ՝ գոյականների հիմքից (**anti-vaccine**), գոյականներ՝ գոյականների հիմքից (**anti-vaccination**):

Օրինակ 1. *Deadly choices: How the **anti-vaccine** movement threatens us all – review (headline) [...] My review of the exposé that presents a reasoned and carefully documented argument about paranoid claims spouted by shrill "anti-vaxxers" - a powerful citizen misinformation activist movement [...] There was a time when vaccines were recognised as the life-saving medical advances that they are, but somewhere along the way, a portion of the public became side-tracked by the paranoia spouted by the powerful citizen misinformation activist movement, **the anti-vaxxers**, and stopped vaccinating their children* (The Guardian 11 Oct 2011).

Այս օրինակում **anti-vaccine** գոյականը գործածվել է ածականաբար՝ *movement* բառի գույնգործողությամբ: Համատեքստում այն իրացնում է «պատվաստումների դեմ/հակապատվաստումային» բառիմաստային տարբերակը⁶: Գործածվելով *anti-vaccine* բառը հոդվածի վերնագրում՝ լրագրող-հեղինակն իր համար որպես հիմնաբառ է վերցնում հենց այս բառը, որի շուրջ էլ կառուցվում է ողջ լրագրանյութը: Նկատենք, որ համատեքստում առկա է նաև **anti-vaxxer** («պատվաստմանն ընդդիմացող անձ») գոյականը: Վերջինիս իմաստի վերհանմանը նպաստում է համատեքստի՝ **a powerful citizen misinformation activist movement** և **stopped vaccinating their children** հատվածները:

Օրինակ 2. ***Anti-vaxxers: so friendless that free speech is enough to defeat them (headline) [...] Anti-vaccination cranks like Sherry Tenpenny share plenty in common with climate change deniers*** (The Guardian 08 Jan 2015).

Տվյալ օրինակում **anti-** նախածանցով կազմված **anti-vaccination** բառը գոյականական կազմություն է, համատեքստում այն իրացնում է «պատվաստումների դեմ պայքարող/ընդդիմանալի» բառիմաստային տարբերակը: Պատվաստումների դեմ պայքարը նոր իրականություն է, այն առկա է եղել վաղնջական ժամանակներից, սակայն նշված

⁶ Սույն աշխատանքում քննության առնված բառային միավորների իրացած բառիմաստային տարբերակները մեծամասամբ վերհանել ենք լրագրանյութերից. լրագրային հոդվածներում ոչ միայն գործածվել են և/կամ վերաստեղծվել դիպլոմատիկ բառերը, այլև լրագրանյութերում տրվում է տվյալ բառային միավորների սահմանումը: Ուսումնասիրված բառային միավորների իրացած բառիմաստները վերհանել ենք նաև *Urban Dictionary* և *Cambridge Dictionaries Online Blog* (<http://www.dictionaryblog.cambridge.org>) առցանց աղբյուրների տրամադրած տվյալների հիման վրա:

երևույթի առկայացումը լեզվում ի հայտ է գալիս մեր օրերում: Տվյալ լրագրանյութում ևս գործածվել է *anti-vaxxer* բառը, որը լրագրող-հեղինակն իր համար որպես հիմնաբառ է վերցնում՝ գործածելով վերջինս հոդվածի վերնագրում:

Պետք է նշել, որ *anti-vaxxer* գոյականը սերում է *anti-vax* ածականից: Ընդ որում, *anti-vaxxer* գոյականը կազմվել է 2011թ.-ին, իսկ *anti-vax* ածականը՝ ավելի վաղ՝ 1990-ական թթ.-ին (<http://www.oxforddictionaries.com> 22.09.2015-ի դրությամբ):

Վերը նշված *anti-vaccine*, *anti-vaccination* և *anti-vaxxer* բառերում *anti-* նախածանցը դրսևորում է իր բառարանային հիմնանշանակությունը (*opposed to; against*):

Այսպիսով, կարելի է փաստել, որ ***anti-vax***, ***anti-vaxxer***, ***anti-vaccine***, ***anti-vaccination*** բառերը բառակազմական փունջ են կազմում, որտեղ *anti-vaccine* և *anti-vaccination* դիպվածային բառերը կազմվել են նախածանցման եղանակով (*anti-+vaccine; anti-+vaccination*), իսկ անգլերեն բառարաններում արդեն զետեղված *anti-vaxxer* բառային միավորը՝ վերջածանցման (***anti-vax+-er***):

de- նախածանց. անգլերեն բառարաններում ունի հետևյալ սահմանումները՝ 1. *down; away; 1.1 completely; 2. denoting removal or reversal; 3. denoting dormation from*. Նշված նախածանցը ծագում է լատիներեն *de* (*off, from*) բառից (<http://www.oxforddictionaries.com> 22.09.2015-ի դրությամբ): Այն կազմում է դիպվածային գոյականներ՝ գոյականների հիմքից (***de-shopping***):

Օրինակ՝ *‘Showrooming’ and ‘de-shopping’ are nothing to be proud of – or laugh about. High-street shops of all sizes are fragile* (The Telegraph 07 Jan 2014).

Նշված օրինակում ***de-*** նախածանցով կազմված բառը գոյականական կազմություն է և համատեքստում այն իրացնում է «*զնված ապրանքի ետ վերադարձնելը՝ զնելուց և մեկ անգամ օգտագործելուց հետո*» բառիմաստային տարբերակը, իսկ *de-* նախածանցը դիպվածային բառում դրսևորում է իր բառարանային երկրորդ նշանակությունը (*denoting removal or reversal*):

i- նախածանց. անգլերեն բառարաններում դեռևս բացակայում է նշված նախածանցը, սակայն դրանով նորանոր բառեր են կազմվում ժամանակակից անգլերենում՝ նորագույն տեխնոլոգիաների

գարգացմամբ պայմանավորված: Այն կազմում է դիպլոմային գոյականներ՝ գոյականների հիմքից (**iDanger, iFinger**):

Օրինակ 1. **iDanger!** *Viewing 3D on your smartphone harms your sight and gives you headaches* (The Daily Mail 25 July 2011).

Բերված օրինակում **iDanger** բառն իրացնում է «բջջային հեռախոսի ճառագայթման վնասակար ազդեցությանը մարդու առողջության վրա» բառիմաստային տարբերակը:

Օրինակ 2. *Also included in the introductory matter in the Help section of the iFinger menu are keys to the spellings and abbreviations used, as well as a list of the most important spelling changes* (The Guardian 21 Sept 2004).

Օրինակ 3. **iFinger** *Steve Jobs, says former Apple finance chief after paying \$3.5m to settle options charges* (The Guardian 25 April 2007).

Վերը նշված երկրորդ օրինակում **iFinger** բառը նշանակում է՝ «ձեռքի հեռախոսի աշխատանքները կառավարող «Այ մատ»⁷, որն Այ ֆոնոն նեցողը պետք է միշտ մաքուր պահի»: Նշենք, որ տվյալ բառիմաստը վերհանել ենք *Urban Dictionary* առցանց բառարանից: Նշված բառարանում *iFinger* բառն ունի հետևյալ սահմանումը՝ *It's the finger(s) you purposely keep clean when you eat something messy so you could operate your touchscreen smartphone/tablet/GPS without making the screen look like your plate* (<http://www.urbandictionary.com> 30.05.2016-ի դրությամբ). Իսկ մեր առանձնացրած երրորդ օրինակում *iFinger* բառը գործածվել է փոխաբերական իմաստով՝ հանրահայտ Սթիվ Ջոբսի մասին հրապարակված հոդվածի վերնագրում:

Նկատենք, որ *iDanger* և *iFinger* բառերը կազմվել են *iPhone* բառի համաբանությամբ:

out- նախածանց. անգլերեն բառարաններում ունի հետևյալ սահմանումները՝ 1. *to the point of surpassing or exceeding*; 2. *external; separate; from outside*; 3. *away from; outward*. Նշված նախածանցն ունի գերմանական ծագում. այն սերում է հին անգլերենի *ūt* մակբայից (<http://www.oxforddictionaries.com> 22.09.2015-ի դրությամբ): Այն կազմում է դիպլոմային բայեր՝ գոյականների հիմքից (**outfootball**):

Օրինակ՝ *Saturday football clockwatch – as it happened (headline) [...] Being outfootballed by a very similar team to themselves [...]* (The Guardian 03 March 2012).

⁷ Թարգմ. մերն է – Գ.Բ.

Նշված օրինակում **out-** նախածանցով կազմված բառը բայական կազմությունն է, համատեքստում այն իրացնում է «*ֆուտբոլային խաղում մեկ թիմի գերազանց խաղ ցուցադրելը և առելի առավել ությունը մրցակցի նկատմամբ*» բառիմաստային տարբերակը, իսկ **out-** նախածանցը դրսևորում է իր բառարանային հիմնանշանակությունը (*to the point of surpassing or exceeding*):

Նշենք նաև, որ բերված օրինակում **outfootball** բառը կազմվել է ոչ միայն նախածանցման, այլև փոխակարգման եղանակով. դիպվածային **outfootball** բառում **football** գոյականը վերածվել է բայի (*to football*):

over- նախածանց. անգլերեն բառարաններում ունի հետևյալ սահմանումները՝ 1. *more than usual; too much*; 2. *completely*; 3. *upper; outer; extra*; 4. *over; above* (OALD 2006:R73). Նշված նախածանցն ունի գերմանական ծագում. այն սերում է հին անգլերենի *ofer* բառից (<http://www.oxforddictionaries.com> 22.09.2015-ի դրությամբ): Այն կազմում է դիպվածային գոյականներ՝ գոյականների հիմքից (**oversharer**):

Օրինակ 1. *Unlike the cast of friends, we do not need five or six confidantes (and doesn't the very idea of having lots of "confidantes" mark you down as an **over-sharer** of grubby emotional secrets?)* (The Independent 10 July 2006).

Օրինակ 2. *Try not to tell the world your house will be empty if you're the sort of **oversharer** who tweets the view from your bedroom window or similar* (The Guardian 31 July 2013).

Օրինակ 3. *How to survive the summer holidays: social-networking pitfalls (headline) [...] **Oversharers** beware, not everyone wants constant updates on your summer break* (The Guardian 31 July 2013).

Բերված առաջին օրինակում **over-sharer/oversharer** բառը ներկայացնում է զգացմունքները և անձնական գաղտնիքները ընկերներին պատմելու երևույթը: Մեջբերված մյուս երկու օրինակներում **over-** նախածանցով կազմված բառը գոյականական կազմությունն է և համատեքստում այն իրացնում է «*սոցիալական ցանցերում հղումներով չափից դուրս կիսվող անձ*» բառիմաստային տարբերակը, իսկ **over-** նախածանցը նշված բառում հանդես է գալիս իր հիմնանշանակությամբ (*more than usual; too much*):

Պետք է նշել, որ *overshare* բայը *oversharer* և *oversharing* բառերի հետ կազմում է բառակազմական փուլն չ (**overshare, oversharer, oversharing**):

pre- նախածանց. անգլերեն բառարաններում ունի հետևյալ սահմանումը՝ *before* (OALD 2006:R73). Այս նախածանցը ծագում է լատիներեն *prae-* բառից (<http://www.oxforddictionaries.com> 22.09.2015-ի դրությամբ): Այն կազմում է դիպվածային գոյականներ՝ գոյականների հիմքից (**predistribution**):

Օրինակ՝ *For those not in the know – which I suspect is most of us – predistribution of wealth before taxation, rather than after* (The Telegraph 06 Sept 2012).

Բերված օրինակում **pre-** նախածանցով կազմված բառը գոյականական կազմության է և համատեքստում իրացնում է «ժառանգների միջև ունեցվածքի բաշխումը՝ նախքան հարկերի վճարելը» բառիմաստային տարբերակը:

un- նախածանց. անգլերեն բառարաններում ունի հետևյալ սահմանումները՝ 1. *not, the opposite of*; 2. (*in verbs that describe the opposite of a process*) (OALD 2006:R74). Այն ունի գերմանական ծագում և սերում է հին անգլերենի *un-*, *on-* նախածանցներից (<http://www.oxforddictionaries.com> 22.09.2015-ի դրությամբ): Այն կազմում է դիպվածային ածականներ՝ ածականների հիմքից (**unenrolled**):

Օրինակ՝ *“Romney may win most Republican votes but these are a lot of independent voters – unenrolled we call them – in this state and believe me they are not going to vote for Romney”, she says* (The Guardian 06 March 2012).

Այս օրինակում **un-** նախածանցով կազմված բառը ածականական կազմության է և համատեքստում իրացնում է «չ գրանցված/չ անդամագրված» բառիմաստային տարբերակը, իսկ *un-* նախածանցը դրսևորում է իր հիմնականակազմությունը (*not, the opposite of*): Ստացվում է, որ տվյալ պարագայում *un-* նախածանցը դրսևորվում է որպես ժխտական նախածանց:

under- նախածանց. անգլերեն բառարաններում ունի հետևյալ սահմանումները՝ 1. *below; beneath*; 2. *lower in age or rank*; 3. *not enough* (OALD 2006:R74). Նշված նախածանցը գերմանական ծագում ունի և սերում է հոլանդերեն *onder* և գերմաներեն *unter* բառերից (<http://www.oxforddictionaries.com> 22.09.2015-ի դրությամբ): Այն կազմում է դիպվածային գոյականներ՝ գոյականների հիմքից (**underbrag**):

Օրինակ՝ *'The underbrag is the new humblebrag'*, Doll writes, *'because it is the brag that does whatever its braggish little heart desires'* (The Guardian 16 Aug 2012).

Նշված օրինակում **under-** նախածանցով կազմված բառը գոյականական կազմությամբ է և համատեքստում իրացնում է «թույլ տված սխալ ներող պարծենալը (որպես ինքնավստահության դրսևորում)» բառիմաստային տարբերակը: Բերված օրինակում լրագրող-հեղինակը գործածել է **underbrag** բառի հոմանիշ **humblebrag** նորաստեղծ բառը, որն, իր հերթին, նպաստում է *underbrag* դիպվածային բառի իմաստի վերհանմանը: Ավելին, պարզվում է, որ *underbrag* դիպվածային բառը կազմվել է *humblebrag* բառի համաբանությամբ: Վերջինս զետեղվել է *Oxford Dictionaries Online* բառարանում 2014թ.-ին (<http://www.oxforddictionaries.com> 22.09.2015-ի դրությամբ):

Դիպվածային բառերը կազմվում են ոչ միայն նախածանցներով, այլև ածանցակերպներով: Մասնագիտական գրականության մեջ վերջիններիս լեզվական կարգավիճակը թեական է: Որոշ լեզվաբանների դիտանկյունից՝ դրանք միջանկյալ տեղ են զբաղեցնում ածանցների և իրենց սերող ձևերի միջև (*semi-affixes*) (Arnold 1973; Ginzburg 1979; Marchand 1969; Заботкина 1989; Кудрякова 1965), այնինչ մյուսները դրանք համարում են ոչ ազատ ձևերի միմասնավոր խումբ՝ զուգակցվող ձևեր⁸ (*combining forms*) (Bauer 1983; Мешков 1985; Nurnberg & Rosenblum 1968): Մեր խնդիրը ածանցակերպների լեզվական կարգավիճակի ճշգրտումը չէ, ուստի անդրադարձ կատարենք դրանցով բաղադրված նորակազմություններին:

Ուսումնասիրված լրագրանյութերից առանձնացրել ենք *cryo-*, *gastro-*, *micro-*, *multi-*, *neuro-*, *nano-*, *omni-*, *self-*, *super-*, *uber-*, *xeno-* ածանցակերպներով/նախածանցներով⁹ բաղադրված կազմություններ: Ստորև քննության առնենք յուրաքանչյուրն առանձին-առանձին:

cryo- նախածանց. անգլերեն բառարաններում ունի հետևյալ սահմանումը՝ *involving or producing cold, especially extreme*. Այս նախածանցը ծագում է հունարեն *kruos* բառից (<http://www.oxforddictionaries.com> 22.09.2015-

⁸ «Զուգակցվող ձևեր» եզրույթը փոխառել ենք Ա. Ալանյանից (տե՛ս Alanakyan A., Derivational Valency and Potential of Combining Forms in Present-Day English Word-Building // Armenia Folia Anglistika, International Journal of English Studies, 1(2)/2006-Yerevan, p. 90).

⁹ *Oxford Advanced Learners Dictionary* անգլերեն միալեզու բացատրական բառարանում տվյալ լեզվամիավորներն ընդգրկված են նախածանցների ցանկում (OALD 2006:R72-R74).

ի դրույթը): Այն կազմում է դիպլոմային գոյականներ՝ գոյականների հիմքից (**cryotherapy**):

Օրինակ՝ **Cryotherapy** is also used to smooth out wrinkles and fine lines (Grazia 26 Nov 2012).

Բերված օրինակում **cryo-** նախածանցով կազմված բառը գոյականակա կազմությունն է և համատեքստում իրացնում է «մաքմանի գերսառեցում՝ բուժական նպատակներով» բառիմաստային տարբերակը:

gastro- նախածանց. անգլերեն բառարաններում ունի հետևյալ սահմանումը՝ *relating to the stomach*. Այս նախածանցը ծագում է հունարեն *gastēr* բառից (www.oxforddictionaries.com 31.05.2016-ի դրույթով): Այն կազմում է դիպլոմային գոյականներ՝ գոյականների հիմքից (**gastro-genocide/gastrogenocide**), գոյականներ՝ ածականների հիմքից (**gastrosexual**):

Օրինակ 1. *Add to that a predilection for cheaper tables at local bistros among many who once displayed an insatiable lust for three-star opulence, as well as the dulled palates of a new French generation (among the most popular restaurants in all of Europe is the McDonald's on the Champs Elysees), and you have the makings of **gastro-genocide*** (The Dallas Observer 17 Sept 1998).

Վերը նշված օրինակում **gastro-** նախածանցով կազմված բառը գոյականակա կազմությունն է և համատեքստում իրացնում է «աղիների քայքայում, որն առաջանում է վնասակար սննդի օգտագործումից» բառիմաստային տարբերակը:

Օրինակ 2. *Rise of the “**gastrosexual**” as men take up cooking in a bid to seduce women* (headline) (The Daily Mail 21 July 2008).

Օրինակ 3. *Danger! Men at Work* (headline) [...] *In 1961, men spent an average of five minutes a day cooking and washing up; today that figure has increased to 27 minutes. The “**gastrosexual**” – the sexed-up marketing tag for my kind – now prepares one-fifth of all in-home evening meals* (The Guardian 26 April 2009).

Վերը նշված օրինակում **gastro-** նախածանցով կազմված բառը գոյականակա կազմությունն է և համատեքստում իրացնում է «տղամարդ, որը մեծ բավականություն է ստանում խոհարարությունից» բառիմաստային տարբերակը:

micro- նախածանց. անգլերեն բառարաններում ունի հետևյալ սահմանումները՝ 1. *small; on a small scale*; 2. *one millionth* (OALD 2006:965). Նշված նախածանցը ծագում է լատիներեն *micro* (*small*) բառից (<http://www.oxforddictionaries.com> 22.09.2015-ի դրությամբ): Այն կազմում է դիպլոմատիկ գոյականներ՝ գոյականների հիմքից (**microhydro**):

Օրինակ՝ *Mill owners are now planning to work together nationally to launch a network of hydropower operators called River Power **Microhydro*** (The Guardian 16 Nov 2008).

Տվյալ օրինակում **micro-** նախածանցով կազմված բառը գոյականական կազմությոն է, համատեքստում այն իրացնում է «*փոքր հիդրոէլեկտրակայան*» բառիմաստային տարբերակը, իսկ *micro-* նախածանցը դրսևորում է իր հիմնանշանակությոնը (*small; on a small scale*):

multi- նախածանց. անգլերեն բառարաններում ունի հետևյալ սահմանումը՝ *more than one; many* (OALD 2006:1002). Այս նախածանցը ծագում է լատիներեն *multus* (*many/much*) բառից (<http://www.oxforddictionaries.com> 22.09.2015-ի դրությամբ): Այն կազմում է դիպլոմատիկ ածականներ՝ գոյականների/հատված գոյականների հիմքից (**multi-lawsuit, multigen/multigenerational**):

Օրինակ 1. *As part of the **multi-lawsuit** fight with Apple, the company has been accused of willfully withholding and destroying evidence and this isn't their first offense* (The Guardian 13 May 2012).

Բերված օրինակում **multi-** նախածանցով կազմված բառը ածականական կազմությոն է և համատեքստում իրացնում է «*բազմաթիվ դատական հայցերով*» բառիմաստային տարբերակը:

Օրինակ 2. *Strong indications show that **multigen** living is on the rise* (AARP Bulletin April 2013).

Օրինակ 3. *In 2012, Lennar Corp, a \$4bn US-based home-building company, launched a new product line called "The Next Gen." The line boasted floor plans that offered "a home within home," perfect to accommodate a second generation [...] Currently, just 5.6% of US households are **multi-generational**, according to the Census Bureau* (The Guardian 28 Nov 2013).

Վերը նշված օրինակներում **multi-** նախածանցով կազմված բառը (**multigen/multigenerational**) ևս ածականական կազմությոն է և

համատեքստում իրացնում է «մեկ հարկի տակ՝ գերդաստանի տարբեր տարիքային խմբերին պատկանող անդամների միասին ապրելը»:

nano- նախածանց. անգլերեն բառարաններում ունի հետևյալ սահմանումը՝ *one billionth* (OALD 2006:1012). Տվյալ նախածանցը ծագում է հունարեն *nanos* (*dwarf*) լեզվամիավորից, անգլերենում այն անուղղակի փոխառությամբ է լատիներենից (<http://www.oxforddictionaries.com> 22.09.2015-ի դրությամբ): Այն կազմում է դիպլոմատային գոյականներ՝ գոյականների հիմքից (**nanomembrane**, **nanoblock**):

Օրինակ 1. *The discovery allowed him to implant silicon ‘nanomembranes’ just about anywhere: plastics and rubber, for his tattoo-like electronics, and silk, for the dissolvable ones* (Smithsonian Dec 2013).

Վերը նշված օրինակում **nano-** նախածանցով կազմված բառը գոյականական կազմությամբ է և համատեքստում իրացնում է «չափից դուրս փոքր նյութ» բառիմաստային տարբերակը:

Օրինակ 2. *A related but simpler technology [...] is based on suspending small integrated circuits called “nanoblocks” in a fluid and then flowing them over a surface where they drop into tiny holes of corresponding shapes* (The New York Times 09 April 2013).

Այս օրինակում **nano-** նախածանցով կազմված բառը գոյականական կազմությամբ է և համատեքստում իրացնում է «շատ փոքր էլեկտրական հոսանքի շղթա» բառիմաստային տարբերակը:

neuro- նախածանց. անգլերեն բառարաններում ունի հետևյալ սահմանումը՝ *connected with the nerves* (OALD 2006:1023). Տվյալ նախածանցը ծագում է հունարեն **neuron** (*nerve*) լեզվամիավորից: Այն կազմում է դիպլոմատային գոյականներ՝ գոյականների հիմքից (**neurobionics**), ածականներ՝ ածականների հիմքից (**neuromorphic**):

Օրինակ 1. *Today, at its leading edge, neurobionics is already significantly improving the quality of life in patients with conditions as wide-ranging as MS, winging of the scapula and brain injuries* (The Guardian 27 Oct 2012).

Այս օրինակում **neuro-** նախածանցով կազմված բառը գոյականական կազմությամբ է և համատեքստում իրացնում է «ուղեղի բջիջների արհեստական խթանում՝ բուժական նպատակներով» բառիմաստային տարբերակը:

Օրինակ 2. *I.B.M. and Qualcomm, as well as the Stanford research team, have already designed **neuromorphic** processors, and Qualcomm has said it is coming out in 2014 with a commercial version* (New York 29 Dec 2013).

Տվյալ օրինակում **neuro-** նախածանցով կազմված բառը անհամասնակի կազմությամբ է և համատեքստում իրացնում է «*մարդկային ուղեղի ընդօրինակիչ*» բառիմաստային տարբերակը:

omni- նախածանց. անգլերեն բառարաններում ունի հետևյալ սահմանումը՝ *of all things, in all ways or places* (OALD 2006:1058). Նշված նախածանցը ծագում է լատիներեն *omnis* (*all*) ձևից (<http://www.oxforddictionaries.com> 22.09.2015-ի դրությամբ): Այն կազմում է դիպլոմատիկ գոյականների՝ անեզական գոյականների հիմքից (**omnishambles**):

Օրինակ՝ *Aircraft carrier ‘omnishambles’ wastes £100 million. The ministry of Defence has spent £100 million preparing to use fighter jets that have now been abandoned, ministers have admitted* (The Telegraph 10 May 2012).

Բերված օրինակում **omni-** նախածանցով կազմված բառը գոյականակա կազմությամբ է և համատեքստում իրացնում է «*կատարյալ անկարողություն դրսևորում*» բառիմաստային տարբերակը:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ **omnishambles** դիպլոմատիկ բառը երևան է եկել խոսքաշարում՝ 2012 թ.-ին, բրիտանական հեռուստաշոուի ժամանակ (<http://www.bbc.com/news/uk-politics-20309441> 22.09.2015-ի դրությամբ): Այն հեռուստահաղորդավարի հեղինակային նորաբանություն է, իսկ լրագրանյութերում վերաստեղծվելով՝ ձեռք է բերել հաճախորդագործածություն, որի արդյունքում հեղինակային նորաբանությունը գրանցվել է անգլերեն հեղինակավոր և ընդգրկուն բառարաններում:

self- նախածանց. անգլերեն բառարաններում ունի հետևյալ սահմանումը՝ *of, to or by yourself or itself* (OALD 2006:1376). Տվյալ նախածանցը ծագում է հին անգլերենից, այն համեմատելի է հոլանդերեն *zelf* և գերմաներեն *selbe* ձևերի հետ: Այն կազմում է գոյականների՝ բայանուն գոյականների հիմքից (**self-tracking**):

Օրինակ՝ *They called it ‘self-tracking’ and in 2007 founded a blog named the Quantified Self* (The Observer 25 Nov 2012).

Նշված օրինակում **self-** նախածանցով կազմված բառը գոյականական կազմություն է և համատեքստում իրացնում է «սմարթֆոնի կամ խելացի հեռախոսի միջոցով անձնական առողջության մշտադիտարկում» բառիմաստային տարբերակը:

super- նախածանց. անգլերեն բառարաններում ունի հետևյալ սահմանումները՝ 1. *extremely; mere or better than normal*; 2. *above; over* (OALD 2006:R73). Նշված նախածանցը ծագում է լատիներեն *super-* լեզվամիավորից (<http://www.oxforddictionaries.com> 22.09.2015-ի դրությամբ): Այն կազմում է դիպվածային գոյականներ՝ գոյականի հատված հիմքից (**superbowl**):

Օրինակ՝ *You can carry your **superbowl** with your hand through the handles and the bag resting on your hip like Victoria Beckham, but we reckon that could get uncomfortable* (Grazia 20 Aug 2012).

Այս օրինակում **super-** նախածանցով բաղադրված բառը գոյականական կազմություն է և համատեքստում իրացնում է «կեզլախաղի/բոուլինգի գնդակի ձև ունեցող կանացի ձեռքի պայուսակ» բառիմաստային տարբերակը: Բնագրի **with your hand through the handles and the bag resting on your hip** հատվածն է նպաստում բառիմաստի վերհանմանը:

Նկատենք, որ *superbowl* բառը լրագրանյութում երևան է եկել անգլերեն բառարաններում զետեղված *(the) Super Bowl* բառի առկայության պայմանավորված, սակայն չինունյանում վերջինիս հետ: Բանն այն է, որ անգլերեն բառարանում զետեղված *(the) Super Bowl* բարդության վերջնաբաղադրիչը *bowl* արմատն է, իսկ բերված օրինակում *superbowl* նորակազմության վերջնաբաղադրիչը՝ *bowl* հատված հիմքը՝ *bowling* (կեզլախաղ) սարրտային խաղի անվանումից: Բերված օրինակում **superbowl** բառը նշանակում է *գնդակ կանացի ձեռքի պայուսակ*, իսկ անգլերեն բառարանում առկա **(the) Super Bowl** բառն ունի հետևյալ սահմանումը՝ *an AMERICAN FOOTBALL game played every year to decide the winner of the National Football League* (OALD 2006:1539). Այսպիսով, արձանագրում ենք բացարձակ համանունություն, քանի որ երկուսն էլ նունյազիր և նունյահունչ բառեր են:

uber- նախածանց. անգլերեն բառարաններում ունի հետևյալ սահմանումը՝ *of the greatest or best kind – to a very large degree* (OALD 2006:R74).

Այն ծագում է գերմաներեն *über* բառից, որն, իր հերթին, ծագում է *übermensch* բառից (<http://www.oxforddictionaries.com> 5.01.2016-ի դրությամբ): Այն կազմում է դիպլոմատիկ ածականներ՝ ածականների հիմքից (**uber-wealthy**):

Օրինակ՝ *Maybe full Romney quote was “I am not wealthy: I’m FANTASTICALLY super-duper extra uber-wealthy. So wealthy it needs a new word: wuuulthy”* (The Guardian 06 March 2012).

Տվյալ օրինակում **uber-** նախածանցով բաղադրված բառն ածական է և համատեքստում իրացնում է «գերհարուստ/չափից դուրս հարուստ» բառիմաստային տարբերակը: Բերված օրինակում գործածվել է *uber-wealthy* բառի հոմանիշ մեկ այլ դիպլոմատիկ բառ՝ **wuuulthy**: Լրագրանյութում լրագրողը մեջբերում է ամերիկացի գործարար և քաղաքական գործիչ Մ. Ռոմնիի խոսքից մի հատված, իսկ **uber-wealthy** և **wuuulthy** դիպլոմատիկ բառերը լավագույնս բնութագրում են հանրահայտ գործարար Մ. Ռոմնիի մեծահարուստ լինելը:

xeno- նախածանց. անգլերեն բառարաններում ունի հետևյալ սահմանումները՝ 1. *relating to foreigner or foreigners*; 1.1 *other, different in origin* (<http://www.oxforddictionaries.com> 22.09.2015-ի դրությամբ): Տվյալ նախածանցը ծագում է հունարեն *xenos* (foreigner, stranger) բառից: Այն կազմում է դիպլոմատիկ գոյականներ՝ գոյականների հիմքից (**xenointoxication**):

Օրինակ՝ *Dr Hotez’s hesitation is mostly that bedbugs [...] do not cause disease, so xenointoxication seems pretty heavy-handed* (The New York Times 01 Jan 2013).

Վերը նշված օրինակում **xeno-** նախածանցով կազմված բառը գոյականական կազմությոն է, համատեքստում այն իրացնում է «թուևսավոր նյութի ներարկման միջոցով միջատների բնաջնջում. միջատը սատկում է՝ մարդուն կծելուց անմիջապես հետո», իսկ *xeno-* նախածանցը դրսևորում է իր՝ *other, different in origin* բառարանային նշանակությոնը:

Բերված օրինակից դյուրին է նկատել, որ առանձնացված միկրոօրգանիզմները բավարար չեն նշված բառիմաստի վերհանման համար, հետևապես լրագրանյութի ընթերցողմից հետո է միայն դուրս բերվում նշված բառի իրացրած բառիմաստը:

Քննու թյ ան առնված դիպվածայ ին բառերը կազմում են տարբեր բառիմաստայ ին և/կամ թեմատիկ խմբեր¹⁰.


1. **Բժշկու թյ ու ն, առողջ ու թյ ու ն և մարզած և եր (Medicine, Health, and Sports)** – *anti-vaccine, anti-vaccination, anti-vaxxer, cryotherapy, iDanger, neurobionics, neuromorphic, xenointoxication, outfootball*:
2. **Գիտու թյ ու ն, տեխնոլ ոգիա և համակարգչ ի գործած ու թյ ու ն (Science, Technology, and Computing)** – *microhydro, nanomembrane, nanoblock, iFinger, oversharer*:
3. **Գործարար ու թյ ու ն, օրենք և քաղաքական ու թյ ու ն (Business, Law, Politics, and Government)** – *multi-lawsuit, predistribution, unenrolled*:
4. **Մարդիկ և հասարակ ու թյ ու ն (People and Society)** – *omnishambles, multigen/multigenerational, self-tracking, underbrag, uber-wealthy*:
5. **Մնու նդ, խհանցայ ին սարքեր/պարագաներ և հագու ստ (Food, Kitchen Appliances, and Clothing)** – *gastrosexual, gastrogenocide/gastro-genocide, de-shopping, superbowl*:

Ու ս ու մ ն ա ս ի ղ վ ա ժ ն ախաճանցավոր դիպվածայ ին բառերում բացակայում են «*Լեզու, արվեստ և երաժշտ ու թյ ու ն (Language, Arts, and Music)*» բառիմաստայ ին և/կամ թեմատիկ խմբին պատկանող բառերը:

Ինչ վերաբերում է քննու թյ ան առնված նախաճանցավոր դիպվածայ ին բառերի խոսքիմասայ ին պատկանել ու թյ անը՝ ապա դրանց գերակշիռ մասը գոյականական կազմ ու թյ ու ն ներ են: Ստացված տվյալ ները ներկայացնենք Գծապատկեր 1-ում:

Գծապատկեր 1. Նախաճանցավոր դիպվածայ ին բառերի խոսքիմասայ ին պատկանել ու թյ ու ն ը

¹⁰ Աշխատանքում քննու թյ ան առնված դիպվածայ ին բառերը տարբեր բառիմաստայ ին և/կամ թեմատիկ խմբերի դասելիս՝ առաջնորդվել ենք *The Oxford Essential Dictionary of New Words* բառարանում ներկայացված թեմատիկ խմբերի ցանկով, այն է՝ *Arts and music, Business, Computing, Encyclopaedic, Food and Clothing, Language, Law, Politics and Government, Lifestyle, Medicine and Health, People and Society, Religion, Science and Technology, Clothing, Sports, World English* (տե՛ս *The Oxford Essential Dictionary of New Words*, Berkley Books, New York, 2003, pp. 301-324). Նոր բառերի նշված հարակից թեմատիկ խմբերը միավորել ենք, իսկ բարդ դիպվածայ ին բառերի վերլուծ ու թյ ան մեջ «*Food and clothing*» խմբում ավելացրել ենք «*Kitchen appliances*» ենթախումբը:



Ինչպես երևում է Գծապատկեր 1-ում՝ ուսումնասիրված դիպլոմային բառերում (26) քանակական առումով գերակշռում են գոյականները (19), սակավաթիվ են՝ ածականները (6) և բայերը (1):

Ուսումնասիրված բառարանային և կորպուսային շտեմարանների լեզվանյութի քննությունը թույլ է տալիս արձանագրել, որ սույն աշխատանքում առանձնացված Նախածանցավոր դիպլոմային բառերը որոշ դեպքերում ձեռք են բերում գործածման բարձր հաճախանությունն՝ առցանց հրապարակումների շնորհիվ, որոշ դեպքերում էլ գրանցվում են անգլերեն միալեզու բացատրական բառարաններում:

Այսպես, *anti-vaccine* բառը դեռևս չի գետնիցվել անգլերեն բառարաններում, իսկ *anti-vaccination* բառը գետնիցվել է *Merriam-Webster Unabridged Dictionary* բառարանում: Նախածանցավոր քաղցր *anti-vaxxer* բառը գետնիցվել է *Oxford Dictionaries Online* և *Cambridge Dictionaries Online* բառարաններում: Պետք է նշել, որ *Oxford Dictionaries Online* բառարանում նշված բառը գծիկով գրությունն ունի (*anti-vaxxer*), իսկ *Cambridge Dictionaries Online* բառարանում գրվում է միասին (*antivaxxer*):

Cryotherapy բառը գետնիցվել է *Oxford Dictionaries Online*, *Cambridge Dictionaries Online* և *Merriam-Webster Dictionary Online* բառարաններում:

Multi-gen բառը չի գետնիցվել անգլերեն բառարաններում, փոխարենը *Oxford Dictionaries Online* բառարանում առկա է *multigenerational* բառը: Այստեղ նշված բառն ունի հետևյալ սահմանումը՝ *relating to several generations* (<http://www.oxforddictionaries.com> 1.06.2016-ի դրությամբ):


Omnishambles բառը գետնեղվել է *Oxford Dictionaries Online* և *Cambridge Dictionaries Online* բառարաններում: Պետք է նշել, որ նշված բառը ընդգրկվել է *Oxford Dictionaries Online* և *Cambridge Dictionaries Online* բառարաններում 2012թ.-ին (<http://blog.oxforddictionaries.com>; <https://dictionaryblog.cambridge.org> 1.06.2016-ի դրո՞ւթյամբ):

Oversharer բառը գետնեղվել է *Oxford Dictionaries Online* բառարանում: Վերջինս չունի բառարանային սահմանում՝ բառիմաստի հստակություն պատճառով: Ուստի, այն ներկայացված է *overshare* բառահոդվածի բաժնում՝ որպես վերջինիս ածանցյալ (<http://www.oxforddictionaries.com> 22.09.2015-ի դրո՞ւթյամբ):

Self-tracking բառը գետնեղվել է *Oxford Dictionaries Online* բառարանում: Քննության առնված *de-shopping, gastro-genocide/gastrogenocide, gastrosexual, iFinger, iDanger, outfootball, predistribution, unenrolled, underbrag, microhydro, multi-lawsuit, nanomembrane, nanoblock, neuromorphic, neurobionics, superbowl, uber-wealthy* և *xenointoxication* բառերը դեռևս չեն ընդգրկվել ուսումնասիրված անգլերեն միալեզու բացատրական բառարաններում¹¹:

Կորպուսային ուսումնասիրության մեթոդով վերենք հանել քննության առնված նախածանցավոր դիպվածային բառերի հաճախականության վիճակագրական տվյալները՝ ըստ COCA և GloWbE կորպուսների: Ասվածը ներկայացնենք Գծապատկեր 2-ում:

Գծապատկեր 2. Նախածանցավոր դիպվածային բառերի հաճախականությունը COCA և GloWbE կորպուսներում



¹¹ <http://www.oxforddictionaries.com> 30.07.2016-ի դրո՞ւթյամբ, <http://dictionary.cambridge.org> 30.07.2016-ի դրո՞ւթյամբ, <http://www.idoceanline.com> 30.07.2016-ի դրո՞ւթյամբ, <http://www.merriam-webster.com> 30.07.2016-ի դրո՞ւթյամբ.

Ինչպես երևում է Գծապատկեր 2-ում՝ *GloWbE* կորպուսում ամենամեծ հաճախականություն ունի **anti-vaccine** բառային միավորը (COCA – 372, *GloWbE* - 372): Իսկ նշված երկու կորպուսներում մեծ հաճախականություն չունեն **microhydro** (COCA - 27, *GloWbE* - 27), **cryotherapy** (COCA - 18, *GloWbE* - 18), **neuromorphic** (COCA - 16, *GloWbE* - 16), **unenrolled** (COCA – 13, *GloWbE* - 13), **anti-vaccination** (COCA - 9, *GloWbE* - 9), **predistribution** (COCA - 7, *GloWbE* - 7) և **self-tracking** (COCA - 6, *GloWbE* - 6) բառերը: Նշված կորպուսներում **uber-wealthy** բառային միավորը ներկայացված է ընդամենը մեկ համատեքստում (COCA - 1, *GloWbE* - 1)¹²: **Superbowl** բառն ընդգրկված չէ նշված կորպուսներում՝ «*կանացի պայ ու սակ*» նշանակությամբ: **Anti-vaxxer, de-shopping, gastro-genocide/gastrogenocide, gastrosexual, iFinger, iDanger, multi-gen, multi-lawsuit, nanoblock, nanomembrane, neurobionics, omnishambles, outfootball, overharer, underbrag** և **xenointoxication** բառերը բացակայում են տվյալ կորպուսներում:

Ամփոփելով ուսումնասիրության արդյունքները՝ փաստենք, որ նախածանցավոր դիպվածային բառերում գերակշռում են «*Բժշկություն, առողջություն և մարզածևեր (Medicine, Health, and Sports)*» բառիմաստային և/կամ թեմատիկ խմբին պատկանող բառերը: Ածանցման կաղապարներից ամենակենսունակը «*նախածանց + ածանցավոր բառ*» կաղապարն է: Քննության առնված (26) նախածանցավոր դիպվածային բառերից 6-ը (*anti-vaccination, anti-vaxxer, cryotherapy, omnishambles, oversharer, self-tracking*) վերածվել են *նորաբանություններ*, քանի որ ընդգրկվել են *Oxford Dictionaries Online, Cambridge Dictionaries Online* և *Merriam-Webster Dictionary Online* անգլերեն միալեզու բացատրական բառարաններում, իսկ մյուս նախածանցավոր բառերի դիպվածային կարգավիճակը թեական է (*uncertain between nonce and neologism or neither nonce nor neologism*): Բանն այն է, որ դրանք դեռևս չեն ընդգրկվել անգլերեն բառարաններում, բայց կիրառվել են առցանց տարբեր հրապարակումներում:

¹² Davies, Mark. (2008-) *The Corpus of Contemporary American English (COCA): 520 million words, 1990-present*. Available online at: <http://corpus.byu.edu/coca/> 30.07.2016-ի դրությամբ.

Davies, Mark. (2013) *Corpus of Global Web-Based English: 1.9 billion words from speakers in 20 countries (GloWbE)*. Available online at: <http://corpus.byu.edu/glowbe/> 30.07.2016-ի դրությամբ.

2.2 Վերջածանցավոր դիպվածային բառերը և դրանց զարգացումը

Վերջածանցները լեզվի բառամթերքի հարստացման հիմնական աղբյուրներից մեկն են: Ավելանալով բառավերջում՝ վերջածանցները առավելապես բառի հիմնանշանակույթանն ավելացնում են նոր նշանակույթուններ: Վերջածանցավոր բառադրույթունները կազմվում են հիմնական և երկրորդական բառակազմական ձևույթների՝ վերջածանցների գումարմամբ: Այստեղ քննույթան կառնենք *-er, -ie, -ilis, -ing, -ization, -ise/-ize, -ish, -less, -ology, -zilla, -cide* վերջածանցներով կազմված դիպվածային բառերը:

Ստորև ներկայացնենք առանձնացված վերջածանցավոր բառերի կազմույթան կաղապարները.

1. Պարզ հիմքով կաղապարներ (արմատ + վերջածանց)

ա/ գոյական + վերջածանց – *carbicide, contactless, dadding, doorer, ghosting, Kipper, milking, owling*

բ/ հատված հիմք + վերջածանց – *avozilla*

բ/ բայ արմատ + վերջածանց – *creeping, walker*

գ/ ածական + վերջածանց – *adorabilis, poshitis, Cubanization*

դ/ դերանուն + վերջածանց – *selfie*

ե/ հապավում + վերջածանց – *Sindie*

2. Բաղադրյալ հիմքով կաղապարներ

ա/ բարդ բառ + վերջածանց – *highlining*

բ/ ածանցավոր բառ + վերջածանց – *contractualise, Quidditching, trolleyology, youthful-ish*

Ստորև քննույթան առնենք նշված բառերն առանձին-առանձին:

-ization վերջածանց. անգլերեն բառարաններում ունի հետևյալ սահմանումը՝ *forming nouns corresponding to verbs ending in -ize* (<http://www.oxforddictionaries.com> 22.09.2015-ի դրույթամբ): Նշված վերջածանցը գոյացել է *-ize* և *-ation* վերջածանցների համակցումից: Այն կազմում է դիպվածային գոյականներ՝ ածականների հիմքից (**Cubanization**):

Օրինակ 1. *Cardenas: The ‘Cubanization’ of Venezuela (headline)* (The Washington Times 14 June 2013).

Տվյալ օրինակում **-ization** վերջածանցով կազմված բառը գոյականական կազմությոնն է և համատեքստում իրացնում է «կոնքայական կարգերի հաստատում» բառիմաստային տարբերակը:

Օրինակ 2. *If we push too hard, we risk **Cubanization** of the fleet, where it is better to keep old cars than buy expensive new ones* (Car and Driver Aug 2013).

Վերը նշված օրինակում **Cubanization** բառը համատեքստում իրացնում է «հին ավտոմեքենաների երկար օգտագործումը և նորով չփոխարինելը» բառիմաստային տարբերակը: Իսկ վերջինս բնորոշ է Կուբայի ազգաբնակչոնթյանը:

-cide վերջածանց. անգլերեն բառարաններում ունի հետևյալ սահմանումները` 1. *denoting a person or substance that kills*; 2. *denoting an act of killing* (<http://www.oxforddictionaries.com> 22.09.2015-ի դրոնթյամբ): Նշված վերջածանցը ծագում է լատիներեն *-cida* և *-cidium* վերջածանցներից և անոնղղակի փոխառությոնն է ֆրանսերենից (<http://www.oxforddictionaries.com> 22.09.2015-ի դրոնթյամբ): Այն կազմում է դիպվածային գոյականներ` գոյականների հիմքից (**carbicide**):

Օրինակ 1. *And with Snack Wraps, they want to entice mothers into ordering something more sustaining than a cup of coffee when they visit McDonald's with their spoiled children. Something that will not cause the fashionable or the gastronomically aware to hate themselves by committing full - on McDonald's **carbicide** before the cocktail hour* (The Daily Mail 22 Feb 2010).

Օրինակ 2. *Newsflash! Cheryl Cole commits **carbicide** just like we do: I allow myself one cheat day and love cupcakes, doughnuts [...] basically anything that's really bad for you', star says* (The Daily Mail 11 Sept 2013).

Վերը նշված երկոն օրինակներում **-cide** վերջածանցով կազմված բառը գոյականական կազմությոնն է և համատեքստում իրացնում է «ածխաջրեր պարոնակոնդ սննդամթերքների շատ ոնտելոն վնասակար ազոնցոնթյոննը» բառիմաստային տարբերակը: Նշված բառիմաստը վեր ենք հանել` հիմնվելով *Urban Dictionary*¹³ առցանց բառարանի առաջադրած սահմանումների վրա:

¹³ *Urban Dictionary* առցանց բառարանն ընդգրկոնդ է ժարգոնային բառեր և արտահայտությոններ, ինչպես նաև` նորաստեղծ բառեր, որոնք դեռևս չեն զետեղվել ընդգրկոնդն բառարաններում:

-er վերջածանց. անգլերեն բառարաններում ունի հետևյալ սահմանումները՝ 1. *a person or thing that*; 2. *a person or thing that has the quality mentioned*; 3. *a person belonging to*; 5. *(makes comparative adjectives and adverbs)* (OALD 2006:R74). Նշված վերջածանցն ունի գերմանական ծագում և սերում է հին անգլերենի *-ere* վերջածանցից (<http://www.oxforddictionaries.com> 22.09.2015-ի դրությամբ): Այն կազմում է դիպվածային գոյականներ՝ բայերի հիմքից (**walker**), գոյականներ՝ գոյականների հիմքից (**doorer, kipper**):

Օրինակ 1. *She had been discussing this with two other single women of her age, and she'd said her ideal **walker** would be a musician* (The Guardian 20 Oct 2012).

Տվյալ օրինակում **-er** վերջածանցով կազմված բառը գոյականական կազմությոնն է և համատեքստում իրացնում է «*ալ ատոնական գուգընկեր, ում հետ կարելի է գնալ գրոսանքի*» բառիմաստային տարբերակը:

Օրինակ 2. *Asked to explain the party's failure in London, Ukip's Suzanne Evans was asked if she agreed with the **Kipper** who had said the problem was that the capital was too full of the 'cultured, educated and young'* (Gulf News 25 May 2014).

Այս օրինակում **-er** վերջածանցով կազմված բառը գոյականական կազմությոնն է և համատեքստում իրացնում է «*Միացյալ Թագավորոթյան անկախոթյոնն կոնսակցոթյան անդամ կամ աջակից*» բառիմաստային տարբերակը: Նշված բառիմաստը վերհանել ենք Cambridge Dictionaries Online բառարանի առաջադրած սահմանման հիման վրա (<https://dictionaryblog.cambridge.org> 22.09.2015-ի դրությամբ):

Պետք է նշել, որ վերը նշված *Kipper* բառը համանունն է *kipper* գոյականի հետ: Բերված օրինակում *Kipper* բառը նշանակում է՝ *Միացյալ Թագավորոթյան անկախոթյոնն կոնսակցոթյան անդամ կամ աջակից*, իսկ անգլերեն բառարանում առկա *kipper* բառը նշանակում է՝ *ապխտած/ծխահար ձուկ* (<http://dict.am> 22.09.2015-ի դրությամբ): Այսպիսով, արձանագրում ենք բացարձակ համանունություն, քանի որ երկուսն էլ նույնազիր և նույնահունչ բառեր են:

Օրինակ 3. *A new word has been coined in the Big Apple to cover an increasingly common cause of death or injury – **doorers**. That means someone opens the door of a*

stationary motor vehicle and sends a cyclist flying in to the path of a passing car or bus usually with dire consequences (www.northjersey.com 05 Oct 2012).

Նշված օրինակում **-er** վերջածանցով կազմված բառը գոյականական կազմություն է և համատեքստում իրացնում է «անձ, որը *հեծանվորդին հարվածում է և գցում՝ ավտոմեքենայի դուռը բացելով*» բառիմաստային տարբերակը:

-ie վերջածանց. անգլերեն բառարաններում ունի հետևյալ սահմանումները՝ 1. *variant spelling of -y²*; 2. *variant spelling of -y¹, -y³* (<http://www.oxforddictionaries.com> 22.09.2015-ի դրությամբ): Նշված վերջածանցը **-y** վերջածանցի սկզբնական ձևն է (<http://www.oxforddictionaries.com> 22.09.2015-ի դրությամբ): Այն կազմում է դիպվածային գոյականներ՝ դերանունների հիմքից (**selfie**), գոյականներ՝ հապավումից (**Sindie**):

Օրինակ 1. *People take **selfies** in public, posing everywhere and in every which way* (New Yorker 05 June 2013).

Այս օրինակում **-ie** վերջածանցով կազմված բառը գոյականական կազմություն է և համատեքստում իրացնում է «*ինքնանկար/ինքնուկ*» բառիմաստային տարբերակը: Պետք է նշել, որ նշված բառը ավստրալացի Ն. Յոուպի հեղինակային նորաբանությունն է, որը երևան է եկել 2002թ.-ին: Լրագրանյութերում նշված բառը տարածում է գտել 2012թ.-ին, և կարճ ժամանակամիջոցում ձեռք բերել գործածման բարձր հաճախականություն: *Selfie* բառը գետեղվել է *Oxford Dictionaries Online* բառարանում 2013թ.-ին (<http://blog.oxforddictionaries.com/press-releases> 4.06.2016-ի դրությամբ):

Օրինակ 2. *Luxury brands are reporting booming sales of erotic products from a new group of women known as '**Sindies**'* (The Daily Mail 26 March 2014).

Տվյալ օրինակում **-ie** վերջածանցով կազմված բառը գոյական է և համատեքստում իրացնում է «*սեփական եկամուտով ապրող բաժանված կին*» բառիմաստային տարբերակը: Յետաբարբական է այն փաստը, որ **-ie** վերջածանցով կազմված *Sindie* գոյականում առկա է միաժամանակ երկու բառակազմական գործընթաց՝ հապավում և վերջածանցում – *Sind* (*a single income now divorced woman*) + **-ie**:

-ilis վերջածանց. Լատիներեն վերջածանց է և կազմում է ածականներ՝ գոյականների հիմքից: Իսկ անգլերենում կազմում է դիպլածային գոյականներ՝ ածականների հիմքից (**adorabilis**):

Օրինակ 1. *Meet the pink big-eyed octopus so cute that the scientist who discovered the creature is considering naming it 'ADORABILIS'* (The Daily Mail 16 June 2015).

Օրինակ 2. *Tiny Octopus Is So Cute Scientists Might Name It 'Adorabilis'* (headline) (Discover (magazine) 16 June 2015).

Օրինակ 3. *New Octopus Is So Adorable It Might Be Named Opisthoteuthis Adorabilis* (headline) (Huffpost Science 16 June 2015).

Նախևառաջ նշենք, որ **adorabilis** դիպլածային բառը Լրագրանյութում հրապարակվելուց ավելի վաղ է կազմվել՝ նախկինում **flapjack octopus** անվանումով ութոտնուկին նոր գիտաբանով նկարագրելու համար: Պարզվում է, որ Լրագրանյութում գործածված տվյալ դիպլածային բառը նոր ութոտնուկի հայտնաբերած գիտնականի՝ Ս. Բուշի (Stephanie Bush), հեղինակային նորաբանություներն է: Ութոտնուկի նոր տեսակը ստեղծագործական ներշնչանքի աղբյուր է եղել այն հայտնաբերող գիտնականի համար և գիտնականին մեծ հիացմունք է պատճառել նրա գեղեցկությունը և եզակիությունը, ուստի որոշել է այն անվանել **Opisthoteuthis Adorabilis**, որի մասին էլ նյութ է հրապարակվել անգլալեզու մամուլում:

Բերված օրինակներում **-ilis** վերջածանցով բաղադրված բառը գոյականական կազմությունն է և համատեքստում իրացնում է «շատ սիրելի/պաշտելի ութոտնուկ» բառիմաստային տարբերակը:

Պետք է նշել, որ անգլերեն **-able** վերջածանցը ծագում է Լատիներեն **-abilis** վերջածանցից: Յետևապես, նորաստեղծ **adorabilis** գիտաբանը համահավասար է **adorable** ածականին: Այսպիսով, **adorabilis** բառի կազմությունը կարելի է դիտարկել երկու դիտանկյունից՝ «ածական (**adorable**) + վերջածանց (**-ilis**)» և «բայ (**adore**) + վերջածանց (**-abilis**)»:

Արձանագրում ենք, որ **adorabilis** դիպլածային բառը Լայն տարածում է գտել տպագիր և առցանց Լրագրանյութերում, և առցանց տարատեսակ հրապարակումներում, առհասարակ՝ **Google** որոնման

համակարգում առկա է (26.10.2015թ.-ի դրությամբ) նորաստեղծ *adorabilis* հեղինակային նորաբանությունը պարունակող 99, 300 առցանց հրապարակում (թեև դրանք կրկնվում են): Ստացվում է, որ կազմվելուց հետո, բավականին կարճ ժամանակամիջոցում, նշված հեղինակային նորաբանությունը ձեռք է բերել գործածման բարձր հաճախականություն, և քիչ հավանական է պարզել, թե առաջին անգամ որ լրագրանյութում է հրապարակվել այս բառը:

-ing վերջածանց. անգլերեն բառարաններում ունի հետևյալ սահմանումները՝ 1. *denoting a verbal action, an instance of this, or its result;* 2. *denoting material used for or associated with a process etc.* (<http://www.oxforddictionaries.com> 22.09.2015-ի դրությամբ). Նշված վերջածանցն ունի գերմանական ծագում և սերում է հին անգլերենի *-ung* և *-ing* վերջածանցներից (<http://www.oxforddictionaries.com> 22.09.2015-ի դրությամբ): Այն կազմում է դիպվածային բայանուն գոյականներ՝ պարզ գոյականների հիմքից (***milking, owling, ghosting, dadding, Quidditching***), բարդ գոյականների հիմքից (***highlining***) և բայերի հիմքից (***creeping, buffling***):

Օրինակ 1. *Among the creme de la creme of British youth, an udderly bizarre trend has emerged: **milking*** (The Guardian 27 Nov 2012).

Օրինակ 2. *Is **milking** the most pointless internet craze yet? Students filmed pouring four-pint cartons over their heads* (The Daily Mail 29 Nov 2012).

Վերոնշյալ երկու օրինակներում **-ing** վերջածանցով կազմված բառը գոյականական կազմությունն է և համատեքստում իրացնում է «*հանրային վայրերում կաթը գլխին լցնել*» բառիմաստային տարբերակը:

Օրինակ 3. *Somewhere in this mix came **owling** – for people more comfortable with squatting than lying* (The Guardian 27 Nov 2012).

Այս օրինակում **-ing** վերջածանցով կազմված բառը գոյականական կազմությունն է և համատեքստում իրացնում է «*սպառնալից վիճակում արված ինքնակարի հրապարակում համացանցում*» բառիմաստային տարբերակը:

Օրինակ 4. *The good news here is that surviving family members are ultimately not responsible for charges (or for legitimate debts of the dead). But **ghosting** can still cause plenty of angst* (AARP Bulletin March 2013).

Վերը նշված օրինակում **-ing** վերջածանցով կազմված բառը գոյականական կազմութիւնն է և համատեքստում իրացնում է «մահացածի անձնական տվյալների գողոթյունը համացանցում» բառիմաստային տարբերակը:

Օրինակ 5. *He makes sure to drop his presence on the school run into conversation; he lets it be known that he is hip to the new rules of conscientious **dadding*** (The Guardian 22 March 2014).

Այս օրինակում **-ing** վերջածանցով կազմված բառը ևս գոյականական կազմութիւնն է և համատեքստում իրացնում է «հայրութիւնն անել» բառիմաստային տարբերակը:

Օրինակ 6. *'**Quidditching**' becomes new internet craze as Harry Potter fans around the world jump on their brooms* (The Daily Mail 15 April 13).

Տվյալ օրինակում **-ing** վերջածանցով կազմված բառը գոյականական կազմութիւնն է և համատեքստում իրացնում է «քվիդիչի խաղում (Յերի Փոթերի պես ցախավելով գետնից բարձր թռչելու) համացանցային մոլուցք» բառիմաստային տարբերակը:

Օրինակ 7. *The group travel the world to take part in the extreme sport of **highlining**, in which people walk across wires fixed high above the ground or water* (The Daily Mail 25 March 2013).

Տվյալ օրինակում **-ing** վերջածանցով կազմված բառը գոյականական կազմութիւնն է և համատեքստում իրացնում է «(էքստրիմ սպորտածև) բարձրաբերձ ժայռերի միջով բարակ պարանի վրայով քայլելը/անցնելը» բառիմաստային տարբերակը:

Օրինակ 8. *A massive 75 percent of us keep our exes as 'friends', allowing us to rifle through photographs and wall posts and friend lists at will. Today's youth call this '**creeping**'* (Grazia 03 March 2014).

Այս օրինակում **-ing** վերջածանցով կազմված բառը գոյականական կազմութիւնն է և համատեքստում իրացնում է «մեկուրիչի առցանց անձնական տվյալների գաղտնի դիտում» բառիմաստային տարբերակը:

Պետք է նշել, որ *Merriam-Webster Dictionary Online* բառարանում զետեղված *creeping* բառը ածական է (այն նշանակում է` *developing or advancing by slow imperceptible degrees*) (<http://www.merriam-webster.com> 22.09.2015-ի դրությամբ), իսկ մեր առանձնացրած օրինակում այն գոյական է:

Յետևապես, արձանագրում ենք բացարձակ համանունություն, քանի որ երկուսն էլ նույնագիր և նույնահունչ բառեր են: Նշվածը նաև իմաստային տեղաշարժ է, քանի որ *creeping* բառը ձեռք է բերել միանգամայն նոր նշանակություն:

Օրինակ 9. *Even face to face you may find yourself baffled, as the world is awash with people who love 'buffling'* (Good Housekeeping Nov 2012 <http://dictionaryblog.cambridge.org/2013/03/25/new-words-25-march-2013>).

Այս օրինակում **-ing** վերջածանցով կազմված բառը գոյականական կազմություն է և համատեքստում իրացնում է «*բիզնես միջավայրում թեմայից շեղվելն ու չափից դուրս երկար խոսելը*» բառիմաստային տարբերակը:

Այսպիսով, ուսումնասիրված օրինակներից դյուրին է նկատել, որ **-ing** վերջածանցով մեծամասամբ բաղադրվում են բայանուն գոյականներ:

-ise/-ize վերջածանց. անգլերեն բառարաններում ունի հետևյալ սահմանումները՝ 1. *to become or make like*; 2. *to speak, think, act, treat, etc. in the mentioned*; 3. *to place in* (OALD 2006:R75). Նշված վերջածանցը ծագում է հին ֆրասերեն **-ise** և լատիներեն **-itia** և **-itium** վերջածանցներից (<http://www.oxforddictionaries.com> 22.09.2015-ի դրությամբ): Այն կազմում է դիպվածային բայեր՝ ածականների հիմքից (**contractualise**):

Օրինակ՝ *The rise in first-class stamp prices to 60p is an indication of what is to come. This unwanted and surreptitious divorce will lead to all the complications of contractualising integrated arrangements, with Post Office staff-having to rent desk space from the Royal Mail head office in Old Street, the charging of further rent for sorting rooms in rural post offices and the selling off of local post offices, understood as singular businesses rather than part of a wider national system of communication* (The Guardian 30 March 2012).

Այս օրինակում **-ise** վերջածանցով կազմված բառը բայական կազմություն է և համատեքստում իրացնում է «*սյայ մանագիր կնքել*» բառիմաստային տարբերակը:

-ish վերջածանց. անգլերեն բառարաններում ունի հետևյալ սահմանումները՝ 1. *from the country mentioned*; 2. *(sometimes disapproving) having the nature of*; 3. *fairly; approximately* (OALD 2006:R75). Նշված վերջածանցն ունի գերմանական ծագում և սերում է հին անգլերենի **-isc** վերջածանցից

(<http://www.oxforddictionaries.com> 22.09.2015-ի դրու թյամբ): Այն կազմում է դիպլածային ածականներ՝ ածականների հիմքից (**youthful-ish**):

Օրինակ՝ *Age is one of the great modern adventures, a technological marvel – we're given several more **youthful-ish** decades if we take care of ourselves* (New York 20 May 2012).

Այս օրինակում **-ish** վերջածանցով կազմված բառը ածականական կազմությոն է և համատեքստում իրացնում է «երիտասարդական» բառիմաստային տարբերակը, իսկ *youthful-ish* բառում **-ish** վերջածանցը դրսևորում է բառարանային երկրորդ նշանակությոնը (*having the nature of*): Նշված բառի կիրառությոնը լրագրանյութին հաղորդում է պատկերավորությոն և արտահայտչականությոն և ավելի է ընդգծում երիտասարդ մնալու գաղափարը:

Նկատենք, որ բառաստեղծման համակարգում տվյալ դիպլածային բառը կազմվել է անգլերենի բառակազմական օրինաչափությոնների խախտումով. **-ish** և **-ful** վերջածանցները հոմանիշ վերջածանցներ են, և **-ish** վերջածանցը սովորաբար չի ավելանում **-ful** վերջածանցով բաղադրված բառերին, այլ կարող է փոխարինել նրան (ինչպես՝ *joyous/ joyful*): Յետևապես, **adorabilis** դիպլածային բառի նման, **youthful-ish** դիպլածային բառի կազմությոնը ևս հակասում է անգլերենի բառակազմական օրինաչափությոններին:

Յավելենք, որ անգլերեն բառարանում (*Oxford Dictionaries Online*) առկա է միևնույն իմակը ներակայող **youngish** ածականը, որի կազմությոնը չի հակասում անգլերենի բառակազմական կանոններին:

-itis վերջածանց. անգլերեն բառարաններում ունի հետևյալ սահմանումները՝ 1. *a disease of*; 2. (*informal*), *especially humorous, too much of; too much interest in* (OALD 2006:R75). Տվյալ վերջածանցը ծագում է հունարեն *-itēs* վերջավորությոնից (<http://www.oxforddictionaries.com> 22.09.2015-ի դրու թյամբ): Այն կազմում է դիպլածային գոյականներ՝ ածականների հիմքից (**Poshitis**):

Օրինակ՝ *Cheryl Cole, Mollie King and Millie Mackintosh are also at risk of 'Poshitis' if they continue to carry their desire handbags like that* (The Daily Mail 04 June 2013).

Վերը նշված օրինակում **-itis** վերջածանցով կազմված բառը գոյականական կազմություն է և համատեքստում իրացնում է «*մեջքի ցավ, որն առաջանում է մեծ և նորածն պայուսակը ծալած արմուկի նկի նկրելուց*» բառիմաստային տարբերակը: Տվյալ օրինակում **-itis** վերջածանցն իրացնում է բառարանային հիմնանշանակությունը (*a disease of*):

Բերված օրինակից դուրս է նկատել, որ առանձնացված միկրոհամատեքստը բավարար չէ նշված բառիմաստի վերհանման համար, հետևապես լրագրանյութի ընթերցումից հետո է միայն դուրս բերվում նշված բառի իրացրած բառիմաստը:

-less վերջածանց. անգլերեն բառարաններում ունի հետևյալ սահմանումները՝ 1. *without*; 2. *not doing; not affected by* (OALD 2006:880). Այս վերջածանցը ծագում է հին անգլերենի **-lēas** վերջածանցից (<http://www.oxforddictionaries.com> 22.09.2015-ի դրությամբ): Այն կազմում է դիպվածային գոյականների հիմքից (**contactless**):

Օրինակ 1. **Contactless** cards have been hyped as the next big thing in banking and retail because they let people pay for less costly items (£15 or less) without having to key in a pin number or scrabble around for cash (The Guardian 02 Oct 2010).

Օրինակ 2. I used **contactless** all the time at the Olympic Park (The Guardian 22 Sept 2012).

Վերոնշյալ առաջին օրինակում **-less** վերջածանցով կազմված բառը ածականական կազմություն է (*contactless cards*), իսկ երկրորդում՝ գոյականական կազմություն: Երկու պարագայում էլ այն իրացնում է «*դեբետային կամ վարկային քարտ, որն անհատական համար (քարտի ծածկագիր) կամ ստորագրություն չի պահանջում*» բառիմաստային տարբերակը, իսկ **-less** վերջածանցը ածանցյալ բառում դրսևորում է իր հիմնանշանակությունը (*without*):

-ology/-logy վերջածանց. անգլերեն բառարաններում ունի հետևյալ սահմանումները՝ 1. *a subject of study*; 2. *a characteristic of speech or writing* (OALD 2006:R75). Տվյալ վերջածանցը ծագում է ֆրանսերեն **-logie** կամ՝ լատիներեն **-logia** վերջածանցներից (<http://www.oxforddictionaries.com> 22.09.2015-ի դրությամբ): Այն կազմում է դիպվածային գոյականների հիմքից (**trolleyology**):

Օրինակ՝ *After several decades maturing in university philosophy departments, trolleyology has burst into the public eye with two new books coming out at once* (The New York Times 24 Nov 2013).

Տվյալ օրինակում **-ology** վերջածանցով կազմված բառը գոյականական կազմությունն է և համատեքստում իրացնում է «*ինքնագոհաբերություն փիլիսոփայական ուսմունք*» բառիմաստային տարբերակը:

-zilla վերջածանց. առավելական վերջածանց է (*augmentative suffix*) իսպաներենում, իսկ անգլերենում երևան է եկել Ետադարձ բառակազմությամբ (*backformation*)՝ *Godzilla* լեզվամիավորից: Նշված վերջածանցը դեռևս բացակայում է անգլերեն բառարաններում և մասնագիտական գրականության մեջ: Այն կազմում է դիպվածային գոյականներ՝ հատված հիմքով գոյականներից (**avozilla**):

Օրինակ 1. **Avozilla: world's largest avocado goes on scale** (*headline*) [...] *The avocado was first cultivated by the Aztecs, but is now grown in several subtropical countries with the UK supplied mainly from Peru, Israel, South Africa, Chile and Spain* (The Guardian 30 Aug 2013).

Օրինակ 2. *Tesco's salad buyer, Emma Bonay, believes the avozilla will appeal particularly to large families* (The Guardian 31 Aug 2013).

Բերված օրինակներում **-zilla** վերջածանցով կազմված բառը գոյականական կազմությունն է և համատեքստում իրացնում է «*շատ մեծ ավոկադո*» բառիմաստային տարբերակը: Անգլերենում նշված վերջածանցը դրսևորում է այն նշանակությունը, որն առկա է փոխառու լեզվում:

Քննության առնված վերջածանցավոր դիպվածային բառերը կազմում են տարբեր բառիմաստային և/կամ թեմատիկ խմբեր.

1. **Բժշկություն, առողջություն և մարզաձևեր (Medicine, Health, and Sports)** – *poshitis, highlining*:
2. **Գիտություն, տեխնոլոգիա և համակարգչի գործածություն (Science, Technology, and Computing)** – *adorabilis, trolleology, owling, ghosting, Quidditching*:
3. **Գործարարություն, օրենք և քաղաքականություն (Business, Law, Politics, and Government)** – *contactless, buffling, bankster, contractualise, Kipper*:


4. **Մարդիկ և հասարակություն (People and Society)** – *Sindie, milking, dadding, walker, doorer, Cubanization, youthful-ish*:

5. **Սնունդ, խոհանոցային սարքեր/պարագաներ և հագուստ (Food, Kitchen Appliances, and Clothing)** – *carbicide, avozilla*:

Ուսումնասիրված վերջածանցավոր դիպլոմային բառերում բացակայում են «*Լեզու, արվեստ և երաժշտություն (Language, Arts, and Music)*» բառիմաստային և/կամ թեմատիկ խմբին պատկանող բառերը:

Ինչ վերաբերում է քննության առնված վերջածանցավոր դիպլոմային բառերի խոսքիմասային պատկանելությանը՝ ապահովանց մեծ մասը գոյականական կազմություններ են: Ստացված տվյալները ներկայացնենք Գծապատկեր 3-ում:

Գծապատկեր 3. Վերջածանցավոր դիպլոմային բառերի խոսքիմասային պատկանելությունը



Ինչպես երևում է Գծապատկեր 3-ում՝ քննության առնված վերջածանցավոր դիպլոմային բառերում (21) քանակական առումով գերակշռում են գոյականները (18), սակավաթիվ են՝ ածականները (2) և բայերը (1):

Ուսումնասիրված բառարանային և կորպուսային շտեմարանների լեզվանյութի քննությունը թույլ է տալիս արձանագրել, որ սույն աշխատանքում առանձնացված վերջածանցավոր դիպլոմային բառերը ևս որոշ դեպքերում ձեռք են բերում գործածման բարձր հաճախականություն՝ առցանց հրապարակումների շնորհիվ, որոշ դեպքերում էլ գրանցվում են անգլերեն միալեզու բացատրական բառարաններում:

Այսպես, *contactless* բառն ընդգրկվել է *Cambridge Dictionaries Online* և *Oxford Dictionaries Online* բառարաններում:

Creeping բառը գտնվել է *Merriam-Webster Dictionary Online* և *Cambridge Dictionaries Online* բառարաններում: Պետք է նշել, որ նշված բառը մեր առանձնացրած օրինակում գոյական է, իսկ անգլերեն բառարաններում՝ ածական: Նշված բառարաններում *creeping* բառն ունի հետևյալ սահմանումները՝ *developing or advancing by slow imperceptible degrees* (<http://www.merriam-webster.com> 5.06.2016-ի դրությամբ); *happening, developing, or moving slowly or gradually* (<http://dictionary.cambridge.org> 5.06.2016-ի դրությամբ):

Ghosting բառը գտնվել է *Merriam-Webster Dictionary Online* բառարանում: Այստեղ այն ունի հետևյալ սահմանումը՝ *a faint double image on a television screen*. Մինչդեռ առանձնացված համատեքստում այն իրացնում է «մահացածի անձնական տվյալների գողությունը համացանցում» բառիմաստային տարբերակը: Կարելի է փաստել, որ տվյալ պարագայում արձանագրում ենք բացարձակ համանունություն բառարանում առկա և սույն աշխատանքում առանձնացված բառերի միջև, քանի որ երկուսն էլ նույնագիր և նույնահունչ բառեր են:

Highlining բառն առկա է *Oxford Dictionaries Online* բառարանում՝ *high-lining* գծիկով գրությամբ: Պետք է նշել, որ *Oxford Dictionaries Online* բառարանում գտնված *high-lining* բառը վերաբերում է *փայտամթերմանը*, մինչդեռ մեր առանձնացրած համատեքստում՝ *էքստրիմ սպորտսնունք*:

Kipper բառը նույնահունչ է և նույնագիր անգլերեն բառարաններում առկա համանուն *kipper* բառի հետ, բայց տարբեր իմաստ ունի: Յետևապես, արձանագրում ենք կատարյալ համանունություն և իմաստային տեղաշարժ:

Milking բառն առկա է *Oxford Dictionaries Online* բառարանում՝ *milk* բառահոդվածում՝ որպես վերջինիս ածանցյալ: Այստեղ այն նշանակում է՝ «կաթ տալ /կթվել», մինչդեռ մեր առանձնացրած օրինակում *milking* բառն իրացնում է «հանրային վայրերում կաթը գլխին լցնել» բառիմաստային տարբերակը: Յետևապես, այստեղ արձանագրում ենք իմաստային տեղաշարժ:

Owling բառն առկա է *Oxford Dictionaries Online* բառարանում: Այս տեղայնությունից հետևյալ սահմանումները՝ 1. *the action of imitating the hooting of an owl, especially to discover the whereabouts of birds when hunting them*; 2. *the practice of smuggling wool or sheep out of England; the trade of an owler*; 3. *the activity of observing owls in their natural environment, especially at night*. Իսկ մեր առանձնացրած օրինակում *owling* բառն իրացնում է «սպառ Վիճակում արված ինքնանկարի հրապարակում համացանցում» բառիմաստային տարբերակը: Յետևապես, արձանագրում ենք կատարյալ համանունություն և իմաստային տեղաշարժ:

Selfie բառն արդեն իսկ գտնվել է *Oxford Dictionaries Online*, *Cambridge Dictionaries Online* և *Meriam-Webster Dictionary Online* բառարաններում, բացառությամբ՝ *Longman Dictionary of Contemporary English* բառարանի:

Walker բառը նույնահունչ է և նույնագիր անգլերեն բառարաններում առկա համանուն *walker* բառի հետ, բայց տարբեր իմաստ ունի: Յետևապես, արձանագրում ենք բացարձակ համանունություն և իմաստային տեղաշարժ:



Adorabilis, avozilla, buffling, carbicide, contractualise, Cubanization, dadding, doorer, Quidditching, Sindie, trolleyology և *youthful-ish* բառերը վկայված չեն ուսումնասիրված անգլերեն միալեզու բացատրական բառարաններում¹⁴:

Կորպուսային ուսումնասիրության մեթոդով վեր ենք հանել վերջածանցավոր դիպվածային բառերի հաճախականության վիճակագրական տվյալները՝ ըստ ժամանակակից անգլերենի COCA և GloWbE կորպուսների:

Գծապատկեր 4¹⁵. Վերջածանցավոր դիպվածային բառերի հաճախականությունը COCA և GloWbE կորպուսներում

¹⁴ <http://www.oxforddictionaries.com> 30.07.2016-ի դրությամբ, <http://dictionary.cambridge.org> 30.07.2016-ի դրությամբ, <http://www.ldoceonline.com> 30.07.2016-ի դրությամբ, <http://www.merriam-webster.com> 30.07.2016-ի դրությամբ.

¹⁵ Շարունակվում է հաջորդ էջում:



Ինչպես երևում է Գծապատկեր 4-ում՝ նշված կորպուսներում ամենամեծ հաճախականությամբ ունեն **walker** (COCA – 15557, GloWbE - 15557) և **creeping** (COCA - 2372, GloWbE - 2372) բառերը: **Milking** բառը ներկայացված է 770 համատեքստում (COCA - 770, GloWbE - 770), **Kipper** բառը՝ 237 համատեքստում (COCA - 237, GloWbE - 237), **ghosting** բառը՝ 81 համատեքստում (COCA - 81, GloWbE - 81), **contactless** բառը՝ 47 համատեքստում (COCA - 47, GloWbE - 47), **owling** բառը՝ ավելի սահմանափակ՝ ընդամենը 8 համատեքստում (COCA - 8, GloWbE - 8): Իսկ **adorabilis** (COCA - 1, GloWbE - 1) և **Cubanization** (COCA - 1, GloWbE - 1) բառերը ներկայացված են ընդամենը 1 համատեքստում¹⁶: Նշված կորպուսներում բացակայում են **avozilla, buffling, carbicide, contractualise, dadding, doorer, highlining, Quidditching, selfie, Sindie, trolleyology** և **youthful-ish** բառերը:

Նկատելք, որ **adorabilis, creeping, ghosting, Kipper, milking, owling** և **walker** բառերը COCA և GloWbE կորպուսներում ներկայացված

¹⁶ Davies, Mark. (2008-) *The Corpus of Contemporary American English (COCA): 520 million words, 1990-present*. Available online at: <http://corpus.byu.edu/coca/> 30.07.2016-ի դրությամբ.
 Davies, Mark. (2013) *Corpus of Global Web-Based English: 1.9 billion words from speakers in 20 countries (GloWbE)*. Available online at: <http://corpus.byu.edu/glowbe/> 30.07.2016-ի դրությամբ.

համատեքստերում այլ գործածություններն ունեն և չեն իրացնում սույն աշխատանքում առանձնացրած բառիմաստային տարբերակները: Իսկ **contactless** բառը ներկայացված է 47 *համատեքստում*, որոնցից ընդամենը 39 *համատեքստում* է իրացնում «դեբետային կամ վարկային քարտ, որն անհատական համար (քարտի ծածկագիր) կամ ստորագրություն չի պահանջում» բառիմաստային տարբերակը:

Ամփոփելով ուսումնասիրության արդյունքները՝ փաստենք, որ վերջածանցավոր դիպվածային բառերում գերակշռում են «Մարդիկ և հասարակություն (People and Society)» բառիմաստային և/կամ թեմատիկ խմբին պատկանող բառերը: Ածանցման կադապարներից ամենակենսունակը «գոյական + վերջածանց» կադապարն է: Ուսումնասիրված (21) վերջածանցավոր բառերից 2-ը (*contactless, selfie*) վերածվել են *նորաբանությունների*, իսկ 7 բառերում (*creeping, ghosting, highlining, Kipper, owling, milking, walker*) արձանագրում ենք իմաստային տեղաշարժ: Քննության առնված մյուս վերջածանցավոր բառերի դիպվածային կարգավիճակը թեական է:

2.3 Բառաստեղծման սահմանափակումներով կազմված դիպվածային բառերը և դրանց զարգացումը

Սույն ենթագլխում մեր առջև դրված խնդիրը անգլալեզու լրագրերում բառաստեղծման գործընթացը խոչընդոտող գործոնների անտեսման դեպքերի վերհանումն ու քննությունն է:

Ինչպես արդեն նշվեց, բառակազմական երկրորդական ձևույթներով՝ ածանցներով նորիմաստբառերի քանակը սահմանափակ է՝ հնչույթաբանական, իմաստաբանական, ձևաբանական, գեղագիտական, գործաբանական գործոնների հաշվառմամբ¹⁷: Միևնույն ժամանակ, լրագրանյութերում առկա են արմատական ձևույթից ածանցման միջոցով նոր բառերի ստեղծումը խոչընդոտող գործոնների չհաշվառման դեպքեր, այն է՝ ստեղծվում է նոր բառ, որը հակասում է լեզվի օրինաչափություններին:

¹⁷ Տե՛ս Գլուխ 1.2

Առանձնացրել ենք անգլերենի օրինաչափությունների խախտումով կազմված 14 (**friendlyly, governorhood, lovelily, lonelily, ministerhood, sillily, stealer, swimathon, undirty, unfoolish, ungood, unhate, un-understandable, unpessimistic**) ածանցյալ բառերի գործածություն և անգլալեզու լրագրանյութերում: Դիտարկենք դրանցից յուրաքանչյուրն առանձին-առանձին:

Վերը նշված բառաչարքի **lovelily, lonelily, friendlyly, sillily** բառերի ստեղծումը հնչույթաբանական գործոնների անտեսման հետևանք է, քանի որ ՝հնչյունների -lily հաջորդականությունը ընդունելի չէ անգլերեն մակբայներում (Katamba & Stonham 2006:76):

Օրինակ 1. *“Am I alone in thinking, “thinks Rou Loper, potentially **lonelily**, “that Roma (whom I support) did very good business in raking in over £40m for Osvaldo, the Italo-Argentine Bendtner, and Lamela, one of the first names on the Flat-Track Bully XI team sheet? (The Guardian 15 Sept 2013)*

Վերը նշված օրինակում **lonelily** բառն իրացնում է «մենակ/միայնակ» բառիմաստային տարբերակը և լրագրանյութին հաղորդում է դիպուկություն, հուզականություն և արտահայտչականություն:

Օրինակ 2. *He controls **lovelily** on his chest, skips inside a half-stride, and drills a shot that flicks off Spahic and goes just wide (The Guardian 17 Sept 2013).*

Բերված օրինակում **lovelily** բառն իրացնում է «հիանալի կերպով» բառիմաստային տարբերակը և լրագրանյութին հաղորդում է դիպուկություն և արտահայտչականություն:

Տեղին է հիշատակել Ռ. Ալենի դիտարկումը՝ բառաչարքի **friendlyly** և մի քանի այլ նման բառերի մասին (**jollily, uglily**): Յեղինակը գրում է, որ դրանք բոլորն էլ դիպվածային կազմություններ են և հանդիպում են միմիայն լրագրանյութերում.

*“Few adjectives in -ly form adverbs in -lily because they are too awkward to use. [...] A few forms in –lily are in occasional use, most but not all adjectives in which -ly is part of the stem rather than an adjectival ending. The most common is friendlyly, followed by sillily, jollily, and uglily, all found in newspaper writing despite being ungainly: **One of his superior officers, who was friendlyly disposed to him – Times 1992 [...] To see how sillily they did it – Observer 2004**” (Allen 2008:401).*

Պետք է նշել, որ *lovelily, lonelily, friendlily, sillily* ածանցյալ չորս կազմույթները համալրել են անգլերեն *Oxford Dictionaries Online* և *Merriam-Webster Dictionary Online* միալեզու բառարանների բառաֆոնդը:

Բառաչարքի **stealer** բառի ստեղծումը սահմանափակված է բառաստեղծման համակարգում առկա իմաստաբանական գործոններով՝ **thief** հոմանիշ բառի առկայության պատճառով: Չնայած դրան, արձանագրում ենք, որ *stealer* բառը կիրառվել է *The Guardian* պարբերականի շուրջ 1300 հոդվածում՝ հանդես գալով *serial, scene, crisp, sunshine, baby, soul, heart, life, plant, cattle, show, husband, identity, sadness, job* բառերի գույնագրությամբ: Չուգորդվելով *identity, show, scene, crisp* բառերի հետ՝ *stealer* բառ-միավորը կազմել է գծիկով գրվող բարդ բառային միավորներ՝ *scene-stealer, crisp-stealer, show-stealer, identity-stealer* (<http://www.theguardian.com/international> 22.09.2015-ի դրությամբ): Կարելի է փաստել, որ *stealer* գոյականը լայն գործածություն և ձեռք բերելուց զատ՝ մրցակցության մեջ է մտել անգլերենում առկա *thief* լեզվամիավորի հետ: Սովորաբար հոմանշային մրցակցության հետևանքով մեկ լեզվամիավորը ամբողջությամբ դուրս է մղվում գործածությունից: Այնինչ, տվյալ պարագայում հոմանշային հարաբերությամբ կապված *thief* և *stealer* գոյականների մրցակցությունն ամենից ավելի հանգեցրել է *thief* գոյականի իմաստային ծավալի նեղացմանը, իսկ *stealer* բառն արդեն իսկ գրանցվել է անգլերեն միալեզու երկու բառարաններում (*Oxford Dictionaries Online, Merriam-Webster Dictionary Online*):

Բառաչարքի մյուս՝ **undirty, unfoolish, unhate, unpessimistic** անդամները, **իմաստաբանական գործոնների** անտեսման արդյունք են. «-un ժխտական նախածանցը սովորաբար չի ավելանում բացասական իմակ ներակայող բառերին» (Katamba & Stonham 2006:80):

Օրինակ 1. **UNDIRTY** (headline) *Tales of the underworld* (headline) *London's 19th-century sewer system is a testament to Victorian genius. But now global warming, dodgy plumbing and fast food threaten to overwhelm the capital's bowels. Blake Morrison ventures beneath the streets [...] That's what is odd about this circular tunnel, three and half metres in diameter: it seems so undirty* (The Guardian 30 March 2005).

Վերոնշյալ հոդվածում խոսվում է Լոնդոնի կոյուղու համակարգում աշխատողների հոլյժ կարևոր և, միաժամանակ,

դժվարին աշխատանքի մասին: Հոդվածում **undirty** բառը գործածվել է երկու անգամ՝ վերնագրում և նյութի շարադրանքում: Երկու պարագայում էլ հեղինակը *undirty* բառի գործածմամբ շեշտադրում է, թե ինչպիսի կեղտոտ պայմաններում են ստիպված աշխատել կոյուղաջրերի համակարգի աշխատակիցները: Կարելի է փաստել, որ կոյուղու համակարգի նկարագրման մեջ *undirty* բառի գործածումը ոճական հնար է՝ հեգնանք՝ նյութին դիպուկություն և արտահայտչականություն և հուզականություն հաղորդելու նպատակով:

Օրինակ 2. *One thing that has changed recently is that David says that he is beginning to think of capitalist as an 'undirty' word, and as Janine asks honestly: 'Why can't you be successful and ethical?' (The Guardian 16 March 2003)*

Վերլուծությունը ցույց է տալիս, որ վերոնշյալ միկրոհամատեքստում **undirty** բառը կրկին հեգնանք է արտահայտում և բացասական երանգավորում ունի: Տվյալ պարագայում խոսվում է «կապիտալիստի» մասին, իսկ *undirty* ածանցյալը կապակցվում է *word* բառի հետ:

Բառաշարքի **unfoolish** բառը գործածվել է բրիտանական թերթերի (*The Guardian, The Observer*) հոդվածների վերնագրերում.

Օրինակ՝ **UNFOOLISH** (headline) [...] *To the five million fans who bought her debut album, she's an R&B sensation; the fastest-selling female singer in history [...] Peter Robinson charts the irresistible rise of Ashanti* (*The Guardian/The Observer* 06 July 2003).

Վերը նշված օրինակում խոսվում է երգչուհի Աշանտիի և նրա թողարկած վերջին ալբոմի մասին, որը վերնագրված է **unfoolish**: Իր հաղորդակցական նպատակին հասնելու համար հեղինակը որպես հիմնաբառ է վերցնում հենց այս բառը, որովհետև դրանով փորձում է հաղորդվող նյութն ավելի արտահայտիչ դարձնել:

Unhate և **unpessimistic** բառերը դրսևորում են եզակի կիրառություն:

Օրինակ 1. *Whoa! The clothing line's most recent ad campaign, called "Unhate," showcases the pope k-i-s-s-i-n-g the imam of Cairo and Obama smooching Hugo Chavez. (Thanks, Photoshop.) Wait, are Obama's eyes open?* (*The New York Times* 18 Nov 2011)

Բերված օրինակում նշված բառը նորածն և բրենդային հագուստի «**Unhate**» անունը կրող գովազդի անվանումն է:

Օրինակ 2. *ACTOR PRAISES AUTHOR Appearing in First Play Not His Own, He Says It reveals 'Unpessimistic' Dramatist* (The New York Times 26 Sept 1933).

Վերը նշված օրինակում **unpessimistic** բառն իրացնում է «լավատես» բառիմաստային տարբերակը: Պետք է նշել, որ ներկայացված համատեքստը **unpessimistic** բառի գործածության եզակի օրինակ է լրագրանյութերում: Յետևապես, նշված բառը դեռևս դիպվածային կարգավիճակում է:

Ուշադրության են արժանի բառաշարքի՝ **-un** նախածանցով կազմված **un-understandable** և **ungood** ածանցյալ կազմության ներքո:

Օրինակ 1. *"I'm beginning to understand the previously un-understandable - how the sailors talk longingly of the sounds of traffic and other nuisance noise that links them to existence on land"* (The Guardian 07 April 2003).

Օրինակ 2. *It's a good mix of positives vibes, melted with witty and dark humor, some silly and un-understandable lyrics, references on drugs and sex. And it's also the beginning, and the end of an era* (The Guardian 03 Feb 2012).

Օրինակ 3. *The Thought Police strive to control minds by limiting vocabulary. How can something be bad when no word for bad exists? They only allow "ungood"*. (The Guardian 11 July 2011).

Օրինակ 4. **UNGOOD GOVERNANCE** (headline) *In their joint statement of April 21, 2010 the five constituent elements of the People's Partnership declared "a national objective [...] to put into practice collaborative leadership to achieve good governance"* (The Trinidad Express 28 Feb 2012).

Վերը նշված օրինակներում **un-understandable** և **ungood** բառերի հետաքրքիր գործածության ենք հանդիպում: Առաջին օրինակում *un-understandable* բառը գործածվել է պատերազմի տարիներին՝ իրաքի անմխիթար վիճակի, առօրյա կյանքի մանրամասն նկարագրության մեջ: Այն, ինչը հոդվածագրի համար անհասկանալի էր նախկինում, ներկայումս հասկանալի է դարձել (*I'm beginning to understand the previously un-understandable*): Այս բառի գործածումը լրագրանյութում նպաստում է հաղորդվող նյութն առավել պատկերավոր, արտահայտիչ և հուզական դարձնելուն, որն էլ ոճական արժեքն ապահովող գործոն է:

Երկրորդ օրինակում **un-understandable** ածանցյալ բառը գուճորդվել է *lyrics* բառի հետ՝ երգիչ Շաուն Ռայդերի (Shaun Ryder) և նրա երգի կատարման նկարագրության մեջ:

Երրորդ օրինակում լրագրանյութի հեղինակը ներկայացնում է մի շարք նոր բառերի ծագումն անգլերենում, որոնց շարքում էլ քննությանն է առնված *ungood* բառը: Ստացված տվյալները վկայում են, որ այն հեղինակային նորաբանությունն է, և դրա ստեղծումը պատկանում է Ջ. Օրուելի գրչին:

Չորրորդ օրինակում *ungood* բառը կապակցված է *governance* բառի հետ՝ հոդվածի վերնագրում: Վերլուծությունը ցույց է տալիս, որ տվյալ լրագրանյութը կենտրոնաձիգ է, ողջ հոդվածը կառուցված է վերնագրի արտահայտած գաղափարի շուրջ: Հոդվածագիրն իր դժգոհությունն է արտահայտում Տրինիդադ և Տոբագոյում առկա քաղաքական իրավիճակի, երկրում գործող հաստատությունների ներկա կառավարման վերաբերյալ: Հոդվածի վերնագիրը՝ **ungood governance** լավագույնս ներկայացնում է հաղորդվող նյութը՝ հոդվածը դարձնելով առավել պատկերավոր և արտահայտիչ: Նկատենք նաև, որ բերված օրինակում վերաստեղծված՝ նշված դիպվածային բառը նաև մեղմասույթ է:

Քննությանն ենթարկված միկրոհամատեքստերում, *un-understandable* բառը գուճորդվել է *lyrics* գոյականի հետ (**un-understandable lyrics**), *ungood* բառը՝ *governance* գոյականի հետ (**ungood governance**): Նշված բառակապակցություններում *un-understandable* և *ungood* բառերի գործածումը առավել արտահայտիչ են դարձնում հաղորդվող նյութը և, միևնույն ժամանակ, արտացոլում են հեղինակի գնահատողականությունը: Բառաշարքի **ungood** անդամը ի հայտ է եկել *bad* բառի առկայության պարագայում՝ հոդվածի վերնագրում իրացնելով *bad, not successful* բառիմաստային տարբերակը: Բառաշարքի **un-understandable** բառը քննությանն առնված միկրոհամատեքստերում ձեռք է բերել և՛ ածականի (*un-understandable lyrics*), և՛ գոյականի կիրառությունն (*to understand the previously un-understandable*):

Բառաշարքի **governorhood** և **ministerhood** միավորները ձևաբանական գործոնների անտեսման հետևանք են, քանի որ «-hood գոյականակերտ

վերջածանցը սովորաբար չի ավելանում փոխառյալ հիմքերին» (Katamba & Stonham 2006:78):

Օրինակ՝ *“The time has come to stop thinking about George W. Bush as a governor and start thinking about him as a president.” [...] “He has outgrown mere **governorhood**”* (The Texas Observer 25 June 1999):

Լրագրահոդվածում խոսվում է ԱՄՆ նախկին նախագահ՝ Ջ. Բուշի մասին, որը նախագահ դառնալուց առաջ կառավարչի պաշտոնն է զբաղեցրել: Յոդվածում քննարկվում է նրա՝ կառավարչի պաշտոնից՝ մինչև նախագահի պաշտոնը զբաղեցնելու հարցը: Յոդվածագրի կարծիքով Ջ. Բուշը բավականին ժամանակ է զբաղեցրել կառավարչի պաշտոնը, իսկ հիմա աճել է՝ նախագահի պաշտոնը զբաղեցնելու համար: Լրագրանյութում ստեղծված *governorhood* ածանցյալ բառը նդգծում և առավել արտահայտիչ է դարձնում հեղինակի մտադրությունը:

Օրինակ՝ *Shattered Calls For “Universal Junior **Ministerhood**”* (headline) (The Emergency 21 April 2009).

Վերոնշյալ օրինակում *ministerhood* ածանցյալ բառը գործածվել է հոդվածի վերնագրում և հակիրճ ներկայացնում է լրագրանյութի բովանդակությունը: Տվյալ լրագրանյութում խոսվում է միացյալ նախարարական կազմի ստեղծման անհրաժեշտության մասին:

Բառաչարքի *swimathon* գոյականը գեղագիտական գործոնների անտեսման հետևանք է, քանի որ *-athon* վերջածանցով ածանցյալ կազմությունները որոշ լեզվաբանների տեսանկյունից դիտարկվում են որպես անբարեհունչ (Stonham & Katamba 2006): Արձանագրում ենք, որ այն դեռևս չի գրանցվել անգլալեզու բառարաններում, սակայն գործածվել է *The Guardian* պարբերականի 48 լրագրահոդվածում (<http://www.theguardian.com/international> 30.05.2016-ի դրությամբ):

Վերը քննության առնված բառերի դիպվածային կարգավիճակը հասկորոշելու համար բերում ենք հետևյալ աղյուսակները, որտեղ նշված է ածանցը՝ նախածանց/վերջածանց, ածանցյալ կազմությունը, անգլերեն միալեզու բառարաններում դրա առկայությունը/բացակայությունը (Oxford Dictionaries Online/ODO, Cambridge Dictionaries Online/CDO, Merriam-Webster Dictionary Online/MWOL,

Longman Dictionary of Contemporary English /LDOCE) և դրա հաճախականությունը կորպուսում (Corpus of Contemporary American English/COCA, Corpus of Global Web-Based English/GloWbE):

Աղյուսակ 1¹⁸. Նախածանցավոր դիպվածային բառերի առկայությունը/բացակայությունը անգլերեն բառարաններում և դրանց հաճախականությունը COCA և GloWbE կորպուսներում

Նախածանց	Ածանցյալ կազմություն	Անգլերեն միալեզու բառարաններում առկայություն/բացակայություն	Ածանցյալի հաճախականությունը կորպուսում
un-	ungood	ODO - MWOL - CDO - LDOCE -	COCA + 4 GloWbE + 47
	unhate	ODO - MWOL - CDO - LDOCE -	COCA - GloWbE -
	unfoolish	ODO - MWOL - CDO - LDOCE -	COCA - GloWbE -
	un-understandable	ODO - MWOL - CDO - LDOCE -	COCA + 1 GloWbE + 1
	undirty	ODO - MWOL - CDO - LDOCE -	COCA - GloWbE -
	unpessimistic	ODO - MWOL -	COCA - GloWbE -

¹⁸ Շարունակվում է հաջորդ էջում:

		CDO – LDOCE –	
--	--	------------------	--

Ինչպես երևում է Աղյուսակ 1-ում, *un-* նախածանցով կազմված *undirty, unfoolish, ungood, unhate, unpessimistic, un-understandable* բառերը դեռևս չեն զետեղվել տվյալ անգլերեն բառարաններում¹⁹: Ինչ վերաբերում է նշված կորպուսներում դրանց հաճախականությանը՝ ապամենաբարձր հաճախականություն ունի *ungood* (COCA - 4, GloWbE - 47) ածանցյալը, իսկ *undirty, unhate, unfoolish* և *unpessimistic* ածանցյալները առկա չեն նշյալ կորպուսներում: *Un-understandable* բառը ներկայացված է ընդամենը մեկ համատեքստում (COCA - 1, GloWbE - 1)²⁰:

Աղյուսակ 2²¹. Վերջածանցավոր դիպվածային բառերի առկայությունը/բացակայությունը անգլերեն բառարաններում և դրանց հաճախականությունը COCA և GloWbE կորպուսներում

Վերջածանց	Ածանցյալ կազմություն	Անգլերեն միալեզու բառարաններում առկայություն/բացակայություն	Ածանցյալի հաճախականությունը կորպուսում
-hood	governorhood	ODO – MWOL – CDO – LDOCE –	COCA - GloWbE -
	ministerhood	ODO – MWOL – CDO – LDOCE –	COCA - GloWbE -
-athon	swimathon	ODO – MWOL –	COCA + 1 GloWbE + 1

¹⁹ <http://www.oxforddictionaries.com> 30.07.2016-ի դրությամբ, <http://dictionary.cambridge.org> 30.07.2016-ի դրությամբ, <http://www.ldoceonline.com> 30.07.2016-ի դրությամբ, <http://www.merriam-webster.com> 30.07.2016-ի դրությամբ.

²⁰ Davies, Mark. (2008-) *The Corpus of Contemporary American English (COCA): 520 million words, 1990-present*. Available online at: <http://corpus.byu.edu/coca/> 30.07.2016-ի դրությամբ.

Davies, Mark. (2013) *Corpus of Global Web-Based English: 1.9 billion words from speakers in 20 countries (GloWbE)*. Available online at: <http://corpus.byu.edu/glowbe/> 30.07.2016-ի դրությամբ.

²¹ Շարունակվում է հաջորդ էջում:

		CDO – LDOCE –	
-er	stealer	ODO + MWOL + CDO – LDOCE –	COCA +77 GloWbE +77
-ly	sillily	ODO + MWOL + CDO – LDOCE –	COCA + 3 GloWbE + 3
	friendlily	ODO + MWOL + CDO – LDOCE –	COCA + 1 GloWbE + 1
	lovelily	ODO + MWOL + CDO – LDOCE –	COCA - GloWbE -
	lonelily	ODO – MWOL + CDO – LDOCE –	COCA + 1 GloWbE + 1

Աղյուսակ 2-ը ցույց է տալիս, որ *stealer*, *sillily*, *friendlily*, *lovelily* ածանցյալները գետեղվել են *Oxford Dictionaries Online* և *Merriam-Webster Dictionary Online* բառարաններում, *lonelily* ածանցյալը՝ միմիայն *Merriam-Webster Dictionary Online* բառարանում, իսկ *ministerhood*, *governorhood*, *swimathon* ածանցյալները դեռևս չեն համալրել նշված բառարանների բառաֆոնդը: Ինչ վերաբերում է ածանցյալների հաճախականությանը նշված կորպուսներում (COCA, GloWbE)՝ ապա արձանագրում ենք, որ *stealer* ածանցյալն ունի ամենաբարձր հաճախականությունը (COCA - 77, GloWbE - 77), և նշված երկու կորպուսներում ամենացածր հաճախականությունն ունի *sillily* ածանցյալը (COCA - 3, GloWbE - 3): *Friendlily*, *lonelily* և *swimathon* բառերը ներկայացված են ընդամենը մեկ

համատեքստում (COCA - 1, GloWbE - 1): Բառաշարքի *ministerhood, governorhood, lovelily* ածանցյալները դեռևս բացակայում են կորպուսների բառացանկից:

Այսպիսով, ուսումնասիրված լեզվանյութը թույլ է տալիս եզրակացնել, որ բառակազմական գործընթացը խաթարող գործոնները երբեմն անտեսվում են, և հաշվի չեն առնվում լրագրանյութերի հաղորդման ժամանակ: Նշվածն իրագործվում է լրագրող-հեղինակի ստեղծագործ մտքի շնորհիվ՝ լեզվանյութին դիպուկությոն, արտահայտչականությոն, պատկերավորությոն և հուզականությոն հաղորդելու և ինքնատիպությոն դրսևորելու նպատակադրումով: Յետևապես, ուսումնասիրված դիպվածային բառերը լրագրանյութերում արտահայտչական գործառնություն են: Բառակազմական գործընթացը խոչընդոտող գործոնների անտեսման արդյունքում ստեղծված ածանցյալ դիպվածային բառերը ձեռք են բերում ոչ միայն գործածման բարձր հաճախականությոն, այլ և համալրում են անգլալեզու բառարանների բառաֆոնդը և զետեղվում կորպուսային բառացանկերում:

Ամփոփելով ուսումնասիրության արդյունքները՝ փաստենք, որ անգլերենի օրինաչափությոնների խախտումով կազմված դիպվածային բառերը հնչողաբանական, իմաստաբանական և ձևաբանական գործոնների անտեսման արդյունքում են ի հայտ եկել:

ԳԼՈՒԽ 3

ԲԱՐԴ ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ԲԱՌԵՐԻ ԻՄԱՍՏԱԿԱՌՈՒ ՑՎԱՆՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՅ ԱՏԿՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Բարդ դիպվածային բառերը և դրանց զարգացումը

Բառաբարդումը բառակազմության (բառաստեղծման) հիմնական դրսևորումներից է, երբ պարզ ածանցավոր բառերի կամ արմատների համակցումով ստեղծվում են բառեր կամ նոր բառեր: Բարդության տարածված տեսակը երկբաղադրիչությոնն է, ապա նաև՝ եռաբաղադրիչ և ավել բաղադրիչ պարունակող բարդությոնները:

Բարդություն կառուցվածքային տեսակների մեջ առանձնանում են նաև բարդության ածանցումը կամ բարդաձանցումը:

Ներկա աշխատանքում անգլերենի նորակազմ բարդ բառային միավորների քննության մեջ առաջնահերթ կարևորություն են ստանում հետևյալ հանգամանքները.

ա/ բարդ բառային միավորի խոսքիմասային պատկանելությունը,

բ/ բաղադրիչ անդամների շարահյուսական հարաբերությունը,

գ/ ձևաբանական և իմաստային պատճառաբանվածությունը և/կամ չպատճառաբանվածությունը,

դ/ բարդ բառային միավորի համադրական և/կամ վերլուծական լինելը:

Ստորև փորձենք ներկայացնել անգլալեզու լրագրանյութերից քաղված բարդ բառային միավորների կազմության կաղապարները:

ԵՐԿԲԱՂԱԴՐԻՉ ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ա/ ածական + ածական – *(the) new normal (n)*

բ/ ածական + բայարմատ – *skinny bash (v)*

գ/ ածական + գոյական – *algorithmic trading (n), ancestral health (n), autonomous vehicle (n), big data (n), biotic virus (n), cultured leather (n), digital afterlife (n), digital detox (n), digital footprint (n), digital globe (n), digital surgery (n), double denim (n), dumbphone, flipped learning (n), human enhancement (n), hybrid camera (n), light quadricycle (n), pink slime (n), positive procrastination (n), regrettable substitution (n), responsive design (n), silver splicer (n), skinny pig (n), slow web (n), smart gun (n), smartwatch (n), social supermarket (n), standing desk (n), virtual vanity (n).*

բ/ գոյական + գոյական – *activist investor (n), adoption party (n), air yoga (n), banner blindness (n), Barbie flu (n), blast chiller (n), blood powder (n), booth babe (n), brass ceiling (n), breadsinner, buffalo hump (n), bunny chow (n), buzz score (n), cat café (n), challenger bank (n), chandelier earring (n), site scraper (n), consumer telematics (n), crony capitalism (n), data journalism (n), death test (n), dozenalist (n), dustbin baby (n), earthquake cloak (n), Facebook facelift (n), generation rent (n), ghost detector (n), ghost money (n), glass cliff (n), hamburger tax (n), hashtag activism (n), hedge rage (n), impression management (n), Internet refrigerator (n), jigsaw family (n), job flipping (n), litter vigilante (n), lulz-farming (n), meat fruit (n), mumblogger (n), murder-cam (n), nappy wall*

(n), obesity paradox (n), password wallet (n), potato ricer (n), power pauch (n), ring rain (n), roller skiing/roller-skiing (n), shadow biosphere (n), shareholder spring (n), success theater (n), Cinderella syndrome (n), wifestyle (n).

գ/ գոյ ակ ան + ած ակ ան – pay-neutral (adj)

դ/ բայ ար մատ + գոյ ակ ան – binge thinker (n), burn book (n), dwell time (n), fly grazing (n), kill switch (n), push ring (n), tweet seats (n).

ե/ գոյ ակ ան + ներկա դերբայ (present participle) – crowdfunding (n)

զ/ գոյ ակ ան + բայ ար մատ – crowd-fund/crowdfund (v), frost quake/frostquake

է/ բայ ար մատ + մակբայ - swipe-right (v)

ԵՈՒՖԱՂԱԴՐԻՉ ԿԱՉՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ – bug-out bag (n), dark sky park (n), dead-cat hole (n), full nest syndrome (n), high intensity training (n), lambpigcow (n), lean back experience (n), Ministry of Peace, Ministry of Truth, spare room subsidy (n), sugar daddy party (n), word-of-post (n), work-life merge (n).

ՔՈՒՖԱՂԱԴՐԻՉ ԿԱՉՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ - coach-of-the month (n)

ՉՆԳԱՖԱՂԱԴՐԻՉ ԿԱՉՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ – slimmer-of-the-month-style (n)

Այժմ մանրամասն քննության առնենք վերը նշված բարդ դիպվածային բառային միավորները:

1. activist investor

Օրինակ՝ *The board of Yahoo is discussing the future of Scott Thompson, its chief executive, after an **activist investor** at the technology giant accused him of lying on his CV* (The Independent 10 May 2012).

Activist investor բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ հարադրող թյուր է, որում *activist* և *investor* բաղադրիչները համագործեն: Այն նշանակում է՝ «անձ, որը գնում է ընկերության բաժնետոմսերը՝ օգտագործելով դա քարոզարշավ անցկացնելիս»: Բերված միկրոհամատեքստը դեռևս բավարար չէ տվյալ բառիմաստի վերհանման համար, և հոդվածի ընթերցումից հետո է միայն վերհանվում դրա իրացրած բառիմաստային տարբերակը:

2. adoption party

Օրինակ՝ *'**Adoption parties**' went out of flavor in the UK in the 1980s. Critics said they were 'cattle markets' for kids, and new family-finding methods were tried* (The Guardian 01 Oct 2011).

Adoption party բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրություն է (*adoption party is a kind of party*), որում *adoption* առաջնաբաղադրիչը լրացնում է *party* գլխավոր բաղադրիչին: Բարդ բառային միավորն ունի իմաստային թափանցիկություն և հստակություն: Այն նշանակում է՝ «*երեկույթ, որտեղ որդեգրող ծնողները հանդիպում են որդեգրման ենթակա երեխաներին*»:

3. air yoga

Օրինակ՝ *Now we can exclusively reveal the secret behind Kate's hot new body – Air Yoga* (Grazia 25 Aug 2014).

Air yoga բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրություն է, որում *air* առաջնաբաղադրիչը լրացնում է *yoga* գլխավոր բաղադրիչին: Այն նշանակում է՝ «*յոգայի մի ձև, որի ժամանակ վարժությունները կատարվում են օդում՝ պարանից կախված*»:

4. algorithmic trading

Օրինակ՝ *The boom in algorithmic trading has not only inspired its first doomsday novel, in Robert Harris's The Fear Index – in which Vixal 4, a Swiss hedge fund's super-brainy, fear-predicting algorithm goes predictably loopy – but has changed the topography of cities and the personnel at trading firms* (The Independent 15 Jan 2012).

Algorithmic trading բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրություն է, որում *algorithmic* առաջնաբաղադրիչը լրացնում է *trading* գլխավոր բաղադրիչին: Այն նշանակում է՝ «*ֆոնդային բորսայի գործարք/փոխանակում/առևտուր համակարգիչներով, որոնք ծրագրավորված են արձագանքել ու շուկայական տատանվող գներին*»:

5. ancestral health

Օրինակ 1. **'Ancestral health'**, to use a term popular among Paleo followers, has gone mass (The New York Times 21 Sept 2014).

Օրինակ 2. *Which is odd, because in many ways my husband has the instincts of a wild boar, and Ancestral health – the lifestyle extension of the Paleo or 'Caveman' diet – is about going back to a time of elk-jerky-eating, loincloth-wearing Lascaux dwellers* (The Telegraph 17 Oct 2014).

Ancestral health բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրություն է, որում *ancestral* առաջնաբաղադրիչը լրացնում է *health* գլխավոր բաղադրիչին: Այն նշանակում է՝ «սննդակարգ, որը հիմնված է մեր նախնիների՝ քարանձավի մարդու ենթադրյալ սննդակարգի վրա»: Բերված առաջին օրինակում հպանցիկ անդրադարձ է կատարվում նշված բառային միավորի իրացրած բառիմաստին, իսկ երկրորդ օրինակում մանրամասնորեն տրվում է *ancestral health* բառի բացատրությունը: Այսպիսով, նշված բառային միավորն ունի համատեքստային գործառնություն, քանի որ բառիմաստը բացատրվում և հստակեցվում է լրագրանյութում:

6. autonomous vehicle

Օրինակ՝ *Toyota is one of several heavy-weight car manufacturers and technology companies researching **autonomous vehicles*** (BBC News 04 Jan 2013).

Autonomous vehicle բառային միավորը երկբաղադրիչ ստորադասական հարադրություն է, որում *autonomous* առաջնաբաղադրիչը լրացնում է *vehicle* գլխավոր բաղադրիչին: Նշված բառային միավորն ունի իմաստային թափանցիկություն և հստակություն: Այն նշանակում է՝ «առանց վարորդի ինքնակառավարվող մեքենա, ինքնաշարժ»: Այս նշված բառային միավորը գիտական նորարարության անվանում է:

7. banner blindness

Օրինակ՝ ***Banner blindness** is a well-documented phenomenon. The modern-day interest consumer is well aware of and used to, the standard advertising formats* (The Guardian 12 April 2012).

Banner blindness բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրություն է, որի գլխավոր բաղադրիչը *blindness* վերջնաբաղադրիչն է: Այն նշանակում է՝ «համացանցում ազդերիզների/կայքի գովազդների անտեսում»: Նշենք, նաև, որ նշված բարդություն մեջ բաղադրիչները հանդես են գալիս երկրորդական նշանակությամբ: Տվյալ բարդություն մեջ արձանագրում ենք նաև *բաղածայնություն* ոճական հնարը՝ արտահայտված «b» բաղածայնի կրկնությամբ:

8. barbie flu

Օրինակ՝ *After one Ukrainian woman gained international notoriety for her transformation into a 'living doll', at least two more have surfaced as devotees of the beauty trend, nicknamed the 'Barbie flu'* (The Week 18 Oct 2012).

Barbie flu բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրությունն է, որի գլխավոր բաղադրիչը *flu* վերջնաբաղադրիչն է: Այն նշանակում է՝ «*երիտասարդ կանանց միտումը փոփոխելու իրենց արտաքինը՝ Barbie տիկնիկներին նմանվելու համար*»: Տվյալ պարագայում արձանագրում ենք իմաստային նորաբանություն: Բանն այն է, որ նշված բարդության մեջ *flu* բաղադրիչը նշանակում է «հիվանդություն», ոչ թե հարբուխ: Ուստի, արձանագրում ենք *flu* գոյականի բառիմաստի ընդլայնում, ընդհանրացում, որը բխեցվում է բառի ավելի նեղ, մասնավոր հիմնանշանակությունից՝ “*an infectious disease like a very bad cold, that causes fever, pains and weaknesses*” (OALD 2006:5950). Նկատենք նաև, որ առանձնացված օրինակում լրագրանյութի հեղինակը գործածել է *Barbie flu* բարդությանն առնչակից *'living doll'* հոմանշային կազմությունը:

9. big data

Օրինակ՝ *Big Data probably knows more about us than we ourselves do, but is there stuff that Big Data itself doesn't know it knows?* (The New York Times 05 June 2012)

Big data բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրությունն է, որում *big* առաջնաբաղադրիչը լրացնում է *data* գլխավոր բաղադրիչին: Բերված օրինակը պարզորոշ արտացոլում է, որ *big data* բառային միավորը համատեքստում իրացնում է «*առցանց սոցիալական լրատվամիջոցների շնորհիվ հասանելի հսկայածավալ տեղեկույթ*» բառիմաստային տարբերակը:

10. binge thinker

Օրինակ՝ *We've become a nation of binge thinkers with worry, in-trays we can never clear, says stress expert Professor Cary Cooper from Lancaster University* (Grazia 11 June 2012).

Binge thinker բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրությունն է, որում *binge*

առաջ նաբաղադրիչը լրացնում է *thinker* գլխավոր բաղադրիչին: Նշված բառային միավորը մասամբ է պատճառաբանված և նշանակում է՝ «բազում թեմաներով մտազբաղ անձ»: Եթե *thinker* վերջնաբաղադրիչը բարդության մեջ նշանակում է *մտազբաղ, մտածող անձ*, ապա *binge* բայը մասամբ է դրսևորում բառարանային նշանակությունը (*without being able to control yourself*): Բանն այն է, որ *binge* բառն ունի բառարանում գետեղված հետևյալ նշանակությունը. “to eat or drink too much, especially without being able to control yourself” (հայ.՝ խրախճանքի մեջ լինել): Իսկ, տվյալ բարդության մեջ *binge* բաղադրիչը չի վերաբերում կերուխումին, այլ բառիմաստային նոր տարբերակով է հանդես գալիս: Այսպիսով, տվյալ պարագայում արձանագրում ենք նորակազմություն և իմաստային նորաբանություն: Մի կողմից՝ կազմվել է *binge thinker* երկբաղադրիչ հարադրությունը, մյուս կողմից՝ *binge* բայը գործածվել է նոր նշանակությամբ:

11. biotic virus

Օրինակ՝ *Cheatgrass is a very, insidious kind of biotic virus, said Stephen Pyne, a western fire historian at Arizona state university* (The New York Times 31 July 2012).

Biotic virus բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրություն է, որը մասամբ է պատճառաբանված: Առանձնացված համատեքստում այն իրացնում է «*ոչ շատ ակտիվ բույս, որը տարածում է գտնում որևէ տարածքում և ժամանակի ընթացքում փոխարինում բնիկ բույսին*» բառիմաստային տարբերակը: Տվյալ պարագայում այն վերաբերում է *cheatgrass* անունը կրող բուսատեսակին: Ըստ երևույթին, այն ոչ թե վիրուս է, այլ բույս՝ օժտված վիրուսին բնորոշ հատկություններով: Բերված օրինակում *cheatgrass* և *insidious* բառերը նպաստում են բառիմաստի վերհանմանը:

12. blast chiller

Օրինակ՝ *Cool Food With Less Waiting* (headline) [...] *Credit, then, goes to LG for introducing the Blast Chiller, a feature available on its French-door refrigerator, in stores next month, that allows you to cool a can in minutes* (The New York Times 04 April 2012).

Blast chiller բառային միավորը երկբաղադրիչ ստորադասական հարադրություն է, որի գլխավոր բաղադրիչը *chiller* վերջնաբաղադրիչն է: Այն նշանակում է՝ «*գերարագ սառեցնող*

սառնախցիկ»։ Նշված բառային միավորն անվանում է նոր իրականություն։

13. blood-powder

Օրինակ՝ *In the past, butchers invariably used fresh pigs' blood for their black puddings [...] And a raft of public health regulations now govern its transportation and use, to the extent that fresh-blood black pudding has become, in Dee's words, 'almost illegal to make'. So most producers use a dried **blood-powder** mix that is more convenient, but has nothing like the same intensity of flavor* (The Guardian 20 June 2012).

Blood-powder բառային միավորը գծիկով գրվող երկբաղադրիչ կազմություն է։ Այն նշանակում է՝ «փոշի արյուն կամ արյան փոշի»։ Լրագրանյութը, որում գործածվել է տվյալ բառային միավորը, հստակեցնում է բառիմաստը և այն դարձնում ավելի թափանցիկ և հստակ։ Լրագրանյութից պարզ է դառնում, որ նախկինում անգլիական արևդինգի բաղադրատոմսում առկա էր խոզի թարմ արյուն։ Սակայն, երբ արգելվեց խոզի թարմ արյան գործածությունը, փոխարենը օգտագործվեց արյան փոշու խառնուրդը։ Այստեղից էլ երևան է եկել նշված բարդությունը։

14. booth babe

Օրինակ՝ *Some visitors to the Consumer Electronics Show (CES) in Las Vegas are angry that the so-called '**booth babes**' are back despite much criticism at last year's event* (bbc.co.uk 09 Jan 2013).

Booth babe բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրություն է, որում *booth* առաջնաբաղադրիչը լրացնում է *babe* գլխավոր բաղադրիչին։ Այն նշանակում է՝ «գրավիչ երիտասարդ կին, որը կանգնում է տաղավարի մոտ՝ այցելուներին գրավելու համար»։ Բարդության մեջ *babe* բաղադրիչը հանդես է գալիս իր երկրորդական նշանակությամբ. *babe* – (2) *an attractive young woman* (OALD 2006:94).

15. brass ceiling

Օրինակ 1. *Despite that pledge four women recently sued Panetta and the Pentagon, saying the ban was a '**brass ceiling**' hindering their advancement through the ranks* (Nation Time 24 Jan 2013).

Օրինակ 2. *It's Time to Smash the **Brass Ceiling*** (headline) (The Huffington Post 29 Jan 2013).

Brass ceiling բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ չ պատճառաբանված հարադրություն է: Այն նշանակում է՝ «խոչընդոտարգելք, որին կանայք բախվում են՝ զինվորական բարձր պաշտոններ զբաղեցնելիս»: Տվյալ բառային միավորն ունի համատեքստային գործառույթ, քանի որ առանց համատեքստի գրեթե անհնար է վերհանել բարդության իմաստը: Նշենք նաև, որ *brass ceiling* բառային միավորը կազմվել է անգլերենում առկա *glass ceiling* բառի համաբանությամբ:

16. breadwinner

Օրինակ՝ *Why we need to invent new words (headline) [...] Breadwinner noun A man experiencing guilt and shame because he stays home to raise the kids while his wife provides economically: We won't get Bill to come to Vegas with us because he's become a breadwinner* (The Guardian 11 March 2013).

Breadwinner բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական կազմություն է և նշանակում է՝ «տղամարդ, որն ամոթի և մեղքի զգացում ունի, քանի որ կինն է *ֆինանսապես ապահովում ընտանիքը*»: Չարկ է փաստել, որ նշված բառային միավորը կազմվել է *breadwinner* բառի համաբանությամբ:

17. buffalo hump

Օրինակ՝ *A spokesperson for whatclinic.com, who carried out the research, said: 'Buffalo humps' can be an unusual side effect of certain medications, but more often they appear over time, through obesity. Poor posture doesn't help either, making it more noticeable* (The Daily Mail 08 Jan 2014).

Buffalo hump բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրություն է, որի գլխավոր բաղադրիչը *hump* վերջնաբաղադրիչն է: Այն վերաբերում է ողնաշարի հետ կապված առողջական խնդրին և նշանակում է՝ «*ճարպային կազմություն/ավելացում վզի հետևամասում, որը սովորաբար երևան է գալիս ճարպակալման կամ ոչ ուղիղ կեցվածք ունենալու պատճառով*»: Բարդության մեջ *buffalo* (գոմեշ) առաջնաբաղադրիչը իմաստային հարանշանակություն է հաղորդում բարդությանը՝ այն դարձնելով առավել պատկերավոր և արտահայտիչ: Նկատենք նաև, որ բերված օրինակը պարզ կերպով արտացոլում է նշված բառիմաստը, որին նպաստում են լրագրանյութի շարադրանքում *obesity* բառի, *poor*

posture և *an unusual side effect of certain medications*
բառակապակց ու թյուրի գործածումը:

18. bunny chow

Օրինակ՝ *Many people will not have heard of **bunny chow**. But after years on the other side of the world, it is now in Britain, found at a small number of restaurants and street food vendors* (bbc.co.uk 20 Jan 2014).

Bunny chow բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ չ պատճառաբանված հարադրություն է: Այն նշանակում է՝ «*հարավ-աֆրիկյան կարի/հնդկական կծու կերակրատեսակ, որը մատուցվում է խմորը հանած բոքոն հացի մեջ*»:

19. burn book

Օրինակ՝ **BURN BOOK** *Last seen in Mean Girls, now someone's penned one in Surl's name. Now that's mean, girls* (Grazia 17 Sept 2012).

Burn book բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրություն է, որում *burn* առաջնաբաղադրիչը լրացնում է *book* գլխավոր բաղադրիչին: Այն նշանակում է՝ «*այլ մարդկանց մասին քննադատություններ պարունակող օրագիր*»: Այս բարդության բաղադրիչ մասերը հանդես են գալիս իրենց երկրորդական նշանակություններով. *book* – (3) *a set of sheets of paper that are fastened together inside a cover and used for writing in*; *burn* – (12) *to put information onto a CD* (OALD 2006:167). Նկատենք նաև, որ նորակազմությունը ներկայացված է գլխատառերով՝ տվյալ բառի վրա ընթերցողների ուշադրությունը գրավելու նպատակով: Այնուհանդերձ, բերված օրինակը չի բնութագրում *burn book* բառը, այլ հոդվածի ընթերցումից հետո է միայն բառիմաստը դուրս բերվում:

Վերը նշված բառային միավորում արձանագրում ենք նաև *բաղաձայն ու թ ոճական* հնարը, որը դրսևորվում է «*b*» բաղաձայնի կրկնությունով:

20. buzz score

Օրինակ 1. *The iPhone's reputation fell at the time of Samsung's first advent in late November. At the same time, according to YouGov's '**buzz score**', there was an upward trend in Samsung's popularity* (The Telegraph 16 Dec 2011).

Օրինակ 2. *Although Toyota's campaign for the 2012 Camry is just taking off the car maker's **Buzz score** – a measure of consumer perception – is already nearing its year-to-date high mark among prospective new-car buyers* (Forbes 20 Oct 2011).

Buzz score բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ հարադրությունն է, որը մասամբ է պատճառաբանված: Բերված երկու օրինակներում էլ այն նշանակում է՝ «սպառողների կողմից արտադրանքի դրական գնահատականների քանակը»: Առաջին օրինակում (1) այն վերցված է չակերտների մեջ որպես նորաստեղծ բառ, իսկ երկրորդ օրինակում (2) տրվում է բառի բացատրությունը: Այսինքն, կարելի է փաստել, որ երկրորդ օրինակում նշված բառն ունի մետալեզվական գործառույթ: Նկատենք նաև, որ բարդության մեջ *buzz* առաջնաբաղադրիչը հանդես է գալիս բառարանային երկրորդ և երրորդ նշանակություններով, այն է՝ (2) *the sound of people talking, especially in an excited way*; (3) *a strong feeling of pleasure excitement or achievement* (OALD 2006:206).

21. cat café

Օրինակ՝ *Popular in Japan, **cat cafes** are a heaven for lovers of all things feline, where customers can stroke, pet and coo over the animals* (bbc.co.uk 12 Jan 2013).

Cat café բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրությունն է, որում *cat* առաջնաբաղադրիչը լրացնում է *café* գլխավոր բաղադրիչին: Այն նշանակում է՝ «սրճարան, որտեղ հաճախորդները ժամանակ են անցկացնում իրենց ընտանի կենդանիների՝ կատուների հետ»: Նշված բարդ բառն ունի իմաստային հստակություն և համատեքստային գործառույթ:

22. challenger bank

Օրինակ 1. *'I don't expect the **challenger banks** to have a meaningful impact for the prices and services of existing banks', says Investec banking analyst Ian Gordon* (bbc.co.uk 08 July 2012).

Օրինակ 2. *The UK's biggest high street lenders face a greater threat of losing customers to Paypal, than to new '**challenger**' banks or technology giants, according to research by YouGov and law firm Pinsent Mansons* (The Financial Times 07 Dec 2014).

Challenger bank բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրությունն է, որում *challenger*

առաջ նախադրարիչը լրացնում է *bank* գլխավոր բաղադրիչին: Այն նշանակում է՝ «բանկային համակարգ, որը մրցակցություն է ստեղծում մեծ ավանդական բանկերի հետ»: Բերված առաջին օրինակից երևում է, որ սանոր երևույթ է բանկային համակարգում: Այդ մասին հավաստում է նախադասության *to have a meaningful impact for the prices and services of existing banks* հատվածը: Բերված երկրորդ օրինակում *challenger bank*-ը գուցորդվել է *new* ածականի հետ, որն արտացոլում է այս հարադրություն՝ բանկային համակարգում որպես նոր երևույթ դիտարկվելը: Ավելին, միևնույն նախադասության մեջ գործածվել է *technology giants* կապակցությունը, որը որպես *challenger bank* նորակազմության հոմանիշ է ներկայացվում և դյուրացնում է վերջինիս իմաստի վերհանումը:

23. chandelier earring

Օրինակ՝ *The style that was too much for Kim! Reality star ditches HUGE chandelier earrings as she flashes cleavage in very low-cut outfit at Sam Smith concert* (The Daily Mail 30 Jan 2015).

Chandelier earring բառային միավորը երկբաղադրիչ ստորադասական հարադրություն է: Այն նշանակում է՝ «երկար, կախընկած ականջօղ»:

24. consumer telematics

Օրինակ՝ *From wireless charging to consumer telematics, from new gaming platforms to a hi-tech smart bicycle, all the ideas pressed upon me by their eager supporters sounded impressive* (bbc.co.uk 07 Jan 2013).

Consumer telematics բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրություն է, որի գլխավոր բաղադրիչը *telematics* վերջնաբաղադրիչն է: Այն նշանակում է՝ «հեռահաղորդակցման համակարգեր, որոնք հնարավոր են դարձնում որոշ ծառայությունների մատուցումը ավտոմեքենայում»: Նշված բառային միավորն առանձնանում է նրանով, որ նրա երկրորդ բաղադրիչը՝ *telematics*, բառախառնուրդ է (*telecommunications+informatics*):

25. crony capitalism

Օրինակ՝ *A Quiet Word: Lobbying, Crony capitalism and Broken Politics in Britain – review* (headline) (The Guardian 05 March 2014).

Crony capitalism բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրությունն է: Այն նշանակում է՝ «տնտեսական համակարգ, որը բնութագրվում է գործարարների և պետական ծառայողների միջև փոխադարձ շահավետ հարաբերություններով»:

26. crowd-fund/crowdfund

27. crowdfunding

Օրինակ 1. *The fifth outing from LA songwriter Angela Correa's Correatown was **crowd-funded** through kickstarter.com, pledge rewards ranging from a hand-drawn e-card to private performances* (The Independent 24 Aug 2012).

Օրինակ 2. *How **to crowdfund** an Edinburgh show* (headline) *With fringe costs rising, many companies **are crowdfunding** to cover them – three groups reveal what works (and doesn't)* (The Guardian 05 Aug 2013).

Օրինակ 3. *Other words on the longlist included “bungabunga”, as used in the context of former Italian Prime Minister Silvio Berlusconi's infamous parties; “**crowdfunding**”, defined as the practice of funding a project or venture by raising many small amounts of money from a larger number of people* (The Independent 23 Nov 2011).

Crowd-fund/crowdfund բայը երկբաղադրիչ ստորադասական կազմությունն է, իսկ **crowdfunding** գոյականը՝ բարդ ածանցավոր կազմությունն է: Բերված համատեքստերում նշված բառային միավորներն իրացնում են՝ «առցանց քարոզարշավի միջոցով բյուրավոր մարդկանց կողմից որևէ բանի ֆինանսավորումը» բառիմաստային տարբերակը: Պետք է նշել, որ *crowdfund* բառը ստեղծվել է *crowdsourc* բառի համաբանությունով (www.oxforddictionaries.com 31.05.2016-ի դրությամբ):

28. cultured leather

Օրինակ՝ *Modern Meadow is first focusing on creating **cultured leather**. Its process does not use stem cells but rather skin fibroblasts, specialized cells that produce collagen* (The New York Times 14 May 2013).

Cultured leather բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրությունն է, որի գլխավոր բաղադրիչը *leather* վերջնաբաղադրիչն է: Այն նշանակում է՝ «մաշկի բջիջներից ստացված կաշի»: Բարդության մեջ *cultured* առաջնաբաղադրիչը հանդես է գալիս *to culture* բայի

հիմնական անակոթյամբ՝ *to grow a group of cells or bacteria for medical or scientific study*: Տվյալ պարագայում կաշին մշակվում է մաշկի մանրաթելերից: Նշված բառային միավորն ունի համատեքստային գործառնություն, քանի որ իրացրած բառիմաստը բացատրվում է լրագրանյութում:

29. data journalism

Օրինակ՝ *Two years on and **data journalism** is part of the fabric of what we, and many other news organizations do. What is it?* (The Guardian 23 May 2012)

Data journalism բառային միավորը երկբաղադրիչ ստորադասական հարադրությունն է: Այն նշանակում է՝ «*տվյալ ատեն լրագրությունն է, այն է՝ լրագրության մի տեսակ, որտեղ լուրերի հաղորդումը հիմնվում է տվյալների, ոչ թե իրադարձությունների վրա*»:

30. death test

Օրինակ՝ *'**Death test**' that reveals if you'll be alive in five years: Blood sample will identify those at risk from range of diseases* (headline) (The Daily Mail 26 Feb 2014).

Death test բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրությունն է, որում *death* առաջնաբաղադրիչը լրացնում է *test* գլխավոր բաղադրիչին: Այն նշանակում է՝ «*թեստ, որը կանխորոշում է գալիք հինգ տարիների անձի ողջ մնալու հավանականությունը*»: Նշված բառային միավորն ունի համատեքստային գործառնություն:

31. digital afterlife

Օրինակ՝ *Google helps users plan **digital afterlife*** (headline) (The Financial Times 12 April 2013).

Digital afterlife բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրությունն է, որի գլխավոր բաղադրիչը *afterlife* վերջնաբաղադրիչն է: Այն նշանակում է՝ «*անձի մահից հետո առցանց տիրություն մնացող տեղեկություն, անձնական էջ, ևն*»:

32. double denim

Օրինակ՝ *Jean Genie! Kate Hudson channels the nineties in **double denim** as she arrives at LAX after house-hunting in London* (headline) (The Daily Mail 20 April 2015).

Double denim բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ չ պատճառաբանված հարադրությունն է: Այն նշանակում է՝ «նորած նության էթիկետի խախտում»:

33. digital detox

Օրինակ՝ *Why You Don't Need a **Digital Detox** to Loosen Technology's Grip* (headline) (Entrepreneur 07 Aug 2013).

Digital detox բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրությունն է, որի գլխավոր բաղադրիչը *detox* վերջնաբաղադրիչն է: Այն նշանակում է՝ «ժամանակահատված, որի ընթացքում անձը փորձում է չօգտագործել էլեկտրոնային սարքեր /սմարթֆոն, համակարգիչ/, որը համարվում է ստրեսը նվազեցնելու կամ իրական հաղորդակցման վրա կենտրոնանալու հնարավորություն»: Բերված օրինակում նշված հարադրության յուրաքանչյուր բաղադրիչ մեծատառով է գրված՝ ընթերցողների ուշադրությունը գրավելու, ինչպես նաև՝ նշված հարադրության նորակազմությունն լինելը մատնանշելու համար:

34. digital footprint

Օրինակ՝ *The following steps provide a start to reducing your **digital footprint** and taking back control of your online life* (The Guardian 04 April 2013).

Digital footprint բառային միավորը երկբաղադրիչ ստորադասական հարադրությունն է, որի գլխավոր բաղադրիչը *footprint* վերջնաբաղադրիչն է: Այն նշանակում է՝ «անձի մասին առցանց տեղեկության թիվը առցանց գործողությունների արդյունքում»:

35. digital globe

Օրինակ 1. *Like the old-school globes once common in classrooms, **digital globes** vary in size* (The New York Times 08 Jan 2013).

Օրինակ 2. *The image on a **digital globe** can be changed with the touch of a button* (The New York Times 08 Jan 2013).

Digital globe բառային միավորը երկբաղադրիչ ստորադասական հարադրությունն է, որում *digital* առաջնաբաղադրիչը լրացնում է *globe* գլխավոր բաղադրիչին: Այն նշանակում է՝ «գնդածև համակարգչային էկրան»: Նշված բառային միավորն անվանում է գիտական նորարարություն: Առաջին օրինակում խոսվում է դրա տարբեր չափեր ունենալու մասին, իսկ երկրորդ օրինակում տրվում է

նորակազմ բառի մասնակի նկարագրությունը: Այսպիսով, բերված երկու օրինակներն էլ մասնակիորեն նպաստում են նշված բարդության իմաստի վերհանմանը:

36. digital surgery

Օրինակ՝ *Stretching the truth: Hollywood film makers now using ‘digital surgery’ to alter female stars to make them look taller and thinner* (The Daily Mail 09 Feb 2014).

Digital surgery բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրություն է, որի գլխավոր բաղադրիչը *surgery* աջակողմյան բաղադրիչն է: Այն նշանակում է՝ «տեխնիկա, որը դերասաններին դարձնում է ավելի բարձրահասակ, ավելի նրբազեղ և պակաս կնճռոտ»: Տվյալ բառային միավորն ունի իմաստային թափանցիկություն, քանի որ բարդության բառբաղադրիչները հստակորեն արտացոլում են հաղորդվող բառիմաստը. վիրաբուժական միջամտությունը կատարվում է թվային եղանակով՝ նկարահանումից հետո: Յետևաբար, այն «թվային» վիրաբուժությունն է, այն է՝ դեմքի թերություն ուղղում համակարգչով:

37. dozenalist

Օրինակ՝ *Dozenalists aren’t cranks or crotchety anti-metric grouches. We just find the dozenal system easier, more efficient, and otherwise better than the decimal* (The Guardian 12 Dec 2012).

Dozenalist բառային միավորը երկբաղադրիչ հոդակապավոր բարդություն է, որը մասամբ է պատճառաբանված: Բերված օրինակում այն հոգնականաձև է, նշանակում է «անձ, որը տասը թվի վրահիմնված (base-10 system) հաշվողական համակարգի փոխարեն նախապատվություն ունի է տալիս տասներկու թվի վրահիմնված համակարգին»:

38. dumbphone

Օրինակ՝ *Second, the dumbphone (aka “mobile phones”) business, still Nokia’s largest, is now in a race to the bottom* (The Guardian 23 April 2012).

Dumbphone բառային միավորը երկբաղադրիչ ստորադասական կազմություն է, որում *dumb* առաջնաբաղադրիչը լրացնում է *phone* գլխավոր բաղադրիչին: Նշված բառային միավորը սմարթֆոնի/խելացի հեռախոսի հականիշն է և նշանակում է՝ «տեխնոլոգիապես չզարգացած բջջային հեռախոս»:

39. dustbin baby

Օրինակ՝ *Mother of 'dustbin baby' abandoned 46 years ago claims she had to avoid bringing 'shame' on her family* (headline) (The Daily Mail 12 June 2015).

Dustbin baby բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրությունն է, որում *dustbin* առաջնաբաղադրիչը լրացնում է *baby* գլխավոր բաղադրիչին: Այն գործածվել է լրագրանյութի վերնագրում՝ հաղորդվող նյութը հակիրճ ձևակերպելու նպատակով: Լրագրանյութից պարզ է դառնում, որ երեխայի մայրը թողել է երեխային աղբարկղում՝ ընտանիքին անպատվություն չբերելու համար: Յետևաբար, տվյալ պարագայում այն նշանակում է՝ «աղբարկղից գտած երեխա»:

40. dwell time

Օրինակ՝ *We obviously like to see tons of game plays and long dwell times, but we also like critical acclaim [...]* (The Observer 02 Oct 2011).

Dwell time բառային միավորը երկբաղադրիչ ստորադասական հարադրությունն է, որում *dwell* առաջնաբաղադրիչը լրացնում է *time* գլխավոր բաղադրիչին: Այն նշանակում է՝ «որևէ առցանց կայք էջում անցկացրած ժամանակը»: Տվյալ բարդության մեջ *dwell* առաջնաբաղադրիչը գործածվել է փոխաբերական նշանակությամբ, քանի որ տվյալ պարագայում *dwell* (*live somewhere*) բայը նշանակում է՝ առցանց կայքում անցկացրած ժամանակը՝ «սարելը» վիրտուալ աշխարհում: Յետևապես, այստեղ արձանագրում ենք նաև իմաստային տեղաշարժ:

41. earthquake cloak

Օրինակ 1. *The earthquake cloak will be put to the test by engineers Biswajit Banerjee and Emilio Calius at Industrial Research Limited in New Zealand* (Smithsonian Sept 2012).

Earthquake cloak բառային միավորը երկբաղադրիչ ստորադասական հարադրությունն է, որի գլխավոր բաղադրիչը *cloak* վերջնաբաղադրիչն է: Առանձնացված համատեքստում այն իրացնում է «երկրաշարժի ցնցումները չեզոքացնող/շեղող շենքի հիմքային ծածկույթ» բառիմաստային տարբերակը:

Պետք է նշել, որ անգլալեզու լրագրանյութերում գործածվել են *invisibility cloak* և *seismic cloak* բառային միավորները՝ երկրաշարժի

ցնցումները չեզոքացնող հիմքային ծածկույթի տեսակները նկարագրելու համար.

Օրինակ 2. *With the invention of an “invisibility cloak” for buildings, earthquake damage could be significantly minimized. Using a series of concentric rings in the foundation of a building, this “cloak” directs seismic waves around a building, rather than destructively against and through it* (Popular Science 26 June 2009).

Օրինակ 3. *RESEARCHERS WORK TO CREATE ‘SEISMIC CLOAKS’* (headline) [...] *A team of scientists and engineers in France, inspired by research into invisibility cloaks, are testing geotechnical soil modifications that show promise in one day absorbing or diverting the elastic surface waves created during earthquakes, sending them away from sensitive structures* (Civil Engineering 15 April 2014).

Բերված երեք օրինակներում **earthquake cloak, invisibility cloak** և **seismic cloak** բառային միավորները հոմանշային շարք են կազմում:

42. flipped learning

Օրինակ` *A growing number of teachers are implementing what is known as ‘flipped learning’, in which students learn lessons as homework, mostly through online videos produced by teachers, and use classroom time to practice what they learned* (The Dragon Herald 16 April 2013).

Flipped learning բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրություն է, որում *flipped* առաջնաբաղադրիչը լրացնում է *learning* գլխավոր բաղադրիչին: Այն նշանակում է` «*դասամատուցման «շրջված դասատենյակի» մեթոդ, այն է` ուսուցման ձև, որի ընթացքում սովորողները ուսումնական նյութին ծանոթանում են տանը, իսկ դասաժամն օգտագործվում է վերջինիս քննարկման և գործնական աշխատանքի համար*»: Սա անվանում է նոր իրականություն, դասավանդման նոր ձև` մանկավարժության բնագավառում: Նշված բառային միավորն ունի համատեքստային և մետալեզվական գործառույթ, քանի որ բառիմաստն ամբողջովին մեկնաբանվում է առանձնացված միկրոհամատեքստում:

43. fly grazing

Օրինակ` *New law to tackle fly grazing problem in Wales granted* (Farmers Guardian 28 Jan 2014).

Fly grazing բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրություն է, որի գլխավոր բաղադրիչը *grazing* վերջնաբաղադրիչն է: Այն նշանակում է՝ «կենդանիներին մասնավոր հողի վրա առանց թույլ տվողական արածեցնելը»: Բարդության մեջ *fly* առաջնաբաղադրիչը հանդես է գալիս իր երկրորդական՝ տասնմեկերորդ նշանակությամբ. *fly* - (11) *to move around freely* (OALD 2006:97): Բերված օրինակում *fly grazing* բառը կիրառվել է *problem* գոյականի գույքորոշությամբ: Վերջինս հստակորեն արտացոլում է նորակազմ բառի բացասական հարանշանակությունը:

44. frost quake/frostquake

Օրինակ 1. *Although many called police stations, they didn't hear gunshots or sonic booms. Instead, "frost quakes," also known as cryoseisms, caused the hullabaloo [...] These occur when temperatures drop so drastically and quickly, ground water (like accumulated rain or even wetness in the soil) immediately freezes and causes the earth to crack open* (Business Insider 05 Jan 2014).

Օրինակ 2. *Was it a 'frostquake' or an Air Force sonic boom? (headline) [...] Initial reports pointed to a frostquake, a geological phenomenon that occurs when water that drains into the ground freezes, expands and places stress on the surrounding ground* (Milwaukee/Wisconsin Journal Sentinel 13 Jan 2016).

Frost quake/frostquake բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական կազմություն է և նշանակում է՝ «երկրաչարժանման երևույթ, որն առաջանում է ծայրաստիճան ցրտի պայմաններում»: Բերված օրինակներից նկատելի է, որ երկրաչարժանման այս երևույթը գրանցվում է բևեռային շրջանների սառցադաշտերում: Առանձնացված համատեքստում կիրառվել է նաև այս բառի հոմանշային՝ *cryoseism* կազմությունը: Վերջինս նկարագրված երևույթի առավել գիտական ձևակերպումն է: *Frost quake* բառային միավորի մեկ այլ հոմանիշ է *ice quake* բառային միավորը: Յետևապես, *cryoseism*, *frost quake* և *ice quake* բառային միավորները հոմանշային շարք են կազմում:

Յարկ է փաստել, որ **frost quake** և **ice quake** բառային միավորները կազմվել են **earthquake** բառի համաբանությամբ (www.macmillandictionary.com 31.05.2016-ի դրությամբ):

45. generation rent

Օրինակ՝ *The current clutch of young adults have been nicknamed “**generation rent**” after a series of studies suggested that Britain is changing from a nation of home owners into a continental – style society where renting is the norm* (The Telegraph 27 June 2012).

Generation rent բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրություն է, որի գլխավոր բաղադրիչը *rent* վերջնաբաղադրիչն է: Բերված օրինակից կարելի է նկատել, որ *generation rent* բառային միավորը համատեքստում իրացնում է «երիտասարդ սերնդի տուն վարձակալելը» բառիմաստային տարբերակը: Բանն այն է, որ Միացյալ թագավորությունում և Միացյալ Նահանգներում երիտասարդներից շատերը միջոցներ չունեն՝ իրենց սեփական տունը գնելու և վարձակալում են այն: Այսպիսով, *generation rent* բառային միավորի ստեղծումը պայմանավորված է այդ երևույթի արտացոլման անհրաժեշտությամբ, քանի որ յուրաքանչյուր բառային միավորի մեջ դրված է աշխարհը լեզվի միջոցով ընկալելու յուրահատկությունը:

46. ghost detector

Օրինակ՝ *What you gonna call? The £130 ‘**ghost detector**’ pocket-sized gadget claims to detect supernatural entities (headline) [...] It features a so-called Ghost Box, that ‘sweeps’ various radio frequencies and records anomalies, and an electronic voice phenomena (EVP) recorder that can also track white-noise frequencies. An electromagnetic field (EMF) meter shows readings on the detector’s LED display and a thermometer scans for hot and cold spots, all the while recording changes in the ambient temperature* (The Daily Mail 02 Feb 2015).

Ghost detector բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրություն է, որում *ghost* առաջնաբաղադրիչը լրացնում է *detector* գլխավոր բաղադրիչին: Այն նշանակում է՝ «ուրվականների դետեկտոր. ոգիների և ուրվականների ներկայությունը հայտնաբերող սարք»: Նշված բառային միավորն ունի համատեքստային գործառնություն: Ավելին, ոչ միայն առանձնացված միկրոհամատեքստը, այլ և բրիտանական *The Daily Mail* պարբերականի ողջ լրագրանյութը նվիրված է դրա քննությանը:

Լրագրանյութից պարզ է դառնում, որ նորարական *ghost detector* անվանումը կրող սարքը կուլենա սմարթֆոնի չափեր, երեսակողմի վրա կլինի փոքր էկրան, մի քանի կոճակ և երեք պտտվող փոխարկիչներ: Դետեկտորը կուլենա նաև բազմապիսի տվիչներ, ներառյալ էլեկտրամագնիսական դաշտի տվիչը, ռադիոհաճախականության ներքին սքաները և էլեկտրոնային ձայնի ամրագրման սենսորը: Սարքը կարող է նաև չափել ջերմաստիճանն ու ճնշումը և ձայնագրության կատարել զգայուն խոսափողների շնորհիվ²²: Ուրվականների դետեկտորի մտահղացման հեղինակը Մասսիմո Ռոսսին է: Այսպիսով, վերը նկարագրված սարքը գիտափորձի արդյունքների հետևանք է, իսկ նորահայտ բառը գիտական ոլորտում անվանում է նոր իրականություն:

47. ghost money

Օրինակ՝ *One Karzai aide called it ‘ghost money’ because ‘it came in secret, and it left in secret’* (The New York Times 30 April 2013).

Ghost money բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրություն է, որում *ghost* առաջնաբաղադրիչը լրացնում է *money* գլխավոր բաղադրիչին: Նշված բառային միավորը նշանակում է՝ «գաղտնի կառավարական գործակալ ությամբ փոխանցված գումար»: Բարդության մեջ *ghost* բաղադրիչը հանդես է գալիս իր երրորդ նշանակությամբ. *ghost* – (3) *a very slight amount of something that is left behind or that you are not sure really exists* (OALD 2006:651).

48. glass cliff

Օրինակ՝ *Researchers have documented the ‘glass cliff’ in a wide variety of settings. In an examination of Britain’s 2005 general election, Ryan and Haslam ranked ridings by how secure they were for the conservatives* (The Vancouver Sun 12 April 2012).

Glass cliff բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ չպատճառաբանված հարադրություն է, քանի որ *glass* և *cliff* բաղադրիչները չեն հստակեցնում հաղորդվող բառիմաստը: Ավելին, նորակազմության մեջ դրանք փոխաբերական իմաստ են դրսևորում, իսկ նշված բառային միավորը նշանակում է՝ «կանանց

²² **Ghost detector** սարքի մասերի հայերեն թարգմանությունները փոխառել ենք Ազգ օրաթերթի համանուն հոդվածից՝ *ԻՏԱԼԻԱՅՈՒՄ ՍՏԵՂԾԵԼ ԵՆ ՈՐԿՎԱԿԱՆՆԵՐԻ ԴԵՏԵԿՏՈՐ* (<http://www.azg.am/AM/2015031325> 31.05.2016-ի դրությամբ):

կողմից այն աշխատանքային պաշտոնների զբաղեցումը, որտեղ նրանց հաջողություներն անհավանական է»: Նկատենք, որ առանձնացված միկրոհամատեքստը չի հստակեցնում բառի բովանդակած իմաստը, և միայն ամբողջ հոդվածի ընթերցումից հետո է դուրս բերվում նշված բառային միավորի իմաստը:

49. hamburger tax

Օրինակ՝ *Poll; Do you think there should be a ‘hamburger tax’ on fatty and sugary foods?* (The Express and Star 02 Oct 2014)

Hamburger tax բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրություն է, որում *hamburger* առաջնաբաղադրիչը լրացնում է *tax* գլխավոր բաղադրիչին: Այն նշանակում է՝ «անառողջ սննդի վրա դրված հարկ»: Այն ունի համատեքստային գործառույթ: Համատեքստից բառիմաստի վերհանմանը նպաստում է *fatty and sugary foods* բառակապակցությունը:

50. hashtag activism

Օրինակ՝ *The advent of “hashtag activism” has been greeted with breathless claims about the birth of a new form of technology-based social movement. While such technologies can be extremely useful tools, they do not represent alternatives to the exhausting, age-old work of meeting people where they are, hearing their concerns, reaching common ground, building trust and convincing them that it is in their interests to act politically to change their circumstances* (The Guardian 29 Sept 2011).

Hashtag activism բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրություն է, որում *hashtag* առաջնաբաղադրիչը լրացնում է *activism* գլխավոր բաղադրիչին: Այն նշանակում է՝ «*Twitter* սոցիալական կայքում վանդակահարի օգտագործմամբ ակտիվիստական գործունեություն, այն է՝ սոցիալական կայքում հրապարակվող նյութը պարունակում է վանդակահարներ»: Բարդ բառային միավորն ունի իմաստային թափանցիկություն և հստակություն:

51. hedge rage

Օրինակ՝ *It’s hardly surprising that high hedges are the thorny issue of SNP MSP Mark McDonald is to bring a bill to Holyrood in a bid to create new laws to tackle so-called hedge rage* (The Herald 10 Sept 2011).

Hedge rage բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրություն է, որում *hedge* առաջնաբաղադրիչը լրացնում է *rage* գլխավոր բաղադրիչին: Բարդ բառային միավորն ունի իմաստային թափանցիկություն և հստակություն: Այն նշանակում է՝ «*զայրույթ, որի պատճառը հարևանությանը կառուցված վիթխարի կանաչ ցանկապատի առկայությունն է*»:

52. human enhancement

Օրինակ՝ *Report raises ethical concerns about **human enhancement technologies*** (The Guardian 07 Nov 2012).

Human enhancement բառային միավորը երկբաղադրիչ հարադրություն է, որը մասամբ է պատճառաբանված: Այն նշանակում է՝ «*ուղեղի գործունեության բարձրացում՝ դեղամիջոցների օգնությամբ*»:

53. hybrid camera

Օրինակ՝ *The Galaxy camera from Samsung and the Coolpix S800C from Nikon are **hybrid cameras** that contain cellphone functions* (The New York Times 20 Dec 2012).

Hybrid camera բառային միավորը երկբաղադրիչ ստորադասական հարադրություն է, որում *hybrid* առաջնաբաղադրիչը լրացնում է *camera* գլխավոր բաղադրիչին: Այն նշանակում է՝ «*թվային տեսախցիկ, որն ունի սմարթֆոնի՝ խելացի հեռախոսի, գործառնությունների մեծ մասը*»: Բերված օրինակում տվյալ բառային միավորի բառիմաստի վերհանմանը նպաստում է հարադրությանը լրացնող որոշիչ երկրորդական՝ *that contain cellphone functions* նախադասությունը:

54. impression management

Օրինակ՝ *In a study of language on Twitter [...] older people ‘have a higher usage of links and hashtags, which can be associated with information sharing and **impression management**’* (The New York Times 16 April 2013).

Impression management բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրություն է, որի գլխավոր բաղադրիչը *management* վերջնաբաղադրիչն է: Այն նշանակում է՝ «*կառավարում/վերահսկում այն բանի, թե ինչպես են մարդիկ ձեզ տեսնում*»: Առանձնացված միկրոհամատեքստից պահանջ է, որ այս բառային միավորը վերագրվում է առցանց տիրույթին՝

վիրտուալ հաղորդակցմանը: Վերջինս արտացոլվում է նախադասության սկզբում գործածված *in a study of language on Twitter* բառակապակցության միջոցով:

55. Internet refrigerator

Օրինակ՝ *LG Internet Refrigerator* (headline) [...] *The LG Internet Refrigerator has the coolest set of features ever seen in the kitchen. It is a 730 litre, stainless steel, side by side fridge, with an in-built computer which can be accessed via a 37 centimetre touch-screen LCD monitor mounted on the fridge door* (Gizmag 04 June 2004).

Internet refrigerator բառային միավորը երկբաղադրիչ ստորադասական հարադրություն է, որի գլխավոր բաղադրիչը *refrigerator* վերջնաբաղադրիչն է: Այն նշանակում է՝ «գերաբազառաւ եց նող սառնախցիկ»: Նշված բառային միավորն անվանում է նոր իրականություն, որի մասին հաղորդվում է լրագրանյութում:

56. job flipping

Օրինակ՝ *Now that the requirement age is set to rise even higher, [...] the trend for 'job flipping' is set to become the norm* (Marie Claire Nov 2011).

Job flipping բառային միավորը երկբաղադրիչ ստորադասական հարադրություն է (*job flipping is a kind of flipping*), որում *job* առաջնաբաղադրիչը լրացնում է *flipping* գլխավոր բաղադրիչին: Այն նշանակում է՝ «կյանքի ընթացքում պաշտոնում դու փոփոխություն»:

57. jigsaw family

Օրինակ՝ *When she was asked to write a sequel to a classic children's book Jacqueline Wilson said no. But then she saw the fun she could have with the wish – granting fairy and a modern jigsaw family* (The Guardian 10 Aug 2012).

Jigsaw family բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրություն է, որում *jigsaw* առաջնաբաղադրիչը լրացնում է *family* գլխավոր բաղադրիչին: Բերված օրինակում *jigsaw family* բառային միավորն իրացնում է «ընտանիք, որտեղ մեկ հարկի տակ ապրում են ծնողի տարբեր ամուսնություններին ծնված երեխաները» բառիմաստային տարբերակը: Ստացվում է, որ ընտանիքում բարդ իրավիճակ է ստեղծվում, մի խճանկար, հանրության մեջ ավանդական չհամարվող ընտանեկան պատկեր: Առանձնացված համատեքստում նշված բառը գործածվել է *modern* բառի գույնգործությունամբ, որից կարելի է

Ենթադրել, որ դա ժամանակակից ընտանիքի իրավիճակային դրսևորում է: Յետևաբար, *jigsaw family* բարդություն մեջ *jigsaw* գոյականը դրսևորում է բառարանային իր երկրորդ նշանակությունը, այն է՝ “*a mysterious situation in which it is not easy to understand all the causes of what is happening; a complicated problem*” (OALD 2006:831).

58. kill switch/kill-switch

Օրինակ՝ *Authorities have been urging tech firms to take steps to help curb phone theft and argued that a **kill-switch** feature can help resolve the problem* (bbc.co.uk 20 June 2014).

Kill switch/kill-switch բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրություն է, որի գլխավոր բաղադրիչը *switch* վերջնաբաղադրիչն է: Այն նշանակում է՝ «գողության պարագայում հեռախոսի ընկալ ուղիքը անջատող/անպետք դարձնող սարք»:

59. light quadricycle

Օրինակ՝ *The Aixam Coupe S looks like a compact city car, but is in fact a ‘**light quadricycle**’ which can be driven with a moped licence from the age of 16 – and it comes with a hefty price tag of £9.999* (The Daily Mail 13 Nov 2012).

Light quadricycle բառային միավորը չպատճառաբանված հարադրություն է, քանի որ այն ոչ թե քառանիվ մոտոցիկլ էտե, այլ «երկտեղանոց մեքենա, որի արագությունը հարմարեցված է 16 տարեկան պատանիների վարելու համար»: Նշված բառային միավորն ունի համատեքստային և մետալեզվական գործառույթ, քանի որ բառիմաստը բացատրվում է լրագրանյութում և դուրս է բերվում համատեքստից:

60. litter vigilante

Օրինակ՝ *Unpaid army of **litter vigilantes** tackles Britain’s tide of rubbish* (headline) (The Guardian 17 Feb 2013).

Litter vigilante բառային միավորը երկբաղադրիչ ստորադասական հարադրություն է, որի երկրորդ բաղադրիչը՝ *vigilante*, փոխառված հիմք է: Տվյալ բառային միավորը նշանակում է՝ «հանրային վայրերում աղբը հավաքող անձնավորություն»: *Litter vigilante* բառային

միավորը անգլերեն միավորը բառարաններում գետեղված *picker* վերջածանցավոր բառի հոմանշային կազմությոնն է:

61. lulz-farming

Օրինակ՝ *Now there are employees of large corporations paid to manage the social accounts of their companies, using official feeds to act like crazy students, having their antics reported on **lulz-farming** websites, reported and retweeted by thousands of personal accounts* (Computer Shopper March 2014).

Lulz-farming բառային միավորը գծիկով գրվող երկբաղադրիչ չպատճառաբանված կազմությոնն է: Այն նշանակում է՝ «ծիծաղաչարժ նյութերի հավաքումը՝ վերկայքում տեղադրելու համար»:

62. meat fruit

Օրինակ 1. *We were here mainly, for the **Meat Fruit**. A fruit shaped ball of meaty plasticine. In fact, it's a mandarin shaped chicken liver parfait. It was easy to see why Time Out made it the best dish in London. It's a work of art, but also zesty and creamy and delicious* (The Hungry Londoner 12 Oct 2012).

Օրինակ 2. *Stayed and had dinner with friends – obviously had a **meat fruit*** (The Guardian 27 Oct 2012).

Meat fruit բառային միավորը երկբաղադրիչ չպատճառաբանված հարադրությոնն է: Այն նշանակում է՝ «մրգանման մսային ուտեստ»: Բարդությոնան վերջնաբաղադրիչը *fruit* բառն է, սակայն ուտեստը պատրաստված է ոչ թե մրգից, այլ մսից: Չավելենք նաև, որ բաղադրիչների միջև առկա է *իմաստային անհամատեղելի ությոն*, քանի որ միսը և միրգը միանգամայն տարբեր են միմյանցից: Բերված օրինակներում տրվում է *meat fruit* բառի բացատրությոնը: Յետևաբար, նշված բառային միավորն ունի *մետալեզվական գործառույթ* (այն է՝ հոդվածագիրը մեկնաբանում է բառի կիրառումը), քանի որ այս բառի իրացրած բառիմաստային տարբերակը դուրս է բերվում համատեքստից, որտեղ այն նկարագրվում է որպես *մանդարինի ձև ունեցող, հավի ճտիլյարդից պատրաստված մսային կերակրատեսակ*:

63. mumblogger

Օրինակ՝ *A large number of **mumbloggers** – mothers who write blogs – are meeting in the flesh, at Moorgate in London* (The Guardian 23 June 2012).

Mumblogger բառային միավորը համադրական, բարդածանցավոր ստորադասական կազմությոնն է, որում *mum* առաջնաբաղադրիչը

լրացնում է *blogger* գլխավոր բաղադրիչին (*mumblogger is a kind of blogger*):
Ինչպես երևում է բերված օրինակից՝ *mumblogger* բառը բնութագրվում է
որպես «մայր, ով իր բլոգում գրում է իրեն հետաքրքրող
թեմաներով նյութեր՝ հասցեագրված այլ մայրերին»:

64. murder-cam

Օրինակ՝ *Detectives in Cambridgeshire have a new weapon to catch killers because of a high-tech £146, 000 ‘murder-cam’. The scanner in just 10 minutes, saving hours of crucial time after a murder has taken place* (The Cambridge News 28 May 2012).

Murder-cam բառային միավորը գծիկով գրվող երկբաղադրիչ ստորադասական կազմությամբ է (*murder-cam is a kind of camera*), որում *murder* առաջնաբաղադրիչը լրացնում է *cam* հատված հիմքով գլխավոր բաղադրիչին, և նշանակում է՝ «հանցագործության վայրում 3-D պատկեր լուսանկարող սարք»: Բերված օրինակից կարելի է նկատել, որ համատեքստը նպաստում է նշված բառային միավորի բառիմաստի վերհամարմանը:

65. nappy wall

Օրինակ՝ *That what too many women face nowadays isn’t a ‘glass ceiling’, because of their sex, but a ‘nappy wall’ if they choose to have a child as well as a career?* (The Telegraph 15 June 2012)

Nappy wall բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրությամբ է, որի գլխավոր բաղադրիչը *wall* վերջնաբաղադրիչն է: Բարդության մեջ *wall* բաղադրիչը հանդես է գալիս բառարանային իր երրորդ նշանակությամբ, այն է՝ (3) *something that forms a barrier or stops you from making progress*: Բարդության առաջնաբաղադրիչը՝ *nappy* (երեխայի տակաշոր), լրացնում է *wall* գլխավոր բաղադրիչին (RHR)²³: Բերված օրինակում լրագրանյութի հեղինակը գործածում է *glass ceiling* բառային միավորը՝ *nappy wall* բառային միավորի իմաստն առավել ընդգծելու և հստակեցնելու նպատակադրումով: Իսկ առանձնացված համատեքստում *nappy wall* բառային միավորն իրացնում է «կանանց՝ փոքր երեխա ունենալու հանգամանքը՝ որպես աշխատանքում

²³ Անգլերեն բարդ բառերում գլխավոր բաղադրիչը սովորաբար վերջնաբաղադրիչն է, այն է՝ աջակողմյան բաղադրիչը: Նշված երևույթը անգլերեն լեզվաբանական գրականության մեջ ստացել է **The Right-Hand Head Rule (RHR)** անվանումը (տե՛ս Katamba F. & Stonham J. Morphology, Palgrave Macmillan, 2nd edition, 2006, p. 324):

առաջընթաց ու նենայ ու խոչընդոտ և/կամ արգելք» բառիմաստային տարբերակը:

Նկատենք, որ **nappy wall** երկբաղադրիչ հարադրությունը ներկա աշխատանքում քննության առնված **glass cliff** և **brass ceiling** երկբաղադրիչ հարադրությունների, ինչպես նաև՝ անգլերենում արդեն իսկ առկա **glass ceiling** բառային միավորի հետ հոմանշային շարք են կազմում (*glass ceiling, brass ceiling, glass cliff, nappy wall*): Երեք կազմություններն էլ վերաբերում են կանանց պաշտոնողու առաջընթացը խոչընդոտող գործոններին: Տվյալ հոմանշային շարքում *glass cliff* կազմությունը համընդհանուր իմաստ է արտահայտում, քանի որ այն վերաբերում է կանանց՝ որոշ պաշտոններ զբաղեցնելու անհավանականությանն ընդհանրապես: Իսկ, *nappy wall* և *brass ceiling* կազմությունները ավելի մասնավոր իմաստ են արտահայտում:

66. (the) new normal

Օրինակ՝ *Financial crisis has world teetering on the brink – welcome to **the new normal*** (The Guardian 04 Oct 2011).

(The) new normal բառային միավորը երկբաղադրիչ կիսապատճառաբանված հարադրությունն է: Այն նշանակում է՝ «նախկինում անսովոր, իսկ ներկայումս՝ սովորական դարձած իրավիճակ»: Նշենք նաև, որ տվյալ բառային միավորում արձանագրում ենք *բաղաձայնույթ* ոճական հնարը՝ որը դրսևորվում է «ո» բաղաձայնի կրկնությունով:

67. obesity paradox

Օրինակ՝ *Whatever the explanation for the **obesity paradox** turns out to be, most experts agree that the data cast an uncertain light on the role of body fat* (The New York Times 18 Sept 2012).

Obesity paradox բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրությունն է, որում *obesity* առաջնաբաղադրիչը լրացնում է *paradox* գլխավոր բաղադրիչին: Այն նշանակում է՝ «միջին աստիճանի զեր, քրոնիկ հիվանդություններ ունեցող մարդկանց երկարակեցության արտահայտում՝ միևնույն հիվանդություններով տառապող նորմալ քաշով մարդկանց համեմատությամբ»:

68. password wallet

Օրինակ՝ *In the meantime, he recommends doing what I did, after thoroughly scaring myself researching this article: install a piece of software, known as a ‘password wallet’, such as LastPass [...] (The Guardian 06 Oct 2012).*

Password wallet բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրույթուն է, որի գլխավոր բաղադրիչը *wallet* վերջնաբաղադրիչն է: Այն նշանակում է՝ «*համակարգչային ծրագիր, որը պահպանում և մեխանիկորեն մոնտաժորում է օգտատերի գաղտնաբառերը*»: Տվյալ պարագայում արձանագրում ենք երկու գործընթաց՝ բառարարում (*password wallet*) և իմաստային նորաբանություն (*wallet*): Բանն այն է, որ այս բարդության մեջ *wallet* բառը ձեռք է բերել «*համակարգչային ծրագիր*» նշանակությունը՝ իր երկրորդական նշանակության հիման վրա. *wallet* – (2) *a flat leather plastic or cardboard case for carrying documents in* (OALD 2006:1715). Այսպիսով, արձանագրում ենք *wallet* բառի շղթայական բազմիմաստացում, այսինքն՝ երրորդ, նոր նշանակություն, որը բխեցվում է իր բառարանում ամրագրված երկրորդ նշանակությունից:

69. pay-neutral

Օրինակ՝ *Charities warned of the rise of the ‘pay-neutral’ job, where you only earn enough to cover childcare, so you’re effectively working for nothing (Grazia 01 Sept 2012).*

Pay-neutral բառային միավորը գծիկով գրվող երկբաղադրիչ բարդություն է, որը մասամբ է պատճառաբանված: Առանձնացված համատեքստում այն իրացնում է «*բավականին ցածր աշխատավարձ, որը երեխաների խնամատարությունից զատ՝ կողմնակի այլ ծախսերի (օր.՝ ճամփորդության) չի բավականացնում*» բառիմաստային տարբերակը: Նկատենք, որ վերոնշյալ համատեքստում բառիմաստի վերհանմանը նպաստում են *only earn enough to cover childcare* և *effectively working for nothing* հատվածները:

70. pink slime

Օրինակ՝ *“Pink slime” will be off the menu this fall for schools in the National School Lunch Program that don’t want byproducts containing what’s known, officially as*

“learn finely textured beef”, the U.S. Department of Agriculture has decided [...] (The USA Today 14 March 2012).

Pink slime բառային միավորը երկբաղադրիչ չպատճառաբանված հարադրուկություն է: Բարդուկյան մեջ *slime* վերջնաբաղադրիչը ոչ թե «ցեխ» է նշանակում, այլ՝ «*հավելյալ արտադրանք*» (*byproduct*): Այն նշանակում է՝ «*մսային հավելյալ արտադրանք, որի բաղադրամասերն են անուշադրի սպիրտով/զազով մշակած ցածրորակ տավարի միսը, որն որպես լցոն օգտագործվում է աղացած տավարի մսի մեջ*»: Տվյալ պարագայում արձանագրում ենք ոչ միայն նոր բարդ բառային միավորի առաջացում, այլև իմաստային նորաբանություն: Բանն այն է, որ բարդուկյան *slime* բառը մենիմաստ է և ունի բառարանային հետևյալ նշանակությունը. *slime - any unpleasant thick liquid substance* (OALD 2006:1438). Մինչդեռ, նշված բարդ բառային միավորը ոչ թե «հեղուկ» է, այլ «*հավելյալ արտադրանք*»՝ տավարի միսը լցոնելու համար: Յետևաբար, այս բարդուկյան մեջ *slime* բառը հանդես է գալիս նոր նշանակությամբ: Այսպիսով, արձանագրում ենք նաև իմաստային տեղաշարժ:

71. positive procrastination

Օրինակ՝ *Alas, there is no good data, and for now many self-control researchers have doubts about **positive procrastination*** (The New York Times 15 Jan 2013).

Positive procrastination բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրուկություն է, որի գլխավոր բաղադրիչը *procrastination* վերջնաբաղադրիչն է: Այն նշանակում է՝ «*առաջադրանքի կատարման տեխնիկա. մեկ աշխատանքի կատարման հետաձգում՝ հանձնարարված մեկ այլ աշխատանքի վրա կենտրոնանալու և ավարտին հասցնելու համար*»: Դատելով նշված բարդուկյան առաջնաբաղադրիչից (*positive*), այն ունի դրական հարանշանակություն. ստացվում է, որ անգլախոս հանրության գիտակցության մեջ ստանձնած աշխատանքն ավարտին հասցնելու համար մեկ այլ առաջադրանքը հետաձգելը դրական երևույթ է դիտարկվում:

72. potato ricer

Օրինակ՝ *Yotam Ottolenghi Weekend columnist, Ottolenghi and Nopi, London: “For years I struggled with all sorts of mashers, then I found the Masterclass **potato ricer**.*

It fits in a drawer, it's easy to handle and clean, and creates a mega-smooth mash. I now use it for mashing all my root veg" (The Guardian 02 Dec 2011).

Potato ricer բառային միավորը երկբաղադրիչ ստորադասական հարադրու թյուկն է, որի գլխավոր բաղադրիչը *ricer* վերջնաբաղադրիչն է: Այն նշանակում է՝ «կարտոֆիլ ճզմելիք»: Նշված բառային միավորն անվանում է նոր առարկա, որը ստեղծվել է սխտոր ճզմելիքի նմանությամբ և օգտագործվում է խոհարարության մեջ:

73. power paunch

Օրինակ՝ *But then, there's that 'power paunch' theory which posits that some men are so damned magnificent, they can afford to let their bellies expand* (Grazia 04 Aug 2014).

Power paunch բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրու թյուկն է, որի գլխավոր բաղադրիչը *paunch* վերջնաբաղադրիչն է: Այն նշանակում է՝ «տղամարդու ճարպակալած որովայն, որը, իբրև, տվյալ տղամարդու հարուստի ինքնու վկայությունն է»: Այս բառն, իհարկե, ամբողջովին չի մեկնաբանվում բերված օրինակում, սակայն, *that some men are so damned magnificent, they can afford to let their bellies expand* երկրորդական նախադասությունը ծառայում է տվյալ բառիմաստի վերհանմանը: Այս երկրորդական նախադասությունը նաև հեզնանք է պարունակում (*some men are so damned magnificent*), այն հուզազգայական և արտահայտչական լիցք ունի:

74. push ring

Օրինակ՝ *Least likely to receive a push ring (the blingtastic thank you present rich husbands buy their wives for delivering their baby)* (Grazia 28 Jan 2013).

Push ring բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրու թյուկն է, որի գլխավոր բաղադրիչը *ring* վերջնաբաղադրիչն է: Այն նշանակում է՝ «մատանի, որն ամուսինը նվիրում է կնոջը՝ երեխա ունենալու կապակցությամբ»: Նշենք, որ առանձնացված միկրոհամատեքստում լրագրանյութի հեղինակը բացատրում է *push ring* բարդ բառի նշանակությունը: Յետևաբար, լրագրանյութն ունի մետալեզվական գործառնություն:

75. regrettable substitution

Օրինակ՝ *A hard-fought victory by OSHA in controlling one source of deadly fumes led workers to be exposed to something worse – a phenomenon [...] lamented in government parlance as ‘regrettable substitution’* (The New York Times 31 March 2013).

Regrettable substitution բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրությունն է, որի գլխավոր բաղադրիչը *substitution* վերջնաբաղադրիչն է: Այն նշանակում է՝ «մեկ նյութի փոխարինումը մյուսով. մարդկանց վնասակար նյութից պաշտպանելու փորձ, որը, սակայն, հանգեցնում է ավելի վնասակար նյութի երևան գալուն»: Նշենք, որ առանձնացված միկրոհամատեքստը ինքնին ծառայում է տվյալ բարդության իմաստի վերհանմանը, ուստի լրագրանյութն ունի մետալեզվական գործառնություն: Լրագրանյութում խոսվում է մահաբեր ծխի վերահսկման մասին, որն ավելի վատթար դրություն է հանգեցրել: Յետևաբար, այն իրապես «*ցավալի փոխարինում է*»:

76. responsive design

Օրինակ՝ *New TFL websites, focused on ‘responsive design’* (The Independent 12 June 2013).

Responsive design բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրությունն է, որում *responsive* առաջնաբաղադրիչը լրացնում է *design* գլխավոր բաղադրիչին: Այն նշանակում է՝ «կայք էջի դիզայն/կառուցվածք, որը հարմար է դիտել ցանկացած սարքով (համակարգչով, հեռախոսով ևն)»: Բերված օրինակում չի տրվում *responsive design* բառի սահմանումը, ուստի տվյալ բառիմաստի վերհանումը պահանջում է լրագրանյութի համալիր քննություն:

77. ring rain

Օրինակ՝ *‘The main effect of ring rain is that it acts to quench the ionosphere of Saturn,’ Mr. O’Donoghue said* (The New York Times 16 April 2013).

Ring rain բառային միավորը երկբաղադրիչ չպատճառաբանված հարադրությունն է և բառիմաստը վերհանվում է լրագրանյութի համալիր քննությունից: Այն նշանակում է՝ «Սատուրն մոլորակի մակերևույթին հոսող ջուր»:

Նշված բառային միավորում արձանագրում ենք *բաղածայնություն* ոճական հնարը, որը դրսևորվում է «*r*» բաղածայնի կրկնությամբ:

78. roller skiing/roller-skiing

Օրինակ 1. **ROLLER SKIING** NEW SUMMER SPORT (headline) [...] *Skiing on dry new land, all the year round is now possible with the recent invention of “roller skis.” Similar to roller skates, they are equipped with small wheels* (Popular Science Dec 1930).

Օրինակ 2. *But that’s where a former winter Olympian from Lithuania comes in. Mantas Strolia was the best cross-country skier in Lithuania for eight years running, but now he’s swapped the mountains for our (equally lovely) guided busway, to share his vast expertise with fellow thrill-seekers, in Cambridge. How? **Roller-skiing** of course* (The Cambridge News 05 Sept 2014).

Roller skiing/roller-skiing բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ կազմույթ ունի: Այն նշանակում է՝ «սպորտաձև, որը ենթադրում է գլանով ճանապարհին սահելը»: Այս բառային միավորը կարելի է համարել երկու՝ *roller-skating* և *skiing* սպորտաձևերի միախառնում: Ըստ *Oxford Dictionaries Online* բառարանի՝ վերը նշված առաջին օրինակում է *roller skiing* բառային միավորը գործածվել առաջին անգամ (www.oxforddictionaries.com 31.05.2016-ի դրույթով):

79. shadow biosphere

Օրինակ՝ *The idea of the **shadow biosphere** is also controversial and is challenged by several other scientists* (The Observer 14 April 2013).

Shadow biosphere բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրույթ ունի, որի գլխավոր բաղադրիչը *biosphere* վերջնաբաղադրիչն է: Այն նշանակում է՝ «թեական/ենթադրյալ անտեսանելի մի աշխարհ՝ միանգամայն տարբեր կենսաբանական/կենսաբանական հատկանիշներ ունեցող էակներով»: Բարդույթան մեջ *shadow* առաջնաբաղադրիչը հանդես է գալիս իր երկրորդական նշանակությամբ. *shadow – (7) a thing that is not real or possible to obtain* (OALD 2006:1393).

80. silver splicer

Օրինակ՝ *Newly retired and now newlywed – rise of the ‘**silver splicers**’ reaching pension age becomes a trigger to tie the knot as baby-boomers begin to redefine retirement* (The Telegraph 12 June 2014).

Silver splicer բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ չպատճառաբանված հարադրույթ ունի: Այն նշանակում

Է՝ «անձ, որն ամուսնանում է մեծահասակ տարիքում»: Բարդությամբ մեջ *splicer* բառը գործածվել է փոխաբերական իմաստով:

Նկատենք, որ նշված բառային միավորն ունի համատեքստային գործառնություն, քանի որ դրա իմաստը վերհանվում է համատեքստից: Ավելին, առանձնացված միկրոհամատեքստում լրագրանյութի հեղինակն օգտագործել է բառակրկնությունն՝ *newly retired and now newlywed*: *Newly* բառի կրկնությունը նախադասության սկզբում առավել արտահայտիչ է դարձնում հաղորդվող բառիմաստը և լրագրող-հեղինակի միտումը, այսինքն՝ *Նոր թոշակառուն նաև նորապսակ է*: Նշենք նաև, որ նախադասության մեջ *to marry* բայի փոխարեն գործածվել է *to tie the knot*՝ միևնույն նշանակությունն արտահայտող դարձվածքը, որը բառացի թարգմանելիս աղերսներ ունի *splice* բայի հիմնանշանակության հետ. *splice* – (1) *to join the ends of two pieces of rope by twisting them together* (OALD 2006:1476). Այսպիսով, *silver splicer* հարադրության իրացրած բառիմաստը վերհանելու համար առանձնացված միկրոհամատեքստում կիրառվել են *newlywed*, *pension age*, *retirement* բառերը: Վերջիններս ամբողջացնում են հաղորդվող նյութի ներկայակն և հանգեցնում բառիմաստի տրամաբանական վերհանմանը:

81. site scraper

Օրինակ՝ ‘Use of **site scrapers**, *article crawlers*, or other automated methods/scripts to mine the article content of GoArticles are expressly forbidden unless permission has been specifically granted by GoArticles.com’ read one warning (The Guardian 22 Sept 2012).

Site scraper բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրություն է, որում *site* առաջնաբաղադրիչը լրացնում է *scraper* գլխավոր բաղադրիչին: Այն նշանակում է՝ «համակարգչային ծրագիր, որը հավաքում/մեկտեղում է այլ կայքերի բովանդակությունը»:

Հարկ է փաստել, որ բերված օրինակում առկա է այս հարադրության հոմանշային կազմությունը՝ *article crawler*, որն էլ գուգորդվում է *mine* բայի հետ (*to mine the article content*): Նշենք նաև, որ այս բարդության մեջ *scraper* բառը ձեռք է բերել նոր նշանակություն՝ *տեղեկություն մեկտեղող համակարգչային ծրագիր*,

այնինչ նրաբառարանային նշանակությունն է՝ *a tool used for scraping, for example for scraping mud from shoes or ice from a car* (OALD 2006:1361). Այսպարագայում արձանագրում ենք *բառիմաստի նեղացում* և *մասնավորեցում*, քանի որ բարդության *scraper* գլխավոր բաղադրիչը վերաբերում է միմիայն համակարգչային տիրույթին: Տվյալ բառային միավորը համեմատելի է *password wallet* բարդության հետ: Երկուսն էլ գործում են առցանց տիրույթում և վերաբերում են սվյալ ների մեկտեղմանը և պահմանմանը:

82. skinny bash

Օրինակ՝ *Kate Wills knows the feeling and last month wrote a powerful yet humorous piece on why it's not OK to **skinny-bash** people like her, either* (Grazia Daily 12 April 2014).

Skinny-bash բառային միավորը գծիկով գրվող երկբաղադրիչ ստորադասական կազմությունն է, որի գլխավոր բաղադրիչը *bash* վերջնաբաղադրիչն է: Այն նշանակում է՝ «*քննադատել որևէ մեկին՝ նիհար լինելու համար*»: Բարդության մեջ *bash* բաղադրիչը հանդես է գալիս ոչ թե իր հիմնական, այլ երկրորդական նշանակությամբ. *bash* – (2) *to criticize sb.sth strongly* (OALD 2006:113).

83. skinny pig

Օրինակ՝ *They are small, hairless and have been taking the country by storm [...] meet the **skinny pig**. The bald creatures are just a few inches long and can easily fit in the palm of your hand standing them out from the larger and more common guinea pigs* (The Daily Mail 13 Feb 2014).

Skinny pig բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրությունն է, որի գլխավոր բաղադրիչը *pig* վերջնաբաղադրիչն է: Այն նշանակում է՝ «*փոքր լաբորատորիայում ստեղծված խոզ, որը նման է ծովախոզուկի*»: Անշուշտ, նշված բառային միավորը անվանում է նոր իրականություն և գիտության հերթական արդիական նվաճումներից մեկն է:

Առանձնացված լրագրանյութում այս բարդությունն ունի համատեքստային գործառույթ, քանի որ բառիմաստն ամբողջովին բացատրվում է միայն համատեքստում: Լրագրանյութում *skinny pig* բարդության բառիմաստի վերհանմանը հիմնականում նպաստում են *small, hairless, bald creatures, a few inches long* և գվամիավորները:

84. shareholder spring

Օրինակ՝ *Strikingly through, a deeper analysis of this so-called ‘shareholder spring’ of investor uprisings shows it may not really exist* (BBC News 12 June 2012).

Shareholder spring բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրությունն է, որում *shareholder* առաջնաբաղադրիչը լրացնում է *spring* գլխավոր բաղադրիչին: Այն նշանակում է՝ «ընկերության տնօրենի դեմ բաժնետերերի բարձրացրած խռովություն»: Նշված բառային միավորը կազմվել է ոչ վաղ անցյալում ստեղծված **Arab spring** լեզվամիավորի նմանությամբ:

85. (the) slow web

Օրինակ՝ *This is the question motivating the embryonic movement known variously as ‘calming technology’, ‘the slow web’, ‘conscious computing’ or (Pang’s preferred term) ‘contemplative computing’* (The Guardian 11 May 2013).

(The) slow web բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող ստորադասական հարադրությունն է, որի գլխավոր բաղադրիչը *web* վերջնաբաղադրիչն է: Այն նշանակում է՝ «հանդարտորեն աշխատող համակարգչային տեխնոլոգիա՝ նախատեսված հոգևոր օգտաստերերի»: Այս բարդության մեջ *slow* առաջնաբաղադրիչը հանդես է գալիս բառարանային իր հինգերորդ նշանակությամբ. *slow* – (5) *not very busy containing little action* (OALD 2006:1440). Նկատենք, որ լրագրանյութից առանձնացված միկրոհամատեքստում գործածվել է *the Slow Web* հարադրության երեք հոմանշային կազմությունն՝ *calming technology, conscious computing, contemplative computing*: Վերջիններս ունեն համատեքստային գործառնություն և նպաստում են տվյալ բարդ բառային միավորի իմաստի վերհանմանը: Այսինքն, *the slow web*-ը *հանգստացնող, գիտակցող և մտորող* համակարգ է:

86. smart gun

Օրինակ՝ *The so-called ‘smart gun’ has recently been causing tension in both the EU and US firearms industries* (BBC news 23 May 2014).

Smart gun բառային միավորը երկբաղադրիչ ստորադասական հարադրությունն է, որի գլխավոր բաղադրիչը *gun* վերջնաբաղադրիչն է: Այն նշանակում է՝ «հրազեն, որում առկա են

բարձրակարգ/արդիական սարքավորումներ՝ հրազենի անվտանգությունը բարձրացնելու նպատակով»:

87. smartwatch

Օրինակ՝ *And Lee Young Hee, the company's executive vice president, confirmed earlier this year that Samsung would be developing a **smartwatch** (The Telegraph 09 Aug 2013).*

Smartwatch բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական կազմույթում է, որի գլխավոր բաղադրիչը *watch* վերջնաբաղադրիչն է: Այն նշանակում է՝ «ժամացույց, որը կարելի է գործածել և՛ որպես ժամացույց, և՛ որպես հեռախոս»:

88. social supermarket

Օրինակ՝ *Britain's first 'social supermarket' opens its doors on Monday, offering shoppers on the verge of food poverty the chance to buy food and drink for up to 70 percent less than normal high-street prices (The Guardian 09 Dec 2013).*

Social supermarket բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրույթում է, որի գլխավոր բաղադրիչը *supermarket* վերջնաբաղադրիչն է: Այն նշանակում է՝ «գերխանութ/սուպերմարկետ՝ նախատեսված անապահով մարդկանց համար, որտեղ ապրանքները վաճառվում են ցածր գներով»: Նշված բառային միավորն ունի համատեքստային գործառույթ, քանի որ առանձնացված լրագրանյութում է բացատրվում նորակազմույթան նշանակույթումը (*offering shoppers on the verge of food poverty*):

89. standing desk

Օրինակ՝ *Kevin Partner reveals a £50 method to make a **standing desk** (PC Pro 03 March 2014).*

Standing desk բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրույթում է, որում *standing* առաջնաբաղադրիչը լրացնում է *desk* գլխավոր բաղադրիչին: Այն նշանակում է՝ «գրասեղան, որը նախատեսված է կանգնած աշխատելու համար»: Նշված բառային միավորն անվանում է նոր իրականություն:

90. success theater

Օրինակ՝ *We've become better at choreographing ourselves and showing our best sides to the screen, capturing the most flattering angle of our faces, our homes, our evenings out, our loved ones and our trips. It's **success theater**, and we've mastered it.* (The New York Times 28 Dec 2012)

Success theater բառային միավորը երկբաղադրիչ չպատճառաբանված հարադրությունն է: Այն նշանակում է՝ «կեղծ/շինծու նկարների և պատմությունների առցանց հրապարակում՝ ավելի հաջողակ անձնավորություն տպավորություն թողնելու համար»: Բարդության մեջ *theater* վերջնաբաղադրիչը գործածվել է փոխաբերական իմաստով: Հանրահայտ իրողությունն է, որ թատրոնում բեմադրվող ներկայացումը հնարած է, ստեղծագործ մտքի արգասիք է, ուստի բարդության մեջ *theater* վերջնաբաղադրիչը հանդես է գալիս **անիրական, կեղծ երևույթ** նշանակությամբ:

91. swipe right/right-swipe

Օրինակ 1. *Jimmy Fallon wants **to swipe right** for Britney Spears* (The Daily Dot 10 Oct 2014).

Օրինակ 2. *How efficient is the '**right-swipe** everyone' strategy for dudes on Tinder?* (Gawker 05 Sept 2014)

Swipe right/Right-swipe բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող ստորադասական կազմությունն է, որի գլխավոր բաղադրիչը *swipe* բառն է: Այն աղերսներ ունի *Tinderella syndrome* հարադրության հետ, քանի որ նշանակում է՝ *Tinder վեբ կայքում մկնիկը ուղղելը աջ կողմը՝ ինչ-որ մեկին հավանություն տալու համար*:

92. Tinderella syndrome

Օրինակ՝ *In a phenomenon now affectionately referred to as the **Tinderella syndrome**, psychologists claim we're damaging our love lives and ability to flirt by spending too much time communicating on screen* (The Huffington Post 29 Aug 2014).

Tinderella syndrome բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրությունն է, որում *Tinderella* առաջնաբաղադրիչը լրացնում է *syndrome* գլխավոր բաղադրիչին: Այն նշանակում է՝ «*առցանց կայք էջերից զատ՝ իրական կյանքում ռոմանտիկ հարաբերություններ ունենալու անկարողություն*»: Ստացվում է, որ վիրտուալ /անիրական

աշխարհում հաղորդակցվելու հետևանքով մարդկանց մոտ առաջանում է հիվանդության համախտանիշ՝ իրական կյանքում միմյանց հետ հաղորդակցվելու անկարողություն: Յետևաբար, նշված բան օժտված է բացասական հարանշանակություն ամբ:

93. tweet seats

Օրինակ՝ *‘South Florida arts lovers can tweet from their theater seats,’ “Tweeting is so natural for theater”, said Michael Yawney, an associate professor of theater at Florida International University [...] That’s one of the reasons why the Palm Beach Opera began offering **tweet seats** in December for a performance of ‘Madama Butterfly’” at the Kravis Center for the Performing Arts in West Palm Beach (The Florida Sun Sentinel 20 Feb 2012).*

Tweet seats բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրություն է, որում *tweet* առաջնաբաղադրիչը լրացնում է *seats* գլխավոր բաղադրիչին՝ որոշիչ-որոշյալ հարաբերություն ամբ: Բերված օրինակից կարելի է նկատել, որ *tweet seats* բառային միավորը համատեքստում իրացնում է «թատրոնում առանձնացված նստատեղեր՝ հատկացված ներկայացման ժամանակ *Twitter* սոցիալական կայքով կարճ հաղորդագրություններով մարդկանց համար» բառիմաստային տարբերակը:

94. virtual vanity

95. Facebook facelift

Օրինակ 1. *But surely if the **virtual vanity** is becoming too much, the easiest option is to log off?* (Grazia 01 Oct 2012)

Օրինակ 2. *The **Facebook facelift**: Woman turns to surgery to improve her looks online (headline) De-tagging and deleting unflattering photos is not enough for some people as the number of people who are getting cosmetic surgery because they are displeased with their appearance on social networking sites* (The Daily Mail 17 July 2012).

Virtual vanity և **Facebook facelift** բառային միավորները բովանդակության պլանում փոխկապակցված են միմյանց հետ: Առաջինը՝ *virtual vanity*, նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրություն է, որի գլխավոր բաղադրիչը *vanity* վերջնաբաղադրիչն է: Այն նշանակում է՝ «վիրտուալ փառամոլություն, այն է՝ սոցկայքերում սեփական նկարը տեսնելուց արտաքինի նկատմամբ անվստահություն, զգացողություն,

ավելի գեղեցիկ երևալու ցանկություն»։ Երկրորդ բառային միավորը՝ *Facebook facelift*, ևս նկարագրորեն մեկնաբանվող երկբաղադրիչ ստորադասական հարադրություն է, որի գլխավոր բաղադրիչը *facelift* վերջնաբաղադրիչն է։ Այն նշանակում է՝ «վիրտուալ փառամոլության պատճառով կատարված դեմքի ալ աստիկ վիրահատություն, մաշկի ձգում»։

Յարկ է փաստել, որ վերոնշյալ բառային միավորներում արձանագրում ենք *բաղաձայնության* ոճական հնարը՝ որը դրսևորվում է «f» և «v» բաղաձայնների կրկնությամբ։

96. wifestyle

Օրինակ՝ *Your choice of 'wifestyle': be like Kate Moss or Kate Middleton* (The New Statesman 02 July 2012).

Wifestyle բառային միավորը երկբաղադրիչ ստորադասական կազմություն է, որում *wife* առաջնաբաղադրիչը լրացնում է *style* գլխավոր բաղադրիչին։ Բարդությունն ունի իմաստային թափանցիկություն և հստակություն։ Այն նշանակում է՝ «կնոջ տեսակ/թե հնչ պիսի կին է տվյալ անձնավորությունը»։

97. bug-out bag

Օրինակ՝ *During his presentation, Mr. Charles suggested that a well-prepared bug-out bag was only part of the equation: just as important was knowing where to go* (The New York Times 27 Jan 2013).

Bug-out bag բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող եռաբաղադրիչ ստորադասական հարադրություն է, որի գլխավոր բաղադրիչը *bag* բաղադրիչն է (*bug-out bag is a kind of bag*): Այն նշանակում է՝ «արտակարգ իրավիճակում անհրաժեշտ պարագաներ պարունակող պայուսակ»։

98. dark sky park

Օրինակ՝ *International dark sky parks are areas where the night sky is protected and lighting controls are in place to prevent light pollution* (bbc.co.uk 06 Dec 2013).

Dark sky park բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող եռաբաղադրիչ ստորադասական հարադրություն է, որի գլխավոր բաղադրիչը *park* վերջնաբաղադրիչն է։ Առաջնաբաղադրիչը լրացնում է երկրորդ բաղադրիչին, իսկ երկուսը միասին լրացնում են գլխավոր բաղադրիչին։ Այս բառային միավորը նշանակում է՝

«բնական արգելոց, որը պաշտպանված է գիշերային արհեստական լույսերից»:

99. dead-cat hole

Օրինակ՝ *US models will have larger **dead-cat holes** than European ones. Cat lovers can gripe to the EPA (Car and Driver Oct 2013).*

Dead-cat hole բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող եռաբաղադրիչ ստորադասական հարադրու թյուլն է, որի գլխավոր բաղադրիչը *hole* վերջնաբաղադրիչն է: Այն նշանակում է՝ «անվարդի և մեքենայի վերնամասի միջև ընկած հատված»:

100. full nest syndrome

Օրինակ՝ *'**Full nest syndrome**' stress for parents because more couples are living with three generations under one roof (The Daily Mail 28 Jan 2013).*

Full nest syndrome բառային միավորը նկարագրորեն մեկնաբանվող եռաբաղադրիչ ստորադասական հարադրու թյուլն է, որի գլխավոր բաղադրիչը *syndrome* վերջնաբաղադրիչն է: Այն նշանակում է՝ «համախտանիշ կամ ստրեսային վիճակ՝ միջառատակ մարդկանց շրջանում, ովքեր ստիպված են մեկ տանիքի տակ ապրել իրենց չափահաս զավակների հետ, քանի որ վերջիններս միջոցներ չունեն տեղափոխվելու»: Այս բարդու թյան մեջ *nest* բաղադրիչը հանդես է գալիս բառարանային իր չորրորդ նշանակությամբ. *nest - (4) the home, thought of as the safe place where parents bring up their children (OALD 2006:1022).* Բերված օրինակը պարզ կերպով արտացոլում է այս հարադրու թյան իմաստը, հետևաբար, ունի մետալեզվական գործառնություն:

101. high intensity training

Օրինակ՝ ***High Intensity Training (HIT)** has attracted a lot of attention for promising some of the same benefits as conventional exercise but in a much shorter time (bbc.co.uk 27 July 2014).*

High intensity training բառային միավորը եռաբաղադրիչ ստորադասական հարադրու թյուլն է, որի գլխավոր բաղադրիչը *training* վերջնաբաղադրիչն է: Այն նշանակում է՝ «կարճ, լարված մարզում»: Նշված բառային միավորն ունի իմաստային հստակություն և թափանցիկություն:

102. lambpigcow

Օրինակ՝ *'Lambpigcow' that makes the turducken look rather [...] poultry in comparison* (headline) (The Daily Mail 03 Dec 2014).

Lambpigcow բառային միավորը եռաբաղադրիչ համադասական համադրություն է: Այն նշանակում է՝ «գառան, խոզի և կովի մսից պատրաստված կերակրատեսակ»: Նշված բարդությունն ունի իմաստային թափանցիկություն և հստակություն: Նկատենք, որ առանձնացված միկրոհամատեքստում առկա է նաև մեկ այլ նորակազմություն՝ *turducken*: Վերջինս ևս խոհարարության տիրույթին պատկանող բառային միավոր է:

103. lean back experience

Օրինակ՝ *A company spokesman said that internet on television needed to be more of a 'lean back experience' than it is on a computer* (The Telegraph 25 June 2012).

Lean back experience բառային միավորը եռաբաղադրիչ ստորադասական հարադրություն է, որի գլխավոր բաղադրիչը *experience* վերջնաբաղադրիչն է: Այն ունի բառիմաստի հստակություն և թափանցիկություն, քանի որ նշված բարդության բաղադրիչները լավագույնս արտահայտում են հաղորդվող բառիմաստը: Ավելին, բերված միկրոհամատեքստը ևս նպաստում է բառիմաստի վերհանմանը: Առանձնացված համատեքստում այն իրացնում է «հանգիստ վիճակում նստած որևէ բան դիտելու փորձառություն» բառիմաստային տարբերակը, որը բովանդակության պլանում հակադրվում է «համակարգչի դիմաց նստած լինելու» վիճակին:

104. Ministry of Peace

Օրինակ՝ *Nothing friendly about it: Orwell's Ministry of Peace would envy the US military's use of newspeak* (headline) *The US military has mastered newspeak in a manner that would be the envy of Ministry of Peace (Minipax) in Orwell's Nineteen Eighty-four, and it peddles the phrases - usually simple phonetically, vague semantically and inscrutable technically with such bombastic precision that they enter the popular lexicon* (The Guardian 29 Oct 2010).

Այս օրինակում Ջ. Օրուելի հեղինակային նորաբանությունը վերաստեղծվել է և դրա գործաբանական արժեքը պայմանավորված է լրագրանյութում Միացյալ Նահանգների պաշտպանության նախարարությանը բնութագրելու անհրաժեշտությամբ: Յետևապես, մեջբերված լրագրային հոդվածում նշված հեղինակային

Նորաբանությունն ունի գնահատողական գործառույթ: Լրագրահոդվածում խոսվում է այն մասին, որ Միացյալ Նահանգների պաշտպանության նախարարությունը լավագույնս տիրապետում է Ջ. Օրոուելի համանուն ստեղծագործության մեջ մշակված *նորալեզվին* (*Newspeak*):

105. Ministry of Truth

Օրինակ 1. *Ukraine forms ‘ministry of truth’ to regulate the media* (headline) *Journalists fear freedom of speech will be curtailed as Kiev follows Moscow in stepping up the propaganda war* (The Guardian 19 Dec 2014).

Ուկրաինայում մամուլի վերահսկումը քննությունն առնող հոդվածում, վերաստեղծվել է Ջ. Օրոուելի *ministry of truth* հեղինակային նորաբանությունը, որը բառացի կարելի է թարգմանել «ճշմարտության նախարարությունն»: Մեջբերված հատվածից դյուրին է նկատել, որ այստեղ նշված բառային միավորն ունի փոխաբերական նշանակություն:

Օրինակ 2. *Her valedictory message to Ministry of Truth – I mean MoD – civil servants reads: ‘I have been proud to lead the MoD as its Permanent Secretary and Accounting Officer through a period of remarkable change’* (The Daily Mail 15 June 2012).

Այս օրինակում *Ministry of Truth* բառային միավորը նշանակում է *Ministry of Justice*: Հոդվածում խոսվում է Միացյալ Թագավորության արդարադատության նախկին նախարար Ուրսուլա Բրենանի՝ պաշտպանության նախարարության քարտուղարի աշխատանքից պաշտոնաթող լինելու և արդարադատության նախարարությունում կրկին պաշտոն զբաղեցնելու մասին.

How permanent is a Permanent Secretary? In the case of Ursula Brennan at the MoD, the answer is twenty months. In a fortnight she clears her desk and goes back to the Ministry of Justice (The Daily Mail 15 June 2012).

Նկատենք, նաև, որ նշված հոդվածի ասելիքն առավել պատկերավոր և արտահայտիչ դարձնելու նպատակով հոդվածի վերնագրում լրագրանյութի հեղինակը գործածել է *permanent* բառի հակադիր նշանակությամբ ներգործ բառային միավոր (*not-so-permanent*)՝ *“Goodbye to Ursula Brennan, the MoD’s not-so-permanent secretary”*.

106. spare room subsidy

Օրինակ՝ *It wasn't one of the labour leader's better performances. By contrast, David Cameron's response was robust. It's not a tax, the PM insisted, offering his own label for the issue: 'the Spare Room Subsidy'* (The Telegraph 25 Jan 2013).

Spare room subsidy բառային միավորը եռաբաղադրիչ հարադրույթն է և **bedroom tax** երկբաղադրիչ հարադրույթան հոմանշային կազմույթն է: Այն նշանակում է՝ «բնակավարձի սուբսիդավորում, այն է՝ բնակավարձի/գույքահարկի նվազեցում, եթե վարձակալ վող տարածքն ունի ավելի շատ սենյակներ, քան անհրաժեշտ է»:

107. sugar daddy party

Օրինակ՝ *At first you could only find them on dating websites, now there are big budget **sugar daddy parties*** (bbc.co.uk 25 2011).

Sugar daddy party բառային միավորը եռաբաղադրիչ ստորադասական հարադրույթն է, որի գլխավոր բաղադրիչը *party* վերջնաբաղադրիչն է: Այն նշանակում է՝ «խնջույք, որտեղ կանայք ծանոթանում են հարուստ տղամարդկանց հետ՝ ամուսնության նպատակով»:

108. word-of-post

Օրինակ՝ *We've known for years that word-of-mouth marketing has been partially co-opted by **word-of-post**, but the power of that lesson continues to impress when words like Grey (as in Fifty Shades) cease to instantly invoke Goose, sky or sweaters* (Forbes 15 Oct 2012).

Word-of-post բառային միավորը գծիկով գրվող եռաբաղադրիչ կազմույթն է և ունի իմաստային թափանցիկություն և հստակություն: Այն նշանակում է՝ «տարածված տեղեկություն՝ առցանց ուղարկված նամակներով»:

Առանձնացված միկրոհամատեքստում **word-of-post** բարդությունը ներկայացված է որպես **word-of-mouth** բարդության հոմանիշ և, հավանաբար, կազմվել է վերջինիս համաբանությամբ:

109. (the) work-life merge

Օրինակ՝ *Welcome to the world of the **work-life merge**, the term recently coined by Facebook executive Emily White to describe a life in which work and free-time are no longer neatly compartmentalized but seamlessly jumbled up together* (The Guardian 01 Jan 2012).

Work-life merge բառային միավորը եռաբարդադրիչ ստորադասական հարադրություն է և ունի իմաստային թափանցիկություն և հստակություն: Այն նշանակում է՝ «աշխատանքին և հանգստին հատկացվող ժամանակի միախառնում»: Կարելի է փաստել, որ բարդության ստեղծումը պատահական չէ, քանի որ մերօրյա իրականության մեջ մարդը ստիպված է աշխատել նաև ազատ ժամերին:

110. coach-of-the-month

Օրինակ՝ *There's also great concern about following the trail blazed (perhaps "burned" is more accurate) by Toronto and its **coach-of-the-month** club. Moreover, few see general manager/interim coach Gavin Wilkinson as someone capable of managing a stable MLS roster over the long run* (The Guardian 09 July 2012).

Coach-of-the-month բառային միավորը բառաբարդադրիչ կազմություն է և համատեքստում իրացնում է «ամսվա լավագույն մարզիչ» բառիմաստային տարբերակը:

111. slimmer-of-the-month-style

Օրինակ՝ *When you read about these transformations (usually illustrated by a skinny person standing, **slimmer-of-the-month-style**, in one leg of a voluminous pair of now-discarded trousers), you are left with the impression that the process is a simple transition from fat misery to slender happiness* (The Guardian 01 June 2012).

Slimmer-of-the-month-style գծիկով գրվող հնգաբարդադրիչ կազմություն է: Այն համեմատելի է **coach-of-the-month** կազմության հետ, քանի որ երկու բառային միավորներում էլ առկա է *month* բարդադրիչը: Առաջին բարդության մեջ այն նախորդում է վերջնաբարդադրիչին, իսկ երկրորդում հանդես է գալիս որպես բառի վերջնաբարդադրիչ: Նշենք նաև, որ երկուսն էլ դրսևորում են իմաստային հստակություն և թափանցիկություն: *Slimmer-of-the-month-style* բառային միավորը վերաբերում է նորածնությանը և նրբագեղարտաքինին, այնինչ *coach-of-the-month* բառային միավորը՝ մարզաշարհին:

Քննության առնված բարդ դիպվածային բառերը կազմում են տարբեր բառիմաստային և/կամ թեմատիկ խմբեր.

1. **Բժշկություն, առողջություն և մարզանք (Medicine, Health, and Sports)** – *ancestral health, buffalo hump, death test, Facebook facelift, human*


enhancement, obesity paradox, air yoga, coach-of-the-month, roller-skiing, high intensity training:

2. **Գիտություն, տեխնոլոգիա և համակարգչի գործածություն (Science, Technology, and Computing)** – *autonomous vehicle, biotic virus, cultured leather, dark sky park, data journalism, earthquake cloak, dead-cat hole, frost quake/frostquake, kill switch, regrettable substitution, ring rain, shadow biosphere, flipped learning, ghost detector, hybrid camera, light quadricycle, murder-cam, smart gun, smartwatch, skinny pig, standing desk, banner blindness, big data, consumer telematics, crowd-fund/crowdfund, crowdfunding, digital afterlife, digital detox, digital globe, digital footprint, digital surgery, dwell time, hashtag activism, impression management, lulz-farming, mumblogger, password wallet, responsive design, site scraper, (the) slow web, success theater, swipe right, Tinderella syndrome, tweet seats, virtual vanity, word-of-post:*
3. **Գործարարություն, օրենք և քաղաքականություն (Business, Law, Politics, and Government)** – *activist investor, algorithmic trading, challenger bank, crony capitalism, ghost money, job flipping, hamburger tax, shareholder spring, spare room subsidy, Ministry of Peace, Ministry of Truth:*
4. **Մարդիկ և հասարակություն (People and Society)** – *adoption party, Barbie flu, binge thinker, booth babe, brass ceiling, breadsinner, burn book, buzz score, cat café, dozenalist, dustbin baby, fly grazing, full nest syndrome, generation rent, glass cliff, hedge rage, jigsaw family, lean back experience, litter vigilante, nappy wall, (the) new normal, pay-neutral, power paunch, positive procrastination, push ring, silver splicer, skinny-bash, slimmer-of-the-month-style, social supermarket, sugar daddy party, wifestyle, work-life merge:*
5. **Մսուկ, խոհանոցային սարքեր/պարագաներ և հագուստ (Food, Kitchen Appliances, and Clothing)** – *blood-powder, bunny chow, lambpigcow, meat fruit, pink slime, blast chiller, internet refrigerator, potato ricer, bug-out bag, chandelier earring, double denim:*

Ուսումնասիրված բարդ դիպվածային բառային միավորներում բացակայում են «*Լեզու, արվեստ և երաժշտություն (Language, Arts, and Music)*» բառի մաստային և/կամ թեմատիկ խմբին պատկանող բառերը:

Քննության առնված բարդ դիպվածային բառերի շրջանում առկա են գոյականական, ածականական և բայական կազմություններ: Ասվածն առավել պատկերավոր ներկայացնենք Գծապատկեր 5-ում:

Գծապատկեր 5. Բարդ դիպվածային բառերի խոսքիմասային պատկանելությունը



Ինչպես երևում է Գծապատկեր 5-ում՝ ուսումնասիրված դիպվածային բառերում (111) քանակական առումով գերակշռում են գոյականական կազմությունները (107), սակավաթիվ են ածականները (1) և բայերը (3):

Առանձնացված դիպվածային բառերում գերակշռում են երկբաղադրիչ հարադրությունները և սակավաթիվ են համադրական կազմությունները: Բարդ բառային միավորները ներկայանում են բաղադրիչների և՛ ստորադասական, և՛ համադասական հարաբերությամբ: Առկա են նաև այնպիսի բարդ բառային միավորներ, որոնց բաղադրիչների միջև շարահյուսական հարաբերությունները որպես այդպիսին անհետացած են, և բաղադրիչներից ոչ մեկը չի գիտակցվում որպես գլխավոր բաղադրիչ: Դրանք ակնհայտորեն առանց գլխավոր բաղադրիչի բարդություններ են, երբ բարդությունն իմաստային թափանցիկություն և բառիմաստի հստակություն չի դրսևորում: Լեզվանյութի ուսումնասիրությունը ցույց է տալիս նաև, որ բարդ դիպվածային բառերի գերակշիռ մասում գլխավոր բաղադրիչը վերջնաբաղադրիչն է: Յետևապես, կարելի է փաստել, որ դրանք կազմվել են գերազանցապես *աջակողմյան գլխավոր բաղադրիչի կանոնի համաձայն*:

Ուսումնասիրված բառարանային և կորպուսային շտեմարանների լեզվանյութի քննությունը թույլ է տալիս արձանագրել, որ սույն աշխատանքում առանձնացված բարդ

դիպվածային բառային միավորները որոշ դեպքերում ձեռք են բերում գործածման բարձր հաճախականություն՝ առցանց հրապարակումների շնորհիվ, որոշ դեպքերում էլ գրանցվում են անգլերեն միայն եզրույթացատրական բառարաններում:

Անգլերեն բառարաններում դեռևս չեն ընդգրկվել *activist investor, adoption party, ancestral health, autonomous vehicle, banner blindness, Barbie flu, binge thinker, biotic virus, blood powder, booth babe, brass ceiling, breadsinner, bug-out bag, burn book, buzz score, site scraper, coach-of-the-month, consumer telematics, cultured leather, dark sky park, data journalism, dead-cat hole, death test, digital afterlife, digital globe, digital surgery, dozenalist, dustbin baby, earthquake cloak, Facebook facelift, flipped learning, fly grazing, frost quake/frostquake, full nest syndrome, ghost detector, ghost money, glass cliff, hamburger tax, hashtag activism, hedge rage, high intensity training, Internet refrigerator, human enhancement, hybrid camera, impression management, jigsaw family, job flipping, lambpigcow, lean back experience, light quadricycle, litter vigilante, lulz-farming, meat fruit, Ministry of Peace, Ministry of Truth, mumblogger, murder-cam, nappy wall, obesity paradox, password wallet, pay-neutral, pink slime, positive procrastination, power paunch, potato ricer, push ring, regrettable substitution, responsive design, ring rain, shadow biosphere, shareholder spring, silver splicer, skinny bash, skinny pig, slimmer-of-the-month-style, (the) slow web, social supermarket, spare room subsidy, success theater, sugar daddy party, Cinderella syndrome, Tweet seats, virtual vanity, wifestyle, word-of-post, work-life merge* բառային միավորները:

Քննության առկա ձևեր *algorithmic trading, big data, blast chiller, buffalo hump, bunny chow, cat café, challenger bank, chandelier earring, crony capitalism, crowd-fund/crowdfund, crowdfunding, digital detox, digital footprint, double denim, dwell time, generation rent, kill switch, (the) new normal, roller skiing/roller-skiing, smart gun, smartwatch, standing desk, swipe-right* բառային միավորները զետեղվել են անգլերեն բառարաններում²⁴.

1. *Algorithmic trading* երկբաղադրիչ հարադրությունը զետեղվել է *Oxford Dictionaries Online* բառարանում:


²⁴<http://www.oxforddictionaries.com> 30.07.2016-ի դրությամբ, <http://dictionary.cambridge.org> 30.07.2016-ի դրությամբ, <http://www.ldoceonline.com> 30.07.2016-ի դրությամբ, <http://www.merriam-webster.com> 30.07.2016-ի դրությամբ.

2. *Big Data* երկբաղադրիչ հարադրու թյ ու ն ն ընդգրկվել է *Oxford Dictionaries Online*, *Cambridge Dictionaries Online* և *Merriam-Webster Dictionary Online* բառարաններում:
3. *Blast chiller* երկբաղադրիչ հարադրու թյ ու ն ը զետեղվել է *Oxford Dictionaries Online* բառարանում:
4. *Buffalo hump* երկբաղադրիչ հարադրու թյ ու ն ն ընդգրկվել է *Merriam-Webster Dictionary Online* բառարանում:
5. *Bunny chow* և *cat café* երկբաղադրիչ հարադրու թյ ու ն ն երը զետեղվել են *Oxford Dictionaries Online* բառարանում:
6. *Challenger bank* երկբաղադրիչ հարադրու թյ ու ն ը զետեղվել է *Oxford Dictionaries Online* և *Cambridge Dictionaries Online* բառարաններում:
7. *Chandelier earring* երկբաղադրիչ հարադրու թյ ու ն ը զետեղվել է *Oxford Dictionaries Online* բառարանում:
8. *Crony capitalism* երկբաղադրիչ հարադրու թյ ու ն ը զետեղվել է *Oxford Dictionaries Online* և *Cambridge Dictionaries Online* բառարաններում:
9. *Crowdfund* բառն ընդգրկվել է *Oxford Dictionaries Online* և *Cambridge Dictionaries Online* բառարաններում: *Crowdfunding* բառն ընդգրկվել է *Oxford Dictionaries Online*, *Cambridge Dictionaries Online* և *Merriam-Webster Dictionary Online* բառարաններում:
10. *Digital detox* երկբաղադրիչ հարադրու թյ ու ն ը զետեղվել է *Oxford Dictionaries Online* և *Cambridge Dictionaries Online* բառարաններում:
11. *Digital footprint*, *double denim* և *dumbphone* երկբաղադրիչ կազմու թյ ու ն ն երն ընդգրկվել են *Oxford Dictionaries Online* բառարանում:
12. *Dwell time* երկբաղադրիչ հարադրու թյ ու ն ն ընդգրկվել է *Oxford Dictionaries Online* և *Cambridge Dictionaries Online* բառարաններում:
13. *Generation rent* երկբաղադրիչ հարադրու թյ ու ն ը զետեղվել է *Oxford Dictionaries Online* բառարանում:
14. *Kill switch* երկբաղադրիչ հարադրու թյ ու ն ն ընդգրկվել է *Oxford Dictionaries Online* և *Cambridge Dictionaries Online* բառարաններում:
15. *The new normal*, *roller skiing*, *smart gun* և *smartwatch* բառային միավորները զետեղվել են *Oxford Dictionaries Online* բառարանում:
16. *Standing desk* երկբաղադրիչ հարադրու թյ ու ն ը զետեղվել է *Oxford Dictionaries Online* և *Cambridge Dictionaries Online* բառարաններում:


17. *Swipe-right* բառային միավորը գետեղվել է *Oxford Dictionaries Online* բառարանում՝ *swipe right (or left)* անջատ գրույթով:

Կորպորատիվ ուսումնասիրության մեթոդով վեր ենք հանել քննության ամսված բարդ դիպվածային բառային միավորների հաճախականության վիճակագրական տվյալները՝ ըստ ժամանակակից անգլերենի COCA և GloWbE կորպորատիվների: Ասվածը ներկայացնենք Գծապատկեր 6-ում:

Գծապատկեր 6²⁵. Բարդ դիպվածային բառերի հաճախականությունը COCA և GloWbE կորպորատիվներում



²⁵ Շարունակվում է հաջորդ էջում:



Ինչպես երևում է Գծապատկեր 6-ում՝ **COCA** և **GloWbE** կորպուսներում ամենամեծ հաճախականությունն ունեն **big data** (COCA - 247, GloWbE - 247), **Ministry of Truth** (COCA - 11, GloWbE - 156) **(the) new normal** (COCA - 140, GloWbE - 140), **impression management** (COCA - 136, GloWbE - 136), **crony capitalism** (COCA - 126, GloWbE - 126) և **crowdfunding** (COCA - 118, GloWbE - 118) բառային միավորները: **Kill switch** բառային միավորը ներկայացված է 49 համատեքստում (COCA - 49, GloWbE - 49), **potato ricer** բառային միավորը ներկայացված է 17 համատեքստում COCA կորպուսում և 39 համատեքստում՝ **GloWbE** կորպուսում (COCA - 17, GloWbE - 39), **pink slime** բառային միավորը ներկայացված է 30 համատեքստում (COCA - 30, GloWbE - 30), **dwell time** բառային միավորը ներկայացված է 21 համատեքստում (COCA - 21, GloWbE - 21), **digital footprint** բառային միավորը ներկայացված է 20 համատեքստում (COCA - 20, GloWbE - 20), **autonomous vehicle** բառային միավորը ներկայացված է 18 համատեքստում (COCA - 18, GloWbE - 18), **activist investor** բառային միավորը ներկայացված է 17 համատեքստում (COCA - 17, GloWbE - 17), **human enhancement** բառային միավորը ներկայացված է 15 համատեքստում (COCA - 15, GloWbE - 15), **digital detox** բառային միավորը ներկայացված է 12 համատեքստում (COCA - 12, GloWbE - 12): Իսկ նշված երկու կորպուսներում մեծ հաճախականությունն չունեն **smart gun** (COCA - 10, GloWbE - 10), **hashtag activism** (COCA - 9, GloWbE - 9), **algorithmic trading** (COCA - 8, GloWbE - 8), **standing desk** (COCA - 8, GloWbE - 8), **digital globe** (COCA - 7, GloWbE - 7), **job flipping** (COCA - 7, GloWbE - 7), **swipe-right** (COCA - 5,

GloWbE - 5) և **wifestyle** (COCA - 5, GloWbE - 5) բառային միավորները: Տվյալ կորպուսներում **bunny chow, flipped learning, meat fruit** և **shadow biosphere** բառային միավորները ներկայացված են ընդամենը 4 համատեքստում (COCA - 4, GloWbE - 4), **brass ceiling, buffalo hump, cat café, glass cliff, Internet refridgerator/refrigerator, obesity paradox** և **responsive design** բառային միավորները ներկայացված են ընդամենը 3 համատեքստում (COCA - 3, GloWbE - 3), **blast chiller, bug-out bag, dark sky park, digital afterlife** և **high intensity training** բառային միավորները ներկայացված են ընդամենը 2 համատեքստում (COCA - 2, GloWbE - 2), **blood powder, double denim, generation rent, smart watch** և **spare room subsidy** բառային միավորները ներկայացված են ընդամենը 1 համատեքստում (COCA - 1, GloWbE - 1)²⁶:

Քննության առնված բարդ դիպվածային բառերից՝ **adoption party, air yoga, ancestral health, banner blindness, Barbie flu, binge thinker, biotic virus, booth babe, breadsinner, burn book, buzz score, challenger bank, chandelier earring, site scraper, coach-of-the-month, consumer telematics, crowd-fund/crowdfund, cultured leather, data journalism, dead-cat hole, death test, digital surgery, dozenalist, dustbin baby, dumbphone, earthquake cloak, Facebook facelift, fly grazing, frost quake/frostquake, full nest syndrome, ghost detector, ghost money, hamburger tax, hedge rage, hybrid camera, jigsaw family, lambpigcow, lean back experience, light quadricycle, litter vigilante, lulz-farming, Ministry of Peace, mumblogger, murder-cam, nappy wall, password wallet, pay-neutral, positive procrastination, power paunch, push ring, regrettable substitution, ring rain, roller skiing/roller-skiing, shareholder spring, silver splicer, skinny bash, skinny pig, slimmer-of-the-month-style, (the) slow web, social supermarket, success theater, sugar daddy party, Tynderella syndrome, tweet seats, virtual vanity, word-of-post, work-life merge** բառային միավորները բացակայում են վերը նշված կորպուսներում:

Ամփոփելով ուսումնասիրության արդյունքները՝ փաստենք, որ բարդ դիպվածային բառերում գերակշռում են «*Գիտություն և տեխնոլոգիա և համակարգչի գործածություն*» (Science, Technology, and Computing)» և «*Մարդիկ և հասարակություն*» (People and Society)»

²⁶ Davies, Mark. (2008-) *The Corpus of Contemporary American English (COCA): 520 million words, 1990-present*. Available online at: <http://corpus.byu.edu/coca/> 30.07.2016-ի դրությամբ.

Davies, Mark. (2013) *Corpus of Global Web-Based English: 1.9 billion words from speakers in 20 countries (GloWbE)*. Available online at: <http://corpus.byu.edu/glowbe/> 30.07.2016-ի դրությամբ.

բառի մաս տայ ին և/կամ թեմատիկ խմբերին պատկանող բառերը: Բառաբարդման կաղապարներից ամենակենսունակը «գոյական + գոյական» կաղապարն է: Ըստ կենսունակության՝ հաջորդը «ածական + գոյական» կաղապարն է: Քննության առնված (111) բարդ դիպվածային բառերից 24-ը զետեղվել են անգլերեն միալեզու բացատրական բառարաններում և վերածվել *նորաբանությունների*, իսկ գերակշիռ մասի դիպվածային կարգավիճակը թեական է (*uncertain between nonce and neologism/neither nonce nor neologism*):

3.2. Դիպվածային բառաբանությունները և դրանց զարգացումը

Չասարակական կյանքում տեղի ունեցած փոփոխություններով և անգլերենի զարգացման օրինաչափ միտումներով է պայմանավորված Լրագրանյութերում նորաստեղծ բառախառնությունների գործածությունը: Մասնավորապես Լրագրանյութերում դիպվածային բառախառնությունների երևան գալը պայմանավորված է նաև լեզվական միջոցները տնտեսելու միտումով: Այստեղ քննության կառնենք *alcolock, Amexica, anklington, babymoon, backie, belfie, boatel, Brexit, CeleBaby/celebaby, celebutante, cloudzilla, couple, craftivism, craftivist, dadpreneur, earthscraper/earth-scraper, ecorithm, FidoCam, filk, floordrobe, friendvertising, gelfie, Grexit, haloodie, kitchenalgia, Kiwinglish, kninkle, legsie/lelfie, mob, momshell, pet-nup, plyscraper, powsurfing, predditor, pulchronomics, raptivist, teletreat, TomTato, thutt, yogi* բառախառնությունները:

Այժմ մանրամասն անդրադառնանք վերը թվարկված բառախառնությունների քննությանը:

1. alcolock

Օրինակ՝ *A radical new device that physically stops drink-drivers starting up their cars is to be introduced in the UK [...] The 'alcolock' requires the driver to take a breath-test before the ignition can be turned on and activates a lock if the result is above a certain level* (The Guardian 29 Feb 2004).

Alcolock բառախառնությունը կազմվել է *alcohol* և *lock* բառերի համակցումով և նշանակում է՝ «մեքենային ամրացված սարք, որն արգելակում է մեքենայի շարժիչի գործունեությունը՝ վարորդի

հարբած չի նեղ ու պարագայ ու մ»: Նշենք նաև, որ տվյալ բառախառնուրդն անվանում է նոր իրական թյուն:

2. Amexica

Օրինակ 1. *The united states of “Amexica” share more than a border and a common heritage: both sides welcome the benefits of trade but struggle with the pressures of growth* (Time 11 June 2001).

Օրինակ 2. **Amexica: War Along the Borderline** by Ed Vulliamy –review (headline) [...] *A vivid dissection of the calamitous US-Mexico ‘war on drugs’ is illuminating and horrifying* (The Guardian 07 Nov 2010).

Amexica բառախառնուրդը կազմվել է *America* և *Mexico* բառերի համակցումով և նշանակում է՝ «Ամերիկայի և Մեքսիկայի միացյալ ջանքերը՝ թմրամաֆիայի դեմ մղվող պայքարում»:

3. anklington

Օրինակ՝ *Going down: Anklingtons. We’re small-conservative in our wellie choice this summer* (The Guardian 06 July 2013).

Anklington բառախառնուրդը կազմվել է *ankle* և *wellington* բառերի համակցումով և նշանակում է՝ «կարճ անջրանցիկ ռետինե (ճտքավոր) կոշիկ»:

4. babymoon

Օրինակ 1. **Babymoon: Getting away, While There Are Just Two Of You** (headline) (The New York Times 13 May 2007).

Օրինակ 2. **‘Babymoon’ vacation ends with heartbreaking result** (headline) (The USA Today 16 June 2015).

Օրինակ 3. *On our flight to Hawaii for our “babymoon” last June, Dave returned to me* (The New York Times 03 June 2016).

Babymoon բառախառնուրդը կազմվել է *baby* և *honeymoon* բառերի համակցումով և նշանակում է՝ «ռոմանտիկ արձակուրդ, որը ծնողները անցկացնում են երեխա ունենալուց առաջ»: Մեջբերված երկրորդ օրինակում նշված բառը կապակցվել է *vacation* գոյականի հետ, որը մասնակիորեն արտացոլում է հաղորդվող իմաստը:

5. bankster

Օրինակ՝ *Where do banksters, you know, bad guy bankers, want their money?* (www.wired.com 30 Sept 2012)

Bankster բառախառնուրդը կազմվել է *bank* և *gangster* բառերի համակցումով և նշանակում է՝ «վատ բանկային աշխատող»: Բերված օրինակում *bad guy bankers* հատվածը նպաստում է իմաստի վերհանմանը:

6. boatel

Օրինակ՝ *Boat hotel at Rockaway Beach, New York* (headline) [...] *Admittedly, it's not the stuff glossy travel magazines are made of, but the **Boatel**, a floating hotel comprised of a collection of old cruisers, has become one of the recent success stories of New York City* (The Guardian 27 Jan 2012).

Boatel բառախառնուրդը կազմվել է *boat* և *hotel* բառերի համակցումով և նշանակում է՝ «նավակ, որը ծառայում է որպես հյուրանոց»:

7. Brexit

Օրինակ՝ *Dear Britain, beware: **Brexit** could be your Waterloo* (headline) (The Guardian 18 June 2015).

Brexit բառախառնուրդը կազմվել է *British/Britain* և *exit* բառերի համակցումով և նշանակում է՝ «Մեծ Բրիտանիայի հավանական դուրս գալը եվրագոտուց»: Այն ստեղծվել է 2012թ.-ին՝ *Grexit* բառախառնուրդի բառակազմական համաբանությամբ (www.oxforddictionaries.com 30.07.2016-ի դրությամբ):

8. CeleBaby/celebaby

Օրինակ 1. *Guess the **CeleBaby Bumps!*** (headline) (Life & Style 11 April 2013)

Օրինակ 2. *Why Ryan Gosling and Eva Mendes Named Their Daughter Esmeralda Amada – Plus The Meanings Behind 12 More Unique **CeleBaby** Monikers* (headline) (Life & Style 10 Oct 2014).

Օրինակ 3. ***Celebabies: Are they just for the spotlight?*** (headline) (The Sidney Morning Herald 20 July 2014)

CeleBaby/celebaby բառախառնուրդը կազմվել է *celebrity* և *baby* բառերի համակցումով և նշանակում է՝ «հանրահայտ անձի երեխա»: Բերված երեք օրինակներում էլ *CeleBaby/celebaby* բառախառնուրդը կիրառվել է լրագրանյութի վերնագրում:

9. celebutante

Օրինակ՝ *But it can go the other way: ugly noises made by people who run out of appropriate descriptive words, and so just cram two elegant words together, creating*

something grotesque: favicon, Brexit, slacktivism, **celebutante**, chillax (The Guardian 17 July 2015).

Celebutante բառախառնուկը կազմվել է *celebrity* և *debutante* բառերի համակցումով և նշանակում է՝ «ժառանգած հարստության շնորհիվ հայտնի դարձած երիտասարդ կին»: Ուշագրավ է այն, որ մեջբերված լրագրանյութում *celebutante* նորաստեղծ բառախառնուկը «անբարեհունչ» կազմություն է դիտարկվում՝ հոդվածում թվարկված *favicon*, *Brexit*, *Grexit*, *slacktivism*, *chillax* բառախառնուկների շարքում:

Չարկ է փաստել, որ *celebutante* բառախառնուկը ամերիկացի լրագրող Վ. Վոլտերի հեղինակային նորաբանությունն է և առաջին անգամ գործածվել է *The Daily Times* պարբերականում՝ 1939թ.-ին (www.merriam-webster.com; www.memidex.com 31.05.2016-ի դրությամբ):

10. cloudzilla

Օրինակ՝ *Watch out, it's **Cloudzilla!** Photographer captures formation resembling giant killer reptile over Massachusetts (but is it real?)* (headline) [...] *It appears to show less deadly version of Godzilla walking across the sky [...] Mutant: Godzilla (file picture), which first appeared in Ishiro Honda's 1954 film of the same name, is now a global pop culture icon, having featured in two Hollywood films and numerous video games and TV shows* (The Daily Mail 06 Sept 2015).

Cloudzilla բառախառնուկը կազմվել է *cloud* և *Godzilla* բառերի համակցումով և նշանակում է՝ «հսկամողե սանման ամպ»:

11. craftivism

Օրինակ՝ *“The art of **craftivism**”* (headline) [...] *Is she a visionary muralist? A **craftivist**? An anarchic artist? Reichardt is not one for labels, though she does like the idea of being a craftivist – “marrying craft with activism” – and being part of a movement that anti-sweatshop, against mass production and very much focused on sustainability and giving new life to old materials* (The Guardian 07 Feb 2010).

Craftivism բառախառնուկը կազմվել է *craft* և *activism* բառերի համակցումով և նշանակում է՝ «արհեստների գործածումը սոցիալական քաղաքական ակտիվիստական նպատակներով»: Մեջբերված միկրոհամատեքստում նախնառաջ հարցադրում է արվում, ապա հեղինակը իր բնորոշումն է տալիս *craftivist* գոյականին, որն առաջացել է հոդվածի վերնագրում գործածված նորահայտ *craftivism*

բառի համաբանությունը: Լրագրանյութի հեղինակը բացատրում է այս բառախառնությունը նշանակությունը՝ *marry* բայի օգնությամբ, որն առավել ցայտուն է դարձնում հաղորդվող բառիմաստը: Տվյալ պարագայում արհեստն ու ակտիվիստական գործունեությունը միախառնվում են՝ *մարդկանց շահագործող/քրտնաքամ անող գործարանների* դեմ շարժում իրականացնելու նպատակով: Արդյունքում ստեղծվել է բառ, որն արտացոլում է արհեստների ծառայեցումը՝ քաղաքական, ակտիվիստական նպատակներին:

12. dadpreneur

Օրինակ՝ *Forget about ‘mumpreneurs’, here are the dads who mix work and family* (headline) [...] *Whether you’re a fan of the “mumpreneur” label or not, it’s being pushed aside by the rise of a new breed, the “dadpreneur”* (The Guardian 15 Sept 2015).

Dadpreneur բառախառնությունը կազմվել է *dad/daddy* և *entrepreneur* բառերի համակցումով և նշանակում է՝ «վերջերս հայր դարձած ձեռնարկատեր, որը սկսել է նորածինների հագուստի քիզնետով զբաղվել»:

13. earthscraper/earth-scraper

Օրինակ 1. *The Earthscraper*/BNKR architectura (headline) [...] *The Earthscraper, designed by BNKR architectura, is the Skyscraper’s in the historic urban landscape of Mexico City where the latter is condemned and the preservation of the built environment is the paramount ambition* (Daily Arch 04 Aug 2011).

Օրինակ 2. *Concept ‘Earth-scraper’ extends deep into the ground* (headline) [...] *A Mexican architecture firm called BNKR Arquitectura has designed an inverted skyscraper for Mexico City that stretches deep into the ground, rather than soaring into the sky* (www.wired.com 12 Aug 2011).

Օրինակ 3. *Since laws limit the height of new structures in Mexico City, an architect has proposed building a 65-storey earthscraper* (Smithsonian Dec 2013).

Earthscraper/earth-scraper բառախառնությունը կազմվել է *earth* և *skyscraper* բառերի համակցումով և նշանակում է՝ «ստորգետնյա բրգած և բազմահարկ շինություն, որի տանիքը հավասարվում է գետնին»: Անշուշտ, նշված կազմությունն անվանում է նոր իրականություն:

14. ecorithm

Օրինակ՝ *Dr. Valiant proposes that natural selection is supplemented by ecorithms, which enable organisms to learn and adopt more efficiently* (The New York Times 01 Oct 2014).

Ecorithm բառախառնուրդը կազմվել է *ecology* և *algorithm* բառերի համակցումով և նշանակում է՝ «*շրջակա միջավայրի հետ փոխազդող ալգորիթմ*. այն հնարավոր է դարձնում շրջակա միջավայրին հարմարվելը»:

15. FidoCam

Օրինակ՝ *Staffordshire police demonstrate their new digital crime fighting tool, FidoCam – a camera unit which can be used by police dogs during searches* (The Telegraph 19 July 2012).

FidoCam բառախառնուրդը կազմվել է *Fidonet* և *camera* բառերի համակցումով և նշանակում է՝ «*նստիկանական շան գլխին ամրացվող տեսածայնագրիչ սարք*»: Առանձնացված միկրոհամատեքստից նկատելի է, որ *FidoCam* բառախառնուրդը ոստիկանական նորարոշյան արդյունք է՝ աշխատանքն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով: Նկատենք նաև, որ նորահայտ բառը բացատրվում է առանձնացված միկրոհամատեքստում, ուստի անհրաժեշտություն չկա անդրադարձ կատարելու ողջ լրագրանյութին՝ բառիմաստը վերհանելու համար:

16. filk

Օրինակ՝ *Nowt so queer as filk – world sci-fi festival beams into London* (The Guardian 16 Aug 2014).

Filk բառախառնուրդը կազմվել է *science fiction* և *folk music* բառերի համակցումով և նշանակում է՝ «*ժողովրդական երաժշտության մի տարատեսակ, որը սնուցվում է գիտաֆանտաստիկայից*»:

17. floordrobe

Օրինակ՝ *Half of Britons admit to having a “Floordrobe”* (headline) [...] *Turns out, there’s actually a name for throwing your clothes out of your wardrobe and forgetting to put them away – it’s called the “Floordrobe”, and apparently, half of Britons have one* (Glamour 21 May 2014).

Floordrobe բառախառնուրդը կազմվել է *floor* և *wardrobe* բառերի համակցումով և նշանակում է՝ «*հատակին թափված հագուստի կոլյտ, որն ասես զգեստապահարան չի նի*»:

18. friendvertising

Օրինակ՝ *Is your friend an unpaid branding enthusiast? 'Friendvertising' is the latest trick by marketers who want you to sell their brand* (The Guardian 13 Jan 2013).

Friendvertising բառախառնուրդը կազմվել է *friends* և *advertising* բառերի համակցումով և նշանակում է՝ «*տեսագովազդի ներ տարածել սոցիալ ակալն 'friends' կայքում*»:

19. Grexit

Օրինակ 1. *Greece threatens top court action to block Grexit* (headline) (The Telegraph 29 June 2015).

Օրինակ 2. *Grexit will leave the euro fragile* (headline) (The Financial Times 07 July 2015).

Grexit բառախառնուրդը կազմվել է *Greek/Greece* և *exit* բառերի համակցումով: Այն երևան է եկել Յուրոնախառնի ֆինանսական ճգնաժամի հետևանքով անցկացված համազգային հանրաքվեից հետո, որի ժամանակ հունները «ոչ» են ասել վարկատուների պայմաններին: Յանրաքվեի արդյունքների հրապարակումից հետո լրագրանյութերում հայտնվել են հոդվածներ՝ Յուրոնախառնի՝ եվրագոտուց դուրս գալու հավանականության մասին (*The Telegraph, The Financial Times, The Daily Mail, Vox magazine, Forbes magazine* և և): Կարող ենք արձանագրել, որ Յուրոնախառնի եվրագոտուց դուրս գալու հավանականությունը քննությունն առնող լրագրահոդվածներում *Grexit* նորակազմությունն արտահայտում է հաղորդվող նյութի հիմնական գաղափարը: *Grexit* բառախառնուրդը լրագրանյութերի կենտրոնն է, և տվյալ նորակազմությունը պարունակող լրագրահոդվածները կենտրոնաձիգ են, քանի որ ողջ հոդվածը կառուցվել է այդ բառի շուրջ:

Արձանագրում ենք նաև, որ *Grexit* բառախառնուրդը կազմվել է 2012թ.-ին (www.oxforddictionaries.com 31.05.2016-ի դրությամբ) և գործածվել է գրեթե բոլոր թերթերում և ամսագրերում՝ 2015թ.-ին: Ավելին, *Grexit* բառախառնուրդը լայն գործածությունն է ձեռք բերել լրագրային և ոչ լրագրային նյութերում: Դժվար է կանխորոշել նշված նորաստեղծ կազմության աղբյուրը, քանի որ այն լրագրանյութերում գրեթե միաժամանակ է գործածվել:

20. haloodie

Օրինակ՝ *Welcome to the world of the **haloodie*** (headline) (The Guardian 28 Sept 2013).

Haloodie բառախառնուրդը կազմվել է *halal* և *foodie* բառերի համակցումով և նշանակում է՝ «միմիայն առողջ սնունդն օգտագործող անձ»: Նկատենք, որ առանձնացված օրինակում **haloodie** կազմությունն ունի հավաքական գոյականի կիրառություն՝ նախադասության վերջում գուցե գործվելով **the** որոշյալ հոդի հետ:

21. kitchenalgia

Օրինակ՝ *Queen of florals Cath Kidson bucks the recession to profit from love of nostalgia* (headline) [...] *Sales and profits have jumped more than 60% at Cath Kidson, the purveyor of “**kitchenalgia**” that has become as much a part of the (chintzy) fabric of British life as the late Laura Ashley* (The Guardian 09 Aug 2009).

Kitchenalgia բառախառնուրդը կազմվել է *kitchen* և *nostalgia* բառերի համակցումով: Վերոնշյալ օրինակից կարելի է եզրակացնել, որ *kitchenalgia* բառախառնուրդը նշանակում է՝ «1950-ականների ընտանեկան կարոտաբարդ ություն, այն է՝ ժամանակներ, երբ տանտիկիները մեծամասամբ զբաղված էին խոհանոցային գործերով»:

22. Kiwinglish

Օրինակ՝ *Do you speak **Kiwinglish**? New Zeland’s distinct linguistic identity* (headline) [...] *Enough about the “British style” and the “American way” already. There are other nations speaking English out there. It is the official language in 58 sovereign states and recognized, if not spoken, almost everywhere else. One such place is New Zealand, where we speak a special language. Let’s call it **Kiwinglish*** (The Guardian 10 March 2015).

Kiwinglish բառախառնուրդը կազմվել է *Kiwi* և *English* բառերի համակցումով և նշանակում է՝ «նորգելանդական անգլերեն»:

23. kninkle

Օրինակ՝ *No more **kninkles** (that’s knee wrinkles): Now there’s a £300 lunchtime lift that promises to banish that saggy skin* (The Daily Mail 26 Feb 2014).

Kninkle բառախառնուրդը կազմվել է *knee* և *wrinkle* բառերի համակցումով և նշանակում է՝ «ծնկի վրահայտնված կնճիռ»: Նշենք, որ լրագրանյութերում արձանագրել ենք այս նորակազմության

բարձր հաճախակիություն, բայց նախատեսված է հիմնականում անգլալեզու բառարանների բառաֆոնդը:

24. mob

Օրինակ՝ *Meet the ‘modern snobs’ (aka **Mobs**) – the sort of people who only watch TV dramas with subtitles* (Grazia 20 Aug 2012).

Mob բառախառնուրդը կազմվել է *modern* և *snob* բառերի համակցումով: Բերված օրինակում *mob* բառախառնուրդը հոգնականաձև է և ունի համատեքստային գործառնություն, քանի որ հաղորդվող բառիմաստը բացատրվում է առանձնացված միկրոհամատեքստում: Նկատենք, որ անգլերեն բառարաններում առկա է *mob* պարզ բառը, որն ունի բառարանային չորս նշանակություն. *mob* - 1. *a large crowd of people, especially one that may become violent or cause trouble*; 2. *a group of people who are similar in some way*; 3. *the Mob, people involved in organized crime*, 4. *a group of animals* (OALD 2006:982). Իսկ մեր առանձնացրած համատեքստում *mob* բառախառնուրդն իրացնում է *someone with a snobbish take on modern trends* բառիմաստային տարբերակը: Այսպիսով, արձանագրում ենք կատարյալ համանունություն, քանի որ երկուսն էլ նույնագիր և նույնահունչ բառեր են:

25. momshell

Օրինակ 1. *Meet the **momshells**: how celebrities make ordinary mums feel guilty* (headline) [...] *Catwalk culture and the obsession with staying stick-thin can make women feel flabby failures if they are not ready for skinny jeans within weeks of giving birth* (The Guardian 01 Sept 2012).

Օրինակ 2. *Celebrity ‘**Momshells**’ Pressured to Look Perfect After Giving Birth* (headline) [...] *Call them ‘**momshells**’ (mother-as-bombshell) for bouncing back after having a baby and jumping right back into their busy Hollywood careers looking svelte and stylish with no signs of baby weight* (ABC News 20 Aug 2012).

Momshell բառախառնուրդը կազմվել է *mom* և *bombshell* բառերի համակցումով: Բերված օրինակներից կարելի է նկատել, որ *momshell* բառախառնուրդը նշանակում է՝ «վերջերս մայրացած շատ գրավիչ կին, որին երեխա ունենալու հանգամանքը չի խոչընդոտում՝ վերադառնալու իր աշխատանքին, կարիերային»: Առանձնացված միկրոհամատեքստերից տվյալ բառիմաստի վերհանմանը նպաստում են *mums*, *celebrities* գոյականները, *give birth*, *bounce back*, *jump back*

դարձված այ ին բայ երը, **svelte, stylish, stick-thin** ածականները: Նկատենք, որ մեջբերված երկրորդ օրինակը ավելի ցայտուն կերպով է արտացոլում հաղորդվող բառիմաստը, քան բրիտանական *The Guardian* պարբերականից առանձնացված առաջին օրինակը:

26. pet-nup

Օրինակ 1. *First the pre-nup, now the **PET-nup**: Couples urged to protect their furry friends (headline) FIRST there was the pre-nup, now there's the **pet-nup**. [...] The Blue Cross has produced a legal document for couples declaring what will happen to their pet should they split-up* (The Sunday Express 25 Sep 2014).

Օրինակ 2. *Instead of a prenuptial agreement, or 'pre-nup', the animal charity Blue Cross has devised a so-called '**pet-nup**' which clearly states who will get ownership of a pet should a couple split up* (bbc.co.uk 26 Sept 2014).

Pet-nup բառախառնուրդը կազմվել է *pet (welfare)* և *prenup/prenuptial agreement* բառերի համակցումով: Առանձնացված օրինակներից ակնհայտ է, որ նշված նորակազմության հեղինակը կենդանիների՝ *Blue Cross* բարեգործական ընկերությանն է: *Pet-nup* բառախառնուրդը նշանակում է՝ «նախահարսանեկան պայմանագիր՝ ամուսնային ծնություն պարագայում ընտանի կենդանու խնամատարությանը ստանձնելու վերաբերյալ»: *Pet-nup* բառախառնուրդը կազմվել է *pre-nup* բառի համաբանությունով:

27. plyscrapper

Օրինակ 1. *The development of engineered timber could herald a new era of eco-friendly '**plyscrapers**'. Christchurch welcomed its first multistory timber structure this year, there are plans for Vancouver, and the talk is China could follow* (The Guardian 03 Oct 2014).

Օրինակ 2. *In March, when Austrian architects announced they were going to build an 84-metre skyscraper out of wood, there mutterings about whether this was the right material for the job [...] The new generation of wooden skyscrapers are also designed on this premise, which is that the economies of scale of the production of plywood [...] make wooden structural design attractive. Whether or not **plyscrapers**, WikiHouses or digitally customized furniture come to a city near you, one thing is clear: plywood is the very epitome of a modern material* (The Guardian 10 June 2015).

Plyscrapper բառախառնուրդը կազմվել է *plywood* և *skyscraper* բառերի համակցումով և նշանակում է՝ «փայտից պատրաստված երկնաքեր»:

Առաջին օրինակում բառախառնուրդը գուցորդվել է *eco-friendly* ածականի հետ, որը, մասամբ, բնութագրում է *plyscraper* բառային միավորը: Իսկ երկրորդ օրինակում հոդվածագիրը մանրամասն նկարագրում է նշված ճարտարապետական գլուխգործոցը:

Յարկ է փաստել, որ **earthcraper** և **plyscraper** բառախառնուրդները նոր իրականություններ են անվանում, երկնաքերերի նորագույն տարատեսակներ են, առաջինը՝ ստորգետնյա, իսկ երկրորդը՝ փայտե: Նկատենք, որ *plyscraper* բառախառնուրդն ի հայտ է եկել *earthscraper* բառախառնուրդի համաբանությամբ:

28. powsurfing

Օրինակ՝ *Snowboarders get back to their roots with **powsurfing*** (headline) [...] “*In powder surfing*”, Jensen says, “*you’ve got to be focused and your balance has to be just right, and there’s that extra sensation that comes from actually riding with the mountain instead of fighting it*” (The Globe and Mail 20 Dec 2012).

Powsurfing բառախառնուրդը կազմվել է *powder (snow)* և *surfing* բառերի համակցումով և նշանակում է՝ «*փափուկ ձյան վրա ձնատախտակն առանց ամրակապերի վարելը*»:

29. predditor

Օրինակ՝ **Predditors** – *play on ‘Redditors’, a nickname for users of the site – post personal information about creepshots submitters, including photos, Facebook pages, marital status, location and occupation, and any other identifying details found by sleuthing on the Internet* (The Huffington Post 11 Oct 2012).

Predditor բառախառնուրդը կազմվել է *post* և *Redditor* բառերի համակցումով և նշանակում է՝ «*‘Reddit’ կայք էջում կանանց նկարներ հրապարակողների ինքնուրույն ընթացահայտող անձ*»:

30. pulchronomics

Օրինակ՝ *Hamermesh is the acknowledged father of **pulchronomics**, or the economic study of beauty* (Smithsonian Nov 2012).

Pulchronomics բառախառնուրդը կազմվել է *pulchritude* և *economics* բառերի համակցումով և նշանակում է՝ «*\$իզիկական գրավչություն ու սուլ մնասիրություն*»: Նկատենք, որ այս բառն ունի համատեքստային գործառույթ, քանի որ հաղորդվող բառիմաստը բացատրվում է առանձնացված միկրոհամատեքստում:

31. raptivist

Օրինակ՝ *Return of the great rap rebel* (headline) [...] *These days, people tend to come up to Chuck D after a lecture rather than gig. He calls himself a ‘raptivist’ and spreads his message, which remains remarkably unchanged, through constant lecture tours of American campuses and on the global noticeboard that is the Public Enemy website* (The Guardian/The Observer 18 May 2008).

Raptivist բառախառնուրդը կազմվել է *rap* (music) և *activist* բառերի համակցումով: Վերոնշյալ երկու օրինակներում *raptivist* բառախառնուրդը նշանակում է՝ «*ռեփ արվեստագետ, որն օգտագործում է ռեփի բառերը քաղաքական նպատակներով*»:

Նկատելի է, որ *raptivist* բառը կազմվել է *craftivist* բառի համաբանությամբ: Առաջինը վերաբերում է ռեփ երաժշտության քաղաքականացմանը, իսկ երկրորդը՝ արհեստների: Ստացվում է, որ արհեստն ու արվեստը քաղաքականության հետ միևնույն հարթույթում են դիտարկվում:

32. teletreat

Օրինակ՝ *At Kaiser Permanente, dermatologists “sit in a suite in San Francisco” and teletreat patients throughout Northern California, Dr. Yellowlee said* (The New York Times 09 Oct 2012).

Teletreat բառախառնուրդը կազմվել է *telecommunication* և *treatment* բառերի համակցումով և նշանակում է՝ «*տեսակապի միջոցով հիվանդին զննել և բուժում նշանակել՝ առանց հիվանդի հետ անմիջական, դեմադեմ հաղորդակցման*»: Այսպիսով, այն նկարագրում է բժշկագիտության ոլորտում նորարական երևույթ: Բերված օրինակում տվյալ նորակազմությունը կիրառվել է պարզ ներկա ժամանակում՝ ներկայացնելով մաշկաբանների ամենօրյա աշխատանքը և հիվանդների պարբերական հեռահար բուժումը:

33. TomTato

Օրինակ՝ *A plant that produces both tomatoes and potatoes, called the TomTato, has been developed for the UK market* (bbc.co.uk 26 Sept 2013).

TomTato բառախառնուրդը կազմվել է *tomato* և *potato* բառերի համակցումով և նշանակում է՝ «*և՛ կարտոֆիլ, և՛ լոլիկ տվող բույս*»: Առանձնացված միկրոհամատեքստից նկատելի է, որ այս բույսը/տնկին գիտնականների նորագույն գյուտերից է, որը

ստեղծվել է Միացյալ Թագավորության շուկան սպասարկելու համար:

Տվյալ բառախառնուրդում արձանագրում ենք *բաղաձայնույթ* նոսրացման հնարը, որը դրսևորվում է «t» բաղաձայնի կրկնության մեջ:

34. thutt

Օրինակ՝ *First there were cankles. Then there was back fat. Last week we were told about swoobs, mere moments after we'd come to terms with our big fat **thutts*** (The Daily Mail 30 Jan 2014).

Thutt բառախառնուրդը կազմվել է *thigh* և *butt* բառերի համակցումով և նշանակում է՝ «ազդրերի և նստատեղի միջև ընկած հատված»:

Selfie բառով կազմվել են հետևյալ նորաստեղծ բառախառնուրդները.

35. backie

36. belfie

37. couplie

38. gelfie

39. legsie/lelfie

40. yogi

Օրինակ 1. *The **Backie**: Australian wordofwonderlust.com travel blogger Brooke Saward shoots most of her images from behind* (The Stuff 19 April 2015).

Օրինակ 2. *Looking at these pictures one gets the sense that they were staged for our prurient benefit. Each photo has a sickly sweet injection of performative chivalry. Tom helps Lady Swift up on to the rocks. Oh, and here he is giving her his coat. Now they are posing for a selfie – which she should be called a “**couplie**”, since there are two of them* (The Guardian 16 June 2016).

Օրինակ 3. *[...] the Oxford English dictionary people announced that ‘selfie’ was to be the official word of the year. Little did they know that all the coolest, on trend people had already moved on to ‘**yogis**’ (yoga+selfie) and ‘**belfies**’ (bum+selfie)* (The Guardian 07 Dec 2013).

Օրինակ 4. *While us mere mortals wouldn’t dream of sharing a picture of ourself looking red-faced and sweaty pumping iron, it seems the **gelfie** is a popular picture choice among stars keen to flaunt their athletic abilities* (The Daily Mail 07 Nov 2013).

Օրինակ 5. *Oversharers beware, not everyone wants constant updates on your summer break. Try to hold back from the **selfies**, the **legsies** and all those smug hashtags* (The Guardian 31 July 2013).

Օրինակ 6. *First ‘selfie’. Then ‘belfie’. Please spare us the ‘lelfie’ (headline) [...] We’ve accepted selfie as word of the year. But a new name for pictures of people’s legs? Where will it end?* (The Guardian 12 Dec 2013).

Backie, belfie, couplie, gelfie, legsie/lelfie և *yogi* բառախառնուրդներն ինքնանկար/ինքնուկ անելու տեսակներ են: Այսպես, *backie* բառախառնուրդը կազմվել է *back* և *selfie* բառերի համակցումով և նշանակում է՝ «մեջքի ինքնանկար», *belfie* բառախառնուրդը կազմվել է *bum* և *selfie* բառերի համակցումով և նշանակում է՝ «հետույքի ինքնանկար», *couplie* բառախառնուրդը կազմվել է *couple* և *selfie* բառերի համակցումով և նշանակում է՝ «ինքնանկար՝ երկուսով» *gelfie բառախառնուրդը* կազմվել է *gym* և *selfie* բառերի համակցումով և նշանակում է՝ «ինքնանկար մարզադահլիճում», *legsie/lelfie* բառախառնուրդը կազմվել է *leg* և *selfie* բառերի համակցումով և նշանակում է՝ «նոտքերի ինքնանկար», իսկ *yogi* բառախառնուրդը կազմվել է *yoga* և *selfie* բառերի համակցումով և նշանակում է՝ «ինքնանկար՝ յոգա անելուց»: Բառաշարքի *yogi* (*yoga+selfie*) բառախառնուրդը համանունություն դրսևորում է, քանի որ նշված նորակազմությունն ձևով և արտասանությամբ համընկնում է/ուղեկանակն է *yogi* վերջածանցավոր բառի հետ: Վերջինիս բառարանային նշանակությունն է “an expert in, or teacher of the philosophy of yoga” (OALD 2006:1775). Մինչդեռ, *yogi* բառախառնուրդն առանձնացված համատեքստում իրացնում է “a photograph of themselves taken by someone doing yoga” բառիմաստային տարբերակը:

Ակներև է, որ **selfie** բառ-միավորը գործածման բարձր հաճախականություն ունի անգլերենում, և դրա համաբանությամբ անգլերենում օրըստօրե երևան են գալիս նորանոր բառեր:


Ուսումնասիրված դիպվածային բառախառնուրդները կազմում են տարբեր բառիմաստային և/կամ թեմատիկ խմբեր.

1. **Բժշկություն, առողջություն և մարզաձևեր (Medicine, Health, and Sports)** – *teletreat, powsurfing*:

2. **Գիտություն, տեխնոլոգիա և համակարգչի գործածություն** (Science, Technology, and Computing) – *alcolock, cloudzilla, ecorithm, earthscraper/earth-scraper, FidoCam, plyscraper, pulchronomics, TomTato, friendvertising, predditor*.
3. **Գործարարություն, օրենք և քաղաքականություն** (Business, Law, Politics, and Government) – *bankster, dadpreneur, pet-nup, Amexica, Brexit, Grexit*.
4. **Մարդիկ և հասարակություն** (People and Society) – *babymoon, backie, belfie, couplie, gelfie, boatel, CeleBaby/celebaby, celebutante, kninkle, legsie/lelfie, mob, momshell, thutt, yogi*:
5. **Սնունդ, խոհանոցային սարքեր/պարագաներ և հագուստ** (Food, Kitchen Appliances, and Clothing) – *haloodie, kitchenalgia, anklington, floordrobe*:
6. **Լեզու, արվեստ և երաժշտություն** (Language, Arts, and Music) – *Kiwinglish, craftivism, filk, raptivist*.

Ինչ վերաբերում է վերը քննարկված դիպվածային բառախառնուրդների խոսքիմասային պատկանելությանը՝ ապահովանք մեծ մասը գոյականական կազմություններ են: Ասվածն առավել պատկերավոր ներկայացնենք Գծապատկեր 7-ում:

Գծապատկեր 7. Դիպվածային բառախառնուրդների խոսքիմասային պատկանելությունը



Ինչպես երևում է Գծապատկեր 7-ում՝ քննության առնված բառախառնուրդներում (40) քանակական առումով գերակշռում են գոյականները (39):

Ուսու մնասիրված բառարանային և կորպուսային շտեմարանների լեզվանյութի քննությունը թույլ է տալիս արձանագրել, որ սույն աշխատանքում առանձնացված դիպվածային բառախառնուրդները որոշ դեպքերում ձեռք են բերում գործածման բարձր հաճախականություն՝ առցանց հրապարակումների շնորհիվ, որոշ դեպքերում էլ գրանցվում են անգլերեն միալեզու բացատրական բառարաններում:

Այսպես, *babymoon*, *bankster* և *boatel* բառախառնուրդները զետեղվել են *Oxford Dictionaries Online* բառարանում:

Brexit բառախառնուրդը զետեղվել է *Oxford Dictionaries Online* և *Cambridge Dictionaries Online* բառարաններում:

Celebutante բառախառնուրդը զետեղվել է *Oxford Dictionaries Online* և *Merriam-Webster Dictionary Online* բառարաններում:

Filk բառախառնուրդը զետեղվել է *Oxford Dictionaries Online* բառարանում:

Floordrobe բառախառնուրդը զետեղվել է *Cambridge Dictionaries Online* բառարանում:

Grexit բառախառնուրդը զետեղվել է *Oxford Dictionaries Online* և *Cambridge Dictionaries Online* բառարաններում:

Mob բառախառնուրդը և անգլերեն բառարաններում ընդգրկված *mob* բառը համանուններ են:

Yogi բառախառնուրդը և անգլերեն բառարաններում ընդգրկված *yogi* բառը համանուններ են:


Alcolock, *Amexica*, *anklington*, *backie*, *belfie*, *CeleBaby/celebaby*, *cloudzilla*, *couplie*, *craftivism*, *dadpreneur*, *earthscraper/earth-scraper*, *ecorithm*, *FidoCam*, *friendvertising*, *gelfie*, *haloodie*, *kitchenalgia*, *Kiwinglish*, *kninkle*, *legsie/lelfie*, *momshell*, *pet-nup*, *plyscraper*, *powsurfing*, *predditor*, *pulchronomics*, *raptivist*, *teletreat*, *TomTato* և *thutt* բառերը դեռևս չեն զետեղվել ուսումնասիրված անգլերեն միալեզու բացատրական բառարաններում²⁷:

Կորպուսային ուսումնասիրության մեթոդով վեր ենք հանել դիպվածային բառախառնուրդների հաճախական

²⁷<http://www.oxforddictionaries.com> 30.07.2016-ի դրությամբ, <http://dictionary.cambridge.org> 30.07.2016-ի դրությամբ, <http://www.idoceanline.com> 30.07.2016-ի դրությամբ, <http://www.merriam-webster.com> 30.07.2016-ի դրությամբ.

վիճակագրական տվյալները՝ ըստ ժամանակակից անգլերենի COCA և GloWbE կորպուսների:

Գծապատկեր 8. Դիպլոմային բառախառնուրդների հաճախականությունը COCA և GloWbE կորպուսներում



Ինչպես երևում է Գծապատկեր 8-ում՝ նշված կորպուսներում ամենամեծ հաճախականություն ունի ***babymoon*** (COCA - 9, GloWbE - 9) բառախառնուրդը: ***Celebutante*** բառախառնուրդը ներկայացված է ավելի սահմանափակ՝ ընդամենը 7 համատեքստում (COCA - 7, GloWbE - 7): *հսկ* ***boatel***, ***filk***, ***raptivist*** և ***earthscraper*** բառախառնուրդները ներկայացված են ընդամենը 1 համատեքստում (COCA - 1, GloWbE - 1)²⁸:

Հարկ է փաստել, որ ***mob*** (COCA - 4751, GloWbE - 4751) և ***yogi*** (COCA - 644, GloWbE - 644) բառային միավորները բարձր հաճախականություն ունեն վերը նշված երկու կորպուսներում: Բայց և այնպես, ներկայացված համատեքստերում բառախառնուրդ չեն և չեն իրացնում սույն աշխատանքում առանձնացրած բառիմաստային տարբերակները:

Վերը նշված կորպուսներում բացակայում են ***alcolock***, ***Amexica***, ***anklington***, ***backie***, ***bankster***, ***belfie***, ***Brexit***, ***CeleBaby/celebaby***, ***cloudzilla***, ***couplie***, ***craftivism***, ***dadpreneur***, ***ecorithm***, ***FidoCam***, ***floordrobe***, ***friendvertising***, ***gelfie***, ***Grexit***, ***haloodie***, ***kitchenalgia***, ***Kiwinglish***, ***kninkle***, ***legsie/lelfie***, ***momshell***, ***pet-nup***, ***plyscraper***, ***powsurfing***, ***predditor***, ***pulchronomics***, ***teletreat***, ***TomTato*** և ***thutt*** բառախառնուրդները:

²⁸ Davies, Mark. (2008-) *The Corpus of Contemporary American English (COCA): 520 million words, 1990-present*. Available online at: <http://corpus.byu.edu/coca/> 30.07.2016-ի դրո՞ւթյամբ.

Davies, Mark. (2013) *Corpus of Global Web-Based English: 1.9 billion words from speakers in 20 countries (GloWbE)*. Available online at: <http://corpus.byu.edu/glowbe/> 30.07.2016-ի դրո՞ւթյամբ.

Ամփոփելով ով ու սու մնասիրության արդյունքները՝ փաստենք, որ դիպվածային բառախառնություններում գերակշռում են «Մարդիկ և հասարակություն (People and Society)» և «Գիտություն, տեխնոլոգիա և համակարգչի գործածություն (Science, Technology, and Computing)» բառիմաստային և/կամ թեմատիկ խմբերին պատկանող բառերը: Ուսումնասիրված բառախառնությունների մեծամասնությունն աչքի է ընկնում իմաստային և կառուցվածքային հստակությամբ: Քննության առնված (40) դիպվածային բառախառնություններից 8-ը վերածվել են *նորաբանությունների (babymoon, bankster, boatel, Brexit, celebutante, filk, floordrobe, Grexit)*, իսկ գերակշիռ մասի դիպվածային կարգավիճակը թեական է (*uncertain between nonce and neologism or neither nonce nor neologism*):

3.3 Դիպվածային հապավումները և դրանց զարգացումը

1. **Bric/Brics** = Brazil, Russia, India and China (and/or South Africa)

Օրինակ՝ *There was a time when countries all over the world aspired to be one of the **Brics**. The acronym comprised Brazil, Russia, India, China (later adding South Africa). These countries seemed to embody the economic dynamism promise of the world's emerging markets* (The Financial Times 21 Sept 2015).

2. **CFBC** = child-free by choice

Օրինակ՝ *It is one of the reasons I am **CFBC** because I know I could never raise a child my own way* (The Guardian 30 Aug 2013).

3. **EDC₁** = explosive detection canine (a dog trained to sniff out explosives)

Օրինակ 1. *This is where MSA security trains what are known in the security trade as **explosive detection canines**, or **EDCs*** (Smithsonian Aug 2013).

EDC₂ = electric daisy carnival

Օրինակ 2. *Earlier this summer **Electric Daisy Carnival (EDC)**, the most famous of the new wave of whatever-you-don't-call-them-raves, drew 320,000 people to Las Vegas Motor Speedway over the course of three days* (The Guardian 02 Aug 2012).

EDC₃ = Ebbsfleet Development Corporation

Օրինակ 3. *Neither the government's **Ebbsfleet Development Corporation (EDC)** nor locals are completely happy with the standard brick homes that have been built*

on sites sold by the major landowner Land Securities to firms such as Barratt Homes (The Guardian 04 Jan 2016).

EDC₄ = *Export Development Canada*

Օրիկւակ 4. **Export Development Canada (EDC)** announced the huge loan of working capital to the Spanish-owned company, which it said would “facilitate BlackBerry market share growth within Telefónica” (The Guardian 07 April 2013).

4. **Endies** = *employed with no disposable income or savings*

Օրիկւակ` *If for London the 1980s was the decade of yuppies, now the capital finds itself home to the “endies” – **Employed but with No Disposable Income or Savings*** (The Guardian 13 Sept 2014).

5. **FWB** = *friends with benefits* (վեղմասնւթ)

Օրիկւակ` **Friends-with-benefits relationships (FWBs)** are quite popular among U.S. college students – about 60% report at least one **FWB** at some point in their life (Psychology Today 10 Feb 2014).

6. **GPU** = *graphics processing unit (i.e. a processor used primarily for 3D functions)*

Օրիկւակ` *The high failure rate of the original version of Microsoft’s Xbox 360 games console is principally due to the **graphics processor unit (GPU)** getting too hot and warping the motherboard [...] (The Guardian 31 Jan 2008).*

7. **HDR** = *high dynamic range*

Օրիկւակ` *Using just the one frame he used software which produced several versions of the image with varying tonal ranges, some with more contrast, some with less, which when combined made a picture that overall had a much higher tonal range than the unprocessed “raw” image [...] This is known as a **high dynamic range** or **HDR** photograph (The Guardian 14 May 2013).*

8. **iWAG** = *wife or girlfriend of a successful I-net entrepreneur*

Օրիկւակ` *One of the newest recruits to the dubiously named **iWAG**, crew is Kaitlyn Trigger, girlfriend of Instagram co-founder Mike Krieger (Grazia 14 May 2012).*

9. **IoT** = *internet of things*

Օրիկւակ` **IoT** and Cassandra: Topic Wildcards in Retained Storage (headline) (The New York Times 04 Nov 2015).

10. **JAAC** = *just another Android cellphone*

Օրիկւակ` *HTC RHYME (\$200 with two-year Verizon contract). At first glance, the Rhyme looks like **JAAC (just another Android cellphone)** (The New York Times 28 Dec 2011).*

11. **Mamil** = *middle-aged man in Lycra*

Օրիկուակ՝ *Every weekend, across the nation's rolling countryside, watch out for the **Mamils: middle-aged men in Lycra*** (The New York Times 24 Aug 2010).

12. **MPL**₁ = *modular prosthetic limb*

Օրիկուակ 1. **Modular prosthetic limb** reaches new levels of operability (headline) [...] *In addition to the **MPL**, he has also test-driven some of the most advanced, state-of-the-art prosthetic arms in the world* (Scientific Daily 12 Jan 2016).

MPL₂ = *Mars polar lander*

Օրիկուակ 2. *The university of Manchester's Jodrell bank observatory in Cheshire has joined in an attempt to contact Nasa's missing **Mars polar lander (MPL)** spacecraft* (The Guardian 17 Feb 2000).

13. **Mint** = *Mexico, Indonesia, Nigeria and Turkey*

Օրիկուակ՝ *So there was plenty of investor interest when, in 2014, Jim O'Neill – the former chief economist at Goldman Sachs and the man who had coined the term Brics – began to champion the economic prospects of another group of countries: the **Mint** economies. For this select group of four – Mexico, Indonesia, Nigeria and Turkey* (The Financial Times 21 Sept 2015).

14. **Nisa** = *new individual savings account*

Օրիկուակ՝ *Isas now three times **Nisa** [...] especially for the rich* (headline) (The Guardian 22 March 2014).

15. **SSB** = *sugar-sweetened beverage*

Օրիկուակ՝ *“Most importantly, the public health significance of **SSB** consumption at age at menarche, and possible breast cancer, should not be overlooked, since unlike most other predictors of menarche, **SSB** consumption can be modified* (The Guardian 28 Jan 2015).

16. **SBNR** = *spiritual but not religious*

Օրիկուակ՝ **SBNR**. *The topic is a hot one in Christian circles today. “**Spiritual but not religious**”* (The Huffington Post 16 Nov 2015).

17. **Twag** = *tennis wives and/or girlfriend (i.e. the wives and girlfriends of prominent male tennis players)*

Օրիկուակ՝ *Either way, the future looks secure for Tim and original **Twag (tennis wife and/or girlfriend)** Lucy* (The Guardian 21 Aug 2007).

18. **Ugi** = *u (you) got it (fitness ball) (u բաղադրիչը առցանց հաղորդակցում մից երևան եկած you բառի համարժեքն է)*

Օրինակ՝ **Ugi** is a short duration, high intensity class straight from Canada that will be debuting exclusively in the UK at Virgin Active (The Independent 07 Jan 2013).

19. **ULEV** = an ultra-low emission vehicle

Օրինակ՝ There has been a ‘remarkable surge’ in demand for **ultra-low emission vehicles (ULEV)** in the UK, with sales of plug-in hybrid cars increasing four-fold in 2014 (The Guardian 08 Jan 2015).

20. **BOAT** = biggest of all time

Օրինակ՝ He painted the trading desk as a blokey, aggressive but collegiate place to work, where a “big personality” was required and the term **BOAT – Biggest Of All Time** – was coined to describe the team (The Sydney Morning Herald 02 Aug 2005).

Ուսումնասիրված բառարանային լեզվանյութի քննությունը թույլ է տալիս արձանագրել, որ սույն աշխատանքում առանձնացված հապավումները որոշ դեպքերում գրանցվում են անգլերեն միալեզու բացատրական բառարաններում:

Այսպես, **BRIC** հապավումն ընդգրկվել է *Oxford Dictionaries Online* և *Cambridge Dictionaries Online* բառարաններում:

EDC հապավումն ընդգրկվել է *Cambridge Dictionaries Online* բառարանում և ունի հետևյալ սահմանումը՝ *electronic data capture* (www.dicrionary.cambridge.org 31.05.2016-ի դրությամբ): Չարկ է փաստել, որ արձանագրում ենք կատարյալ համանունությունն՝ սույն աշխատանքում առանձնացված **EDC** հապավումի և *Cambridge Dictionaries Online* բառարանում ամրագրված **EDC** հապավումի միջև:

FWB հապավումն ընդգրկվել է *Oxford Dictionaries Online* բառարանում և ունի հետևյալ սահմանումը՝ *four-wheel brake* (www.oxforddictionaries.com 31.05.2016-ի դրությամբ): Այսպիսով, արձանագրում ենք կատարյալ համանունությունն՝ սույն աշխատանքում առանձնացված **FWB** հապավումի և *Oxford Dictionaries Online* բառարանում ամրագրված **FWB** հապավումի միջև:

GPU հապավումն ընդգրկվել է *Oxford Dictionaries Online* բառարանում և ունի հետևյալ սահմանումը՝ *abbreviation of Russian Gosudarstvennoe politicheskoe upravlenie ‘State Political Difectorate’* (www.oxforddictionaries.com 31.05.2016-ի դրությամբ): Այսպիսով, արձանագրում ենք կատարյալ համանունությունն՝ սույն աշխատանքում առանձնացված **GPU**

հապավումի և *Oxford Dictionaries Online* բառարանում ամրագրված *GPU* հապավումի միջև:

IoT և **Mamil** հապավումներն ընդգրկվել են *Oxford Dictionaries Online* բառարանում:

Արձանագրում ենք համանունություն **Mint** հապավումի և անգլերենում առկա *mint* բառի միջև. անգլերեն բառարաններում գետեղված *mint* գոյականն ունի հետևյալ սահմանումները՝ 1. *an aromatic plant native to temperate regions of the Old World, several kinds of which are used as culinary herbs; 1.1 the flavor of mint, especially peppermint; 2. a peppermint sweet* (www.oxforddictionaries.com 30.05.2016-ի դրությամբ): Իսկ մեր առանձնացրած օրինակում՝ *Mint* հապավումը իրացնում է *the countries of Mexico, Indonesia, Nigeria and Turkey considered together* բառիմաստային տարբերակը:

SSB հապավումն ընդգրկվել է *Oxford Dictionaries Online* բառարանում և ունի հետևյալ սահմանումը՝ *single sideband transmission, a type of amplitude modulation in which the carrier wave and one sideband are suppressed in order to occupy less bandwidth* (www.oxforddictionaries.com 31.05.2016-ի դրությամբ): Իսկ, մեր առանձնացրած օրինակում նշված հապավումը հանդես է գալիս միանգամայն այլ նշանակությամբ՝ *sugar-sweetened beverage*: Այսպիսով, արձանագրում ենք կատարյալ համանունություն՝ սույն աշխատանքում առանձնացված **SSB** հապավումի և *Oxford Dictionaries Online* բառարանում ամրագրված **SSB** հապավումի միջև:

Արձանագրում ենք համանունություն նաև **BOAT** հապավումի և անգլերենում առկա *boat* բառի միջև:

Աշխատանքում առանձնացված **CFBC, Endies, HDR, Iwag, JAAC, MPL, Nisa, SBNR, Twag, Ugi** և **ULEV** հապավումները չեն գետեղվել ուսումնասիրված անգլերեն միալեզու բացատրական բառարաններում²⁹:

Ուսումնասիրելով Լրագրանյութերից քաղված հապավումները՝ կարող ենք հանգել հետևյալ եզրակացություններին.

²⁹<http://www.oxforddictionaries.com> 30.07.2016-ի դրությամբ, <http://dictionary.cambridge.org> 30.07.2016-ի դրությամբ, <http://www.ldoceonline.com> 30.07.2016-ի դրությամբ, <http://www.merriam-webster.com> 30.07.2016-ի դրությամբ.

1. Առանձնացված (20) հապավումներից 3-ը ամրագրվել են անգլերեն միալեզու *Oxford Dictionaries Online* և *Cambridge Dictionaries Online* բառարաններում, իսկ գերակշիռ մասի (17) դիպվածային կարգավիճակը թեական է: Բանն այն է, որ դրանք դեռևս վկայված չեն անգլերեն բառարաններում, բայց կիրառվել են առցանց տարբեր հրատարակումներում:
2. Առանձնացված 20 հապավումներից 6-ը համընկնում են անգլերեն բառարաններում առկա համանուն և եզվամիավորների հետ և՛ գրութայամբ, և՛ արտասանութայամբ, բայց տարբեր բառիմաստային տարբերակներ են իրացնում առանձնացված համատեքստերում:
3. Անգլալեզու լրագրանյութերում օրըստօրե կազմվում են նորանոր հապավումներ՝ նոր իրակություններ անվանելու համար, ընդ որում՝ միևնույն հապավումը կարող է վերաստեղծվել միանգամայն նոր բառիմաստային տարբերակներով³⁰:

³⁰Նոր իրակություններ անվանելու համար միևնույն հապավումի՝ միանգամայն նոր բառիմաստային տարբերակով վերաստեղծվելու հավանականությունն է պատճառը, որ կորպուսային վերլուծության մեթոդով չենք վերհանել առանձնացված հապավումների գործածման հաճախականությունը:

ԵԶՐԱԿԱՏՈՒ ԹՅՈՒՆ

Ամփոփելով սույն աստենախոսության արդյունքները՝ անգլալեզու տպագիր և առցանց էլրագրանյութերում գործածված նոր բառերի իմաստակաուցվածքային յուրահատկությունների վերաբերյալ, կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

1. Դիպվածային բառերի միջոցով առավել հստակ է ձևակերպվում էլրագրողի գնահատողականությունը, որը միտված է ընթերցողին հետաքրքրելու և ուշադրությունը խնդրի վրա սևեռելուն: Դիպվածային բառերը հաղորդվող նյութը դարձնում են առավել պատկերավոր, արտահայտիչ և հուզական, որն էլ դրանց ոճական արժեքն ապահովող գործոնն է: Լրագրանյութերում դիպվածային բառերի երևան գալը պայմանավորված է նաև խոսքաչարի երկարաշունչ բառակապակցությունները հակիրճ՝ մեկ բառով, ներկայացնելու միտմամբ: Յետևապես, բառային բազմանդամ կապակցությունների փոխարեն ստեղծվում են նոր բառային միավորներ: Արդյունքում, դիպվածային բառերի մեծամասնությունը նկարագրորեն մեկնաբանվող կազմություններ են, և դյուրին չէ մեկ բառով թարգմանել կամ սահմանել դրանք:
2. Լրագրանյութերում գործածված դիպվածային բառերը իրացնում են *անվանողական-ճանաչողական, համատեքստային-մետալեզվական, էզվական միջոցների տնտեսման, գնահատողական և գործաբանական գործառնյութերը* և առավելապես հանդես են գալիս «*Մարդիկ և հասարակություն*» (58), «*Գիտություն, տեխնոլոգիա և համակարգչի գործածություն*» (66) թեմատիկ և/կամ բառիմաստային խմբերում:
3. Լրագրային խոսքաչարում նոր բառերը, որոնք ստեղծագործ մտքի արգասիք են, մերթնդմերթ գործածվում են անգլերենի օրինաչափությունների խախտումով: Բառակազմական արդյունավետությունը և բառաստեղծումը խաթարող հիմնական հինգ գործոնները՝ հնչունյութաբանական, ձևաբանական,

ի մաս տաբանական, գեղագիտական, գործաբանական, երբեմն անտեսվում են լրագրող-հեղինակների կողմից, և անգլալեզու պարբերականներում ի հայտ է գալիս անգլերենի լեզվական կանոնների սահմանափակումներով կազմված բառային միավորների գործածություն (14 բառային միավոր):

4. Քննություն առնված նախածանցավոր բառերի կազմումը մեծամասամբ իրականացվում է բաղադրյալ հիմքով կաղապարներով (նախածանց+ածանցավոր բառ, նախածանց+բարդ ածանցավոր բառ), իսկ վերջածանցավոր նոր բառերինը՝ պարզ հիմքով կաղապարով (արմատ+վերջածանց): Ընդ որում, վերջածանցավոր բառերում մեծաթիվ են *-ing* վերջածանցով բաղադրված բայանուն գոյականները (8): Բառաբարդման եղանակով կազմված բառային միավորներում առավել գործուն են «գոյական+գոյական» և «ածական+գոյական» բառակազմական կաղապարները:

5. Դիպլածային բարդ բառային միավորների շրջանում երկբաղադրիչ հարադրությունները (84) գերազանցում են երկբաղադրիչ համադրական կազմություններին (9), գծիկով գրություն ունեցող բարդ բառերին (3), եռբաղադրիչ, քառաբաղադրիչ և հնգաբաղադրիչ կազմություններին (15): Ընդ որում, բառաբարդման եղանակով կազմված բառային միավորներում քանակապես գերակշռում են բաղադրիչների ստորադասական հարաբերությամբ կապված հարադրությունները: Առկա են այնպիսի բարդ բառեր, որոնց բաղադրիչներից մեկը բարդություն մեջ հանդես է գալիս նոր նշանակությամբ կամ հարանշանակությամբ: Քննության առնված բարդ բառային միավորներում առկա են այնպիսի լեզվամիավորներ, որոնցում դրսևորվում է *բաղածայնություն* ոճական հնարը, որն էլ նորաստեղծ բառը դարձնում է առավել բարեհունչ (15 բառային միավոր):

6. Լրագրանյութերում երևան եկած դիպլածային հապավումները լեզվական միջոցների տնտեսման հետևանքով առաջ եկած լեզվական միավորներ են՝ հաղորդվող բառի մաստն առավել հակիրճ ներկայացնելու նպատակով: Ուսումնասիրված

հապավումների շրջանում (20) արձանագրում ենք համանունություները՝ սույն աշխատանքում առանձնացված հապավումների և անգլերեն բառարաններում վկայված համանուն լեզվամիավորների միջև (6 հապավում):

7. Ուսումնասիրված դիպվածային բառային միավորների (232) գերակշիռ մասը գոյականական կազմություններ են (204), սակավաթիվ են ածականները (18), բայերը (6) և մակբայները (4): Քննության առնված բառային միավորներից 13-ը կազմվել են լեզվական համաբանությամբ՝ լեզվում արդեն առկա բառերի նմանությամբ, իսկ բառախառնություններում առկա է նաև *selfie* բառի լայնորեն ճյուղավորված բառակազմությունները:
8. Առանձնացված դիպվածային բառերի գերակշիռ մասի դիպվածային կարգավիճակը թեական է (176), քանի որ դրանք քանիցս գործածվել են լրագրանյութերում և առցանց հրատարակումներում, բայց դեռևս չեն ընդգրկվել ուսումնասիրված անգլերեն բառարաններում: Իսկ քննության առնված դիպվածային բառերից 134-ը (չհաշված հապավումները) բացակայում են COCA և GloWbE կորպուսներում:

Այսպիսով, կարելի է փաստել, որ անգլերենի բառային կազմը լրագրանյութերում նորացվում է՝ նոր հասկացություններ, առարկաներ և գիտական նորագույն նվաճումներ անվանելու համար, իսկ դիպվածային բառերը մեծամասամբ չեն մնում դիպվածային կարգավիճակում, այլ վերածվում են նորաբանությունների: Կարծում ենք, որ լրագրանյութերում գործածված դիպվածային բառերի գերակշիռ մասը լրագրողի անհատական հեղինակային նորաբանություններ չի կարելի համարել երկու պատճառով՝ առաջին՝ մեկ լրագրանյութին անմիջապես հետևում է միևնույն բովանդակությամբ մեկ այլ լրագրանյութ, առցանց մեկ այլ հրատարակում, հետևապես դժվար է հատկորոշել դրանց գործածության սկզբնաղբյուրը, երկրորդ՝ գիտական նորարարությունների շարադրանքներում լրագրող-հեղինակները գործածում են լեզվական հանրության երբեմն անհայտ, բայց գիտնականների հեղինակած նոր՝ դիպվածային

բառեր: Տվյալ պարագայում՝ անհատական հեղինակային նորաբանությունը պատկանում է գիտական նոր իրականությունն անվանած գիտնականին, իսկ լրագրող-հեղինակը առաջինն է հրապարակում գիտական նոր իրականությունը: Առավել ճշգրիտ կլիներ լրագրանյութերում գործածված դիպվածային բառերը որակել որպես ներգործ բառեր:

Ուսումնասիրված լեզվանյութը թույլ է տալիս հանգել ու այն եզրակացության, որ յուրաքանչյուր նորաբանության ստեղծման հիմքում դիպվածային բառ է, իսկ դիպվածային բառերի՝ նորաբանությունների վերածման շրջապտույտը անսահման է: Մերօրյա իրականության մեջ քիչ հավանական ենք համարում լրագրանյութերում գործածված նորաստեղծ բառերի դիպվածային մնալ ու՝ միմիայն մեկ անգամ գործածվել ու հավանականությունը:

Եզրափակելով նշենք, որ մեկ ատենախոսության շրջանակներում հնարավոր չէ անդրադառնալ լրագրանյութերում գործածված բոլոր դիպվածաբանություններին, հետևապես ստացված արդյունքներն ու մշակված լեզվանյութը հիմք կարող են հանդիսանալ հետագա ուսումնասիրությունների համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբրահամյան Ա., Նշանակյալի և նշանակիչի կրկնակի ներդաշնակումը լեզվում // Նշան, համակարգ, հաղորդակցում. Յոդվածների ժողովածու՝ նվիրված Էդվարդ Աթայանի հիշատակին, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2011.-484 էջ:
2. Ալեքսեյան Լ., Տիրան Չրաքեանի բառաստեղծական արուեստը (հակարդութիւն և պարադոքս) // «Էջմիածին» կրոնագիտական և հայագիտական հանդես, Դեկտեմբեր, 2015, Էջմիածին, էջ 90-101:
3. Աղայան Է. Բ., Լեզվաբանության ներածություն: Ուսումնական ձեռնարկ, Երևան, ՄԱՆՄԱՐ, 2010.-256 էջ:
4. Բաղդասարյան Ն., Դիպլոմային բառերը Յոդվածներում // Յայագիտություն և գուգարական լեզվաբանություն, Պրակտիկ, «Լինգվա», Երևան, 2006, էջ 101-107:
5. Բարլեզիզյան Ա.Կ., Յայ-Ֆրանսիական լեզվական առնչությունները XIX դարում, Երևան, Փյունիկ, 1997.-212 էջ:
6. Եզեկյան Լ.Կ., Յայոց լեզվի ոճագիտություն, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2003.-376 էջ:
7. Էլոյան Ս., Ժամանակակից հայերենի բառային ոճագիտություն, Յայկական գիտությունների ակադեմիա, Երևան, 1989.-258 էջ:
8. Իլդաթյան Ֆ. Յ., Ժամանակակից հայոց լեզու: Ուսումնական ձեռնարկ մանկավարժական և լեզվաբանական բուհերի ուսանողների համար, Չանգակ-97, 2009.-294 էջ:
9. Յեքեքյան Ն., Յայերենի օրինաչափությունների խախտումով կազմված տեխնիկական տերմինների մասին // Յայագիտության և գուգարական լեզվաբանության հարցեր, ԲՊրակտիկ: Նվիրվում է Ֆրանսիացի ականավոր լեզվաբան, հայագետ, հայ ժողովրդի մեծ բարեկամ Անտուան Մեյեի ծննդյան 135 ամյակին, Լինգվա, Երևան, 2002, էջ 59-67:
10. Յովակիմյան Ն., «Նորաբանություն» հասկացության ըմբռնումը ժամանակակից լեզվաբանության մեջ // Կանթեղ. Գիտական հոդվածների ժողովածու, N° 1, ՅՅ Գիտությունների Ազգային Ակադեմիա Յուլմանիտար գիտությունների

- բաժանմունք, «Ասողիկ» հրատարակչություն, Երևան, 2002, էջ 143-146:
11. Յուրի Կոնյալով Մ., Նորաբանությունները Վահան Տերյանի խոսքարվեստում // «Բանբեր Երևանի համալսարանի», «Բանասիրություն», 133.2, Երևան, 2011, էջ 55-65:
 12. Ղազարյան Ս., Նորակազմությունները Առաքել Սյունեցու «Աղագրքում» // ԵՊՀ գիտական հոդվածների ժողովածու, 1.3 (6), Հասարակական գիտություններ (Հայ բանասիրություն), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2015, էջ 181-188:
 13. Ղարազուլյան Թ., Դիպլոմատիկա և պոետիկալ բաները ժամանակակից հայերենի բանաստեղծական համակարգում // Լեզվի և ոճի հարցեր, N° 7, Երևան, 1983, էջ 197-227:
 14. Ղուկասյան Հ., Արդի հայ մամուլի բառապաշարի մի քանի առանձնահատկություններ // Կանթեղ. Գիտական հոդվածների ժողովածու, N° 2, 2006, էջ 85-93:
 15. Մարտիրոսյան Ա., Արդի հայերենի նորաբանությունների բառակազմական կառավարները, Էդիթ Պրինտ հրատարակչություն, Երևան 2007.- 235 էջ:
 16. Մկրտչյան Ն.Ա., Բաների կենսագրությունից: Բաների ճակատագիրը. դեպի Լեզվի ակունքները, Չորրորդ վերամշակված և լրացված հրատարակչություն, Չանգակ-97, Երևան, 2004.-300 էջ:
 17. Ջահուկյան Գ.Բ., Խլղաթյան Ֆ.Հ., Հայոց Լեզվի ոճաբանություն: Ուսումնական ձեռնարկ ուսուցիչների և ավարտական դասարանների աշակերտների համար, Երևան, Չանգակ-97, 2007.-140 էջ:
 18. Սարգսյան Հ. Անգլերենի քաղաքագիտական նորաբանությունների դասակարգման որոշ հարցեր // Կանթեղ. գիտական հոդվածների ժողովածու, N° 4, «Ինտերլինգվա» Լեզվաբանական համալսարան, «Ասողիկ» հրատարակչություն, Երևան 2007, էջ 54-61:
 19. Սևակ Գ.Գ., Ժամանակակից հայոց Լեզվի տեսություն, գիրք Բ, Բառագիտություն, Լար., Ե., 1947.-101 էջ:

20. Սևակ Գ.Գ., Հայոց լեզվի սովետական փոփոխությունները, ՀՍՍՌ, ԳԱ հրատարակչություն, Երևան, 1946.-36 էջ :
21. Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզուն, Եր., ԵՊՀ հրատարակչություն, 2008.- 352 էջ :
22. Ստեփանյան Ա., Ուրվագծեր հայ ամսագրային հրատարակատիրության պատմության (1960-1970թթ.), Տիգրան Մեծ, Երևան, 2013.-104 էջ :
23. Adams V., An Introduction to Modern English Word-Formation, London: Longman, 1973.-230p.
24. Adolphs S., Corpus and Context: Investigating Pragmatic Functions in Spoken Discourse, University of Nottingham, John Benjamins Publishing Company, Amsterdam/Philadelphia, 2008.-159p.
25. Ahmad Kh., Neologisms, Nonces and Word Formation // Lexicological Phenomena of Lexicographical Relevance, Proceedings of Euralex, 2000, pp. 711-729.
26. Alanakyan A., Derivational Valency and Potential of Combining Forms in Present-day English Word-Building // Armenian Folia Anglistika, International Journal of English Studies, 1(2) /2006-Yerevan, pp. 42-50.
27. Algeo J., Fifty Years among the New Words: A Dictionary of Neologisms, 1941-1991, Cambridge University Press, 1st edition, 1991.-259p.
28. Allen R., Pocket Fowler's Modern English Usage, Oxford University Press, Oxford, New York, 2nd edition, 2008.-663p.
29. Ariel M., Defining Pragmatics, Cambridge University Press, 1st edition, 2010.-329p.
30. Arnold I.V., The English Word, Higher School, Moscow, 1986.-295p.
31. Aronoff M., Word-formation in Generative Grammar, Cambridge, MA: MIT press, 1976.-134p.
32. Aronoff M., Schvaneveldt R., Testing Morphological Productivity // Annuals of the New York Academy of Sciences 318, 1978, pp 106-114.
33. Baayen R. H. & Neijt A., Productivity in Context: A Case Study of Dutch Suffix // Linguistics 35, pp. 565-587. Available online at: https://www.researchgate.net/publication/249933426_Productivity_in_context_A_case_study_of_a_Dutch_suffix 12.04.2016.
34. Bachielli R., Our Worries about 'Nonce'. Something More Than a Terminological Problem // Linguæ 1/2010, Università di Urbino, pp.83-90. Available online at: <http://www.ledonline.it/index.php/linguae/article/view/273> 5.03.2016.

35. Barthes R., *Elements of Semiology*, Translated by Annette Lavers and Colin Smith. Publ. Hill and Wang, 8th edition, New York, 1983. Available online at: <https://rosswolfe.files.wordpress.com/2015/04/roland-barthes-elements-of-semiology1.pdf> 10.01.2016.
36. Bauer L. On the Need for Pragmatics in the Study of Nominal Compounding // *Journal of Pragmatics*, Volume 3, 1979, pp. 45-50.
37. Bauer L., *English Word-Formation*, Cambridge: Cambridge University Press, 1983.-295p.
38. Bauer L. *Morphological Productivity* // *Cambridge Studies in Linguistics* 95, Cambridge University Press, 2001.-245p.
39. Bauer L. Holmes J. & Warren P., *Language Matters*, Palgrave Macmillan, 1st edition, 2006.-267p.
40. Beebe L.M. & Waring H.Zh., *Pragmatic Development in Responding to Rudeness*, Teachers College, Columbia University, pp. 67-79. Available online at: [http://www.tc.columbia.edu/faculty/tesolal/BeebeWaring\(2005\).pdf](http://www.tc.columbia.edu/faculty/tesolal/BeebeWaring(2005).pdf) 10.04.2016.
41. Beliaeva N., *The Power of Slang: Form and Meaning of English Blends*, Victoria University of Wellington. Available online at: <http://www2.uni-siegen.de/~engspra/draem/Beliaeva-ppt.pdf> 23.01.2016.
42. Benczes R., *Creative Compounding in English: The Semantics of Metaphorical and Metonymical Noun-Noun Combinations*, John Benjamins Publishing Company, Amsterdam/Philadelphia, 2006.-209p.
43. Carter R., *Language and Creativity: the Art of Common Talk*, First Edition, Routledge Taylor & Francis Group, London and New York, 2004.- 258p.
44. Chapman S., *Pragmatics*, Palgrave Macmillan, 1st edition, 2011.-213p.
45. Croft W., *Explaining Language Change: An Evolutionary Approach*, Longman Linguistics Library, 2000.-287p.
46. Crystal D., *A Dictionary of Linguistics and Phonetics*, 5th edition, Oxford and Cambridge (Mass., USA): Blackwell Publishers LTD, 2003.-512p.
47. Crystal D., *Investigating Nonceness: Lexical Innovation and Lexicographic Coverage // Manuscript, narrative and lexicon: essays on literary and cultural transmission in honor of Whitney F Bolton* (Lewisburg: Bucknell University Press; London: Associated University Presses, 2000), pp. 218-231.
48. Downing P., On the Creation and Use of English Compound Nouns // *Language*, Volume 53, No 4, (Dec 1977), pp. 810-842.

49. Dooly M., *Semantics and Pragmatics of English: Teaching English as a Foreign Language*, Servei de Publicacions, Bellaterra, 2006.-85. Available online at: https://books.google.am/books?id=C5TdV8LgtaQC&pg=PA57&dq=nonce+words&hl=ru&sa=X&redir_esc=y#v=onepage&q=nonce%20words&f=false 12.04.2016.
50. Fernández-Domínguez J., *Productivity in English Word-Formation: An Approach to N+N Compounding*, Peter Lang AG, International Academic Publishers, Bern 2009.-195p.
51. Fischer R., *Lexical Change in Present-Day English: A Corpus-based Study of the Motivation, Institutionalisation, and Productivity of Creative Neologisms*, Tübingen: Narr, 1998.-209p.
52. Galperin I.R., *Stylistics*, Second Edition, Higher School, Moscow, 1977.- 336p.
53. Giegerich H. *Synonymy Blocking and the Elsewhere Condition: Lexical Morphology and the Speaker* // *Transactions of the Philological Society*, Volume 99:1 (2001) pp. 65-98.
54. Ginzburg R., *A Course in Modern English Lexicology*, Moscow, 1979. -269p.
55. Givón T., *Context as Other Minds: The Pragmatics of Sociality, Cognition and Communication*, John Benjamins Publishing Company, 2005.-285p.
56. Hart Ch., *Critical Discourse Studies in Context and Cognition*, John Benjamins Publishing Company, Northumbria University, 2011.-231p.
57. Hohenhaus P., *Lexicalization and Institutionalization* // In: Stekauer & Lieber, *Handbook of Word Formation*, 2005, pp. 353-373.
58. Halliday M.A.K. & Hasan R., *Cohesion in English*, Routledge: Taylor and Francis Group, London & New York, 2013.-373p.
59. Jovanović V., *On Productivity, Creativity and Restrictions on Word Conversion in English* // *Facta Universitatis, Series: Linguistics and Literature*, Vol. 2, N^o 10, 2003, pp. 425-436. <http://facta.junis.ni.ac.rs/lal/lal2003/lal2003-07.pdf> 23.01.2016.
60. Kasher A., *Pragmatics: Critical Concepts, Volume I: Dawn and Delineation*, Routledge: Taylor and Francis Company, London & New York, 1998.-157p.
61. Katamba F. & Stonham J., *Morphology*, Palgrave Macmillan, 2nd edition, 2006.-382p.
62. Kuiper K. & Scott Allan W., *An Introduction to English Language: Word, Sound and Sentence*. Palgrave Macmillan, 2nd edition, 2004.-365p.
63. Lipka L., Handl S., & Falkner W., 'Lexicalization & Institutionalization': The State of the Art in 2004 // *Skase Journal of Theoretical Linguistics* 1, pp. 1-29.

64. Lieber R., *Morphology and Lexical Semantics*, Cambridge University Press, Cambridge, 2004.-212p.
65. Lieber R., Štekauer P., *The Oxford Handbook of Derivational Morphology*, Oxford University Press, Oxford, United Kingdom, 2014.-800p.
66. Levinson S.C., *Pragmatics*, Cambridge University Press, Cambridge, 15th edition, 2003.-423p.
67. Ludlow P., *Living Words: Meaning Underdetermination and the Dynamic Lexicon*, Oxford University Press, United Kingdom, 2014.-195p.
68. Marchand H., *The Categories and Types of Present-Day English Word-Formation*, 2nd ed., München, 1969.-545p.
69. Manova S., *Affix Ordering Across Languages and Frameworks*, Oxford University Press, Oxford, 2015.-304p.
70. Metcalf A., *Predicting New Words: The Secrets of Their Success*, Houghton Mifflin Company, Boston, New York, 2002.-209p. Available online at: https://books.google.am/books?id=ACsetPyuv8Yc&printsec=frontcover&dq=new+words&hl=ru&sa=X&ved=0ahUKEwjK9ufAuonMAhXIHJoKHQ_qAmMQ6AEIOTAE#v=onepage&q=new%20words&f=false 12.04.2016.
71. Miller D.G., *English Lexicogenesis*, Series: Oxford Linguistics, Oxford University Press, United Kingdom, 1st edition, 2014.-336p. Available online at: <https://books.google.am/books?id=oNfQAgAAQBAJ&pg=PR10&dq=English+lexicogenesis&hl=ru&sa=X&ved=0ahUKEwi7g5XkiYzMAhUBJJJoKHar6CrcQ6AEIHDA#v=onepage&q=English%20lexicogenesis&f=false> 13.04.2016.
72. Munat J., *Lexical Creativity, Texts and Contexts // Studies in Functional and Structural Linguistics*, 58, Amsterdam/Philadelphia: John Benjamins Publishing Company, 2007.-299p.
73. Newmark P., *A Textbook of Translation*, Prentice-Hall International, Shanghai Foreign Language Education, 1988.-311p.
74. Nurnberg M.W., Rozenblum M., *All about words*, Prentice-Hall, 1966.-400p.
75. Plag I., *Productivity // Encyclopedia of Language and Linguistics*, 2nd edition, Elsevier, 2004. Available online at: <http://www2.uni-siegen.de/~engspra/Papers/Morphology/productivity-ell2.pdf> 10.01.2016.
76. Plag I., Dalton-Puffer Ch., Baayen H., *Morphological Productivity across Speech and Writing // English Language and Linguistics*, 3.2, 1999, pp.1-37. Available

- online at: <http://www2.uni-siegen.de/~engspra/Papers/Morphology/ell.pdf>
10.01.2016.
77. Plag I., *Word-Formation in English*, Cambridge University Press, 2003.-228p.
78. Rose J., *Principled Limitations on Productivity in Denominal Verbs // Foundations of Language*, Vol.10, N° 4 (Nov., 1973) pp. 509-526.
79. Schmid Hans-Jörg., *New Words in the Mind: Concept-Formation and Entrenchment of Neologisms // Anglia Anglia - Zeitschrift für englische Philologie*, Volume 126, Issue 1, 2008, pp. 1-36.
80. Spencer A., *Morphological Theory: An Introduction to Word Structure in Generative Grammar*, Cambridge University Press, 1991.-532p.
81. Šteakuer P., Chapman D., Tomaščíková S., Franco Š., *Word-Formation as Creativity within Productivity Constraints: Sociolinguistic Evidence // Onomasiology Online* 6(2005), pp. 1-55.
82. Usevičs S., *Neologisms in British Newspapers*, Daugavpils University, Latvia.
http://www.dukonference.lv/files/proceedings_of_conf/53konf/valodnieciba_literaturz_inatne/Usevics.pdf 10.01.2016.
83. Van Dijk T.A., *Discourse as Social Interaction*, 1st edition, The Cromwell Press, Great Britain, 1997.-324p.
84. Zhakhanova Z., Luchkova G., *Semantic and Structural Peculiarities of English Neologisms*, "Turan" University // *Modern Directions of Theoretical and Applied Researches* '2003, Доклад/философия. Available online at:
<http://www.sworld.com.ua/konfer30/454.pdf> 23.01.2016.
85. Zufferey S., *Acquiring Pragmatics: Social and cognitive perspectives*, 1st edition, Routledge: Taylor and Francis Group, London & New York, 2015.- 201p.
86. Авакян М., *Стилистические особенности журналистского жанра: «понятие образ автора» (на примере произведений М. А. Булгакова)*, Издательство РАУ, Ереван, 2008.-86с.
87. Антрушина Г.Б., Афанасьева Н.Н., Морозова Н.Н., *Лексикология английского языка*, Дрофа, Москва, 2005.-286с.
88. Антюфеева Ю.Н. *Английские новообразования в развитии: потенциальное слово, окказионализм, неологизм. Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук, научный руководитель, Л.И. Сапогова*, Тула, 2004.-184с.

89. Атаян Э. Р. Язык и внеязыковая действительность: Опыт онтологического сравнения, ЕГУ, Ереван, 1987.-380с.
90. Ахманова О.С., Словарь лингвистических терминов, Москва, 1969.-598с.
91. Голуб И.Б., Стилистика современного русского языка, М., 1986.-448 с.
92. Горшков А.И., Неологизм // Русский язык: Энциклопедия, Советская энциклопедия Москва, 1979.-159с.
93. Заботкина В.И., Новая лексика современного английского языка, Москва, 1989.-56. <http://www.balinagroup.com/download/zabotnkina.pdf> 5.04.2016.
94. Калинин А., Лексика русского языка, 2-е издание, Москва, 1966.-320с.
95. Колшанский Г.В., Контекстная семантика, Наука, 1980.-147с.
96. Кубрякова Е.С., Что такое словообразование, Изд. Наука, М., 1965.-80с.
97. Кубрякова Е.С., Основы морфологического анализа: на материале германских языков, УРСС, 2008.-320с.
98. Куликова О., Авторские неологизмы в творчестве Г. Н. Щербаковой // Электронное научное издание «Ученые заметки ТОГУ», 2012, Том 3, № 1, стр. 1-6 http://pnu.edu.ru/media/ejournal/articles/2012/TGU_3_01.pdf 23.01.2016.
99. Лыков А., Окказиональное слово как лексическая единица речи // Науч. докл. высш. школы. филол. науки, 1971, N 5, стр. 74-75.
100. Мешков О., Словосложение в современном английском языке, М., 1985.-187с.
101. Несветаило Ю., Трактовка понятий “неологизм” и “окказионализм” в современной научной парадигме // Вестник Ставропольского государственного университета, 55/2008, стр. 144-148 <http://vestnik.stavsu.ru/55-2008/25.pdf> 23.01.2016.
102. Царев П.В. Потенциальная лексика в современном английском языке // Иностранные языки в школе, № 1, М., 1978, стр. 20-25.
103. Шанский Н., Очерки по русскому словообразованию, М., 1968.-245с.
104. Яцук Н., Семантико-деривационные особенности лексических окказионализмов Ю. Полякова // Вестник Удмуртского университета, История и философия, 2011. Вып. 2. стр. 87-95. Available online at: <http://cyberleninka.ru/article/n/semantiko-derivatsionnye-osobennosti-leksicheskikh-okkazionalizmov-yu-polyakova> 23.01.2016.
105. Формановская Н.И., Русский речевой этикет: нормативный социокультурный контекст, Русский язык, 2002.-160с.

ԲԱՌԱՐԱՆՆԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՈՒՆԵՐ

106. Աղայ ան Է.Բ., Արդի հայ երեւնի բացատրական բառարան, հատոր 1-2, Երևան 1976.-1618 էջ:
107. Էլոյ ան Ս.Ա., Արդի հայ երեւնի նորաբանությունների բառարան, Երևան, «Նաիրի», 2002.-495 էջ:
108. Պետրոսյան Յ.Զ., Գալստյան Ս.Ա., Ղարազուլյան Թ.Ա., Լեզվաբանական համալսարան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1975.-316 էջ:
109. Սուքիասյան Ա.Մ., Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Ե.: ՀՍՍՀ ԳԱ հրատ, 1967.-684 էջ:
110. Cambridge Dictionaries Online, <http://dictionary.cambridge.org> 30.07.2016
111. Collins English Dictionary Online, <http://www.collinsdictionary.com> 30.07.2016
112. Davies, Mark. (2008-) *The Corpus of Contemporary American English (COCA): 520 million words, 1990-present*. Available online at: <http://corpus.byu.edu/coca/> 30.07.2016
113. Davies, Mark. (2013) *Corpus of Global Web-Based English: 1.9 billion words from speakers in 20 countries (GloWbE)*. Available online at: <http://corpus.byu.edu/glowbe/> 30.07.2016
114. Longman Dictionary of Contemporary English, <http://www.ldoceonline.com> 30.07.2016
115. Macmillan Dictionary Online, www.macmillandictionary.com 30.07.2016
116. Merriam-Webster Dictionary Online, <http://www.merriam-webster.com> 30.07.2016
117. OALD – Oxford Advanced Learner’s Dictionary of Current English, 7th edition, Oxford, 2006.-1908p.
118. Oxford Dictionaries Online, <http://www.oxforddictionaries.com> 30.07.2016
119. The Free Dictionary, <http://www.thefreedictionary.com> 31.05.2016
120. The Oxford Essential Dictionary of New Words, Berkley Books, New York, 2003.-334p.
121. Urban Dictionary, <http://ru.urbandictionary.com> 31.05.2016
122. <http://dict.am> 22.09.2015
123. <http://www.nayiri.com> 31.05.2016

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՅՔԵՐ

1. <http://abcnews.go.com>
2. <http://blog.oxforddictionaries.com/press-releases>
3. <http://dictionaryblog.cambridge.org/2013/03/25/new-words-25-march-2013>
4. <http://emergency.dermotcarmody.com/breaking-news/shattered-calls-for-universal-junior-ministerhood>
5. <http://vancouver.sun.com>
6. <http://www.aarp.org/bulletin>
7. <http://www.asce.org/cemagazine>
8. <http://www.bbc.co.uk>
9. <http://www.cambridge-news.co.uk>
10. <http://www.caranddriver.com>
11. <http://www.cnet.com>
12. <http://www.dailymail.co.uk/home/index.html>
13. <http://www.dailywritingtips.com>
14. <http://www.dallasobserver.com>
15. <http://www.express.co.uk>
16. <http://www.fortune.com>
17. <http://www.ft.com/home/uk>
18. <http://www.gawker.com>
19. <http://www.glamourmagazine.co.uk>
20. <http://www.graziemagazine.ru>
21. <http://www.herald.co.zw>
22. <http://www.huffingtonpost.com>
23. <http://www.independent.co.uk>
24. <http://www.jezebel.com>
25. <http://www.lifeandstylemag.com>
26. <http://www.litopedia.org>
27. <http://www.marieclaire.co.uk>
28. <http://www.memidex.com>
29. <http://www.mercurynews.com/business>
30. <http://www.newstatesman.com>
31. <http://www.newyorker.com>
32. <http://www.nymag.com>
33. <http://www.nytimes.com>

34. <http://www.nzherald.co.nz>
35. <http://www.pcpro.co.uk>
36. <http://www.shoutdigital.com>
37. <http://www.smithsonianmag.com>
38. <http://www.stlamerican.com>
39. <http://www.stuff.co.nz>
40. <http://www.sun-sentinel.com/news>
41. <http://www.telegraph.co.uk>
42. <http://www.texasobserver.org>
43. <http://www.theguardian.com>
44. <http://www.time.com>
45. <http://www.trinidadexpress.com>
46. <http://www.usatoday.com>
47. <http://www.vancouver.sun.com/index.html>
48. <http://www.week.com>
49. <http://www.wired.com>
50. <http://www.psychologytoday.com>
51. <http://www.sciencedaily.com>
52. <http://www.thesun.co.uk>

ՀԱՊԱԿՈՒ ՄԼԵՐԻ ՑԱՆԿ

CDO	Cambridge Dictionaries Online
COCA	Corpus of Contemporary American English
GloWbE	Corpus of Global Web-Based English
LDOCE	Longman Dictionary of Contemporary English
MWOL	Merriam-Webster's Dictionary Online
OALD	Oxford Advanced Learner's Dictionary
ODO	Oxford Dictionaries Online
RHR	The Right-Hand Headed Rule

ԲԱՌԱՅԻՆ ԴԱՍԵՐ

adj (=adjective)	աճ ակ ան
adv (=adverb)	մ ակ բ այ
n (=noun)	գ n j ակ ան
v (=verb)	բ այ

ՀԱՎԵԼ ՎԱՃ 1

ՊԱՐ 2, ԱՃԱՆՑԱԿՈՐ ԵՎ ԲԱՐԴ ԴԻՊԼԱՃԱՅԻՆ ԲԱՌԵՐ

1. adorkability (n) գրավիչ և, միաժամանակ, սառը, տարօրինակ հայացք

Օրինակ՝ *In just one short TV season, New Girl's Zooey Deschanel has gone from a ukulele-strumming indie princess of rock and film – to an omnipresent child for a new yet immediately overused word: **adorkability*** (Vulture 25 April 2012).

2. amlish (n) ամերիկյան անանգլերեն

Օրինակ՝ *The Jaipur festival runs from 20 to 24 January and Rushdie is due to talk at a session on “English, **Amlish**, Hinglish [...]”* (The Guardian 10 Jan 2012).

3. ant’s pants (n) հրաշալի անձնավորություն և

Օրինակ՝ *In addition to silvertail, there is shiny bum (office worker), **ant’s pants** (an outstandingly good person or thing), and sticker licker (an issuer of parking fines)* (The Guardian 04 Dec 2014).

4. anti-Brexit (adj) դեմ՝ Բրիտանիայի ԵՄ-ից դուրս գալուն

Օրինակ՝ ***Anti-Brexit** protests break out on London streets after petition for a SECOND EU referendum hits 1.5 million names in a day* (The Daily Mail 25 June 2016).

5. arancini (n) իտալական նախուտեստ. տապակած ռիզոտոյի փոքր գնդիկներ՝ լցունած բոլոնեզ սոսիսով

Օրինակ՝ ***Arancini** or torta Milanese. These delicious fried rice can be made using leftover risotto from the Milanese recipe above or any other vegetable risotto* (The Independent 16 Jan 2004).

6. authorism (n) հեղինակային նորաբանություն և

Օրինակ՝ *‘**Authorisms**’ – neologisms coined by authors which have entered the wider language – have been enriching English for centuries* (The Guardian 19 Nov 2014).

7. awesomesauce (adj) հիասքանչ, հրաշալի

Օրինակ՝ *Why the Oxford Companion to Wine is so ‘**awesomesauce**’* (headline) (The Guardian 20 Sept 2015).

8. Bey-becue (n) Բեյոնսեի պատրաստած խորովածը

Օրինակ՝ *SHE’S HAVING A **BEY-BECUE** Beyonce demands £1,000 of meat for entourage hours before gig in Manchester* (headline) [...] *The superstar demanded more than £1,000 worth of prime-cut meats to feed her hungry entourage just hours before taking to the stage in Manchester on her Formation tour this week* (The Sun 10 July 2016).

9. Big Mother (n) մայր, որը հետևում է, որպեսզի իր երեխան դպրոց հաճախի

Օրինակ՝ *When a pupil doesn't show up for school without advance notice from their parents, the school contacts the parents immediately [...] **Big Mother** is watching you* (The Hamilton Spectator 19 March 1993).

10. bomb'chelle (n) ցնցող Միշելը

Օրինակ՝ *BLONDE **BOMB'CHELLE!** Michelle Keegan chops off her long locks and shows off ANOTHER new hairdo* (headline) (The Sun 11 July 2016).

11. Bremain (n) Բրիտանիայի մնալը ԵՄ-ի կազմում (Brexit-ի հակահիշող)

Օրինակ՝ *Whether Brexit or **Bremain**, fear will triumph over fear* (headline) (The Guardian 21 Jan 2016).

12. Brex (n) Բրիտանիայի դուրս գալը ԵՄ-ից, Brexit բառի հոմանիշը

Օրինակ՝ *HOW **BREX** WAS WON Shambolic Remain campaign caused swing towards Vote Leave triumph* (The Sun 25 June 2016).

13. bronde (adj) շիկահեր-շագանակագույն

Օրինակ՝ *“**Bronde**” is a clever marketing ploy from L'Oréal Professionale, the world leaders in salon hair colour, blurring the lines between brunette and blonde to create a streaky blend of chocolate, caramel and toffee shades currently favoured by the likes of Jennifer Lopez and Jessica Alba* (The Guardian 01 Aug 2015).

14. cappellacci (n) իտալական նախուտեստ, այն է՝ մակարոնից պատրաստված ճաշ

Օրինակ՝ *International cuisine - particularly Italian and Hispanic food provides several debuts: arancini (stuffed balls of rice); **capellacci** (stuffed hat-shaped pasta) [...]* (The Guardian 04 Dec 2014).

15. carne asada (n) Կառնե Ասադա (մեքսիկական ուտեստ), այն է՝ մարինացված տավարի ֆիլե՝ պատված կծու սոսիսով և պանրով

Օրինակ՝ *The House of Death* (headline) [...] *Lalo's cartel bosses told him whenever they were planning another killing, using a grisly codeword – **carne asada**, 'barbecue'* (The Guardian 03 Dec 2006).

16. cyber hijack (n) նորագույն տեխնոլոգիաների միջոցով իրականացվող առևանգում

Օրինակ՝ *Is missing Malaysian jet the world's first **CYBER HIJACK** chilling new theory claims hackers could use a mobile phone to take over the controls* (The Daily Mail 16 March 2014).

17. cyber security (n) կիբեթր անվտանգություն

Օրինակ՝ *Behind the job title: **Cyber security** consultant (headline) **Cyber security** is part of a wider discipline covering information assistance, IT security and risk management and looks to defend against web-based or electronic attacks targeted at government, organizations and individuals. These attacks are often very difficult to detect* (The Guardian 08 Feb 2011).

18. cybersoldier (n) գիևվորական, որն աշխատում է կիբեթրպատերազմի ոլորտում

Օրինակ՝ *Through this kind of training, the Army is trying to perfect the fieldcraft of these experts in computers and digital warfare – **cybersoldiers*** (U.S. News 29 Aug 2016).

19. cyber warfare (n) կիբեթր-պատերազմ

Օրինակ՝ *US appoints first **cyber warfare** general (headline)* (The Guardian 21 Sept 2012).

20. cyberespionage (n) կիբեթրլրտեսություն

Օրինակ՝ *“Based on this we can see that five gigabytes of data was uploaded to this particular server a week, from more than 5,000 infected machines. This is certainly an example of **cyber-espionage** conducted on a massive scale* (The Guardian 21 Sept 2012).

21. cyber-intrusion (n) ցանցահեննեթրի կողմից կայքէջերի կոտորում

Օրինակ՝ *Militarisation of cyberspace: how the global power struggle moved online (headline) [...] In America, they gave up trying to calculate precise values nine years ago, when the number of known “**cyber-intrusions**” reached 100,000 in a year, one respected Washington thinktank put the cost of cybertheft in the US last year at roughly \$100bn (£ 63 bn)* (The Guardian 16 April 2012).

22. deskercise (desk+exercise) (n) մարզանք՝ գրասեղանի մոտ աշխատելիս

Օրինակ՝ *DO SOME **DESKERCISE** Want to avoid an early death? Here are exercises to keep you fit without leaving your desk* (headline) (The Sun 28 July 2016).

23. digital amnesia (n) թվային տեխնոլոգիաների պատճառով առաջացած հիշողություն կորուստ

Օրինակ՝ *The problem, dubbed ‘digital amnesia’, is a result of our brains adapting to an age where our phone, and the Internet, is always available, scientists say* (The Daily Mail 01 July 2015).

24. duckface (n) ինքնանկար անելու ժամանակ շրթուներն
ուռեցրած արտահայտություն

